ՀՃՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ISSN 1829-2798
23
RAA SCIENTIFIC RESEARCHES

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (RAA) ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Դր., պրոֆ. Ա. Մութաֆյան (Փարիզ), դր., պրոֆ. Հ. Հոֆրիխթեր (Քայզերսլաութերն), դր., պրոֆ. Մ. Բունեման-Հախնազարյան (Ասխեն), դր., պրոֆ. Հ. Սուրուգյան (Կահիրե), դր., պրոֆ. Լ. Ջեքիյան (Վենետիկ), դր., պրոֆ. Մ. Հասրաթյան (Երևան), դր., պրոֆ. Ա. Ղազարյան (Մոսկվա), պրոֆ. Ն. Սարգսյան (Երևան), պրոֆ. Ռ. Գալչյան (Լոնդոն), դր. Մ. Բալայան (Ստեփանակերտ), Ժ. Մանուչարյան (Լոս Անջելես), Հ. Սիմոնյան (Լոզան), Մ. Լալայան (Երևան)

ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք ԻԳ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆ

Սամվել Կարապետյան

HAMBARDZUM ERAMYAN

Samvel Karapetyan

АМБАРЦУМ ЕРАМЯН

Самвел Карапетян

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆ 2024

ՀՏԴ 930:37
ԳՄԴ 63+74.2
Կ 294

Կ 294 **Համբարձում Երամյան** /Սամվել Կարապետյան.— Եր.:
Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2024.
գիրք ԻԳ.— 100 էջ:

Սույն աշխատությունը նվիրվում է կրթության անխոնջ մշակներից մեկի՝ Վանի Երամյան վարժարանի հիմնադիր աչազուրկ Մեծն ուսուցչապետ Համբարձում Երամյանի կյանքին և գործունեությանը:

Հասցեագրվում է ընթերցող հասարակությանը:

ՀՏԴ 930:37
ԳՄԴ 63+74.2

ISBN 978-9939-843-67-4

© Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ (ՀԵՈՒ), 2024

www.armenianarchitecture.org, www.artsakhmonuments.org, www.raa-am.org ✉ raayer@sci.am, raatransfer@yahoo.com

Նվիրվում է

Համբարձում Երամյանի (1857-1929) մահվան 95-րդ տարելիցին

Նախահրատարակչական աշխատանքները կատարվել են «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկության և ՀՃՈՒ-ԱՄՆ-ի աջակցությամբ

Տպագրական աշխատանքները կատարվել են
ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱՄՅԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ.....6

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԵՐԱՄՅԱՆ ...10

ՄԵԿՆՈՒՄԸ ՎԻԵՆՆԱ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԸ 20

ՆՈՐ ԴԺՎԱՐ ՍԿԻԶԲԸ 26

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԸ ԵՎ ՎԱՐԺԱՐԱՆԸ ՀԱՄԻԴՅԱՆ ՋԱՐԴԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ.....29

ՎԱՐԺԱՐԱՆՆ ԱՊԱՔԻՆԵԼՈՒ ՃԻԳԵՐԸ.....30

ՎԱՐԺԱՐԱՆԸ ՀԱՄԻԴՅԱՆ ՋԱՐԴԵՐԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ՏԱՐԻՆԵՐԻՆ 31

ՎԱՐԺԱՐԱՆԸ 1900-1903 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 33

ՎԱՐԺԱՐԱՆԻ 25-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ 1903 Թ. ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ 34

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒՄԸ ԵՐԱՄՅԱՆ 37

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆ ԱՌ ՀԱՅ ՀԵՂԱՓԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.....39

ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐՍԵՐՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ 42

ՎԱՐԺԱՐԱՆԸ 30-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ՕՐԵՐԻՆ 44

ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1908/1909 ՏԱՐԵՇՐՋԱՆԸ.....46

ՎԱՐԺԱՐԱՆԸ 1910 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎ ԵՐԱՄՅԱՆԻ ՋԱՆՔԵՐՈՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԻՄՆՈՒՄԸ ՎԱՆՈՒՄ.....48

ՎԱՐԺԱՐԱՆԸ 1911 Թ. ԵՎ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ՝ ԵՐԱՄՅԱՆԻՆ ՎԱՐԿԱԲԵԿԵԼՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՃԻԳԵՐԸ 49

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՐԱՄՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ.....51

ՎԱՐԺԱՐԱՆԸ 1912-1913 ԹԹ. 52

ՎԱՐԺԱՐԱՆԸ ԵՎ Հ. ԵՐԱՄՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ 1913 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ 54

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԻ ՆՈՐ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ 1913 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ ԵՎ ՆՐԱ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ 59

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ.....61

ԵՐԱՄՅԱՆԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ ԵՎ ԻԶՄԻՐՈՒՄ.....61

ԵՐԱՄՅԱՆԻ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՀԱՆԳՐՎԱՆԸ՝ ԵԳԻՊՏՈՍ 62

ԵՐԱՄՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆ ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.....63

ՊԱՇՏԵԼԻ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԵՎ ՀՈԳԵՋԱՎԱԿ ՎԱՐԺԱՐԱՆԻՑ ՀԵՌՈՒ, ՍԱԿԱՅՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱԿՆԹԱՐԹ ՆՐԱՆՑ ՀԵՏ.....64

ԵՐԱՄՅԱՆԻ՝ ԱԿԱՄԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԵԼՆ ՈՒ ԱՎԱՆԴԸ ՏԵՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ 67

ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏԸ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....68

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԻ «ՀՈՒՇԱՐՁԱՆ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ» ԵՐԿՀԱՏՈՐՅԱ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ 71

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՋԱՆՔԵՐԸ.....73

ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏԻ ՄԱՀԸ 74

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ 75

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ, ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԸ.....79

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ 81

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿԸ.....88

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 89

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ.....92

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 98



Նայի՛ր, երկար նայի՛ր այս դիմանկարին. նրա մեղմ, հազիվ նշմարելի ժպիտը թերևս չի կրում հանապազօր մաքառումներով անցկացրած տառապալից կյանքի դրոշմը և չի մատնում հայրենաբաղձ հայի մշտագիշեր աչաց լույսի դավանանքը, սակայն նա մեկն է հայ ազգի ծոցից ելած այն հզոր անհատականություններից, որոնց գոյությունը մեր պատիվն է, իսկ կտակը՝ երազանքը...

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆ

Կյանքը և գործը

ԵՐԱՄՅԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Երամյան տոհմի ծագման վերաբերյալ տեղեկություններ պարունակող միակ աղբյուրը հենց Համբարձում Երամյանն է: Նա հորից լսել էր, որ մոտ երկու դար առաջ Շահնազար անունով մի պարսկահայ գալիս և բնակվում է նախ Վանա լճի արևելյան կողմում՝ Արճակ գյուղում, ապա փոխադրվում Վան՝ այդ ժամանակ նոր շենացող Այգեստան թաղը, որը թուրքերը «Նորշէն կ'անուանէին, իսկ հայերը Ս. Յակոբ՝ թաղին եկեղեցւոյն անունով: Այդ թաղն ահա իր եկեղեցիով ու կից գերեզմանատունով կը լինի մեր գերդաստանի օրօրանը, աւազանը և դամբարանը: Շահնազարի որդին էր թաղին աւագերէց՝ տէր Յովհաննէսը, և սորա միակ ժառանգ՝ Երեմիայի անունէն կը ծագի մեր Երեմեան կամ Երամեան տոհմանունը»[1]:

Պապի՝ Երեմիայի և պապի հոր՝ տեր Հովհաննեսի մասին Համբարձումը վկայում է. «Երկուքն ալ նշանաւոր են եղած՝ այդ հին օրերուն՝ իրենց ուսումնասիրութեամբ և ըստ այնմ թողած էին կրօնական և պատմական բազմաթիւ տպեալ գրքեր...»[2]:

Տիրացու Երեմիան ունենում է 6 զավակ՝ 1 աղջիկ՝ Սառա, 5 տղա, որոնցից կրտսերը Համբարձումի հայրն էր՝ Հարությունը:

Համբարձումի 4 հորեղբայրներն էին Հովհաննեսը, Մարկոսը, Մաթեոսը և Ղուկասը: Այն, ինչ նրանց մասին գիտեր Երամյանը, հետևյալն է.

Հովհաննես Երամյան. մեծ հորեղբայրն էր՝ Վանի ազդեցիկ ու երևելի հայերից մեկը, որը Վանի կուսակալ Թամուր փաշայի հրամանով 1832 թ. խեղդամահ է արվում Հակոբ Գարասեֆերյան աղայի հետ[3]:

Մարկոս Երամյան. շարունակում էր զբաղվել հոր հիմնադրած կտավագործության արհեստով: Շատ վաղ է մահացել: Ուներ 2 աղջիկ, 1 տղա՝ Վանի վաճառական Հովհաննես Երամյանը[4]:

Մաթեոս Երամյան. զբաղվում էր այգեգործությամբ՝ «իր ամբողջ կեանքը նուիրելով մեր ընդարձակ պարտէզի մշակութեան՝ փափկութեան դրախտի մը վերածած էր զայն: Նա պիտի մեռնէր ջիղերու պլըրկումով կամ կծկումով, թերեւս հետեւանքը իր հոդային աշխատութիւններուն»: Միակ որդին՝ Երեմիան (փաղաքշական՝ Աղանիկ), դերձակ էր և հոր նման լավ այգեգործ: Պարտքի փոխարեն վաճառելով գեղեցիկ պարտեզը՝ Համիդյան ջարդերից երկուերեք տարի հետո վշտից մահանում է: Երեմիայի որդու անունը Դանիել էր՝ դերձակ[5]:

Ղուկաս Երամյան. երիտասարդ տարիքում երկար ժամանակ պանդխտել է Սիրիայում, Եգիպտոսում, Արաբիայում, Հնդկաստանում և այլուր: Հարստանալուց հետո՝ 1840-ական թթ., Պոլսից փորձում է վերադառնալ Վան, սակայն երեք ընկերների (արաբ, սիրիացի, հրեա) կողմից դավադրաբար կողոպտվում է և սպանվում[6]:

Չորս հորեղբայրներից և մեկ հորաքրոջից զատ՝ Հ. Երամյանն ուներ նաև երկու քեռի և մորական կողմից այլ հարազատներ:

Քեռիները՝ Ավետիս և Սաֆար Փեհրիզյաններ. Ավետիսը ներկարար էր, Սաֆարը՝ դերձակ: Վերջինս Պոլսի Գարակյոմրյուկ թաղի եկեղեցում «քանի մը տարի լուսարարութիւն ըրած» էր: Վերադարձից հետո կարգվում է Սբ. Հակոբ եկեղեցու վարժարանում «իբրև երկրորդական ուսուցիչ»[7]: 1897 թ. Սբ. Հակոբ թաղում ձեռնադրվում է քահանա տեր Հուսիկ անվամբ. «Տ. Յուսիկ Փէհրիզեանը Այգեստանի Ս.

1 **Երամեան Հ.**, Յուշարձան, հ. Ա, Աղեքսանդրիա, 1929, էջ 36-37:

2 Նշվ. աշխ., հ. Ա, էջ 37 (տանը պահպանված տպագիր հին գրքերից Հ. Երամյանը հիշում է «Ամսթերտամի տիպ, այժմ հազուագիւտ, Ոսկանեան Աստուածաշունչ մը և ձեռագրեր, ոմանք մագաղաթի վրայ, ինչպես և նկարազարդ Յայսմաւուրք մը...»):

3 Նշվ. աշխ., Ա, էջ 37-38: Հմմտ. **Տէր-Մկրտիչեան Ե.**, Գանձեր Վասպուրականի, հ. Ա, Պոսթոն, 1966, էջ 141, 614:

4 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 38: Հովհաննեսն ուներ 4 որդի (Ավետիս, Գրիգորիս, Մարկոս, Վահան): Սպանվել է 1896 թ.՝ Համիդյան ջարդերի ժամանակ, որդու՝ Վահանի հետ: Ավետիսը մահացել է 1917 թ. Երևանում: Երամյանը մյուսների՝ Գրիգորիսի և Մարկոսի մասին հիշում է միայն այն, որ նրանք շարունակում են հոր առևտրական գործերը:

5 Նույն տեղում: Դանիելը 1922 թ. ընտանիքով փոխադրվում է ԱՄՆ:

6 Նույն տեղում: Համբ. Երամյանի հայրը, Մատթեոս Ա Չուհաճյան պատրիարքի օրոք (1844-1848) այցելելով Պոլիս, կարողանում է կառավարությունից ստանալ 1000 ոսկին, քանի որ վախճանված եղբայրների երեխաների ժառանգների դեմ օրինական արգելքներ կային (էջ 40):

7 Նշվ. աշխ., էջ 45:

Յակոբ եկեղեցւոյ աւագ քահանան էր, հին սերունդի ներկայացուցիչը, աշխարհներ պտտող, լաւ ու վատը ուսումնասիրած և փորձ երաժշտագէտ մէկը...»: Վախճանվել է 1915 թ. վասպուրականցիների առաջին նահանջից հետո Երևանում և ամփոփվել վանեցի քահանաներ Մեսրոպ Ճանիկյանի և Գևորգ Շաքարյանի գերեզմաններին կից[8]:

Երամյանը սիրով և երախտագիտությամբ է հիշում քեռիներին. «Չեմ կրնար չի յիշատակել զոյգ մօրեղբարցս՝ մանաւանդ տէր Յուսիկի գուրգուրալից ու իմաստուն աջակցութիւնը իր կրթական ձեռնարկին մէջ սկիզբէն ցվերջ. և ի՜նչ անուշ ժամանցներ կ'ունենայի իրենց հետ և իրենց տան մէջ ամէն անգամ, մանաւանդ երբ գործիս ծանրութենէն յոգնաբէկ կամ ո և է պատճառով մելամաղձիկ ու թախծոտ՝ զիրենք կը գտնէի և ամէն բան կը մոռնայի»[9]:

Մոր հորեղբոր որդիների՝ Հովսեփ և Մկրտիչ Փեհրիզյանների մասին էլ նշում է. «Երկուքն ալ Վանի ազգային գործերու մէջ քաջածանօթ» անձեր էին[10]:

Հովսեփ Փեհրիզյանը 1896 թ. հունիսին Քաղաքական ժողովի ատենապետն էր: Հունիսի 3-ին «իր սեղանին և մառանին առատութենէն օգտուող թուրք դրացիներ տապարահար մեռցուցած և տունը աւարի տուած էին»[11]:

Մոր հորեղբոր՝ Խաչատուրի մասին էլ նշում է, որ վերջինս ներկայացնում էր «հին օրերու միամիտ քրիստոնէի մը հարազատ թիփը»[12], և ավելացնում՝ ուներ 2 աղջիկ և 5 տղա՝ Հովհաննես, Հակոբ, Հարություն, Տիգրան, Կարապետ. սակայն «այսօր այդ բազմանդամ գերդաստանէն ո՛չ մին կ'ապրի»[13]:

Հայրը՝ Հարություն Երամյան. ընդամենը 13 տարեկանում հորը կորցրած Համբարձումը նրան հիշում է որպես ընթերցասեր, կրթության գործի ջատագով, բանիմաց և հյուրասեր անձնավորություն. «Հինգ եղբարց կրտսերագոյնն էր սա, որ իր մանկութեան հասակէն իր հաւուն տէր Յովհաննէսի և հօրը՝ տիրացու Երեմիայի խնամքովն ու օրինակովը անյագ ընթերցող մըն էր, նոյնիսկ իր ծերութեան վերջին տարիները մինչեւ մահը: Կը յիշեմ, թէ ինչպէ՞ս կը կարդար ժամերով ոչ միայն կրօնական, այլեւ աշխարհիկ մատեաններ և 11 տարեկանէս առաջ ինձ կը ցուցնէր Աստուածաշունչի պատկերները և Ինճիճեանի հնախօսութեան կամ աշխարհագրութեան քարտէսները...: Նա իր ժամանակակից վանեցի բանգէտ աշխարհականներու հետ մտերիմ յարաբերութեան մէջ էր և մինչեւ իր կեանքին վերջերը կը յարգէր ու կը հիւրասիրէր ամէն կարգի մտաւորականները: Ան եկեղեցական երաժշտութիւն սորված էր նախ իր հօրմէն և ապա յատկապէս իր ժամանակի նշանաւոր երաժիշտ տէր Պետրոս քահանայի մօտ և իր կարգին սովրեցուցած էր իր բազմաթիւ աշակերտներուն: Ս. Յակոբ եկեղեցւոյ բոլոր տիրացուները կամ դպիրները իր հասցուցած աշակերտներն էին, որոնք շատ կը յարգէին զինքը...: Նա ծանօթ էր Վանի հին և նոր ջոջերուն, որոնցմէ շատերը իր մօտ ուսում առած կամ ընկերներն եղած էին և այս պատճառով կը յարգուէր ազգային պաշտօնական և ոչ-պաշտօնական շրջանակներէն՝ ծերութեան հասակին իր հարստութենէն մերկանալէն վերջն իսկ: Հակակրութիւն մը ունէր աղայական հովերու դէմ և խիստ կը քննադատէր Ս. Յակոբ թաղի ամենէն մեծ աղայի՝ Վարդան Կոսպարեանի՝ ամէն առաւօտ, մանաւանդ ձմրան եղանակին, փողոցի ձիւնակոյտերուն մէջէն բացուած նեղ կածանէն՝ դանդաղաքայլ, շորոր մորոր (սաղապաճեմ) եկեղեցիէն դէպի տուն դառնալը, մինչ հարիւրաւորներ ստիպուած կը լինէին անոր ետեւէն տողանց կազմել քառորդ ժամու մը ճամբուն վրայ»[14]:

Ներսես Աշտարակեցու[15] օրոք Հարություն Երամյանն այցելում է Էջմիածին, իսկ Պողոս Ադրիանուպոլսեցու[16] օրոք՝ Երուսաղեմ, երկու անգամ էլ՝ Պոլիս: Անձամբ ճանաչում էր Խրիմյան Հայրիկին[17], մեծ հետաքրքրությամբ կարդում «Արծուի Վասպուրականի» շաբաթաթերթը. «Կը հետեւէր Խրիմեանի քայլերուն, և կը յիշեմ իր ուրախութեան արտասուքն ի լուր իր վաղեմի բարեկամին պատրիարքական ընտրութեանը՝ 4 Սեպտ. 1869-ին»[18]:

1847-48 թթ. անսալով Մ. Չուհաճյան պատրիարքի[19]՝ գավառներում դպրոցներ բացելու հորդորներին՝ պոլսաբնակ վանեցի երևելիները որոշում են ծխական դպրոցներ բացել նաև Վանում. «Յարութիւն Երամեան իբրև յառաջդիմասէր մարդ և հաւասարապատիւ ընկեր այդ անձնաւորութիւններուն, 150 ոսկի կը տրամադրէ վարժարանական սոյն ձեռնարկին և իսկոյն կը հիմնուին Վանի հինգ ծխականները: Որովհետև այդ գումարը անհամեմատ բարձր արժէք կը ներկայացնէր այն օրերուն, ուստի ի յիշատակ այդ առատաձեռնութեան՝ կ'որոշուի դպրոցները կոչել նուիրատուի եղբայրներուն կամ զուգադիպաբար չորս աւետարանիչներու անուններով»[20]:

Հավանաբար 1830-ական թթ. Հարություն Երամյանը «դպրոցի վերածած էր ոստայնանկութեան փակուած գործարանը, ուր աշակերտները ծալապատիկ նստած գրել կարդալ կը սորվէին»[21]:

8 **Բագրունի Հ.** /Հրանտ Կարինյան/, Անյայտ եւ անզարդ շիրիմներ, «Հորիզոն», 1915, № 229, 10 հոկտեմբերի, էջ 1:
9 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 45:
10 Նույն տեղում:
11 Նշվ. աշխ., էջ 380:
12 Նշվ. աշխ., էջ 45:
13 Նշվ. աշխ., էջ 46:
14 Նշվ. աշխ., Ա, էջ 39:
15 Ամենայն Հայոց կաթողիկոս (1843-1857 թթ.):
16 Պոլսո պատրիարք (1815-1823 թթ.), վախճ.՝ 1853 թ.:
17 Պոլսո պատրիարք (1869-1873 թթ.), Ամենայն Հայոց կաթողիկոս (1893-1907 թթ.):
18 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 40:
19 Պոլսո պատրիարք (1844-1848 թթ.), Ամենայն Հայոց կաթողիկոս (1858-1865 թթ.), վախճ. 1865 թ.:
20 Նշվ. աշխ., Ա, էջ 40-41:
21 Նշվ. աշխ., էջ 41:

Հատկանշական է, որ Հարությունը մեծ հարգանք ու հեղինակություն էր վայելում ոչ միայն վանեցի ազգակիցների, այլև թուրքերի շրջանում: Այդ առթիվ մանուկ Համբարձումի հիշողության մեջ դրոշմվել էր հետևյալը. «Հին օրերէն ի վեր, թուրք մոլեռանդ մտայնութիւնը կը ճանչնար եւ կը գնահատէր հայերու բարոյական գերազանցութիւնը: Կը յիշեմ թէ ինչպէս մեր թաղի թուրքերը շատ անգամ կը դիմէին հօրս, խորհուրդ հարցնելու կամ իրենց ներքին վէճերը կարգադրելու: Հայրս սովոր էր տաք եղանակին, փողոցին դրան մօտիկ աղիւսաշէն բազմոցին վրայ նստիլ եւ ահա տակաւ կուգային իր շուրջը կը բոլորուէին դրացի եւ անցորդ թուրքեր: Ոմանց մէջ ալ նա սուրբի համբաւ կը վայելէր, այնպէս որ ջերմէ կամ տենդէ բռնելու պարագային՝ անոնք մեծ հաւատքով բամպակէ պատրոյգ մը կը բերէին հօրս, որ՝ չեմ գիտեր ի՛նչ աղօթքներ մրմնջելով՝ պատրոյգին վրայ մի քանի հանգոյց կ'ողորէր: Բերողները մեծ հաւատքով կ'առնէին զայն եւ ահա քանի մը օր վերջ կուգային օրհնութիւններով շնորհակալութիւն յայտնելու կատարուած բժշկութեան համար»[22]:

Հարությունն ամուսնանում է, երբ արդեն 40-ն անց էր. «Հայրս Պոլսէն վերադարձին (1847) կ'ամուսնանայ Փէհրիզեանց բարեհամբաւ գերդաստանէն ի հօրէ որբ Կատարինէի հետ և կ'ունենայ երեք մանչ զաւակ»՝ Ղուկաս, Վարդան և Համբարձում[23]:

Հարություն Երամյանը մինչև 1862 թ. Սբ. Հակոբ թաղի Ղուկասյան վարժարանի ուսուցիչն էր. «Ես 4-5 տարեկան էի, երբ Յարութիւն Երամեան կամ հայրը, հրաժարեալ չգիտեմ ո՛ր ուսուցչի բաց թողած աթոռը առժամապէս կը գրաւէր վերջին անգամ: 1862-էն սկսեալ նա արդէն յոգնած ու ծերացած՝ տունը քաշուեցաւ, նուիրելով ինքզինքը ընթերցանութեան և պարտէզի մշակութեան: Նախանձաւորութեամբ կը սիրէր հայ եկեղեցին և ամէն օր անխափան կը մասնակցէր Ս. Յակոբի երգեցողութեանց՝ իբրեւ վարպետ երաժիշտ և գլուխ դպիրներու»[24]:

Երկու տարվա տարբերությամբ իրար հաջորդած ընտանեկան մեծ դժբախտությունները Հարություն Երամյանին անդարմանելի վիշտ են պատճառում. «Խորտակուեցաւ ան տեսնելով մահը իր սիրեցեալ անդրանիկ զաւկին, Ղուկասի՝ 1866ին ու երկու տարիէ վերջ ալ՝ իմ դժբախտութիւնը»[25]: Վշտաբեկ հայրը վախճանվում է 1870 թ.[26]:

Մայրը՝ Կատարինե Փեհրիզյան. սերում էր Փեհրիզյան գերդաստանից. «Մայրս՝ Կատարինէ գրեթէ ինքնաշխատութեամբ բաւական գրել կարդալ սորված լինելով՝ իրեն ծանօթ կանանց շրջանակներու մէջ մասնաւոր յարգանք մը կը վայելէր իբրեւ գրոցբրոց հազուագիւտ տանտիկին՝ այդ վաղեմի օրերուն համար: Վերին աստիճան կրօնասէր՝ եկեղեցի չգնալու պարագային առաւօտեան և երեկոյեան ժամերգութիւններն ու Եկեսցէն կը կատարէր սենեակ մը առանձնացած, ոտքի վրայ: Իր այս օրինակը շատ խոր կ'ազդէր իր երեք զաւակներուն, և ես՝ ամենէն կրտսերս, իրմէ սորված եմ շատ մը շարականներ ու աղօթքներ, ինչպէս և մասամբ եկեղեցւոյ տօնակարգը»[27]: Նա «լաւ կը հասկնար գրաբար լեզուն, որով եկեղեցական աղօթքներ, երգեր, աւետարան, սաղմոսներ, եւն, մեծ մասամբ գոց կ'արտասանէր: Ինքն ալ կը յարգէր ու կը սիրէր գրագէտները, կը վիճէր յաճախ անոնց և նոյնիսկ հօրս հետ զանազան նիւթերու վրայ և այս կերպով մտաւորական զբաղումը մեր ընտանեկան յարկի գլխաւոր հաճոյքն ու զարդը կը կազմէր»[28]:

Անսահման երախտագիտությամբ մորը հիշելիս Համբարձումը նաև նշում է. «Շատ բաներու մէջ նա իմ ուղեցոյց և խորհրդականս եղաւ և մինչև իսկ պատանի և երիտասարդ ընկերներս հետաքրքրութեամբ կը լսէին անոր զրոյցներն ու խրատները և կ'անուանէին զայն տատա, մեծ քոյր կամ փոքրերու խնամակալ մայր»[29]:

1880-1881 թթ.՝ Վանի սովի ժամանակ, շնորհիվ Կատարինեի անսահման բարության, Երամյանների տան ալյուրի ամբարն ու հացի տաշտը բաց էին բոլորի համար: Բարեպաշտ մայրը ձեռնունայն չէր ճանապարհում ոչ մեկին. «Մեր ալիւրի ամբարէն ու հացի դաշտէն բաժին կը հանէր իրենց դիմողներուն, այնպէս որ գրեթէ ամիս մը մենք պարտաւորուեցանք քաշը 15 դահեկանի հաց գնել: Երբ կը հարցնէի մեր պատրաստ պաշարի այնքան արագ սպառումը, նա հրեշտակային քաղցրութեամբ կը պատասխանէր ինձ. «Սովահարներ կուգային և ես չէի կրնար ձեռնունայն ճամբել զանոնք»[30]:

Ամեն տեսակ դիպվածներից բաղկացած կյանքը, սակայն, այս բարի հայուհու համար ոչ թե ուրախություն, այլ մեկը մյուսին հաջորդող դառնություն ու կսկիծ էր վերապահել: Նախ անդրանիկ որդու՝ Ղուկասի մահը (1866 թ.), ապա կրտսեր որդու՝ Համբարձումի կուրանալը (1868 թ.), անմխիթար ու վշտաբեկ ամուսնու վախճանը (1870 թ.) և ի վերջո նաև միջնեկ որդու՝ Վարդանի անսպասելի մահը (1871 թ.) խեղճ Կատարինեին իսպառ զրկում են ընտանեկան երջանկությունից: Նախկին բազմանդամ ընտանիքից

22 Նշվ. աշխ., Ա, էջ 31:

23 Նշվ. աշխ., էջ 42:

24 Նշվ. աշխ., էջ 41-42: Նշվել է նաև, որ Սբ. Հակոբ եկեղեցում «...ինքն էր պետ տիրացուներու կամ դպիրներու խմբին մինչեւ 1860ական թուականներու կէսին» (էջ 39):

25 Նշվ. աշխ., էջ 42:

26 Նույն տեղում:

27 Նշվ. աշխ., Ա, էջ 44:

28 Նշվ. աշխ., էջ 42:

29 Նշվ. աշխ., էջ 77:

30 Նշվ. աշխ., էջ 44: Տարիներ հետո վանեցի բազմանդամ մի ընտանիքի զավակներից մեկն այսպես էր արտահայտվել Համբարձումի մոր մասին. «Ա՜խ, գիտե՞ս թէ որքա՜ն բարի էր քու մայրդ, Աստուած հոգին լուսաւորէ, առանց անոր առատաձեռն օգնութեանց՝ մեր՝ իբր տասը հոգիէ բաղկացած ընտանիքը սովահար պիտի կորնչէր 1880 թուականի ձմրան» (նշվ. աշխ., Ա, էջ 124):

կույր որդու հետ մեն-միայնակ մնացած Կատարինեն, շնորհիվ միմիայն անձնական բացառիկ կամային հատկանիշների, ի մեծ մխիթարություն կուրացած միակ զավակի, կարողանում է ապրել և Վարդանի թաղման ժամանակ Համբարձումին պատգամում հետևյալը. «...աշխատի՛ր մարդ լինելու»[31]:

Կատարինեն վախճանվում է 1882 թ.[32]:

Ավագ եղբայրը՝ Ղուկասը (ծնվ. 1850 թ.). Համբարձումն այսպես է հիշում նրան. «Ուշիմ, ձայնեղ և գեղադէմ պատանի մը: Իր խաղն էր գեղարուեստը, բարակ տախտակներու և ուրիշ առարկաներու վրայ իր գեղեցիկ մանրակերտները և զարդագրերով վայելչագեղ տետրակները կը պահէինք երկար ատեն իբրեւ յիշատակ: Սա 14 տարեկան հասակին անդամալոյծ ինկաւ»[33]:

Ղուկասին առողջացնելու նպատակով ծնողները ոչինչ չեն խնայում: Հայրը խնդրում է Լիմ անապատի վանահայր եպիսկոպոս Հակոբ Թոփուզյանին «միաբանութեան հետ հսկում մը ընել: Հայրս ուխտեց նաև գարնան՝ սեղան մը (վանականներու տրուած ճոխ հացկերոյթ) տալ միաբանութեան ի Լիմ կղզի: 1864 դեկտեմբերին, Մծբնայ Ս. Յակոբի պահոց ուրբաթէն շաբաթ լուսնալու գիշերը, անդամալոյծ եղբայրս յանկարծ —ոտներս կը շարժին, մայրի՛կ... ...հայրս ամբողջ գերդաստանով Լիմ տարաւ զմեզ ու տուաւ ուխտի սեղանը՝ 40է աւելի վարդապետներու և նոյնչափ տիրացուներու ու ծառաներու, թո՛ղ կղզիէն դուրս ցամաքի վրայ, դրսի տուն կոչուած բաժնին մէջ կարդացող 30է աւելի գիշերօթիկ աշակերտներ և նոյնքան մշակներ»[34]:

Որոշ ժամանակ անց Ղուկասը զոհ է դառնում թանչքի (դիզենտերիա) համաճարակին[35]:

Միջնեկ եղբայրը՝ Վարդանը (ծնվ. 1851 թ.). 15 տարեկանում արդեն հմուտ գրագիր էր: Հանկույսների վարժարանում Ավետիս Սահառունի վարժապետի աշակերտն էր[36]:

Մեծ ազդեցություն ունենալով «իր ընկերներուն վրայ, կազմած էր Յայնկոյսներու թաղին եկեղեցւոյ ծոցը Արծրունեան ուսումնասիրաց ընկերութիւնը՝ 1868ին...: Իր մտաւոր զարգացման շնորհիւ գլուխ կը կանգնէր իր տարեկից երիտասարդութեան. իսկ շուկայի կեանքին մէջ ցոյց տուած ընդունակութիւններով մեծ ասպարէզ մը ապահոված էր իրեն...»[37]:

Ի մեծ դժբախտություն Երամյան ընտանիքի՝ ավագ եղբոր նման Վարդանը 1871 թ. օգոստոսին ընդամենը 20 տարեկանում նույնպես մահանում է թանչքի համաճարակից. «Թաղումն եղաւ շատ հանդիսաւոր. զինքն ճանչցող թուրքերն անգամ լացին իր կորուստը»[38]:

Հետաքրքրական է, որ եղբոր՝ Վարդանի մահվանից երկու ամիս առաջ մի գուշակ ասել էր, թե «Վարդանի աստղը խաւար է, իսկ Համբարձումինը լուսաւոր, շողշողուն և ուրիշ աստղերով շրջապատուած»: Հ. Երամյանը հիշում է նաև, որ թաղման ժամանակ դժբախտ մայրն իր իսկ ներկայությամբ արտասանել է հետևյալ խոսքերը. «Մեռնելիքը սա էր և ո՛չ միւսը»[39]:

Երամյանների տունը. Վանի Այգեստան քաղաքամասում գտնվող իրենց տան մասին Համբարձումը նշում է. «Կը յիշեմ մեր հին տան մէջ տէր Յովհաննէսի ստորնայարկ խցիկը, որ կը կոչուէր գես երիցու տուն, մէկ պատուհանով նեսեմաստուեր այլ խորհրդաւոր ճգնարան մը արդարեւ: Տ. Յովհաննէսի գործածած արծաթախաչ տպագիր Նարեկը՝ շուշփաներու մէջ փաթթուած՝ աւանդական սրբութիւնն էր մեր տան: Բարեպաշտ թաղեցիները կը խնդրէին, կը տանէին զայն կարդալու իրենց հիւանդներուն վրայ և յաճախ, իբրև նուիրական բժժանք կամ մասունք, անոնց բարձին տակ կը դնէին: Այս կը շարունակուէր դեռ մինչև իմ երիտասարդութեան օրերը, բայց չեմ յիշեր որո՞նք տարին և ա՛լ չվերադարձուցին թէ՛ Նարեկը և թէ՛ Աստուածաշունչն ու Յայսմաւուրքը: Սոյն Աստուածաշունչէն և Յայսմաւուրքէն յիշողութեանս մէջ տպաւորուած պատկերներն ու ձեռանկարներն են, որ աղօտ գաղափար մը կազմել կուտան ինձ գեղարուեստի և մասնաւորապէս հայ մանրանկարչութեան վրայ: Այս աղօտ գաղափարն իսկ սակայն կը պայծառանայ և կ'ընդլայնի երեւակայութեանս առջեւ՝ ընթերցումներով նկարչական գրականութեան, զոր աչք ունեցողի մը հետաքրքրութեամբը կը սիրեմ ու կը հետեւիմ»[40]:

Ինչ վերաբերում է ընտանեկան մթնոլորտին, ապա Համբարձումի հիշողության մեջ դրոշմվել էր հետևյալը. «Կը յիշեմ, որ ձմրան երկար գիշերները մանաւանդ, երբ ամէնքս թոնիրի (ընտանեկան կրակարան) շուրջ կը բոլորուէինք, մայրս կամ հայրս փոխն ի փոխ ու մեծ եղբայրներս կը խօսէին, կը

31 Նշվ. աշխ., Ա, էջ 77:
32 Նշվ. աշխ., էջ 44:
33 Նշվ. աշխ., էջ 43:
34 Նույն տեղում:
35 Նույն տեղում:
36 Նույն տեղում: 1860-ական թվականներին Ավետիս Սահառունին «Յայնկոյսներու վարժարանին աւագ ուսուցիչն էր, Փըրկչի հիւանդանոցին մէջ լաւ գրաբար սորված, որ աւելի քան երեսուն տարի պաշտօնավարեց...: Թուրքերէնի և ֆրանսերէնի եւս ծանօթ էր, բայց ո՛չ դասախօսելու չափ. բաւական ֆրանսերէն գրքեր ունէր...: Մտքի մեծ ընդունակութիւն ունէր, սակայն ծոյլ էր. իր հնօրեայ և նոյնիսկ Տէր Թոդիկեան մեթոտներէն չի հրաժարեցաւ մինչև վերջ»: 1870-80-ական թվականներին պաշտոնազրկվելով՝ փորձում է Հանկույսներ թաղում մասնավոր դպրոց բացել: Սակայն դա նրան չի հաջողվում, քանի որ «...քաղաքի Յիսուսեան վարժարանի մէջ աւագ ուսուցչութեան պաշտօնին հրաւիրուեցաւ, բայց հոն ալ, քիչ ատենէն իր գծուծ ձեւերուն համար... իր դէմ հանեց դպրոցականները և ստիպուեցաւ պաշտօնէ հեռանալ՝ հակառակ օրուան ազդեցիկ առաջնորդին՝ Պօղոս եպ. Մելիքեանի պաշտպանութեան»: Ձեռնադրվելով քահանա և Շուշտակ վարդապետ՝ կարգվում է Աղբակի առաջնորդ և Սբ. Բարդուղիմեոս վանքի վանահայր, «հոն ալ վախճանեցաւ անշքութեան մէջ» (նշվ. աշխ., Ա, էջ 57-58):

37 Նշվ. աշխ., Ա, էջ 43-44:
38 Նշվ. աշխ., էջ 44:
39 Նշվ. աշխ., էջ 76-77:
40 Նշվ. աշխ., էջ 37:

ճառէին օրուան ազգային ու կրօնական տօներու կամ դէպքերու վրայ, կը կարդային Աստուածաշունչ, Նարեկ և լրագիր կամ աշխարհիկ մատեաններ: Յետոյ մայրս թարմ կամ չոր պտուղներով զամէնքն կուրախացնէր, մանաւանդ զիս, որ ծնողացս Բենիամինն էի: Յետոյ ամէնքս պառկելէ առաջ կ'աղօթէինք: Յաջորդ օրը գիշերանց՝ մանաւանդ տօն օրերը՝ խմբովին եկեղեցի կ'երթայինք: Գլխաւոր տօներու և Մեծ Պահոց շրջանին, գրեթէ անվրէպ, վարդապետ մը կամ եպիսկոպոս մը մօտակայ վանքերէն իր վեղարովն ու քարոզովը շուք կուտար եկեղեցական արարողութեանց և խօսակցութեանց նիւթ կը մատակարարէր ո՛չ միայն մեր տան, այլեւ ամբողջ ժողովրդին: Այդ երանելի օրերուն դեռ շատ քիչ էին լրագիրները. դպրոցներու մէջ դեռ չոր գրաբարի ուսուցում միայն կար, գրական հաւաքոյթներ ո՛չ երբեք»[41]:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԵՐԱՄՅԱՆ

Ծնունդը. Համբարձումը Երամյան ընտանիքի կրտսեր զաւակն էր: Ծնվել է 1857 թ. մայիսի 5-ին՝ Համբարձման տոնին: Մինչև 10 տարեկանը «ոսկի գինդեր կը կրէի ըստ տեղական սովորութեան և իբրեւ ծնողացս Բենիամինը՝ շատ կը սիրուէի ո՛չ միայն անոնցմէ, այլեւ թաղեցիներէն, ազգականներէս, եկեղեցւոյ դպիրներէն և ուսուցիչներէս»[42]:

Մանկութիւնից Համբարձումը բնության սիրահար էր: Սիրում էր ծառ ու ծաղիկ, լեռ ու դաշտ: Հաճախ բարձրանում էր իրենց երկհարկանի տան կտուրն ու զմայլվում ծագող արևով, հիանում Վանա լճի ծփանքով. «Ժամերով անշարժ, աչքս կը յառէի Վանի ընդարձակ հովիտին, որ կը պատկերանար կանաչութեամբ և ոսկեհունձ արտերով կտրատուած և որու մէջէն սողոսկող ջուրերու հոսանքներն ու լճակները, արծաթաշող ժապաւէններու կամ բիւրեղափայլ հայելիներու հմայքը կազդէին ինձ: Աջ կողմէն հորիզոնը կը պատնիշէին Ս. Գրիգորի և դէպ արեւմուտք՝ Ակրբիի բլուրներու երկարաձիգ կարաւանները՝ հարս ու փեսայ կատարներով՝ մինչեւ ծովափ: Իսկ ձախ կողմէն Շուշանցի լեռները և անոնցմէ ձորակով մը բաժնուած Ս. Խաչի բլրաշարքը՝ նոյնպէս մինչև ծով: Ուրեմն ահագին աղեղ մը կը կազմէր այս տեսարանը, որ իր մէջ կը պարփակէր ո՛չ միայն դաշտը, այլև Վանի Այգեստանը, որ հեռուէն կը թուէր միապաղաղ հսկայ զմրուխտ մը: Այդ կանաչութեան և ծովու հայելիանման կապուտակին մէջտեղ կը բարձրանար Վանի պատմական բերդը և արեւմտեան կողմը ընդարձակ լիճը իր չորս կղզիներով ու շրջապատի լեռներով, հարաւային լեռնագօտին՝ մշտականաչ անտառներով և Արտօս ու Առնօս կատարներով՝ գրեթէ միշտ ձիւնապատ, իսկ հիւս. արեւմտեան կողմը՝ վեհափառ Սիփանն իր ձիւնապսակ և ամպածրար գագաթով: Լճին արեւմտեան ափերէն հազիւ կ'ուրուագծուէին մշուշապատ Նէմրուտն ու Գրգուռը, որոնց մանրամասն ու կախարդիչ նկարագրութիւնները պիտի կարդայինք յետոյ Սրուանձտեանցի անմահ գործերուն մէջ...: Չեմ կրնար մոռնալ այն դիւթիչ տեսարանը, զոր կը պարզէին իմ առջեւ մանկական հետաքրքրութիւնը բոցավառող այն ճերմակ կէտերը, որոնք արեւմուտքէն դէպ արեւելք հեզասահ կը յառաջանային ծովի մակերեսին վրայ: Առագաստանաւեր էին անոնք, որ շրջականերէն կուգային դէպի Վանի Աւանց կոչուած նաւահանգիստը՝ իբրեւ ճերմակ աղաւնիներ ջրին վրայ լող ինկած»[43]:

Հակառակ բնության զարմանահրաշ գեղեցկություններին հաղորդակցվելու՝ ճակատագրով ընձեռված այնքան սահմանափակ ժամանակահատվածին՝ Համբարձումը, ըստ էության, զգայուն և բացառիկ ուշիմ հոգեկերտվածքի շնորհիվ հասցրել էր քաղել կարևորը: Ի հետևություն այդ ամենի՝ նշում է. «Մանկութեանս ծաղկատի շրջանին բնութիւնն եղաւ իմ նախասիրած գիրքն ու պատկերասրահը, որոնք իմ մէջ զարգացուցին ոգին հետաքրքրութեան և սէրը գեղեցկին»[44]:

5-6 տարեկան Համբարձումը սովորում է Վանի Սբ. Հակոբ թաղի Ղուկասյան վարժարանում նախ հոր, ապա քահանա Մեսրոպ Փափազյանի[45] մոտ. «Սկզբնական շրջանին կը ղեկավարուի ուսուցիչ Մարտիրոս Արտամետցեանի տեսչութեամբ...: Սա քանի մը տարիներ պաշտօնավարելէ ետք կը սպանուի Պարսկաստանի մէջ: Անկէ ետք Ս. Ղուկասեան վարժարանի մէջ կը պաշտօնավարեն Մարտիրոս վարժապետ Բիւզանդեան. ասոր օրով 1862 թուականներուն կը տրուի կարգ մը ներկայացումներ դպրոցի կողմէ, ինչպէս «Կայէն ու Աբէլ» եւ ուրիշներ: Անոնց կօժանդակէր առաւելապէս ժամանակի առաջնորդ Իգնատիոս եպիսկոպոսը[46], որ Շիրոյեան եպիսկոպոսէն ետք կրթական գործի ղեկավարութիւնը ստանձնած էր: Յակոբոս Սրուանձտեան եւ ուրիշներ մինչեւ 1864-ին, երբ Տիգրան Ամիրճանեան Պոլիսէն գալով կը ստանձնէ տեսչութիւնը օգնականութեամբ Գրիգոր Եկարեանի»[47]:

41 Նշվ. աշխ., Ա, էջ 42:

42 Նշվ. աշխ., էջ 47:

43 Նշվ. աշխ., Ա, էջ 48-49:

44 Նշվ. աշխ., էջ 50:

45 Նույն տեղում: Ի դեպ, Մեսրոպ (աշխարհիկ անունը՝ Մարտիրոս) վարդապետ Փափազյանը (15.12.1823, Արտամետ–17.04.1891, Հաֆթվան) ուսուցիչ, հասարակական և եկեղեցական գործիչ Ներսես (Մաշտոց), Վրթանես և Վահան Փափազյանների հայրն էր: Հետագայում դասավանդում է Ագուլիսում, Թավրիզում և երկար տարիներ կրթական արդյունավետ գործունեություն ծավալում: 1876 թ. Թավրիզի Լիլավա թաղի Ազգային ուսումնարանի տեսուչն էր («Մեղու Հայաստանի», 1876, № 30, 7 օգոստոսի, էջ 3): Սպանվել է 1891 թ. Սալմաստի Հաֆթվան գյուղում (մանրամասն տե՛ս **Կարապետյան Մ.**, Սալմաստ, Երևան, 2017, էջ 224):

46 Իգնատիոս եպս. Գագմաճյանը Վանի առաջնորդն էր 1860-1866 թվականներին:

47 **Բագրատունի Հ.**, Հայ դպրոցը Վանի մէջ (1820-1913), «Աշխատանք», 1913, № 1, 2 նոյեմբերի, էջ 6: Հայտնի է, որ «Ամիրճանեան կը





Լիմ անապատը և Նարեկավանքը, որտեղ Համբարձում Երամյանն այցելել է 7 և 9 տարեկանում՝ 1864 և 1866 թթ.

1864 թ.-ից մինչև 1868 մարտ ամիսը Համբարձումը շարունակում է ուսումն Այգեստանի հյուսիսարևելյան կողմում գտնվող Հանկույսներ թաղի վարժարանում. «Սկսայ յաճախել Այգեստանի հիւս.արեւելեան կողմը՝ Յայնկոյսներ ըսուած թաղին վարժարանը՝ նախ Ղուկաս ու Վարդան եղբայրներուս հետ և ապա մինակ՝ անոնց հրաժարելէն յետոյ: Տունէն դպրոց մէկ ժամու ճամբայ էր, զոր ստիպուած էի կտրել ամառ ու ձմեռ հետիոտն: 1865-68 մինակս յաճախած եմ և օր մը միայն փախուստ տուած՝ այն ալ թաղեցի ընկերներուս հետ՝ Արարուց թաղի նորակառոյց վարժարանն ու եկեղեցին երթալ պտտելու համար: Առաջին տարին կարդացի հին քերական՝ այբուբենի կարգաւ միավանկ, երկավանկ, եռավանկ և յաջորդաբար բազմավանկ բառերէ կազմուած. առաջին երեսին վրայ գրուած էր. «Խաչ, օգնեա՛ ինձ», քանի մը ամիս յետոյ հեգելով և Սաղմոսի առաջին կանոնը, որ այդ պատճառաւ կը կոչուէր Հեգարան: Երկրորդ տարին կարդացի և աւարտեցի Սաղմոսի ութ կանոններն ամբողջ: Երրորդ տարին Գործք Առաքելոցը, իսկ չորրորդ տարին Նարեկ. ո՛չ մի աշխարհաբար դասագիրք. այսպէս էր նաև Վանի միւս վարժարաններու մէջ»[48]:

1864 թ. այցելում է Լիմ կղզի[49], հիանում Արճեշի կղզիացած բերդի սպիտակ պարիսպներով ու շենքերով, վեհափառ Սիփանով[50], որոշ ժամանակ անց՝ նաև Նարեկավանք. «Ինը տարեկան էի, երբ Նարեկայ վանքը ուխտի գացինք և այդ առթիւ աչքովս տեսայ Արտամէտը, Հայոց Ձորը, Ոստանը, Ռշտունիք (Գեաւաշ) և անոնց հսկայ պահապանն Արտօսը: Աջ կողմ ծովը՝ Աղթամար և Առուէր կղզիներով, իսկ ձախ կողմը՝ դալարագեղ ցամաքը հայաշատ գիւղերով՝ մինչև Նարեկի վանքը: Դիտող մը՝ այս զմայլելի տեսարանէն, որ կը տարածուի Գրիգոր Նարեկացիի աղօթատեղի ըսուած ծովահայեաց լեռնէն դէպ արեւելք ընդարձակ և դրախտագեղ հովիտի մը վրայ, դիւրաւ պիտի կրնայ մեկնել գերզգայնիկ և խորհրդապաշտ բանաստեղծին հոգեսլաց յափշտակութիւնը դէպի հանդիպակաց Առուէր կղզին...»[51]:

Անդրադառնալով սեփական խառնվածքին և բնավորությանը՝ Համբարձումը նշում է. «Ի մանկութենէ յամառ էի...: Եկարեան[52] նոյն տարւոյ Համբարձման տօնէն քանի մը օր առաջ որոշեց որ ես կարդամ նոյն օրուայ ճաշու գիրքը. «Ո՛չ» մը թռաւ շրթունքներէս. Եկարեանի և վերջէն Ամիրճանեանի համոզողական ճիգերուն ու քանի մը ճպոտներ կռնակիս վրայ կոտրտուելուն և տախտակամածի վրայ թաւալգլոր վիճակիս մէջ Ամիրճանեանի կրկնակօշիկներու հարուածներուն հակառակ՝ «ո՛չ» «non possumus» ետ չառի. աչքերէս արտասունք կը վազէր, սակայն ես կը խնդայի, այնպէս որ խեղճ Ամիրճանեան յուսահատ գոչեց. «Թշուառակա՛ն, գոնէ լաց»: Ապա յուսակտուր՝ ազատ արձակեցին զիս, և երբ ժպտադէմ տեղս գացի, ընկերներս շրջապատեցին զիս՝ հերոսութենէ՞ս կախարդուած»[53]:

Բացի էութեամբ ուսումնատենչ լինելուց՝ Համբարձումը նաև ուշիմ էր և պարտաճանաչ. «Հայրս նիւթապէս ինկած էր արդէն, այնպէս որ Նարեկացիի աղօթագիրք մը չի կրցաւ գնել ինձ, թէպէտ իր հաւրէն՝ Տէր Յովհաննէսէն ժառանգած ունէր կէս արծաթակողք Նարեկ մը՝ մետաքսե թաշկինակներու մէջ փաթթուած, զոր իբրև նուիրական աւանդ, խնամով կը պահէր: Այս պատճառաւ ես ստիպուած էի ընկերներուս գիրքերուն վրայ մուրալով դաս պատրաստել. և որովհետև մէկ կամ երկու անգամ կարդալով իրենցմէ աւելի լաւ կը սորվէի, ուստի առ նախանձու յաճախ կը զլանային փոխ տալ ինձ իրենց գիրքերը: Այս պարագաներուն դասի վրայ այնքան ուշադրութեամբ կը հետեւէի ընկերներուս ընթերցումներուն,

շարունակէ պաշտօնավարել մինչեւ 1870 թուականը: Անոր շրջանի սաներէն յայտնիներն են Խաչատուր Լեւոնեան, Համբարձում Երամեան եւ ուրիշներ, որոնք Ամիրճանեանի հետ քաղաք փոխադրուելով, իրենք ալ իրենց ուսումը հոն կը շարունակեն» (նոյն տեղում):

48 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 50-51:

49 Նշվ. աշխ., էջ 43:

50 Նշվ. աշխ., էջ 49-50:

51 Նշվ. աշխ., Ա, էջ 49:

52 Խոսքը Տիգրան Ամիրջանյանի օգնականի՝ Գրիգոր Եկարյանի մասին է: Որդին՝ Արմենակ Եկարյանը, Ապրիլյան հերոսամարտի գործուն մասնակիցներից մեկն էր:

53 Նշվ. աշխ., Ա, էջ 62:

որ ամենէն յառաջադէմին չափ յաջող կրնայի կարդալ դասս՝ ուսուցչի հրամանաւ նոյն ոոպէին ինձ փոխանցուած գրքի մը վրայ: Առ ի յորդոր ուսանողներու՝ թոյլ կուտամ ինձ յայտնել, որ աշակերտական կեանքիս մէջ երբէք յանդիմանուած չեմ անպատրաստութեան պատճառով, թէպէտ ամենէն անկարգներու չափ ծեծ կերած եմ մանկական աշխուժիս և զուարթ խառնուածքիս պատճառով, ինչ որ ժամանակի ուսուցիչներն անկարգապահութիւն կը նկատէին»[54]:

Դասավանդվող ծրագրերի շարքում Համբարձումի համար կային նաև «անհամակրելի» առարկաներ. «Որչափ հայերէնի և ուրիշ ուսմանց մէջ աչքառու ընդունակութիւն մը կը ցուցնէի, թուագիտութեան և թուքերէնի համար սակայն վերին աստիճան անընդունակ երեւցայ, թէև դժբախտութենէս յետոյ, մտաւոր թուաբանութեան մէջ ընկերներուս հետ կը մրցէի»[55]:

1867 թ. Հանկույսների դպրոցում «Նարեկի հետ միաժամանակ սկսանք գրաբար քերականութիւն՝ Աւետարանի թարգմանութեամբ մէկտեղ. քառասուն ընկերներուս մէջ արդէն երկրորդն էի, թէև տարիքով ամենէն կրտսերը: Առաջինն էր Գէորգ Շաքարեան, որուն հետ մեր բարեկամութեան կապերը անխզելի մնացին մինչև վերջը: Այսպէս կը սովրէինք մենք ընթերցանութիւնը գրաբար դասագիրքերու վրայ, որով մեր հին լեզուն շատ հասկանալի էր մեզ: Գրավարժութեան գալով, 6-7 տարեկանէ սկսեալ, քերականի հետ մեզ կուտային օրինակներ, նախ առաջին վեց տառերուն և յաջորդաբար մինչև եւ, օ, ֆ առանց պարզ կամ բարդ գրերու խտրութեան, և ապա իբրև վարժութիւն՝ Սողոմոնէն առակներ կամ ինքնագիր ոտանաւորներ»[56]:

1868 թ. մարտից մինչև հոկտեմբեր ուսանում է Սբ. Հակոբ թաղի Ղուկասյան վարժարանում: Կրթօջախի ուսուցչակազմից Հ. Երամյանն առանձնապես հիացմունքով և երախտագիտությամբ հիշատակում է Տիգրան Ամիրջանյանին. «Քաջահմուտ հայերէն հին և նոր լեզուներուն, թուքերէնի, ֆրանսերէնի և ուրիշ ուսմանց մեջ: ...կը զարգացնէր անդադար ուսանելով և ուսուցանելով: Աչքովս ութն ամիս միայն տեսայ զայն, մարտէն մինչև հոկտ. 1868 և այնուհետև իր ձայնը կը լսէի: Երբ առաջին օրը ներկայացայ իրեն, նա թեթև քննութիւն մը կատարեց և Նարեկի ընթերցումէս գոհ՝ վերջացուց գրաբար ընթերցումի դասը: Գրէս ալ գոհ մնաց, և սակայն ինձ իր գրէն օրինակ մը տուաւ՝ բոլորովին տարբեր գիտցածէս. կէս ժամու մէջ կատարելապէս նմանցուցի, այնպէս որ նա դժուարաւ հաւատաց: Այնուհետև ինձ զարդագրերու օրինակներ տուաւ և ես գեղագրութեան մէջ այնքան առաջ գացի, որ ամէնուն օրինակ կուտար զիս: Յաճախ նա կուգար ակնապիշ դիտելու՝ խաղի կամ գրչի զբօսանքի համար՝ իմ չափազանց մանր այլ յստակ և մարգարտաշար գրերով կազմուած տողերը...»[57]:

1868 թ. ապրիլին՝ Ղուկասյան վարժարանի նոր շենքի հիմնարկեքի ժամանակ (հին շենքը նույն թվականի մարտի վերջերին հրդեհվել էր), Երամյանը հանդիպում է վարդապետ Պողոս Մելիքյանին. «1868 ապրիլին էր, որ ես առաջին և վերջին անգամ աչքովս տեսայ համբաւաւոր Պօղոս վարդապետ Մելիքեանը, որուն հետ ապագային այնքան յարաբերութիւններ պիտի ունենայի: Հսկայ ու փառաւոր մարդ մը էր նա, որ Գագմաճեան Իգնատիոս եպիսկոպոսի հեռանալէն յետոյ, Վանի առաջնորդական տեղապահ կարգուած էր»[58]:

Կուրությունը և ուսման հետագա ընթացքը. ավագ եղբոր՝ Ղուկասի մահից (1867 թ.) հետո Երամյան ընտանիքին բաժին հասած երկրորդ խոշոր արհավիրքն ընդամենը 11 տարեկանում՝ 1868 թ. նոյեմբերին ծաղիկ հիվանդությունից Համբարձումի կուրանալն էր. «Մանուկ էի հրաշագեղ աչքերով և միշտ կայտառուն ու ժպտուն, տխրութիւն կամ լաց ի՛նչ էր, չգիտէի: Եւ ահա 1868ի նոյեմբերի կէսին յանկարծ կրակներ կզգամ երակներուս մէջ և իսպառ յուշակորոյս կիյնամ անկողին: Քանի օր կը տեւէ այդ՝ չգիտեմ, և օր մը յանկարծ կսթափիմ և ձեռքիս վրայ դեղնագոյն խոշոր փշտիկներ տեսնելով կը զարմանայի...: Դարձեալ յուշակորոյս կիյնամ և քանի մը օր յետոյ սթափելուս՝ աւա՜ղ, խաւար կը գտնեմ շուրջս: Լացին

54 Նշվ. աշխ., Ա, էջ 51:

55 Նշվ. աշխ., էջ 62:

56 Նշվ. աշխ., էջ 51: 1867-1868 թթ.՝ ուսանելու տարիներին, հաճախ վարժարան է այցելել Խրիմյան Հայրիկը. «Ահա այդ օրն էր, որ ես առաջին անգամ աչքովս տեսայ ամենէն և մասնաւորապէս հօրմէս գովաբանուած Խրիմեանը՝ իր պարթև հասակով և չքնաղ ու հմայիչ դիմագծութեամբ...: 67էն 68 Խրիմեան շատ անգամ մեր թաղի Ս. Յակոբ եկեղեցին եկաւ և ամէն անգամ ես անոր դիմաց պիտի կանգնէի՝ ի հարկին մոմ բռնած...: 68ի Վարդանանց տօնին... քարոզի ընթացքին, ի մէջ այլոց, ըսաւ.–«Եթէ քառասուն տարի եւս ապրիմ, ա՜խ, Խաչատան քեզ փրկուած պիտի տեսնեմ...» (նշվ. աշխ., էջ 59-60):

57 Նշվ. աշխ., Ա, էջ 61-62: Տ. Ամիրջանյանի դիմագիծը, ըստ ավելի քան 56 տարիների վաղեմության, Երամյանի հիշողությամբ այսպիսին էր. «Նուրբ, վայելչակազմ և բաւական բարձր հասակով և մեծ ու կլոր գլխով մէկն էր, ճակատը լայն և բարձրադիր, աչուքները ծաւի, խոշոր և սրահայեաց, մազերն ու մօրուքը խարտեաշ, դէմքը գրեթէ միշտ ժպտուն: Հոգեկան նկարագրով բարի էր և ներող, այլ դիւրագրգիռ՝ մանաւանդ ի տես բարոյական տգեղութիւններու» (նշվ. աշխ., Ա, էջ 465): Ամիրջանյանն առաջին ամուսնությունից ուներ երկու դուստր: Կալիփսեն՝ մեծ աղջիկը, ամուսնացած էր պատրաստաբան և զվարճախոս Տիգրան Ավագյանի (Կըռկանց Տիգրան) հետ: Տիգրանը մահացել է 1914 թ. կուսակալ Թահսին բեյի հացկերույթի ժամանակ և ուներ երկու տղա՝ Վահրամ, Վահագն, երկուսն էլ՝ Երամյան վարժարանի աշակերտներ (նշվ. աշխ., էջ 462-463): Տ. Ամիրջանյանը վախճանվել է 1897 թ. մարտի 7-ին թոքային հիվանդությունից: Նրա դամբանականի ընթերցումն էլ վիճակվել էր հենց Երամյանին. «Իբրև իր ձեռնասուն սանի և քան զամէն երախտաւորեալ աշակերտի՝ ինձ վիճակուեցաւ թոթովել դամբանական մը իր հողակոյտին վրայ զոր արտասուքով թրջեցի և համբոյրներով ծածկեցի: Աւա՜ղ, ոչ եւս էր Ամիրճանեան...» (նշվ. աշխ., էջ 458, 462):

58 Նշվ. աշխ., Ա, էջ 64: Ի դեպ, վարժարանի հիմնարկեքին ներկա էր նաև Աղթամարի տխրահռչակ Խաչատուր Բ կաթողիկոսը:

ծնողքս և բոլոր ծանօթները. խեղճ մայրս խստիւ կը յանդիմանուէր հօրմէս, զի մայրական գթով արգիլած էր պատուաստը: Ջրծաղիկ հանած եմ եղեր և նա իրական Ծաղիկ նկատելով զայն՝ խնայած էր ինձ նշտրակի հարուածը: Իրական Ծաղիկը պիտի գար յետոյ ուրեմն և պիտի լինէր ինձ համար տատասկ, որ մինչև այսօր կը խոցէ հոգիս ու մարմինս: Եւ այնուհետև ի՜նչ ցաւերու և կտտանքներու չեղայ ես ենթակայ: Այն օրէն ցայսօր շատեր, նոյնիսկ կրթուած մարդիկ, աչքիս պակասին հետ անգթորէն կը խաղան, փոխանակ անունս տալու՝ այսինչ կոյրը կ'ըսեն յաճախ»[59]:

Համբարձումի կուրանալուց հետո հայրը փորձում է նրան աշուղ դարձնել և գտնում է «...քնար մը ու Սիւզան մականունով ժողովրդեան գուսան մը՝ զիս Գողթնեան արուեստին վարժեցնելու համար»[60], սակայն «...այդ չէր իմ կոչումը. կը սիրէի դպրոցը, որուն սիրովը հոգիս հնոց մըն էր մշտավառ: Թէպէտ տատասկը խաւարեցուցած էր ականողիկս, սակայն հոգւոյս մէջ կայծ մը կար անշէջ»[61]:

Համեմատելով իր վիճակն ի ծնե կույր մարդու հետ՝ Համբարձումը դառնագին նշում է.

«Քան զամէն թշուառ են՝ ըստ Հիւկօի՝
Անոնք, որ չունին լոյս, հաճոյք աչքի.
Ըստ իս՝ դժբախտ են անոնք աւելի,
Որ լոյս են տեսած, ապա կորուսած»[62]:

Ծանրագույն դիպվածի պատճառով կյանքի նոր՝ անօրինակ փուլում հայտնված պատանի Համբարձումը, սակայն, ոչ միայն չի վհատվում, այլև առավել տենդագին է նվիրվում կրթության գործին. «Աչքիս պակասը կը փոխարինուէր շրջապատիս համակրութեամբ եւ ես համակերպելով դառն ճակատագրին՝ ընթերցանութեան եւ ուսման մէջ փնտռեցի սփոփանքս ու երջանկութիւնս»[63]:

Սերը դեպի դպրոցը և ուսումը նկատելի էր նաև ուսուցչի՝ Տիգրան Ամիրջանյանի համար: Հենց նա էլ համոզում է Համբարձումի հորն ու եղբորը, որ չկտրեն դպրոցից: Այս խնդրում իր նպաստն է բերում ազգականներից Մկրտիչ Փեհրիզյանը: Մեկ տարի հետո Ամիրջանյանն անձամբ նրան ուղեկցում է Սբ. Հակոբ եկեղեցու վարժարան, որն «այնուհետև պիտի ըլլար իմ ներշնչարանս և Ամիրճանեանի շունչն՝ իմ մուսան»[64]: Հետո Համբարձումին հերթափոխով դպրոց են ուղեկցում նրա զարմիկները՝ Ավետիսը, Գրիգորիսը, Մարկոսը, Վահանը, Սիսակը և այլք:

Տիգրան Ամիրջանյանի հանձնարարությամբ դասընկերները «ինձ լսելի ձայնով պիտի պատրաստէին իրենց հայերէնի, պատմութեան, կրօնի, աշխարհագրութեան եւն դասերը, և ես ի բերան կը սովրէի աւելի շուտ և իրենցմէ աւելի աղէկ՝ երբեմն նախանձ շարժելու աստիճան, թէև փոխադարձաբար յիշողութեանս ուժով ես ալ կօգնէի իրենց նոյնիսկ աշխարհագրութեան մէջ: Ջանացի հետզհետէ ֆրանսերէնի և բնական գիտութեանց դոյզն պաշար մը եւս ձեռք բերել ընթերցումներով և դասերու ունկընդրելով: Թուրքերէնի միայն չուզեցի պարապիլ, վասնզի Ամիրճանեան ինքն եւս միամտաբար կը կարծէր, թէ անոր դարն անցած է, թէև ինքն իր պաշտօնին հարկադրութեամբ չէր դադրեր զայն աւելի մշակելէ:

Անյագ ընթերցասէր մ'էի և դեռ 17 տարու չեղած՝ արդէն կարդալ տուած էի զանազան մատենագիրներ, Հոմերոսի Իլիականն ու Ոդիսականը, Տէլեմաք և Վենետիկեան շատ գործեր...:

Մեր պարտէզի պտուղներն առատօրէն կը տրամադրէի ընկերներուս, որպէսզի կարդան ինձ և կամ ի գիր դրոշմեն իմ հայերէն գրական փորձերը...:

Դպրոցի հիւրերը ապշահար կ'ունկնդրէին գոց պատմուածքներս և կը քաջալերէին զիս ամէնքը: Ընկերներուս յարաբերութեանց ծանրութեան կեդրոնը դարձած էի և անոնք յաճախ զիս մենտորի մը տեղ դնելով՝ իմ խորհուրդներուս կը դիմէին: Շատեր յետոյ նուաստութիւն չէին համարեր իրենց համար յայտարարել, թէ ես արծարծած եմ իրենց մէջ ուսման սէրը և ազատած եմ եղեր զիրենք նոյնիսկ պատանեկան ախտերէ, մինչև իսկ Պոլսէն առողջապահական գիրքեր («Աշնան տերեւներ», «Գերեզմանք երիտասարդաց» ևն.) բերելով ու տարածելով իրենց մէջ»[65]:

Բնության տեսարաններն այնքան խորն էին տպավորվել նրա մանուկ հոգում, որ «լոյսէ զրկուելէս չորս տարի յետոյ, երբ շարադրութիւն մը գրեցի «Վանի գարունը» խորագրով, ուսուցիչս՝ Տիգրան Ամիրճանեան, զմայլանքով կը կարդար զայն դպրոցը այցելող բարեկամներու»[66], նկատելով հետևյալը. «Ափսո՜ս որ վայելելու համար կը պակսին կիրթ ճաշակներ ու զուարթ հոգիներ»[67]:

1870 թ., երբ Համբարձումն ընդամենը 13 տարեկան էր և արդեն երկու տարի՝ կույր, անմորմոքելի կսկծի մեջ վախճանվում է հայրը՝ Հարությունը: Երամյանը: Սրանով, սակայն, Երամյան ընտանիքի անդառնալի կորուստների շղթան չի ընդհատվում: Ընդամենը մեկ տարի անց վարակիչ հիվանդությանը զոհ է գնում նաև միջնեկ եղբայրը՝ Վարդանը, և Երամյանների նախկին բազմանդամ ընտանիքն այլևս բաղկանում է ամուսնուն և արդեն զույգ որդի-

59 Նշվ. աշխ., Ա, էջ 73: **Տէր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., Ա, էջ 430:
60 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., նույն տեղում:
61 Նույն տեղում:
62 Նշվ. աշխ., էջ 47:
63 Նշվ. աշխ., էջ 75:
64 Նշվ. աշխ., էջ 73:
65 Նշվ. աշխ., Ա, էջ 74: Խոսքն այս գրքերի մասին է՝ **Պաղտասարեան Գ.**, Աշնան տերեւներ կամ Գաղտնիք երիտասարդաց եւ պատանեաց, Կ.Պոլիս, 1873: **Հայկունի Ա.**, Գերեզմանք երիտասարդաց կամ տռփական հիւանդութիւնք, Կ.Պոլիս, 1882:
66 Նշվ. աշխ., էջ 49:
67 Նշվ. աշխ., էջ 74:

ներին կորցրած այրի Կատարինեից և միակ որդուց՝ կուրացած Համբարձումից:

Հակառակ Երամյան ընտանիքի կրած վերոնշյալ ծանր հարվածներին՝ Համբարձումը շարունակում է ուսումնառությունը և արդեն 1873 թ. ընդունվում Վանի Քաղաքամեջ թաղամասի Հիսուսյան վարժարան[68], որտեղ էլ ընդլայնվում են Համբարձումի հարաբերությունների շրջանակները. «Ս. Յակոբի կարգ մը աշակերտներու հետ ես ալ, ամէն օր մէկ ժամու ճամբայ կտրելով սկսայ յաճախել Յիսուսեանը, որով իմ յարաբերութեանս շրջանակները տակաւ կ'ընդլայնէին: Ամիրճանեան դարձեալ դաս մը յանձնեց ինձ և միանգամայն յանձնարարեց օգնել բարձրագոյն կարգին՝ Վիրգիլիոսի Մշակականքի, թարգմանութեան դասերուն մէջ: Այնչափ սիրեցի հ. Արսէն Բագրատունիի[69] այդ հոյակապ թարգմանութիւնը, որ գրեթէ մեծ մասամբ գոց կ'արտասանէի, խանդավառելով իմ օգնութեան դիմող աշակերտները»[70]:

Բնավորության տոկունության և նպատակասլացության ակներև հատկանիշները, որոնք Համբարձումը թերևս ավելի շատ սիրասուն և անընկճելի մորից էր ժառանգել, դրսևորվել էին դեռևս մանկությունից: Այս առթիվ Երամյանը նշում է. «Ի մանկութենէ ինձ կանոն ընտրած էի գործը կամ պարտականութիւնը չզոհել հաճոյքին»[71]:

1871 թ.-ից հետո Տիգրան Ամիրջանյանը դարձյալ իր կնիքն է թողնում աշազուրկ պատանու կյանքում՝ որոշելով նրան դարձնել վարժապետ. «Համբարձո՛ւմ, քեզ վարժապետ պիտի ընեմ»[72]:

Այդպես էլ Տ. Ամիրջանյանի նախաձեռնությամբ և առաջադրմամբ Հիսուսյան վարժարանում Համբարձումը նշանակվում է ուսուցչի օգնական. «...երբ 17 տարեկան էի, 1875ին, զիս օգնական ուսուցիչ կարգել տուաւ Քաղաքամիջի Յիսուսեան վարժարանի մէջ, ուր ինքն ալ փոխադրուած էր: Ամիսը 25 դահեկան վարձք նշանակուած էր ինձ, սակայն ես քանակին վրայ չէի մտածեր, այլ կ'ոգեւորուէի ապագայի հեռանկարներով: Եւ իրօք երկու տարուան ընթացքին մինչև 100 դահեկանի բարձրացաւ ամսականս, ինչ որ եօթնապատիկ արժէք ունէր ներկայիս բաղդատմամբ»[73]:

1876 թ. հունվարին Երամյանը Հիսուսյան վարժարանից Ամիրջանյանի և մոտ 60 աշակերտների հետ փոխադրվում է Վանի «Ուսումնատարած» անվամբ առաջին մասնավոր վարժարան[74]. «Լաւագոյն պայմաններու մէջ կ'աշխատէինք: Հոն օգնական ուսուցիչ գտայ Յայնկոյսներու դպրոցակիցներէս Խաչատուր Դարբինեանը և երկուքս իրարու հետ կը մրցէինք բարի նախանձով: Սակայն երկու երեք ամիս վերջը, Յիսուսեանի վարչութիւնը գժտուելով Ուսումնատարած ընկերութեան հետ՝ հրամայեց որ ամէնքս ալ վերադառնանք Յիսուսեանը: Ամիրճանեան համակերպեցաւ, իսկ ես նախընտրեցի մնալ Ուսումնատարածը: Աշակերտները, որ ընկերական զօրաւոր կապեր ունէին ինձ հետ, իմ օրինակիս հետեւեցան, որով Յիսուսեանի վարչութիւնը հարկադրուեցաւ Ամիրճանեանը հոն վերադարձնել և դասերը կը շարունակէինք մեծ եռանդով: Դպրոցական կեանքի մէջ առաջին յաղթանակս էր այս, զոր կը պարտիմ առաւելապէս աշակերտներու հետ ընկերական վարմունքիս: Գոհ էին ամէնքը, և Ուսումնատարածը կը պատրաստուէր իր առաջին երկամեակը տօնելու, 77ի յունուարին՝ երբ նախորդ դեկտ. 1 ի գիշերը, շուկայի խորհրդաւոր մեծ հրդեհը[75] մոխիրի վրայ նստեցուց ամբողջ Վանը և Ուսումնատարածը քայքայուեցաւ անկանգնելի կերպով»[76]:

Արդեն ուսուցչության տարիներին Երամյանի համար ակներև է դառնում բնակչության՝ ձմռանը որևէ անելիք չունենալու և միայն տաքուկ սրճարաններում նարդիով և թղթախաղով տարվելու փաստը, և ահա 1876 թ. հիմնադրում է «Բարեսիրաց» ընկերությունը. «Պատանեկութիւնը այդ կարգի խաղերէ ու զանազան մոլութիւններէ զերծ պահելու և անոնց համար բարոյացուցիչ զբաղում մը ստեղծելու դիտումով, կազմեցի 1876ին Բարեսիրաց Միութիւնը՝ ինձ յանձնուած իբր 40 հոգինոց դասարանի աշակերտներէն, որոնց հետ խառն էին նաև Այգեստանցիներ: Բարեսիրացի նպատակին գործադրութեան իբրև

68 Հիսուսյան վարժարանի մասին հայտնի է հետևյալը. «40ական թուականներէն ետք սկզբնական շրջանին այս դպրոցը կը ղեկավարէ Պոլիսէն եկող տիրացու Մանուէլ Արտամետցեան (տ. Դիոնէսիոս): Աշակերտներու թիւը առաջին տարին 1847-8-ին 100ի կը հասնի: Աղջիկներու մասին արդէն խօսք չէր կրնար ըլլալ, որովհետեւ աղջիկներուն կրթութիւն տալ եօթը մահացու մեղքերէն մէկը կը համարուէր: Տիրացու Կարապետ Մոկացիէն եւ Պետրոս Արտամետցիէն ետք 60-70-ական թուականներուն կուգայ Էրէրէնցի Սարգիս վարժապետ Գնունի եւ Յիսուսեան վարժարանը կունենայ իր առաջին փայլուն շրջանը...: Այդ շրջանի աշակերտներէն յայտնի են Համբարձում Երամեան, Նշան Գարասէֆէրեան, Յակոբ Ամսարեան եւն» (**Բագրունի Հ.**, Հայ դպրոցը Վանի մէջ (1820-1913), «Աշխատանք», 1913, № 49, 20 հոկտեմբերի, էջ 8):

69 Արսեն Կոմիտաս Բագրատունին (Արսեն Անթիմոսյան) Մխիթարյան միաբանության անդամ էր, հայագետ, գրող, թարգմանիչ (21.08.1790, Ստամբուլ – 24.1866, Վենետիկ): Նրա բազմաթիվ թարգմանություններից է Վիրգիլիոսի «Մշակականք»-ը (Վենետիկ, 1847):

70 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 89:

71 Նշվ. աշխ., էջ 67:

72 Նշվ. աշխ., էջ 76: Ի դեպ, Ամիրջանյանն ուսանել էր Համբարձումի հոր՝ Հարությունի Երամյանի մոտ: Հենց նրան էր վիճակվել ոչ միայն իր հերթին անձամբ ուսուցանել վարժապետի աշազուրկ տղային, այլև նրա առջև բացել ուսուցչության շնորհիակալ ուղին (էջ 73):

73 Նշվ. աշխ., Ա, էջ 76:

74 Վարժարանը հիմնվել է 1875 թ. Քաղաքամիջի Սբ. Պողոս եկեղեցում Սահակ Գալճյանի, Նշան Շիրվանյանի և Մելքոն Պարթևյանի ջանքերով, սակայն մեկ տարի անց հրդեհի պատճառով դադարեցնում է գործունեությունը (**Տէր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., Ա, էջ 278, 632):

75 Սույն հրդեհի մասին ավելի մանրամասն տե՛ս մեր՝ «Օսմանյան կայսրության „անմեղ„ հրդեհները» հոդվածը («Վարձք», 2012, № 5, էջ 11-14):

76 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 90:

միջոց՝ ընտրեցինք գրադարան, կիրակնօրեայ լսարան և թատրոն»[77]:

Նորահիմն ընկերության տեսուչ է կարգվում 19-ամյա Հ. Երամյանը. «...ընկերութիւնը կազմուած է քաղաքի Յիսուսեան վարժարանի ուսանողներէն, որք Հայրենասէր ընկերութիւնին Վանի ժողովուրդէն գրած ջերմ համակրութիւնն տեսնելով, քաջալերուած և բարի նախանձի շարժած կազմեցին այս ընկերութիւն, իւրեանց դասատու պ. Խ. Դարբինեանի առաջնորդութիւնով: Այս ընկերութիւնի տեսուչն է պ. Հ. Երամեան և նպատակն է կիրակի օրեր հաւաքուիլ, զանազան օգտակար գիրքեր կարդալով և օգտակար նիւթերի վրա խօսակցելով ժամանակ անցունել և խնայողութիւններով փող հաւաքել իւրեանց մէջ և զայն տոկոսի տալ, որպէսզի տաս տարիի չափ յետոյ (երբ իւրեանք ալ հասակով մեծցած և զանազան գործերի մէջ մտած կը լինին) այդ հաւաքուած փողն դրամագլուխ անեն և ազգային մի նպատակի գործածեն, այն ժամանակի պահանջներին համեմատ մի գործ որոշելով»[78]:

1877 թ. ամռանը, հակառակ ռուս-թուրքական պատերազմի հարուցած լարված իրավիճակին և վտանգներին, Երամյանը շարունակում է ուսուցչությունը՝ յուրաքանչյուր օր երկու անգամ կտրելով Այգեստանից դեպի Քաղաքամեջ և հակառակ ուղղությամբ ձգվող ճանապարհը. «...մենք Այգեստանի աշակերտներով խումբ կազմած, դարձեալ Քաղաքամիջի լսարանին կերթայինք, որ շարունակուեցաւ դեռ 1878ին...»[79], ապա փոխադրվում է Այգեստանի Սբ. Հակոբ թաղի դպրոցը. «...Յիսուսեանէն տեղափոխուեցայ մեր Ս. Յակոբ թաղի վարժարանը, ուր Ամիրճանեան եւս դասեր ունէր օր ընդ մէջ»[80]:

1878 թ. հուլիսի 13-ին Երամյանը Սբ. Հակոբ թաղի մի խումբ երիտասարդների հետ հիմնում է «Խնամատար» ընկերությունը, որն ի սկզբանե երկու նպատակ էր հետապնդում. «Ա. մուրալու երես չունեցող տնանկ ընտանիքներու սնունդ, զգեստ և գործ հայթայթել. Բ. Որք ու աղքատ ուշիմ մանուկներ կրթելով՝ վարժապետացու ու քահանացու պատրաստել...»[81]:

Ոչ միայն ուսուցիչ, այլև որպես ազգի հոգսերով ապրող և ամեն ինչին հաղորդակից և սրտացավ քաղաքացի՝ Համբարձում Երամյանին մեծապես անհանգստացնում էր ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո ստեղծված կացությունը գոնե ինչոր չափով մեղմելու խնդիրը. «Պատերազմը դեռ նոր վերջացած էր և հարիւրաւոր ընտանիքներ գործի պակասութենէ և անօթութենէ կը տառապէին: Գիւղերէն և քաղաքէն հարիւրաւոր որբեր եւս, անոնք անտուն և անտէր, փողոցները կը թափառէին ի խնդիր պատառ մը հացի: Չկար որոշ կազմակերպութիւն մը, որ սոյն թշուառները իր խնամքին տակ առնէր: Խնամատարը որոշեց ըստ կարելւոյն դարմանել սոյն կարօտութիւնները՝ իր ամսավճարներով և հանգանակութիւններով: Իւրաքանչիւր անդամ պիտի վճարէր ամսական 2 1/2 ղրուշ արծաթ և պիտի աշխատէր գտնել զայն շաբաթական և ամսական 20 փարայէ մինչև 5-10 ղրուշ վճարող օժանդակ անդամներ»: Հետագայում «Քաջարձրունյաց» ընկերությունն ամբողջ կազմով միանում է Խնամատարին՝ «անոր թողլով իր գոյքերը և Ս. Յակոբ եկեղեցւոյ ծոցին մէջ կառուցուած իր հաւաքատեղին»[82]:

Կրթական հանապազօրյա աշխատանքներին նվիրված Հ. Երամյանն ամենայն ուշիմությամբ հետևում էր նաև քաղաքական անցուդարձին և մանավանդ 1877-78 թթ. պատերազմին և նրան հաջորդած Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածին, որի առթիվ նշել է. «Իմացած էինք արդէն Մոսկօֆի դիտաւորութիւններն ու ձեռնարկները, դառնօրէն ստիպուած էինք ցրել այդ պատրանքները: 61րդ յօդուածը դեռ շատ անգամ իբրև մատի փաթթոց պիտի ծառայէր մեծ տէրութիւններէն մէկին կամ միւսին՝ հայու արիւնով իրենց մանածը ներկելու համար»[83]:

77 Նշվ. աշխ., Ա, էջ 95: Ընկերությունը գոյատևել է մինչև 1880-ական թթ. սկզբները և զգալի դեր կատարել պատանիների շրջանում ուսման և ընթերցասիրության նկատմամբ ձգտում արթնացնելու հարցում: Տե՛ս նաև **Տէր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., Ա, էջ 430:

78 ***, Նամակ Թուրքիայից, «Մշակ», 1877, № 86, 28 նոյեմբերի/10 դեկտեմբերի, էջ 4:

79 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 97-98:

80 Նշվ. աշխ., էջ 98:

81 Նշվ. աշխ., էջ 116-117: Ի դեպ, ընկերության հիմնադրման գաղափարը ծագել է միսիոներ բժիշկ Ռեյնոլտսի հետ իրենց տան նախկին ծառայողներից մեկին՝ հիվանդ Գրիգորին այցելելու ժամանակ: Մինչ բժիշկը զննում էր հիվանդին, «զոյս մը կը ճառագայթէր մտքիս մէջ. արդեօք ես ալ չե՞մ կրնար այս մեծ բարերարի գործոց գոնէ մէկ միլիոներորդ մասնիկը կատարել՝ յօգուտ իմ դժբախդ հայրենակիցներուս»: Մեկ այլ վկայությամբ՝ «1878 թուի հուլիս 13-ին աչազուրկ Համբարձում Երամեան աջակցութեամբ Ս. Յակոբի Ղուկասեան վարժարանի իր դասընկերներուն, կը հիմնէ «Խնամատար ընկերութիւն» մը, որու նպատակն էր հաւաքել որբեր և հոգալ անոնց մտաւոր-բարոյական-ֆիզիկական պահանջները: Կարճ միջոցի մը մէջ ընկերութիւնը մեծ յաջողութիւն կը գտնէ, կը հիմնէ որբանոց մը Ս. Յակոբի Ղուկասեան վարժարանին կից...» (**Քագրունի Հ.**, Նոր սերնդական շարժման պատմութիւնը, ՀԱԴ, ֆ. 242, ց. 1, գ. 83, թ. 13 և շրջ.): Տե՛ս նաև «Մեղու Հայաստանի», 1880, № 13, 20 փետրվարի, էջ 3; № 34, 10 մայիսի, էջ 1-2 (ատենադպիրն էր Մարտիրոս Կյուլյումյանը); № 47, 25 յունիսի, էջ 3: **Երամեան Հ.**, Նամակ Վանից, «Արձագանք», 1883, № 17, 24 ապրիլի, էջ 245): Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ վանեցի Արտակ Դարբինյանն էլ հավաստում է. «1878 թուին կազմուում է Խնամատար ընկերութիւնը, որի նպատակն է լինում որբ տղաներ հաւաքել, կրթել նրանց իբրև ուսուցիչ, կղեր: Այդ նպատակով սկզբում 12-ի չափ որբեր ս. Յակոբի վարժարանն են երթևեկում և տարի ու կէս յետոյ սովի բուռն ժամանակ քաղաքի մերձակայ վանքում բացուած որբանոցի մէջ պատրաստուում են 22 հոգու չափ, մինչև որ 1882-ի վերջը ընկերութիւնը լուծուում է, և գործը մնում է ընկերութեան հիմնադիրներից մէկի՝ աչազուրկ Համբարձում Երամեանի վրայ, որ մինչև այդ ժամանակ վարում էր ընկերութեան ատենապետի և դպրոցի աւագ ուսուցչի պաշտօնը» (**Ծերուկ**, Վանի նահանգը ներկայումս, «Մուրճ», 1904, № 10, հոկտեմբեր, էջ 46-47):

82 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 116-117: Տե՛ս նաև **Տէր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., Ա, էջ 430:

83 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 223:

1878 թ. օգոստոսից մինչև 1879 թ. վերջերը «Խնամատարը իր միջոցներով Ս. Յակոբի մէջ աղքատախնամի դեր կատարեց և 15-ի չափ անօգնական և կարօտ մանուկներ որդեգրելով՝ կը դաստիարակէր Ս. Յակոբի ծխական վարժարանի մէջ»[84]:

Շուտով ընկերությանն են հանձվում Շուշանցի Կարմրվոր, Կուռուպաշի Սբ. Խաչ, Կողբանցի Սալնապատ և Ձորո վանքերն իրենց նյութական միջոցներով, որոնք, սակայն, 1882 թ. ամբողջ գույքով «ազգ. վարչութեան վերադարձուեցան»[85], իսկ ընկերությունը քաղաքական կասկածանքների հետևանքով լուծարվում է[86]: Ի դեպ, 1881-1882 թթ. բանակցում էին «...Սովելոց Կեդր. Յանձնաժողովոյ հետ՝ որբանոցին մէջ արհեստանոցի բաժին մը հաստատելու՝ կահագործութեան, կօշկակարութեան և դերձակութեան համար»: Սակայն դա չի իրագործվում «Խնամատար» ընկերության քայքայման պատճառով[87]:

1880-ական թթ. Երամյանը հիմնադրում է նաև «Բարեդետ» ընկերությունը. «Բարեդէտ անուն ընկերութիւն մը եւս կազմած էի Բարեսիրացի չափահաս անդամներէն՝ շահակցական նպատակով: Յաջողեցանք նոյնիսկ առեւտրական խանութ մը կազմակերպել զոր կը վարէր Նշան Գարասէֆէրեան. բայց սոյն միութիւնը շատ շուտ լուծուեցաւ»[88]:

1880 թ. սեպտեմբերին Գ. Սրվանձտյանցի և Խրիմյանի խորհրդով ընկերությունը 15 սաներին փոխադրում է Վանից 1,5 ժամ հեռավորության վրա գտնվող մշակելի հողերով և արոտավայրերով հարուստ Կարմրվոր Սբ. Աստվածածին վանքը[89], որով և փաստորեն հիմնվում է վարժարանի որբանոցը. «Սեպտեմբերի կիրակի մը, բազմաթիւ ընկերներով 15 սաներն առաջնորդեցինք այդ վանքը, ուր եկած էին արդէն Խրիմեան, Սրուանձտեանց և Սովելոց յանձնաժողովոյ անդամները: Որբանոցի բացումը կատարուեցաւ ուրեմն մեծ շքով և յանձնաժողովը 10 նոր որբերով մեր սաներուն թիւը 25ի բարձրացուց...: Այս կը լինէր առաջին գիշերօթիկ որբանոցն ի Հայաստան՝ աշխարհական տարրերու հոգաբարձութեան ներքև...: Սաները դեռ Կարմրւոր չփոխադրուած՝ Խնամատարի ընկերները շատ աւելի եռանդով կ'աշխատէին, մինչև իսկ թատերական ներկայացումները կը կազմակերպէին՝ պարբերական և պատահական նպաստներն անբաւարար համարելով»[90]:

Վանքի պարենի և վառելիքի սպառման հետևանքով որբանոցը 1880 թ. հունվարին 4 ամիս փոխադրվում է Այգեստան, իսկ «նոյն տարւոյ մայիսին կրկին ի Կարմրւոր, ուր և մնաց մինչեւ 82ի սեպտեմբեր՝ երբ Խնամատարը լուծուեցաւ»[91]:

Հակառակ խիստ ծանրաբեռնվածությանը՝ Երամյանը ճարահատյալ ստանձնում է նաև Գործադիր ժողովի ատենապետի պաշտոնը. «Ատենապետութիւնը իմ վրայ մնալով հանդերձ՝ պարտաւորեցայ ստանձնել նաև տեսչութիւնը որբանոցին զոր ընկերութիւնը և յանձնաժողովը ուրիշի մը չէին վստահեր: Ունէի օգնական ուսուցիչ մը, իսկ Ամիրճանեան, շաբաթը երկու անգամ քաղաքէն վանք կուգար՝ թուրքերէնի և ֆրանսերէնի դասերը աւանդելու»[92], սակայն 1881 թ. ի վերջո հրաժարվում է որոշ պաշտոններից և ամբողջովին նվիրվում կրթությանը. «81էն ի վեր, երբ որբանոցը կրկին Կարմրւոր փոխադրուեցաւ, հրաժարելով Գործադիր Ժողովոյ ատենապետութեան պաշտօնէս, բոլորովին նուիրուած էի կրթական գործին»[93]:

1881-1883 թթ. Երամյանի որբանոցն ուներ իր ձեռագիր-գրական պարբերականը, որը ժամանակի նորությունների էր. «Մեր որբանոցի անդրանիկ սաներէն Մարտիրոս Նալպանտեան և Մամբրէ Մկրտեան, դեռ ուսանող, 1881-1883 թուականին կը խմբագրէին 15օրեայ ձեռագիր գրական պարբերական մը՝ զոր յետոյ խմորատիպի վերածեցին՝ ռուսաց փոխ-հիւպատոս Կամսարականի[94] նուիրած

84 Նշվ. աշխ., Ա, էջ 117, 131:

85 Նշվ. աշխ., էջ 149: Մանրամասն տե՛ս էջ 132-133, 143: Հայտնի է, որ ընկերության գործուն անդամներն էին Պետրոս Թուրշյանը, Փանոս Վարպետյանը, Մարտիրոս Կյուլյումյանը, Հովհ. Շահպաղլյանը, Փանոս Կոսպարյանը, Հակոբ Աղաբաբյանը: Երկու տարուց հետո անդամների թիվը պիտի հասներ 80-ի, և նրա մեջ պետք է ընդգրկվեին այնպիսի անվանի մարդիկ, ինչպիսիք էին Հարություն Թերզիպաշյանը, ռուս հյուպատոս Կոստանդին Կամսարականը, Երեմիա եպսկ. Տեր-Սարգսյանցը, Գարեգին Սրվանձտյանցը, Ղևոնդ վրդ. Փիրղալեմյանը, Կարնո առաջնորդ Մաղաքիա վ. Օրմանյանը և այլք (նշվ. աշխ., էջ 117):

86 Նաև՝ «...1882 թուին վերջնական կերպով անհատական նախաձեռնութեամբ և Խրիմեանի օժանդակութեան շնորհիւ որբանոցը կը փոխադրուի Այգեստան՝ դէմ ըլլալով՝ սաներուն վանական դաստիարակութիւն տալու և վանքերու շրջափակին մէջ պահելու մտքին: Քաղաքական հալածանքները պատճառ կըլլան, որ «Խնամատար ընկերութիւն» կասկածի ենթարկուի և իրաւամբ խուզարկութիւններ, քննութիւններ, հետապնդումներ կուգան քայքայելու ընկերութիւնը 1883 թուին...» (**Բագրունի Հ.**, նույն տեղում): Նաև՝ «1882ին Խնամատար Ընկերութիւնը քաղաքական կասկածներով լուծուելէ վերջ, Պ. Երամեան Ընկերութեան ամբողջ հոգը ստանձնելով կը բանայ Վանայ Հայկական Որբանոց-Վարժարանը (**Մարտիկ**, Կենսագրական ընդհանուր գծեր, «Զարթօնք», Գահիրէ, 1919, պր. 3-4, էջ 53): Նաև՝ «Ընկերութեան լուծուելուց յետոյ Երամեանը որբանոցի կառավարութեան գործն առնում է իր վրայ, վանքից փոխադրում է Այգեստան և իբրև իրան սեփական անհատական վարժարան պահում, թոշակաւորներ ընդունելով՝ հետզհետէ աշակերտների թիւը շատացնում է և դպրոցին կանոնաւոր կերպարանք տալու ջանք ու եռանդ ունենալով՝ օրէցօր բարեկարգում է և գոյութիւնը բերում հասցնում է մինչև այսօր...» (**Ծերուկ**, նշվ. հոդվ., «Մուրճ», 1904, № 10, հոկտեմբեր, էջ 46-47):

87 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 149-150:

88 Նշվ. աշխ., էջ 98:

89 Նշվ. աշխ., Ա, էջ 132:

90 Նշվ. աշխ., էջ 133-134:

91 Նշվ. աշխ., էջ 143: Հայտնի է նաև, որ 1881-ից որբանոցը նորից փոխադրվում է Կարմրվորի վանք (էջ 149) և մնում մինչև 1882 թ. դեկտեմբեր ամիսը (էջ 177), որից հետո վերջնականապես տեղափոխվում է Այգեստան թաղամաս՝ Խաչ փողոց (էջ 178):

92 Նշվ. աշխ., էջ 142-143:

93 Նշվ. աշխ., էջ 149:

94 Կոստանդին Կամսարական (1840, Նուխի–1922, Վիեննա)՝ դիվանագետ, ռազմական գործիչ: 1878-1884 թթ.՝ Ռուսաստանի փոխհյուպատոս Վանում:



Շուշանցի Կարմրվոր Սբ. Աստվածածին վանքը, որտեղ 1880 թ. Հ. Երամյանը հաստատում է «Խնամատար» որբանոց-դպրոցը՝ փոխադրելով Վանի Այգեստան թաղամասից

բօլիկրաֆ գործիքով-նորութիւն մը այն ատեն Վանի համար-մինչև 100 օրինակ կը հանէին և ունեցան թղթակիցներ իսկ»[95]:

Կրթական տարբեր հաստատություններում դասավանդելն ու զանազան ընկերություններ հիմնելը, իհարկե, կարևոր և օգտակար էին, սակայն անօրինակ եռանդի և նվիրումի տեր Հ. Երամյանին այլևս այդ բոլորն անբավարար էին թվում, և նա լրջագույնս սկսում է խորհել անհատական վարժարան հիմնելու մասին: Այս գաղափարին հուշարար և խրախույս էր նաև Վանի առաջնորդ Գրիգոր Աղվանյանը[96]. «Դուն, ...կրնաս օր մը անհատական կամ մասնաւոր վարժարան մը բանալ և աւելի լաւ մէթոտով վարել զայն»[97]:

1881 թվականը Հ. Երամյանի համար նշանակալից էր հատկապես նրանով, որ անսալով մոր խընդրանքին (նրա ցանկությունն էր, որ «չքայքայուի մեր տունը»)՝ դեկտեմբերին՝ մոր մահից ընդամենը 6 ամիս առաջ, ամուսնանում է Վարդուհի Փեհրիզյանի հետ[98]:

Անդադրում աշխատանք, անմնացորդ ջանք ու նվիրում, և ամենաանիրական թվացող երազանքները կարող են կյանքի կոչվել: Հենց դա է պատահում Հ. Երամյանի հետ. անօրինակ կորովի և տոկունության շնորհիվ ոչ միայն իր երազանքն է իրականություն դարձնում, այլև, ըստ էության, մի նոր ու աննախադեպ էջ բացում Վանի հայոց կրթական ոլորտի պատմության մեջ՝ այդ ասպարեզը բարձրացնելով այնպիսի մակարդակի, որն այսօր՝ ավելի քան մեկդարյա հեռավորությունից իրավամբ կարող է գնահատվել որպես աստեղային ժամանակաշրջան:

Դպրոցի բացումը տեղի է ունենում Երամյանի համար ևս մի ծանր կորստյան տարում՝ 1882 թ., երբ վախճանվում է անզուգական մայրը, սակայն գործի նվիրյալին ոչինչ չի խանգարում. «Վերջապէս յաջողեցայ կազմակերպել անկախ վարժարան մը, որուն հիմերը դրուեցան Խնամատարի գործակցութեամբ՝ 78ին, և զոր միայնակ պիտի վարէի 1882ի հոկտ.էն սկսեալ մինչև 1915, շարունակ ջանալով նկատի առնել նաև գործակիցներու թելադրութիւնները կամ տիպար հաստատութիւններու օրինակներ»[99]:

Կարմրվոր վանքից կրկին Այգեստան փոխադրված և վարձու տան մեջ հաստատված դպրոցի բացումը տեղի է ունենում 1882 թ. նոյեմբերի 1-ին. «...Խնամատարի կազմութեամբ Վանայ մէջ անտերունջ և աղքատիկ մանկանց հաց և լոյս մատակարարելու ձեռնարկը 5,1/2 տարի կը լինի 13 յուլիս 1878-յունվար 1884:

1880 և 1881 թուականի սովը, որ գրեթէ սնանկացուց Վանայ ժողովուրդը և Կարմրաւոր, ս. Գրիգոր և ս. Խաչ փոքրիկ և աղքատ վանքերու վարձակալութիւնը յաջորդ 82 թուականին, միայն ընկերութեան դրամական վիճակին մեծ հարուածներ չը բերին, յապա նաև նորա բարոյական ուժերը ջլատեցին. լքուցանելով անդամները, որոյ մեծ մասն ամենահասարակ արհեստաւորներ էին...: ...յանձն կառնու նոյ. 1-ին (1882) Այգեստանի մէջ տուն մը վարձելով՝ Որբանոցը Կարմրաւոր վանքէն հոն փոխադրել և այնուհետև գործեր ինքն միայնակ վարել:

Ամենապատիւ ս. Հայրիկը և վսեմ. Կամսարական պէյն բարոյական և նիւթական միջոցներով, պերճախօս տ. Երեմիա սրբազան և ուրիշ արժանայարգ եկեղեցականք իրանց յորդորական քարոզներով, վարչութեան անդամներէն հայրենասէր տ. Մեսրովբ քահանայ Փափազեան, Մկրտիչ և Կասպարեան Գրիգոր էֆէնդիք շուկայի հանգանակութեամբ (1882 դեկ.), պատուարժան թաղական խորհուրդներ՝ գլխաւորապէս Արարուցն՝ եկեղեցաց հանգանակութիւններով, մեծ Ծերունեան Յակոբ, Գափամաճեան Փանոս և Պետրոս և Շարանպէյեան Կարապետ էֆէնդիք իրանց վեհանձն առատաձեռնութեամբ, մեծ. Սահակպէյեան Վարդան, Կասպարեան Փանոս, Աջէմեան Սարգիս, Աղապապեան Աղապապ, Շաքարեան Յարութիւն և Նալբանդեան

95 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., հ. Բ, Աղեքսանդրիա, 1929, էջ 123:

96 Գրիգորիս եպս. Աղվանյանցը (1827, Վան–1893, Հին Ջուղա) 1871-1874 թթ. Վանի առաջնորդն էր (**Տէր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 298):

97 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 85:

98 Նշվ. աշխ., էջ 44:

99 Նշվ. աշխ., Ա, էջ 165:

Եղիազար ու Սիմէոն էֆէնտիք յատկապէս իրանց տները սանուց խմբակին տուած ճաշկերոյթներով, մեծ. Սարեան Միքայէլ էֆէնդին դրամական նպաստով և Յովհաննէս էֆ. Սանդարճեան ի Կ. Պոլիս բացած հանգանակութեամբ, մեծ. Տօքթոր Սթիլիանոս և դեղագործ Վահևանեան էֆէնդիք բժշկական ձրի դարմաններով և նոյն իսկ դրամական նպաստներով, մեծ. Մանուէլ Միրախորեան, Պօղոս Նաթանեան, Տիգրան Ամիրճանեան, Սահակ Փէհրեզեան և վերջերս Վրթանէս Փափազեան էֆէնդիք ձրի դասախօսութիւններով. վերջապէս նշանաւոր օտարազգիք և Բաղէշցի, Կարնեցի և Տրապիզօնցի պատուարժան ազգայինք ոմանք և Վանայ արգոյ հասարակութեան ամէն դասակարգի պատկանող բարեսէր անձինք իրանց նուէրներով, որպէս նաև աւելի քան 40 անդամք իրանց հին և նոր բաժանորդագիրները վճարելով, ահա այս ամէնք իրանց վստահութեամբ և գործնական համակրութեամբ հզօրապէս օգնեցին մեր գործի յաջողութեան...»[100]:

Ինչ վերաբերում է 1878-1882 թթ. հաստատության եկամուտներին և ծախսերին, ապա այդ առթիվ նշվել է. «Ընկերութիւն 1882-ի նոյեմբերին նախորդ 4 տարուայ և 4 ամսոյ միջոցին (1878-յուլիս) ունեցաւ 500 ոսկոյ մօտ եկամուտ մը որմէ իբր 75 ոսկիւ սովի առթիւ Վանայ քաղցելոց բաշխուեցաւ և 100 ոսկի ալ որպէս նաև առանց տոկոսի փոխ առնուած 35 ոսկոյ գումար զոհուեցան վանական հաշիւները հաւասարակշռելու, այնպէս որ ընկերութիւնը 82-ի նոյեմբեր 1-ին 35 ոսկու բաց մը կը պարտէր մեծաւ մասամբ Կասպարեան մեծ. Փանոս էֆէնդիի, որ սկզբանէ անտի խնամատարի գլխաւոր անկիւնաքարերէն մին եղած է, և որ մի պաշտօնավարութեան միջոցին ամէն առթիւ խորհուրդ և խրատ չզլացաւ մեզ: Իսկ վերջի 14 ամսեայ շրջանի մէջ Որբանոցի ընդհ. մուտքը կը մօտենայ 176 ոսկոյ, որմէ 21 ոսկի հին պարտուց հաշւոյն վճարուած է. հետևապէս ամբողջ 5,1/2 տարուայ մէջ Որբանոցի բացումէն առաջ և վերջ՝ սանուց վրայ ծախսուած կը լինի 480 ոսկոյ մօտ գումար մը: Խնամեալ որբոց թիւ ամէն տարի միջին հաշուով 17է պակաս չէ եղած: Ուրեմն 5,1/2 տարուայ շրջանի միջի սանի տարեկան ծախսն է 4,1/2 ոսկի...»[101]:

1882 թ. սեպտեմբերի 18-ին որբանոցի տեսուչ Համբարձում Երամյանը հիշվում է Կարնո նահանգում Ռուսաստանի հյուպատոս Ալեքսեյ Ռոմանովիչ Դեննետի[102]՝ Վան այցելության կապակցությամբ. «Խնամատար ընկերութիւնն ալ «Որբանոցի» տեսուչ պ. Համբարձում Երամեանը մի քանի աշակերտներու հետ խրկեց նորին գերազանցութեան մօտ և որբերից մինը ի դիմաց ընկերութեան մի ուղերձ կարդաց ուղղեալ առ գէնէրալն»[103]:

Երամյանի տեսչությամբ գործող որբանոցի ուսուցումն այնպիսի բարձր մակարդակի վրա էր, որ Վանում ռուսաց փոխհյուպատոս Կոստանդին Կամսարականը շրջանավարտներին արժանացնում է մրցանակների. «Որբանոցի սանունք թուով 16, 1882, նոյեմբերի 21-ի կիրակին հրապարակաւ քննուեցան Հայկազեան վարժարանի մէջ, ուր կը նախագահէր Առաջնորդական գեր. փոխանորդն Մեսրոբ ծ. վ.[104] իր շուրջն ունենալով ուսումն. խորհրդոյ մեծայարգ անդամներն, և ուրիշ պատուաւոր ազգայինք: Նաև 3 օր վերջ որբանոցի բարերար պ. Կամսարական, մի խումբ ուսեալ անձանց հետ որբանոցիս յայց գալով, քննեց սաները, յատկապէս մի քանի առարկայից մէջ, և մրցանակներ բաշխեց...»[105]:

1883 թ. սկզբին ազդարարվել է, որ «...Խնամատարը երկու ու կէս տարիէ ի վեր հիմնած ունի մի որբանոց, որ այլ և այլ ստիպողական հանգամանաց ներքև քանի մը անգամ քաղաքէս մի ժամ հեռի Կարմրաւոր վանքը և անտի այսր տեղափոխուելէ զկնի հաստատուած է վերջապէս յԱյգեստան, Խաչի փողոց ըսուած թաղը, անցեալ նոյեմբեր ամսէն ի վեր...»[106]:

Քաղաքացիների համակրանքը որբանոց-դպրոցի հանդեպ այնքան մեծ էր, որ ուսուցիչներից ոմանք դասատվությունը ստանձնել էին բոլորովին անվճար. «...Տիգրան էֆ. Ամիրճանեան՝ թիւրքերէն և ֆրանսերէն, Մանուէլ էֆ. Միրախորեան՝ թուաբանութիւն, Սահակ էֆ. Փէհրիզեան (ձայնագրագէտ)՝ եկեղեցական երաժշտութիւն և Պօղոս էֆ. Նաթանեան՝ Ազգային երաժշտութիւն ձրիապէս կը դասախօսեն: Մեծ. պ. Գէորգ Շերէնց[107] ևս վերջերս սկսած է իւր գիտցած երգեր ձրիապէս ուսուցանել...»[108], իսկ

100 **Երամեան Հ.**, Տեղեկագիր որբանոցի Խնամատար ընկերութեան 1882, 1 նոյ.-1884, 1 յունվար, «Արձագանք», 1884, № 10, 11 մարտի, էջ 144-145:

101 Նշվ. հոդվ., «Արձագանք», 1884, № 10, 11 մարտի, էջ 145:

102 Ալեքսեյ Ռոմանովիչ Դեննետը (1836–մահվան թվականը՝ անհայտ, 1917-ից հետո) 1880 թ. դեկտեմբերի 15-ից առ 1890 թ. Կարնո գլխավոր հյուպատոսն էր:

103 **Թղթակից**, Վան, «Մեղու Հայաստանի», 1882, № 117, 29 հոկտեմբերի, էջ 1:

104 Վարագավանքի փոխվանահայր Մեսրոպ ծ. վարդապետ Մոկացյանը (1836-1892, Երուսաղեմ) 1881 թ. հոկտեմբերի 13-ին նշանակվում է Վանի առաջնորդական փոխանորդ (**Վաղարշ**, Վան, «Մեղու Հայաստանի», 1881, № 267, 22 դեկտեմբերի, էջ 2):

105 **Երամեան Հ.**, Նամակ Վանից, «Արձագանք», 1883, № 17, 24 ապրիլի, էջ 245: Ի դեպ, «...բացի բուն սաներէն նոցա մէջ կուսանին նաև 16 թոշակաւոր աշակերտներ...» (նույն տեղում): Հետաքրքրական է, որ իրենց իսկ տներում որբանոցի սաներին հյուրասիրում էին այն քաղաքացիները, ովքեր միևնույն ժամանակ նյութապես սատարում էին որբանոցին. «Յատուկ ճաշ տուին իրանց տուներու մէջ 1. արժանայիշատակ Վսեմ. Սահակ Պէյի որդի ազնուախոհ Վարդան էֆէնտին, որ այսօր իւր աշխատութիւններով Խնամատարի գլխաւոր սիւներէն մին է: 2. Փանոս էֆ. Կոսպարեան, որ ի սկզբանէ և այսր իւր զոհողութիւններով որբանոցի մէկ գլխաւոր խարիսխն է: 3. Սարգիս էֆ. Աջեմեան: 4. Նալբանդեան մեծ. Ե. և Ս. եղբարք. և 5. Շաքարեան մեծ. Յ. Փ. և Կ. եղբարք...» (նույն տեղում):

106 Նույն տեղում:

107 Գեորգ Շերենց (18.05.1848, Վան–05.02.1921, Տփղիս)՝ հայտնի բանահավաք, ազգագրագետ, մանկավարժ:

108 **Երամեան Հ.**, նշվ. հոդվ., նույն տեղում:

դասավանդվող բոլոր առարկաներն էին «...հայերէն, կրօն, բարոյագիտութիւն, ազգային և ընդհանուր պատմութիւնք, ֆրանսերէն, թիւրքերէն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, բնագիտութիւն, բնական պատմութիւն, գծագրութիւն, մարմնամարզ, ազգային և եկեղեցական երաժշտութիւնք և գեղագրութիւն»[109]:

1882 թ. նոյեմբերից մինչև 1883 թ. փետրվար ամիսը դպրոցին որոշ չափով սատարում են նաև Այգեստանի թաղական եկեղեցիներից մի քանիսը (Արարուց, Նորաշենի, Հանկույսների)[110]: Այնուհանդերձ, որբանոցի նյութական կարիքներն էապես գերազանցում էին առկա հնարավորությունները, որի պատճառով արդեն 1883 թ. աշնանը կացությունը դարձյալ սրվում է. «...Վանայ հայոց գործերը ընդհանրապէս խիստ դրութեան մէջ են..., ընկերութեանց միայն անուններն կան, այն ևս միայն Խնամատար և Հայկազեան ընկերութեանց: Խնամատար ընկերութեան բոլոր հոգսերը նոյն իսկ ամէն ինչ գործելը մնացեր է հիմնադիր պ. Երամեանի վերայ, խեղճ մարդը իւր աչքով իւր հիմնած ազգօգուտ անդամները ցրուած են, որբանոցը, որոյ մէջ այժմ թէ որբեր–գիշերօթիկներ և թէ երթևեկներ կան հազիւ կրնայ դեռ ևս կանգուն մնալ, վասն զի ո՛չ մի կողմէն նիւթական օգնութիւններ չը կան: Անցեալ շաբաթ Մեսրովբ վարդապետ անուամբ մէկը Խնամատար ընկերութեան հետ պայման կապելով, որ իբր ժողովարար տասնէն երկուսը իրը ըլլայ, մեկնեցաւ ընկերութեան համար նուիրատուութիւններ հաւաքելոյ, սակայն դարձաւ պարտքով և խեղճ ընկերութինը ստիպուեցաւ սոյն նեղ միջոցին վճարել նորա պարտքը...»[111]:

Ամեն տեսակ նյութական դժվարությունները, սակայն, Երամյան նվիրյալին չէին խանգարում, որ իր հիմնած որբանոց-դպրոցը կրթական կարգով էապես տարբերվեր գործող ուսումնական մյուս հաստատություններից. «Ընկերութիւնը երբէք չուզելով այլոց սերմանածն ինքն հնձել, ընդհանրապէս այնպիսի մանուկներ առած է իւր խնամոց ներքև, որք գրեթէ այբբուբենէ սկսած են իրենց ուսումը, այժմ սաներէն 6-ն 1 նախակրթարանի (շրջան 4 տարի) Ա. և Դ. 6-ն ուսումնարանի (նոյնպէս 4 տարի) Բ, և 5-ն Գ., դասարաններուն կը պատկանին: Հետևապէս Որբանոցը պիտի կրնայ 2 տարիէ վերջ 5 և 3 տարիէ վերջ 6 ուսումնաւարտ աշակերտ տալ, որոցմէ ոմանք ալ գաւառացի, թէ քաղաքացի, ծնողք կամ հարստութիւն չունենալով՝ պիտի փափագին անշուշտ հայրենեաց ծառայելու կրթական, եկեղեցական և նմանօրինակ Ազգ. ասպարէզներու մէջ: Հարկ է գիտնալ աստ որ 10 է աւելի գաւառացի և քաղաքացի մանուկներ ևս, ոմանք մինչև իսկ 5 տարի խնամուելէ ուսումնարանի Բ. դասարանի ընթացքը գրեթէ աւարտելէ զկնի այլ և այլ պատճառներով հրաժարած կամ արձակուած են...»[112]:

Որբանոց-դպրոցը, որ կազմված էր նախակրթարանից և ուսումնարանից, 1883/1884 ուստարում դասավանդման ծրագրերում ներառում էր. «Նախակրթարանի մէջ՝ կրօն, հայերէն, Ազգ. պատմութիւն, աշխարհագրութիւն (Վասպուրական և Հայաստան), գեղագրութիւն, գծագրութիւն, մարմնամարզ, եկեղ. և ազգ. երաժշտութիւն, թուագիտութիւն, և թուրքերէն հանդերձ բարոյախօսութեան դասերով, իսկ ուսումնարանի մէջ կաւանդուին՝ կրօն, հայերէն, թիւրքերէն, ֆռանսերէն, ընդհ. պատմութիւն, բնագիտութիւն, բնական պատմութիւն, քաղաքական բնական և ուսումնական աշխարհագրութիւն, չափագիտութիւն, ձայնագրութիւն և այլն: Շատ աշխատեցանք գէթ մի տեղական կարևոր արհեստ մտցնել յՈրբանոց, որպէս նաև սեպհական շէնք մի պատրաստել տալ, բայց դեռ մեր ջանքեր ապարդիւն կը մնան...»[113]:

Հատկանշական է, որ Հ. Երամյանի հիմնած որբանոց-դպրոցը, ի թիվս Հայաստանում երբևէ ծնունդ առած համանման այլ հաստատությունների, առաջինն էր, որի հոգաբարձությունը ոչ թե հոգևորական, այլ աշխարհիկ անձերից էր կազմված. «Այս կը լինէր առաջին գիշերօթիկ որբանոցն ի Հայաստան՝ աշխարհական տարրերու հոգաբարձութեան ներքև...»[114]:

Որբանոցում ընթացող դասատվությանը զուգահեռ՝ Երամյանը դասավանդում էր նաև այլ կրթօջախներում: Այսպես՝ 1880-ական թթ. առաջին կեսին Վանի միսիոներական իգական վարժարանում ստանձնում է հայոց պատմության ուսուցչի պարտականությունները. «84ին ...տեսչուհի Միս Կրէյս Քէմպլ՝ Տիկին Աննա Կամսարականի թելադրութեամբ, հրաւիրեց զիս հայոց պատմութեան դասեր աւանդելու աղջկանց բարձրագոյն կարգին, որ մեծ եռանդով կը հետեւէր իր տոհմային պատմութեան»[115], իսկ արական վարժարանում՝ ընդհանուր պատմության. «Միսիոնարական վարժարանի բարձրագոյն կարգին կ'աւանդէի ընդհանուր պատմութեան դասեր»[116]:

Ընդհանրապես 1880-ական թթ. Երամյանը դասավանդում էր շուրջ մեկ տասնյակ առարկաներ. «Որբանոցի նիւթական մատակարարութեան և վարժարանի կրթական վարչութեան պատասխանա-

109 Նույն տեղում:

110 Նշվ. հոդվ., էջ 246:

111 **Վանցի**, Նամակ Վանից, «Արձագանք», 1883, № 41, 9 հոկտեմբերի, էջ 582:

112 **Երամեան Հ.**, Տեղեկագիր որբանոցի..., «Արձագանք», 1884, № 10, 11 մարտի, էջ 145:

113 Նույն տեղում:

114 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 134: Տե՛ս նաև **Էվոյան Վ.**, **Հովհաննիսյան Ջ.**, Փաստաթղթեր նախասովետական շրջանի հայ սիրողական թատերախմբերի մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1974, № 1, էջ 65: Հայտնի է, որ 1884-1885 թթ. ձմռանը որբանոցի գոյությունը դարձյալ վտանգված էր նյութական միջոցների ծայրահեղ անբավարար լինելու պատճառով (**Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 188):

115 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 150-151, 411:

116 Նշվ. աշխ., էջ 150, 411:

տուութիւնը ուսերուս վրայ կրելով հանդերձ՝ շաբաթական 20-24 դաս ալ ունէի վերին կարգերուն մէջ, աւանդելով կրօն, հայերէն հին և նոր լեզուներ, եկեղեցական, ազգային և մատենագրական պատմութիւն, ինչպէս և ընդհ. ազգաց պատմութիւն»[117]:

Մեծն ուսուցչապետի ձգտումն էր Վանի կրթական ասպարեզում լինել առաջատար դիրքերում. «Վարժարանիս մէջ կը փնտռէի պատիւս և փառքս: Ասոր համար միշտ դժգոհ արդէն ըրածէս՝ կը ձգտէի ընել անվիճելիօրէն լաւն, ջանալով հասնիլ իտէալիս, այն է լաւագոյնին, թէև ըստ ոմանց, լաւագոյնը թշնամի է լաւին: Իմ այս ձգտումին իբրև առաջին պայման՝ կ'ընդունէի՝ ընթերցումներով մտաւորական պաշարիս յաւելումը ու աւանդելիք մէն մի դասի կանխապատրաստութիւնը, զոհելով ստէպ և գիշերուան հանգիստս»[118]:

Կյանքի հաճույքներից զուրկ՝ «...ափոփանքս կը փնտռէի դպրոցի մէջ, որ այնուհետև պիտի դառնար իմ բոլոր բովանդակ մտասեւեռումի միակ առարկան և կեանքիս գլխաւոր նպատակը, թէպէտ յաճախ հանրային ձեռնարկութեանց եւս կը նուիրեի մասնակցութիւնս»[119]:

Վարժարանը դառնում է Երամյանի կյանքի իմաստն ու ապրելակերպը: Հանուն վարժարանի՝ 1888 թ. ստիպված վաճառում է հորից միակ ժառանգություն մնացած տունն ու այգին, հրաժարվում Վանի ծխական դպրոցների տեսչի, 1886 թ. Վառնայում՝ ուսուցչի, իսկ հետագայում՝ 1880-ականի վերջերին, առանց դավանանքը փոխելու, Թավրիզում ավետարանչական քարոզչի պաշտոններից և անհամեմատ անդորրավետ կյանքի պայմաններից[120]:

1882-1885 թվականներին վարժարանը կանոնավոր ծրագրով և ցույց տված արդյունքներով Վանի կրթական այլ հաստատությունների շարքում արդեն առաջնակարգ դիրք էր գրավում[121]:

ՄԵԿՆՈՒՄԸ ՎԻԵՆՆԱ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Երամյանը կյանքի ընթացքում ընդամենը երկու անգամ է հեռացել պաշտելի ծննդավայրից. առաջին ուղևորությունը՝ սոսկ առողջական խնդիրների բուժման, իսկ երկրորդը՝ իր հիմնած դպրոցի համար նյութական միջոցներ հանգանակելու նպատակով: Վերջին ուղևորությունը, իր կամքից անկախ, ցավոք, դառնում է անվերադարձ:

Եվ, այսպես, 1886 թ. 29-ամյա Համբարձումն աչքերը բուժելու հույսով գրավ է դնում հայրական ժառանգությունը և ապրիլի 29-ին մեկնում է Վանից. «Ձախ աչքս բոլորովին փճացած չէր և մութի մէջ ճրագի լոյսը կրնայի նշմարել, ուստի զիս յուսադրողներ եղան, թէ մասնագէտ ակնաբոյժներ կրնան ինձ լոյս պարգեւել: Երիտասարդ էի, դեռ 29 տարեկան, կ'ուզէի տեսնիլ... վճռեցի հօրենական ժառանգութիւնս գրաւ դնել և իմ սեփական միջոցներով մինչև Վիէննա ճամբորդել առ ոտս «ակնաբոյժներու թագաւոր» Տօքթ. Արլլթի...»[122]:

Բացակայության ընթացքում (ուղևորությունը տևում է հինգ ամիս) վարժարանի խնամակալներ է նշանակում Փանոս Կոսպարյանին, Փանոս Գափամաճյանին, Մկրտիչ Խանիկյանին և Սահակ Թերլեմեզյանին. «Վարժարանը կը յանձնեմ ի խնամս առաջնորդարանէն կազմուած առժամեայ հոգաբարձութեան մը և ուսուցչական խմբին, մասնաւորապէս Ամիրճանեանի և մօրեղբօրս Սէֆէր Փէհրիզեանի ջերմիկ հոգածութեան»[123]:

Երամյանին սկզբում ուղեկցում են նրա անդրանիկ սաներից Մարտիրոս Նալբանդյանը, մի խումբ վանեցիներ, վաճառական Ավետիս Մանդակունին, Պոլսի իրենց գործակատար Մարտիրոս Քաջաճեմյանը, ռուսաց երկրորդ հյուպատոս Կոլյուբակինի ռուս ծառան և այլք: Ճանապարհն անցնում են Աբաղայի դաշտ-Օրգով-Իգդիր-Էջմիածին-Երևան-Թիֆլիս-Բաթում-Կոստանդնուպոլիս (մնում են 40 օր)-Բուլղարիա (Վառնա, Ռուսճուգ) երթուղով և 1886 թ. հուլիսի 17-ին հասնում Վիեննա[124]:

Առաջին հանգրվանը հայաբնակ Արճակ գյուղն էր: Այնուհետև անցնում են Խառակոնիս և եզդիաբնակ Հաջի Միրզա գյուղերով[125]: 1886 թ. մայիսի 1-ին՝ ճամփորդության երրորդ օրը, խումբն ասորաբնակ մի գյուղում հյուրընկալվելուց հետո մուտք է գործում Աբաղայի դաշտավայր. «Կը մխրճինք Ապաղայի պատմական Դառնիի ընդարձակ հովիտը, որ արեւելքէն արեւմուտք և հիւսիսէն հարաւ երկերկու օրուայ անծայրածիր դուրան (տափաստան) մը կը ձեւացնէ իր նկարչագեղ ընդարձակութեամբ: Հող մը գերարգաւանդ կը բաւէ կերակրել հարիւր հազար մարդ, մինչ հազիւ տասը տասնըհինգ հազար քիւրտ բնակիչներ կային ցրուած 40-50 գիւղերու մէջ, մեծ մասամբ յելուզակ և այդ իսկ պատճառաւ թափառիկ յայսկոյս և յանկոյս պարսկական սահմանին...»[126]:

Աբաղայի «դաշտի կեդրոնը՝ մեր երրորդ հանգրուանին՝ Ալի-Քէլլէ անուն գիւղի աղբիւրին գլուխը գտանք գեղեցիկ տապանաքար մը՝ քանդակուած 885 թուականին, ինչ որ կը յիշեցնէր մեզ Բագրատունի Աշոտ Ա.ի երջանիկ թագաւորութեան առաջին քառակուսի տաճարաբլուր մը, որ կը հաստատէր աղիկէզ պատմուածքներ խուճապահար փախուստի օրերու: Տաճարաբլուրը ծածկող քարերու արանքներէն ցուրտ հով մը կը փճէր...»[127]:

117 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 152:
118 Նշվ. աշխ., էջ 153-154:
119 Նշվ. աշխ., էջ 152:
120 Նշվ. աշխ., էջ 152-153, 224, 308:
121 Նշվ. աշխ., էջ 152:
122 Նշվ. աշխ., Ա, էջ 206:
123 Նշվ. աշխ., էջ 206: Մանրամասն տե՛ս էջ 188:
124 Նշվ. աշխ., էջ 206-229:
125 Նշվ. աշխ., էջ 207:
126 Նշվ. աշխ., էջ 207-208:
127 Նշվ. աշխ., էջ 208:





Արծափի եկեղեցին և Էջմիածնի վանքը, որտեղ Համբարձում Երամյանն այցելել է 1886 թ.

Չորրորդ օրը՝ մայիսի 2-ին, «կը յառաջանանք դէպի Թափառէզ լեռը, որ Ապաղան կը բաժնէ Պայազիտի հովտէն: ...կիջեւանինք լերան ստորոտը՝ Գլզըլտիզակ[128] անուն քրտաբնակ գիւղը»[129]:

1886 թ. մայիսի 3-ին «ճամբայ կելենք դէպի սահմանագլուխ՝ Պայազիտը մեր ձախ-արեւմտեան կողմը թողլով...»: Հետո մտնում են Արծափ[130] գյուղ. «Տափաստանի մէջ դարձեալ գարուն է մինչև Արծափ (նախկին Ռուծափ) զուտ հայաբնակ գիւղը, ուր կը շրջապատուինք բնակիչներէն և կ'այցելենք եկեղեցին, որ ունէր միակտուր քարէ շարժական դուռ մը: Քուչակի հանգստարանէն յետոյ առաջին անգամն էր, որ հայ կը տեսնէինք ուրեմն և կիսովին ռուսահայ բարբառ մը կը լսէինք մեր սոյն վերջին հանգրուանին մէջ»[131]:

Մայիսի 4-ին բարձրանում են «սահմանագլուխ լերան կատարը՝ ի Խաչկէտիկ...»[132], ապա Սուրմալու գավառի Օրգով գյուղ. «Սահմանագլխի լերան ստորոտը՝ առաջին ռուսական Օրկօֆ գիւղի մէջ, մեր անցագրերն ու գոյքերը կը նայուին...»[133], հետո հասնում են գավառանիստ Իգդիր քաղաք. «Կարշաւենք դէպի Իկտիր զուտ հայաբնակ մեծ գիւղն ուր կը գիշերենք...: Մենք դեռ երկու երեք օր կը հանգչինք Արարատի այս առաջին գիւղին մէջ»[134]:

1886 թ. մայիսի սկզբին խումբն Իգդիրից մոտենում է Արաքս գետին և մայիսի 5-ին անցնելով սահմանագլխի Մարգարա հայաբնակ գյուղը՝ հասնում Վաղարշապատ. «Թողլով մեր աջ ու ձախ կողմ զանազան աւերակներ ու գիւղեր՝ կը հասնինք պատմական Վաղարշապատ, ուր և սենեակ մը կը վարձենք երեք օրուայ համար: Նոյն օրն իսկ, 5 մայիս, իրիկուան դէմ կ'այցելենք Էջմիածնի մայր տաճարն ու ջերմեռանդ ուխտաւորի երկիւղածութեամբ կը համբուրենք իջման սուրբ սեղանը...»[135]:

Էջմիածնում խմբին ընդունում են վանքի դիվանապետ Սահակ վարդապետը և տպարանապետ Սարգիս Գնունին: Հանդիպում են նաև կաթողիկոսական տեղապահ Մկրտիչ եպիսկոպոս Բաբամյանցին, վանքի գրադարանի տեսուչ Ներսես Խուդավերդյանցին և հոգևորական Հուսիկ Տեր-Մովսեսյանցին[136]:

Երամյանն անձամբ ծանոթանում է Գևորգյան ճեմարանի ուսուցիչներից Ստեփան Պալասանյանի[137] (դասավանդում էր հայոց պատմություն), Հայրապետ Ղուկասյանցի[138] (ընդհանուր ազգերի պատմություն), Դավիթ Քալանթարյանի հետ (մանկավարժության և փիլիսոփայություն)՝ ներկա լինելով նաև ոմանց դասերին, հյուրասիրվելով նրանց տանը[139]: Էջմիածնում մնում են չորս օր, որից հետո մայիսի 9-ին անցնում են Երևան:

1886 թ. մայիսի 10-ին հասնում են Գեղամա ծովակի ափերը. «Մեր ընթրիքը արքայական ճաշի մը կը վերածէ հռչակաւոր ձուկն Իշխանիկ»: Ֆուրգոն նստելով՝ հասնում են Դիլիջան, իսկ երեք օր հետո՝ Աղստաֆա:

1886 թ. մայիսին Հ. Երամյանը և ընկերներն Աղստաֆայից 3 ժամ հետո շոգեքարշով հասնում են Թիֆլիս. «Հոն առաջին անգամ կը լսեմ քաղաքակրթութեան ձայնը, շոգեշարժ մեքենայի սուլոցը»[140]:

Այցելում են վանեցիների հավաքատեղին դարձած վանեցի Մալխաս Թելլալյանի սրճարան, որտեղ իր խմբով երգում էր նաև աշուղ Ջիվանին: Երկրորդ օրը հանդիպում են թիֆլիսահայ մի շարք

128 Գտնվում է Բայազետ գավառում: Այժմ կոչվում է Օրթաղիրեք:

129 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 209:

130 Նույնպես Բայազետ գավառում է: Այժմ կոչվում է Սաղլըքսույու:

131 **Երամեան Հ.**, նույն տեղում: Ինչպես նշում է հեղինակը, 1913 թ. «հայեր պիտի գտնէինք Ապաղայի մէջ եւս»:

132 Նույն տեղում:

133 Նշվ. աշխ., էջ 210:

134 Նշվ. աշխ., էջ 211:

135 Նշվ. աշխ., Ա, էջ 211:

136 Նշվ. աշխ., էջ 211-212:

137 Ստեփան Պալասանյան (05.12.1837, Բոտոշան–19.02.1889, Վաղարշապատ)՝ լեզվաբան, գրականագետ, մանկավարժ:

138 Հայրապետ Ղուկասյանց (1845, Շամախի–1920, Բաքու)՝ մանկավարժ, հասարակական գործիչ:

139 **Երամյան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 212: Հետագայում Դավիթ Քալանթարյանի հետ Երամյանը հանդիպում է Կ.Պոլսում 1914 թ. «ազգային վարժարանաց ընդհանուր տեսչութեան պաշտօնին մէջ»:

140 Նշվ. աշխ., էջ 213:

Ստեփան Պալասանյան

անվանի մարդկանց՝ վիպասան Ռաֆֆուն, Ներսիսյան դպրոցի տեսուչ Արշակ Նահապետյանցին, Նահապետ եպիսկոպոսին, հանրածանոթ հասարակական գործիչ Աբգար Հովհաննիսյանին (Երամյանը նրա հետ ծանոթ էր «Փորձ» ամսագրից, «Արձագանք» շաբաթաթերթից), «Մեղու»-ի խմբագիր Պետրոս Սիմեոնյանցին, Թիֆլիսի առաջնորդ Արիստակես Սեդրակյանցին, որի մոտ հյուրընկալվել էին Կարնո առաջնորդ Մաղաքիա վարդապետ Օրմանյանը և Տրապիզոնի առաջնորդ Գարեգին վարդապետ Սրվանձտյանցը. «Երկուքն ալ Էջմիածին պիտի երթային եպիսկոպոս ձեռնադրուելու իրենց վիճակներուն վրայ: Վերջին անգամն էր, որ երկու ժամ առանձին պիտի վայելէի հայրենաշունչ հեղինակին՝ Սրուանձտեանցի հոգեպարար ընկերակցութիւնը: Նա կարօտով կը խօսէր իր ծննդավայր Վանի մասին»[141]:

Երամյանը հանդիպում է նաև «Մշակ» թերթի բազմազբաղ խմբագիր Գրիգոր Արծրունուն հենց խմբագրատանը, «Նոր-Դար» թերթի խմբագիր Սպանդար Սպանդարյանին, ինչպես նաև Հովհաննես Յուսուֆյանին, որը հետագայում դառնալու էր Տրապիզոնի գավառի ազգային վարժարանների տեսուչ (մահացել է Լոզանում)[142]:

Թիֆլիսում Երամյանը հանդիպում է նշանավոր ակնաբույժ գերմանացի հրեա դոկտոր Միխայիլ Իվանովիչ Բայխին, որը «բացէ ի բաց յայտարարեց թէ աչքիս բուժումը անկարելի է. և սակայն ես անվհատ՝ կ'ուզէի մինչև յուսկ նպատակակէտս՝ Վիէննա դիմել: Օրմանեան ինձ խորհուրդ տուած էր շտապել Օտէսայի գծով ուղղակի Վիէննա, «քանի դեռ առաջնակարգ բժիշկներն ամառնային արձակուրդով քաղաքէն չեն մեկնած դէպի եւրոպական ամարանոցները»: Դժբախտաբար չհետեւեցայ իր խորհրդին, նախընտրելով Պոլսոյ գիծը, ինչ որ անդարմանելի սխալ մը պիտի լինէր ինձ համար»[143]:

1886 թ. մայիսին խումբը Թիֆլիսից անցնում է Բաթում՝ հյուրընկալվելով Երամյանի եղբայրների դասընկեր Մարտիրոս Ագրիպպասյանի տանը. «Սորա կրտսեր եղբայրն Յովհաննէս կը պտտցնէ զմեզ Պաթումի մէջ, ուր ռուսները ստեղծագործ աշխատանքներու ձեռնարկած էին՝ երբեմնի տաճկական այդ աղտոտ գիւղաքաղաքը եւրոպական մաքուր քաղաքի մը վերածելու համար»[144]:





Ռաֆֆի և Աբգար Հովհաննիսյան



Գրիգոր Արծրունի և Պետրոս Սիմեոնյանց

Մաղաքիա Օրմանյան և Գարեգին Սրվանձտյանց

141 Նշվ. աշխ., Ա, էջ 213-215: Երամյանն Օրմանյանի քարոզը լսում է Թիֆլիսի վանքի մայր եկեղեցու բեմից, իսկ երկրորդ անգամ՝ 1914 թ. Պոլսում (էջ 215):

142 Նշվ. աշխ., էջ 215-216:

143 Նշվ. աշխ., Ա, էջ 216:

144 Նշվ. աշխ., էջ 216-217:

Բաթումից դուրս գալու ժամանակ նրանց ուղեկցում էին ճեմարանականներ Օննիկ Դերձակյանը (հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ՝ Արշակ Վռամյան մականունով) և Լևոն Սեղբոսյանը (Լևոն Շանք): Ճանապարհն անցնում էր Տրապիզոնով (մեկ օր սպասում են նավին), Սամսոնով (ուղեկիցների թիվն ավելանում է. խարբերդցիները մեկնում էին ԱՄՆ), Կիրասունով: Վերջապես 1886 թ. մայիսի 29-ին հասնում են Պոլիս. «1886 մայիսի 29ն էր, երբ Պոլիս մտանք: Վանեցւոց նախասիրած խանն էր այն ատենները Սիւմպիւլլի, որուն սենեկապետը, իբր նշան յարգանքի, մեզ տրամադրեց իր պանդոկի ամենէն գեղեցիկ սենեակը»[145]:

Պոլսում հանգրվանում են քառասուն օր: Քաղաքը Երամյանին ներկայանում է հետևյալ կերպ. «Պոլիս վանեցիներու երկրորդ հայրենիքն էր կարծես. ամէն քայլափոխի դիմացս կը հանէր Վասպուրականցի մը՝ ծանօթ կամ անծանօթ: Քանիցս դեռ այնուհետև ամիսներ ու շաբաթներ ապրած եմ ի Պոլիս՝ առանց գրեթէ երբեք պանդխտութեան դառնութիւնները ճաշակելու»[146]: Այստեղ այցելում է Պոլսո պատրիարք Հարություն Վեհապետյանին (1889-1910), որի հետ ծանոթացել էր դեռևս 12 տարի առաջ, երբ Վեհապետյանը Վանում էր, իսկ Պեշիկթաշում՝ Խորեն Նարպեյին[147]:

Այցելում է նաև հայտնի և գործող երեք մասնավոր վարժարաններ. «Պէրպէրեան, Յ. Գուրգէնի Հայկական Կրթարանը և Մէզպուրեան[148], որոնց կ'այցելենք կարգաւ...: Ամէնքը գիտեն, որ Պէրպէրեան դասական դէմքն մը հանդիսացած է մեր դաստիարակութեան պատմութեան մէջ՝ իր վարժարանովն և իբրև ատենապետ Կեդր. Ուսումն. Խորհրդոյ՝ իր պատրաստած կրթական յայտագրով...: Մեզպուրեան կ'ընդունի զմեզ մեծ համակրութեամբ»[149]: Մեզպուրյան վարժարանում ունկնդրում են իգական երգչախմբին, ծանոթանում հայերենի ուսուցիչ Ստեփան Փափազյանի հետ[150]: Երամյանը հանդիպում է նաև Մինաս Չերազին[151]:

Բացի մասնավոր վարժարաններից՝ այցելում են Ղալաթիա, ծանոթանում տեղի նախակրթարանի ուսուցիչ Դավիթ Խաչկոնցի հետ[152]:

Պոլսո պատրիարք Հարություն Վեհապետյան և Խորեն Նարպեյ

Երամյանն իր ուղեկիցների հետ մասնակցում է նաև Ազգային ընդհանուր ժողովի նիստերին՝ «գաղափար կազմելու համար տաճկահայութեան ճակատագիրը վարելու կոչուած այդ մեծ ժողովի մասին», լսում ատենապետ Նուրյանին, փաստաբան Հարություն Միրեմգուլին, Գաբրիել Նորատունկյանին, Տիգրան Յուսուֆյանին, Ռեթեոս Պերպերյանին[153]:

Երբ Միացյալ ընկերության տնօրեն, խորհրդի ատենապետ Գառնիկ Հովակիմյանն իր գրասենյակում հանդիպում է Երամյանին և ընկերներին, զարմանալով նրա անթերի հայերենի իմացության վրա, հարցնում է. «Ինչպէ՞ս կրնաք ուրեմն այդչափ հայերէնով մը արտայայտուիլ. արդեօք ձեր ուսումն Պոլսո՞յ կամ մտաւորական այլ կեդրոնի՞ մը մէջ առած էք»: Երամյանը պատասխանում է հետևյալ կերպ. «Վան ունի ինձմէ շատ աւելի զարգացած ուսուցիչներ ու երիտասարդներ, որոնք ինձ պէս տեղւոյն վարժարաններէն առած են իրենց լոյսը»[154]:

Նրան մեծ համակրությամբ է ընդունում կայսերական պալատի բժշկապետ Տիգրան փաշա Փեշտիմալճյանը՝ «արժանիքէս վեր պատիւներ ընծայելով ...»[155]:

Պոլսում Երամյանը հանդիպում է մի շարք անվանի ակնաբույժների, ինչպիսիք են՝ Նիկողոս Էսմերյան, Տիգրան Աճեմյան, Էլիաս փաշա, դոկտոր Մելինճան: Էսմերյանն առաջարկում է ընկերանալ մինչև Փարիզ՝ այն հիվանդանոցը, որտեղ «ինքն կ'աշխատէր իբրև օգնական ֆրանսացի մեծ մասնագէտի մը: Այս նպաստաւոր առաջարկն ևս կը մերժեմ՝ մտասեւեռումս լինելով միշտ Տօքթ. Արըլթն ի Վիէննա»[156]:

40 օր մնալով Պոլսում՝ Երամյանը հանդիպում է նաև այնտեղ բնակվող մի շարք վանեցիների՝ Հով-

145 Նշվ. աշխ., Ա, էջ 217-218:

146 Նշվ. աշխ., էջ 219:

147 Նույն տեղում: Խորեն Գալֆայան (Նար-Պեյ)՝ հայ բանաստեղծ, թատերագիր (1831, Կ.Պոլիս-1892, Կ.Պոլիս):

148 Պերպերյան վարժարանը և Հակոբ Գուրգենի Հայկական կրթարանը հիմնադրվել են 1876 թ., իսկ Մեզպուրյանը՝ 1865 թ.:

149 Նշվ. աշխ., էջ 219-220:

150 Նշվ. աշխ., էջ 220: Հակառակ մեծ ցանկության՝ Երամյանին չի հաջողվում տեսնել Եղիա Տեմիրճիպաշյանին և Հակոբ Պարոնյանին:

151 Նշվ. աշխ., էջ 220-221: Հետագայում Չերազն իր հրատարակած աշխատություններից նվիրում է Երամյան վարժարանի գրադարանին: 1926 թ. մայիսի վերջերին Մարսելում, Փարիզում, ԱՄՆ-ում տոնվում է Չերազի գրական գործունեության 60-ամյակը:

152 Նշվ. աշխ., էջ 220:

153 Նշվ. աշխ., Ա, էջ 221:

154 Նշվ. աշխ., էջ 221-222: Մեկնելու ժամանակ Հովակիմյանը Երամյանին է նվիրում Միացյալ ընկերության հրատարակած դասագրքերից:

155 Նշվ. աշխ., էջ 222: Նահատակվել է 1894 թ.՝ Համիդյան ջարդերի ժամանակ:

156 Նույն տեղում:

սեփ Փեհրիզյան, Սարգիս Ամեմխաչոյան, Հովհաննես Սանթուրճյան, Կարապետ Մանուկյան, Հովհաննես Իսագուլյան, Կարապետ Նաթանյան, Ավետիս Գալիկյան, Հարություն Շահպաղլյան, Ավետիս Քիրեքճյան, Գրիգոր Շահպաղեցյան և այլք[157]:

1886 թ. հուլիսի 8-ին, անցնելով Բոսֆորի նեղուցը, խումբն ուղևորվում է Բուլղարիա: Վառնա, Ռուսճուք քաղաքներից մինչև Վիեննա կատարած ճանապարհորդության վերաբերյալ Երամյանի հոդվածը հետագայում տպագրվում է «Մասիս» շաբաթաթերթում[158], որի միջոցով նա ճանաչում է ձեռք բերում. «Անոր միջոցաւ զիս պիտի ճանչնային շատերը»: Վառնայում այցելում են հայոց եկեղեցի, իսկ հայկական վարժարանի ուսուցիչ աղաբազարցի Հովհաննես Պիպերճյանը, Պոլսի թերթերից տեղեկանալով Երամյանի ուղևորության նպատակը, ջերմ ընդունելություն է ցույց տալիս և հրավիրում նրան մասնակցելու դպրոցի քննություններին. «Հարց ու պատասխանները շատ յաջող գտանք՝ զուտ հայերէնով. զբօսավայրի մէջ սակայն թուրքերէն լսեցինք: Մեր դիտողութեան ցաւով պատասխանեցաւ, թէ դասարաններէն դուրս դեռ թուրքերէնն է ընթացիկ լեզուն: Դեռ այնքան խոր էր ուրեմն թրքական տիրապետութեան անիծակուռ դրոշմը Վառնայի հայ գաղութին վրայ»[159]: Երամյանը, ցավոք, մերժում է իրեն և ընկերոջն առաջարկած ուսուցչական պաշտոնը Վառնայի նույն դպրոցում. «Շնորհակալութեամբ մերժեցի, զի ես իմ վարժարանս ունէի»[160]:

1886 թ. հուլիսի 10-ին նրանք մեկնում են Վառնայից: Հասնում են Ռուսճուգ: Դիմավորում են բազմաթիվ հայեր, որոնց թվում էր հայկական վարժարանի տեսուչ և ազգային գործիչ եվդոկիացի Հակոբ Պոնճուգյանը[161]:

Բուլղարիայից մեկնելիս «խնայողութեան հաշիւներով, Դանուբի նաւարկութիւնը կը նախընտրինք Վիէննա երթալու համար» և անցնելով Բուդապեշտով՝ 1886 թ. հուլիսի 17-ին «ոտք կը կոխենք Աւստրիոյ պատմական մեծ մայրաքաղաքը»: Այնտեղ հանգրվանում են մեկ ամիս:

Վիեննայում Երամյանը հանդիպումներ է ունենում Կայսերական համալսարանի հայերենի և արաբերենի ուսուցիչ բնիկ պոլսեցի Կարապետ Գույումճյանի, Պարսկաստանի դեսպան Նարիման խան Ենիկոլոպյանի և պոլսեցի Կարապետ Նիզամյանի հետ[162]:

Այցելում է նաև Մխիթարյան միաբանություն. «Ճանցչանք նաև Վիէննայի Մխիթարեաններէն հայր Սամուէլ՝ տեսուչն Թրիէսթէի վանքին և իրմէ հարկ եղած տեղեկութիւններն ստանալով կ'այցելենք Մխիթարեանց մեծափառ մենաստանը: Կ'ընդունի զմեզ նորընտիր մեծաւոր Հ. Արսէն Այտընեան, որ մէկ երկու տարիէն եպիսկոպոս պիտի ձեռնադրուէր...: Նա յանձնարարեց զմեզ Հ. Նիկողոս Աւգերեանի, որ քանի մը ժամ մեզ հետ զբաղեցաւ սիրով: Պտտցուց զմեզ վանքի յարկաբաժիններն և մասնաւորապէս ձեռագիրներու և տպագիրներու գրադարաններն և հնութեանց թանգարանը»[163]:

Վիեննայում էլ, սակայն, հոդս է ցնդում Երամյանի՝ աչքի լույսը վերականգնելու փափագը: Բժիշկ Արըլթը մահամերձ էր և մի քանի շաբաթ անց վախճանվում է: Նրա որդին, որը նույնպես ակնաբույժ էր, խորհուրդ է տալիս դիմել քաղաքային հիվանդանոց, որտեղ շուրջ 15 օր Երամյանին քննում են արձակուրդում գտնվող բժիշկ Շտրաուսի օգնականները և արձանագրում «ո՛չ մէկ յոյս», սակայն, «միայն, սոսկ փորձի համար, օբէրասիոն մը կ'առաջարկեն, ինչ որ ես ալ կը մերժեմ և կ'որոշեմ յետս ընդ կրունկն դառնալ ձեռնունայն և յուսախաբ, զի քսակս չէր ներեր սպասել մասնագէտներու վերադարձին»[164]:

Հուսախաբ և տխուր՝ Երամյանը մերժում է Փարիզի հայրենասիրաց միության հրավերը և հրաժարվում «նաև յուխտ Ալիշանի մինչև Վենետիկ երթալու սեւեռուն գաղափարէս...»[165]. «Կը դառնայի յուսավրէպ և սակայն ո՛չ յուսահատ..., ...կարելին փորձած լինելու գոհունակութեամբ քաղաքս կը մտնէի բարձրաճակատ»[166]:

Հետդարձի ճանապարհը. Երամյանն ու ընկերներն օգոստոսին դուրս են գալիս Վիեննայից և վերադառնում տուն հետևյալ ճանապարհով՝ Ռուսճուգ, Վառնա, Պոլիս, Տրապիզոն, Գյումուշխանե, Կարին: Վան են մտնում 1886 թ. սեպտեմբերին[167]:

Օգոստոսի 20-ին հասնում են Պոլիս, «ի Գուզկունճուք» այցելում Խրիմյան Հայրիկին, Վրթանես Փափազյանին, իսկ «Մարգարյան» գրատանը հանդիպում է Սիմեոն Գուլամիրյանցին, որի խմբա-

157 Նշվ. աշխ., էջ 222-223:

158 **Երամեան Հ.**, Ուղեւորութիւն մը դէպի Վիէննա, «Մասիս», 1886, № 3837, 30 օգոստոսի, էջ 65-68:

159 Նշվ. աշխ., Ա, էջ 224:

160 Նույն տեղում:

161 Նշվ. աշխ., էջ 225: Մանկավարժ, խմբագիր Հ. Պոնճուգյանին (1851, Մոսուլ–1928, Կահիրե: Գրչանունը՝ Յ. Սիմոն) Երամյանն այսպես է նկարագրում. «...գերմանական բարձր կրթութիւն մ'ստացած, ծանրախոհ եւ քանի մը լեզուաց հմուտ երիտասարդ մ'է, որ մերթ ընդ մերթ ազգային նիւթերով ներկայացումներ եւս կը կազմաւորէ յօգուտ այս կամ այն ազգային նպատակի եւ... շատ կարեւոր անձնաւորութիւն մ'է տեղւոյն հայութեան համար» (**Երամեան Հ.**, Ուղեւորութիւն մը դէպի Վիէննա, «Մասիս», 1886, № 3837, 30 օգոստոսի, էջ 65): Տարիներ հետո Պոնճուգյանին հանդիպում է նաև Կահիրեում՝ Կարապետ Սեֆերյանի տանը: Պոնճուգյանի հոդվածները տպագրվել են «Արեւ»-ում (**նույնի**՝ նշվ. աշխ., Ա, էջ 225-226):

162 Նշվ. աշխ., Ա, էջ 227-228: Կարապետ Գույումճյանը Կռօ ծածկանունով հոդվածներ է տպագրել «Մշակ» թերթում: Հետագայում «Խտիվ Ապպաս Հիլմի փաշայի տղոց ուսուցիչ պիտի կարգուէր յԵգիպտոս, ուր շատեր ճանչցած են իր քաղցր և դիւրահաղորդ բնաւորութիւնը»:

163 Նշվ. աշխ., էջ 229:

164 Նշվ. աշխ., էջ 230-231:

165 Նշվ. աշխ., էջ 231:

166 Նշվ. աշխ., էջ 231, 246:

167 Նշվ. աշխ., էջ 231-246:



Տրապիզոն և Կարին քաղաքները

գրությամբ ամիսներ անց Պետերբուրգում սկսում է հրատարակվել «Արաքս» հանդեսը: Պոլսում մնում են 8 օր և քառօրյա նավարկությունից հետո հասնում Տրապիզոն[168]: Այնտեղ հանդիպում է Կարապետ Մանուկյանին, Խաչատուր Արսլանյանին, իսկ առաջնորդ Գարեգին Սրվանձտյանցին (Տրապիզոնի առաջնորդության պաշտոնում եղել է 1886-1886 թթ.) չի կարողանում տեսնել նրա՝ գավառներ հովվական այցի պատճառով: Հանդիպում է նաև Մկրտիչ Սանասարյանի կտակարար, բանասեր-պատմաբան Կարապետ Եզյանցին[169]:

Տրապիզոնի մասին, որտեղ անց են կացնում երեք օր, Երամյանը նշում է. «Ի հնուց նաև հայ ճոխ գաղթականութեան մը կեդրոն հանդիսացած է Տրապիզոն, ուր ԺԱ դարուն, Բիւզանդիոնի կայսեր Վասիլ Բ Արշակունիի ներկայութեան՝ Գետադարձ Պետրոս կաթողիկոս, իր Գետարգել խաչին հրաշքովը, հայ առաքելական եկեղեցին պիտի պանծացնէր՝ ընդդէմ մոլեռանդ քաղկեդոնիկութեան: Հոն դեռ կանգուն կը մնայ բազմադարեան և երբեմն դպրութեանց կեդրոն հանդիսացած Ամենափրկչեան դպրեվանքը, որ վերջերը իր հին փառքերէն անշքացած՝ իբրև ամարանոց կը ծառայէր քաղաքի բարեկեցիկ ազգայնոց»[170]:

Հաջորդ կարևոր հանգրվանի՝ Կարին քաղաքի մասին գրում է հետևյալը. «Կարին, թրքաց Էրզրումը, նախկին անուամբ Թէոդուպոլիս, հիմնուած է հինգերորդ դարու սկիզբները՝ իբր յունական կամ Արեւմտեան Հայաստանի ամրոց՝ Անատոլիս զօրավարին ձեռքով՝ Բիւզանդիոնի կայսր Թէոտոս Փոքրի հրամանաւ...: Էրզրում՝ վեցեակ հայ նահանգներու ոստանն՝ առաջին ակնարկով խոշոր գիւղ մը պիտի կարծուէր՝ եթէ չունենար այնքան մեծ առուտուր, գտնուելով Պարսկաստանի, Վանի և Պիթլիսի ճամբաներուն վրայ՝ դէպի Տրապիզոն, որով ուղտերու անծայր կարաւաններ անընդհատ կը մտնեն ու



Կարինի Սանասարյան վարժարանը

կ'ելլեն: Ի հնուց նշանաւոր էր Էրզրում իբրև մեծ բերդաքաղաք և թուրքերը, Խրիմի պատերազմէն վերջ շատ աւելի պիտի ամրացնէին ռուսական թնդանօթներու այդ թիրախը՝ առանց սակայն կարենալ ազատելու զայն մօսկօֆեան երկրորդ ժամանակաւոր գրաւումէ մը՝ վերջին Արեւելեան պատերազմին՝ 1877-78: Թուրքերը բնակչութեան մեծամասնութիւնը կազմելով՝ կը զբաղուէին նաև արհեստներով ու առուտուրով՝ ինչպէս հայերը, որոց թիւը՝ քաղաքի մէջ՝ 20,000, իսկ ամբողջ նահանգին մէջ՝ 200,000ը կ'անցնէր: Հայերն ունէին ընդարձակ ու հոյակապ եկեղեցի մը և Ազգ. երկսեռ վարժարաններէն զատ, երկու երեք մասնաւոր դպրոցներ»[171]:

Կարինում Երամյանը հանդիպում է առաջնորդ Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանին, որը նրան առաջնորդում է Կարինի ազգային վարժարաններ. «Ինքն էր վերին տեսուչ, իր ձեռքին տակ ունենալով իբր օգնական փոխտեսուչ մը յանձին Տուրսունեանի, որ նախկին Մխիթարեան մըն էր...: ...կ'այցելենք նաև Մկրտիչ Աղապալեան անհատական վարժարանը, որու հիմնադիրն Մկրտիչ Աղապալեան ունի „Բանալի բնական երեւոյթից„ անուն դասագիրք մը՝ շատ դպրոցներու մէջ գործածուած»[172]:

168 Նշվ. աշխ., Ա, էջ 233-234:

169 Նշվ. աշխ., էջ 234-235:

170 Նշվ. աշխ., էջ 236: Երամյանն իր աշխատության մեջ (էջ 236-237) հատվածներ է մեջբերել Գարեգին Սրվանձտյանցի՝ Տրապիզոնից Գյումուշխանե ճանապարհի նկարագրությունից (տե՛ս «Թորոս Աղբար», Կ.Պոլիս, 1884, հ. Բ, էջ 35-36):

171 Նշվ. աշխ., Ա, էջ 237-238:

172 Նշվ. աշխ., էջ 238-239: Մկրտիչ Աղապալյանի «Առաջնորդ բնագիտութեան» (Պոլիս, 1877) դասագրքով Երամյանը դասավանդել է դեռևս 1878-1879 թթ. Սբ. Հակոբ եկեղեցու ծխական վարժարանում:





Հասանկալեն և Վաղարշավանի կամուրջն Արաքսի վրա

Սանասարյան վարժարանում Երամյանին դիմավորում է Կարապետ Եզյանցը, որտեղ էլ Գևորգ Աբուլյանի ընկերակցությամբ շրջում են գրադարանում, թանգարանում, գիտական հավաքածուների սրահում (վարժարանն ուներ զանազան գավառներից եկած 120 գիշերօթիկ և նույնքան էլ քաղաքում բնակվող ցերեկօթիկ աշակերտներ)[173]:

Կարինից Վան վերադառնալով՝ խումբն անցնում է Հասանկալեով. «Կեդրոն նախկին Բասէնի, իսկ իրիկուան դէմ կ'ողջունենք Արաքսն, որուն վրայ կը բարձրանայ պատմական կամուրջ մը՝ Չօպան քէօբրիւսի, գործ՝ ըստ աւանդութեան՝ հնարագէտ հայ հովուի մը»: Օթևանում են «...Քէօբրիւ քէօյ զուտ հայաբնակ գիւղը, նախկին Վաղարշաւանը, որուն ճարտարապետական մնացորդներն ու քարայատակ փողոցները յաճախ երեւան կուգան եղեր մշակուած արտերու հողէ ծալքերուն տակ»[174]:

Ճանապարհին հանդիպում են Բաղնոցից արտագաղթող մելիք Մանուկին «...որ իբրև երկրորդ Վարդան ոմն, տունով տեղով միեւնոյն վայրերէն գաղթելու ելած էր՝ դէպի ո՞ւր, թերեւս ինքն ալ չգիտէր որոշ: Բաղնոցի և շրջակայ գաւառներու ամենազօր արքայիկն՝ տխրահռչակ Քէօռ Հիւսէին փաշայի և կառավարական պաշտօնէից կեղեքումներու երեսէն խոյս կուտար նա, և սակայն Պայազիտի միւթէսարիֆը, ձիաւոր ոստիկաններու ջոկատով մը եկած և զայն համոզած էր ետ դառնալու: Մելիք Մանուկն ակամայ վերադարձաւ և նոյն իրիկունն իսկ զմեզ իր տունը հիւրընկալեց և դառնացած սրտով կը պատմէր իր արարքին դրդապատճառները: Քանի մը շաբաթ վերջը պիտի լսէինք, որ անպատիժ աւազակն Հիւսէին, Մելիքին տունը թալաներ և անոր գեղանի դստրիկն՝ ...Հեղինէն՝ ...հարէմին մէջ փակեր է՝ բռնի ամուսնացնելով զայն իր մէկ խօլամին (ծառայ) հետ»[175]:

Հաջորդ օրը խումբը հյուրընկալվում է հայաբնակ Հասբիսնակ գյուղի տանուտեր Սեդրակի տանը[176], հետո այցելում են Մեծոփավանք. «...հինաւուրց մեծափառ մենաստանն Մեծոփ, որուն վանահայր և միանգամայն Արճեշի խիզախ հովիւը՝ Սահակ վ. Բագրեւանդեան, ի լուր մեր ժամանման՝ կուգայ զմեզ հրաւիրելու իր վանքն յուխտ Թովմայ Մեծոփեցիի»[177]:

Այնուհետև մուտք են գործում Քաջբերունիքի գավառանիստ կենտրոն. «Յաջորդ օրը, ցերեկով կ'անցնինք Ականցէն՝ Արճէշի նոր կեդրոնէն, որ Վան-Բաղէշ հիւսիսային գծի գլխաւոր հանգոյցը կը կազմէր և այդ երկու կեդրոններու խառն մանրանկարը կը ներկայացնէր իր առեւտրական ու ճարտարարուեստական կեանքով: Բզնունեաց ծովու հիւսիսային դշխոյիկն Ականց՝ Կովկասի սահմանամերձ դիրքովն մանաւանդ բարգաւաճ կեանքի մը նախօրեակը կ'ապրէր, խոստանալով մօտալուտ փարթամ ապառնի մը»[178]:

Անցնելով բազմամարդ հայկական գյուղերով՝ երեք օրից հասնում են Ավանց նավահանգիստ. «Կը մեկնինք և ծովի արեւելեան եզերքներէն քերելով ու մեծ մասամբ շէն ու բազմամարդ հայ գիւղերէ անցնելով՝ երեք օրէն կը հասնինք Աւանց...: Վանի նաւահանգիստ Աւանց գիւղին մէջ Մարգար Պանդիկեան պատահմամբ դիմաւորելով կը պատուասիրէ զմեզ պատուական խաղողով»[179], որից հետո՝ Վան:

ՆՈՐ ԴԺՎԱՐ ՍԿԻԶԲԸ

Շուրջ հնգամսյա բացակայությունից հետո Երամյանը դարձյալ Վանում էր: 1886 թ. հոկտեմբերից նյութական ծանրագույն պայմաններում նորից լծվում է նվիրական աշխատանքին, որը «կարողութեենէս վեր ծախսերու ու զոհողութեացն դուռ պիտի բանար: Ուստի հազիւ թէ տունս գրաւէ կ'ազատեմ և ահա 88ին կը պարտաւորուիմ հօրեղբօրորդի Յովհաննէս Երամեանի ծախել հօրենական ժառանգութիւնս, անոր գնով ընտանիքիս ապրուստը և դպրոցի գոյութիւնը գէթ քանի մը տարի ապահովելու համար»[180]:

173 Նշվ. աշխ., Ա, էջ 239:
174 Նշվ. աշխ., էջ 241:
175 Նշվ. աշխ., էջ 243-244:
176 Նշվ. աշխ., էջ 244:
177 Նույն տեղում:
178 Նույն տեղում:
179 Նշվ. աշխ., Ա, էջ 245:
180 Նշվ. աշխ., էջ 247:

Գևորգ Աբուլյան և Մկրտիչ Սանասարյան



Մեծոփավանքը

Հատկանշական է, որ Հ. Երամյանի տնօրինությամբ գործող վարժարանը կրթական մակարդակով հենց 1886 թ.-ից է սկսում ետևում թողնել Վանի մյուս կրթօջախներին և որպես քաղաքի բարձրագույն կրթական հաստատություն՝ այդ անունը պահում է մինչև 1915 թ.[181]:

Տեղի տալով նյութական անլուծելի խնդիրներին՝ 1888 թ.-ից շարունակում է գործել որպես սոսկ ցերեկային դպրոց. «Գիշերօթիկ սանուց կէսէն աւելին շրջանաւարտ եղան, իսկ միւսները հետզհետէ արհեստաւորներու քով տեղաւորուեցան, որով յիշեալ թուականէն յետոյ վարժարանը բոլորովին ցերեկօթիկի պիտի վերածուէր»[182]: 1889 թ. նշվել է, որ թեպետ «Խնամատարը ո՛չ եւս էր եօթը տարիներէ ի վեր, անոր հիմնած որբանոցը սակայն դեռ կը շարունակուէր իբրև ցերեկօթիկ վարժարան, և ես կը ներկայանայի իբրև անոր տէր և տնօրէն»[183]:

Նույն՝ 1889 թվականին Երամյանին սպասվում էր մի տհաճ փորձություն: Բանն այն է, որ Վանում գործող գրախանութի խուզարկության ժամանակ հայտնաբերվել էին «Խնամատար» ընկերության կնիքով Ռ. Պատկանյանի (Գամառ-Քաթիպա) «Ազատ երգեր» բանաստեղծությունների ժողովածուի մի քանի օրինակներ, որի պատճառով էլ որպես տնօրեն՝ Երամյանին հանցաքննության են կանչում և բանտարկում («Ախոռ մը էր»): Խնդրի լուծման համար կազմվում է «քոմիսիոն», որի հայ անդամ Ավետիս Պարթևյանի[184] շնորհիվ էլ հարցը կարգավորվում է. «Խնամատարի խնդիրը կը փակուէր՝ առանց ինձմէ զատ ո՛չ ոք բանտարկուելու կամ հարցաքննուելու»: Բացի դրանից՝ ընկերության որոշ անդամներ, մի գիշեր դպրոց գալով, կրակի են տալիս «ընկերութեան չորս հինգ տարուայ բոլոր տոմարներն ու թղթածրարները: Իմ կարգիս ես ալ ստիպուեցայ շատ մը գրքեր նոյնպէս այրել կամ թաղել տալ հողի տակ»[185]: Ձերբակալվում են մի քանի անմեղ մարդիկ՝ Արսեն վարդապետ Թոխմախյանը, Գարեգին Բաղեշցյանը[186]:

1890-ական թթ. սկզբներին վարժարանն արդեն ուներ իր ծրագիրը, որը Վանի առաջնորդական տեղապահ Հովսեփ ծ. վ. Այվազյանի հրամանով որպես նախօրինակ է ծառայում քաղաքում գործող մյուս կրթօջախների համար. «Մերինէն զատ միւս վարժարանները կ՚ընթանան դեռ առանց ոևէ որոշ ծրագրի, իր նախագահութեան տակ յանձնաժողով մը կազմեց ծխական վարժարանաց գլխաւոր ուսուցիչներէն և ընդհանուր յայտագիր մը պատրաստել տուաւ: Իբրև նախատիպ առաւ մեր վարժարանի ծրագիրը, յանձնաժողովին անդամ ընտրելով նաև զիս և մեր սան ուսուցիչներէն Մարտիրոս Նալպանտեանն և Մամբրէ Մկրեանը՝ իբրև մասնագէտ զանազան առարկաներու»[187]:

1890-ական թթ. սկզբին Վանի կուսակալ Պահրի բեյը հալածանքներ է սկսում Երամյանի դեմ: Երբ 1892 թ. աշնանը Պարսկաստանից հնդախտը տարածվում է Վանի նահանգում, նոյեմբեր-դեկտեմբերից մինչև 1893 թ. հունվար ամիսը փակվում են բոլոր դպրոցները: Այդ ընթացքում վարժարանում էին հավաքվում այլ կրթօջախների բազմաթիվ ուսուցիչներ, որն էլ կուսակալին կասկածների տեղիք է տալիս: Նա սպառնում է Երամյանին այս բառերով. «Ձքեզ բանտերու մէջ պիտի մաշեցնեմ, զքեզ պիտի կախեմ» և այլն[188]: Անգամ արգելում են հայոց պատմության դասավանդումը. «Խնդիրն այն էր որ եթէ մեր վարժարանը իր առաջնակարգ դիրքով ենթարկուէր այդ կամայական խստութեան, Վանի միւս դպրոցներն ալ պիտի ստիպուէին զեղչել պատմութեան դասը»[189]: Մի

181 Նշվ. աշխ., Ա, էջ 152:

182 Նույն տեղում:

183 Նշվ. աշխ., էջ 251:

184 Ավետիս Պարթևյանը Վանի ոստիկանական խորհրդի անդամներից էր: 1893 թ. աքսորվում է Տրիպոլիս («Արմենիա», 1893, № 62, 25 մարտի, էջ 2):

185 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 251-253:

186 Նշվ. աշխ., էջ 254: Ի դեպ, 1920-ական թթ. Գարեգին Բաղեշցյանը բնակվում էր Կալիֆոռնիայում: 1925 թ. մայիսի 12-ին նա Ֆրեզնոյից նամակ է գրում Երամյանին՝ պատմելով իր և Արսեն վարդապետի՝ բանտում կատարված խոշտանգումների մասին (էջ 253-255):

187 Նշվ. աշխ., էջ 261-262:

188 Նշվ. աշխ., էջ 272: Մանրամասն տե՛ս էջ 272-274:

189 Նշվ. աշխ., էջ 277:

անգամ էլ Պահրի բեյը 25 ոստիկաններով ներխուժում է վարժարան և խուզարկելով ու ոչինչ չգտնելով՝ ձեռնունայն հեռանում է[190]:

1893 թ. Երամյանը ծանր հիվանդանում է, սակայն, բարեբախտաբար, բժշկվում՝ շնորհիվ ամերիկյան միսիոներական վարժարանի տեսուչ բժշկուհի Քեմպլի. «Զանազան բժիշկներու հետ խորհրդակցելով՝ ինքն մեծ գորովով դարմանեց 93ի երկարատեւ հիւանդութիւնս, տեսակ մը վտանգաւոր ջերմ, որմէ վերջնապէս պիտի ազատէր զիս առողջապահական բազմահմուտ բժիշկ Լէբովիչ լեհացի՝ acide saliciliqué թոյնի յանդուգն կիրարկութեամբ»[191]:

1894 թ. վարժարան ընդունված Արմենակ Փոխարյանը[192] նշում է. «Իր աչազուրկ տնօրէնի պողպատ կամքի շնորհիւ, նախկին փոքր որբանոց-դպրոցը (1878-ին հիմնուած) դարձեր էր Վանի ամենէն աւելի աչքի ընկնող կրթական հաստատութիւնը»[193], իսկ որբանոց-վարժարանի գործունեությունն առավել մանրամասն քննած հեղինակը 1895 թ. գրում է. «1878 թականին «Խնամատար» անունով մի ընկերութիւն կազմուեցաւ տեղւոյս ազգայիններէն՝ գիւղերէ և քաղաքէ որբ և աղքատիկ մանուկներ հաւաքելով՝ անոնց ձրի սնունդ և կրթութիւն տալու նպատակաւ: Հիմնուեցաւ Որբանոց մը, որ ազգի նուիրատուութիւններ միայն ունէր իբրև հասոյթի աղբիւր: Քանի մը տարի վերջ, Որբանոցը՝ գիշերօթիկ որբերէ զատ, սկսաւ ընդունել նաև ցերեկեայ թոշակաւոր աշակերտներ: Սակայն ժողովրդի աղքատութիւնը և կարգ մը ուրիշ պատճառներ, արգելք եղան «Խնամատար» ընկերութեան շարունակութեան. գիշերօթիկներ ցրուեցան և Որբանոցը վերածուեցաւ լոկ թոշակաւորներու վարժարանի մը՝ պահելով սակայն ամեն տարի 30-40 և աւելի ձրիավարժ աղքատ աշակերտներ: Մի տեղացի, Համբարձում Երամեան, որ եղած էր «Խնամատար» ընկերութեան հիմնադիրը և Որբանոցի վարիչը, այն օրէն ի վեր կը շարունակէ պահել այդ դպրոցն իր տեսչութեան տակ «Հայկական որբանոցի վարժարան» անունով: Այժմ, Վանի ընդհանուր կրթական աննախանձելի կացութեան մէջ, իրական մխիթարութիւն մ'է այս դպրոցը վանեցւոց համար:

Աշակերտաց թիւը 200-ի մօտ է, որոց 45-ը՝ ձրիավարժ որբեր են: Այս ձրի սաներէն 6-ն միայն բարեբարեալ են, մնացեալներու գրական պիտոյք – ոմանց նաև զգեստ – դպրոցը կուտայ: Թոշակաւորներ՝ քաղաքիս ամեն թաղերէն և ամեն դասակարգէն (կան նոյնիսկ մերձակայ գիւղերէն), կը վճարեն դասարանի և ծնողաց կարողութեան համեմատ 1– 4,1/2 օսմանեան ոսկի և ասկէ գոյացած տարեկան իբր 200 ոսկւոյ գումարն է այս վարժարանի միակ եկամուտ: Վանի հասարակութիւնը այս դպրոցին միայն է, որ այսչափ վճարք կընէ. միւս դպրոցներ՝ բոլորն ի միասին, հազիւ այնչափ գումար կը գոյացնեն տարեկան թոշակներէ: Եւ 200 ոսկին՝ նշանակելի գումար մ'է, երբ ի նկատի ունենանք Վանի տնտեսական վիճակի աննպաստ պայմանները:

Որբանոցի վարժարան կ'ընդունուին 7 տարին լրացուցած մանուկներ, և այբուբենէ սկսելով՝ 10-ամեայ ծրագրով մը, կը ստանան Վանայ համար կարելի եղած բարձրագոյն կրթութիւն մը: Այս ծրագիրը յօրինուած է մեր ազգի բոլոր բարձրագոյն կրթական հաստատութեանց ծրագիրներ աչքի առաջ ունենալով և միշտ բարեփոխուելով և տեղական պահանջներուն յարմարցուելով: Երկու մասի բաժնուած է. 4 տարի նախակրթարան և 6 տարի ուսումնարան անունով: Նախակրթարանէն մեկնողները կրնան նախնական անհրաժեշտ ուսում մը հետերնին տանել կրօնի, աշխարհաբար հայերէնի, պատմութեան, աշխարհագրութեան, թուաբանութեան, գծագրութեան, մարմնամարզի և այլն առարկայներու մէջ: Իսկ շարունակողները՝ ուսումնարանի մէջ, նոյն առարկայները աւելի ընդարձակորէն ուսանելէ զատ, կը սովորեն նաև գրաբար հայերէն, թիւրքերէն, ֆրանսերէն, ազգային, եկեղեցական և ընդհանուր պատմութիւն, ազգային և օտար մատենագրութիւն, գրահաշիւ, երկրաչափութիւն, աստեղագիտութիւն, բնագիտութիւն, բնալուծութիւն, երկրաբանութիւն և այլն:

Սեպհական շէնք կը պակսի այս դպրոցին, ուստի վարձուած առանձին տան մը մէջ է, որը, սակայն, ունի բաւական յարմարութիւններ: Իւրաքանչիւր կարգ առանձին դասարանի մէջ է, բացի երկու փոքրաթիւ կարգերէ, որք սերտարանի մը մէջ կը նստին: Ամեն կարգերն ալ յաջորդաբար կան, բացի վերջին Զ. դասարանէն, որ նոր՝ այս տարի, աւելցաւ: Իւրաքանչիւր դասարան յանձնուած է մէկ ուսուցչի մասնաւոր խնամաց, որ պատասխանատու է անոր ընդհանուր դաստիարակչական և կարգապահական գործերուն և որ կը կոչուի նոյն դասարանի դաստիարակ: Իւրաքանչիւր դաստիարակ շաբաթ մի ժամ մի յարմարաւոր գիրք կը կարդայ իր դասարանին՝ աշակերտներու մէջ, ի միջի այլոց, ընթերցման սէր և ճաշակ ներշնչելու յատուկ նպատակաւ:

Այս դպրոցին մէջ բոլոր աշակերտներն ալ ունեն գրասեղան և նստարան (մասնաւոր նշանակելի պարագայ մը Վանի դպրոցներուն համար): – Նոյնպէս անոր ելևմտացոյցին մէջ իւրաքանչիւր տարի մասնաւոր գումար մը յատկացուած է դպրոցական պիտոյք հոգալու, և այս կերպով վարժարանը կրցած է ունենալ բաւական գոհացուցիչ հաւաքածոյներ բնագիտական գործիքներու, քիմիական դեղերու, կրօնական, պատմական և գիտական պատկերներու, աշխարհագրական և պատմական քարտէզներու և այլն. կայ նոյնպէս մատենադարան մը աշակերտաց

190 Նշվ. աշխ., Ա, էջ 278:

191 Նշվ. աշխ., էջ 412-413:

192 Արմենակ Փոխարյան (1878, Վան–31.12.1960, Թավրիզ) («Ալիք», 1961, № 1, 2 յունուարի, էջ 2; № 33, 13 փետրուարի, էջ 2):

193 **Փոխարեան Ա.**, Հայրենիքիս մէջ, «Հայրենիք» [Պոսթրն], 1938, № 1, նոյեմբեր, էջ 51:

ընթերցման յարմար գրքերու, ուսուցչաց ձեռնարկներու, բառարաններու և ազգային կամ օտար լեզուով զանազան գրքերու, ինչպէս նաև փոքրիկ թանգարան մը հանքային քարերու, բրածոյներու, քանի մը հնութեանց և այլն:

Որբանոցի վարժարանի ուսուցիչները – թւով 8, բոլորն ալ մնայուն են: Նոքա – մէկ բացառութեամբ միայն՝ ուսած և պատրաստուած են նոյն այս հաստատութեան մէջ:

Վանի տնտեսական հանգամանքները չեն ներեր, որ աշակերտները երկար ժամանակ ուսման հետևին. այս է պատճառ, որ առհասարակ դպրոցներու մէջ բարձրագոյն կարգեր կա՛մ չը կան, կա՛մ թէ փոքրաթիւ ուսանողներ ունին: Որբանոցը յաջողած է իր 17-ամեայ գոյութեան ընթացքին մէջ վեց կարգ ընթացաւարտներ ընծայել, որք այժմ իբրև ուսուցիչ, վաճառական, արհեստաւոր և այլն, պատիւ կը բերեն այս հաստատութեան: Կան, որ Վանէն դուրս աւելի բարձր ուսման ընթացքի մը հետևելու կերթան (երկու հոգի ալ այս տարի Էջմիածնի ճեմարան գացին, մին առանց դժուարութեան մտեր է Զ. դասարան): Եւ ինչ որ աւելի մխիթարական է, դա այն է, որ այս դպրոցին մէջ կը կրթուին՝ մէկ հոգով և ուղղութեամբ, Վանի ամեն դասակարգերէն աշակերտներ, որք այս հաստատութեան շուրջ հետզհետէ կը կազմեն խումբ մը, շրջանակ մը, որ կոչուած է կազմել ժողովրդի ամեն խաւերուն մէջ մի լուրջ դասակարգ»[194]:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԸ ԵՎ ՎԱՐԺԱՐԱՆԸ ՀԱՄԻԴՅԱՆ ՋԱՐԴԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Երամյանը վկայում է, որ սկսած 1895 թ. նոյեմբերից՝ Վանի (թերևս վիճակը նույնն էր ողջ Արևմտյան Հայաստանում) դպրոցները մերթ բացվում էին, մերթ փակվում: Առևտրական կյանքը մեռած էր քաղաքում, որի պատճառով «վարժարանի թոշակներուն գանձումը գրեթէ իսպառ դադրած էր»[195]:

Ողջ Արևմտյան Հայաստանն ալեկոծող Համիդյան ջարդերի ալիքը չի շրջանցում նաև Վանը, ընդ որում, կառավարությունը նախապես կազմում է քաղաքի առավել ազդեցիկ հայերին առաջին հերթին չեզոքացնելու ծրագիր: Կասկածյալների ցուցակում էր նաև Երամյանը: Հենց նրան էլ Վանի կուսակալի օգնական Ստեփան Մելիքյանը[196] հայտնում է. «Կրթական տեսուչ Ալի պէյի կողմանէ ձեր ուսուցիչներէն և կարեւոր շրջանաւարտներէն 15ի չափ անձանց հետ իբրև վնասակար ամբաստանուած էք ուղղակի պալատ, ուսկից ցանկը հեռագրուած է Սատտէտտինին», որն էլ այս խնդրի քննությունը հանձնում է Մելիքյանին[197]: Վերջինիս ջանքերով էլ Երամյանի անունը հանվում է աքսորի դատապարտված անձանց ցուցակից. «Աքսորներու խընդիրները անհետեւանք մնացին՝ շնորհիւ իմաստուն միջամտութեան Մելիքեանի, որ և ինձ կը խոստանար Ալի պէյի ցանկն անոր դատապարտութեան դատակնիքին վերածել...»[198]:

Մինչդեռ թուրք կառավարությունը հեղում է հազարավոր անմեղ հայերի արյունը: Առանձնապես ահասարսուռ էր 1896 թ. հունիսի 3-10-ն ընկած ժամանակահատվածը:

Հունիսի 3-4-ին հարազատների շրջանում կորուստներ է ունենում նաև Երամյանը. «Ս. Յակոբի իմ հայրենի թաղին մէջ զարմիկս Յովհաննէս, իր քսանամեայ Վահան որդւոյն և ծառային հետ՝ տապարահար կ'սպաննուին: Զարմիկիս և դրացի Կոսպարեանենց մեծ հարստութիւններու ալանը կը տեւէ քանի մը օր, և ապա Կոսպարեանենց ընդարձակ ապարանքը կը հրդեհեն՝ թաղին ուրիշ հայ տուներու հետ, խնայելով միայն թուրք տուներու կից հայ տուներուն, ինչպէս զարմիկիս երեք ձեռք ընդարձակ շէնքերուն»[199]:

Երամյանը փրկվում է՝ ապաստան գտնելով ռուսական հյուպատոսարանում. «Ես մինչև չորեքշաբթի վտանգէ զերծ կը համարէի ինքզինքս, որովհետև դպրոցին մօտիկ իմ վարձած տան տարբեր մէկ յարկաբաժնին մէջ բնակող *քիլտանի* (քրիստոնեայ ասորի) բարձրաստիճան պաշտօնեայ մը, կառավարութեան կալուածական տեսուչ, կը խոստանար զիս պաշտպանել իբր իր հիւրը, ինչպէս ըրած էին ուրիշ պաշտօնեաներ», սակայն թուրքերը նրան համոզում են, որ հեռացնի Երամյանին՝ գլխացավանքի մեջ չընկնելու համար: Աչազուրկ ուսուցիչը, բազմաթիվ պարտեզներն աննկատ անցնելով, կարողանում է մի կերպ ճողոպրել՝ մագլցելով պատերի վրայով, սողալով ցածրիկ դռների միջով և իրեն նետել Սղգայի պողոտայում գտնվող ռուսական հյուպատոսարան: Հյուպատոսարանի թարգմանիչ ախալցխացի Կարապետ Չիլինկիրյանի պարզած ռուսական դրոշի ներքո ապաստանում են բազմաթիվ հայեր, որոնք «փրկուեցան երկգլուխ արծուի ահազդեցիկ թեւերու պաշտպանութեան տակ»[200], մինչդեռ խուժանը «կատաղի պոռչտուքներով, աջ ու ձախ հրդեհ բռնկեցնելով և հիւպատոսարանի պատուհաններէն իսկ ներս գնդակներ սուրացնելով անցաւ յամրաքայլ: Ամէն մէկէրնիս մեր գտնուած տեղը սմքած սպասեցինք մինչև որ սադայէլական տողանցը վերջ գտաւ արիւնի, կրակին և գնդակի հետքեր պողոտայի երկու կողմի տուներուն մէջ: Ի՜նչ սոսկումներ ապրեցանք, մինչեւ որ վտանգն անցաւ և թարգմանն ալ

194 **Վանեցի**, Նամակ Թուրքիայից, «Մշակ», 1895, № 128, 7 նոյեմբերի, էջ 3-4:

195 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 414:

196 Հայտնի է, որ 1896 թ. սկզբին Վանի կուսակալի օգնական նշանակված Ստեփան Մելիքյանը մինչ այդ վարել է Աթենքի օսմանյան դեսպանատան քարտուղարի պաշտոնը («Աւետաբեր», 1896, № 2, 11 յունուարի, էջ 16):

197 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 380:

198 Նշվ. աշխ., էջ 382:

199 Նշվ. աշխ., էջ 359:

200 Նշվ. աշխ., էջ 378-379:

...հիւպատոսարան վերադարձաւ, բերելով մեզ աւետիս թէ պաշարման վիճակն ընդհուպ պիտի վերցուէր»[201]:

Կոտորածներից հետո մի անգամ զինվորական բժիշկ Պեքիր բեյը, Երամյանին տեսնելով, ասում է. «Ապու՜շ թուրքեր, այս մարդը ջարդելու էիք, փոխանակ անմեղներու արիւնը մտնելու»[202]. այն բժիշկը, որը բուժել էր ուսուցչապետին և նրա ծանոթներին. «Իմ շատ բարեկամներուս յանձնարարած և անձամբ իսկ առաջնորդած էի դարմանելու իմ հիւանդ ազգականները: Արտաքուստ շատ ազնիւ Պէքիրի մէջ իսկական թուրքն էր, որ կ'արտայայտուէր ուրեմն»[203]:

Համիդյան ջարդերին զոհ են գնում նաև դպրոցի երևելի ուսուցիչներից մի քանիսը[204], և միայն երջանիկ պատահականությամբ հրկիզումներից ու կողոպուտից զերծ է մնում դպրոցի շենքը. «Մեր դպրոցը, ինչպէս և մօտակայ հայ տուները հրդեհէ ու կողոպուտէ զերծ մնացին, զի կառավարութիւնը զինուորական շղթային տակ առած էր Խաչ փողոցի սահմանը եւ միայն մեծահարուստ Նալպանտ Փանօսեանենց տունը զոհ գնաց ժանտ ոստիկանապետի վրէժխնդրութեան ու ընչաքաղցութեան...»[205]:

1896 թ. հուլիսի սկզբներին առաջնորդ Արսեն վ. Տեր-Մարգարյանը Երամյանի և մնացած մտավորականների թելադրությամբ կազմում է մի տեղեկագիր, որտեղ մանրամասն և ճշգրիտ ներկայացվում են Վանի դեպքերը: Հանձնաժողովի անդամներն էին Մեսրոպ ծ. վ. Ճանիկյանը, Մովսես Մալոյանը, Խաչատուր Դարբինյանը, Խաչատուր Սոլախյանը, Ղևոնդ Խանջյանը, Գաբրիել Նաթանյանը, Եղիշե Գոնտաքճյանը, Մկրտիչ Խանիկյանը, Մարտիրոս Նալբանդյանը, Մամբրե Մկրյանը և Համբարձում Երամյանը: Տեղեկագիրն ուղարկվում է Պատրիարքարան, իսկ Մարտիրոս Նալբանդյանի՝ ֆրանսերենի թարգմանության պատճենը հանձվում է հյուպատոսներին, որոնք համակրությամբ են ընդունում: Շնորհիվ նրանց՝ Վանի դեպքերի արձագանքը հասնում է մինչև Իսպանիա: Կարևոր թերթի մի թղթակից հասնում է Վան: Նրանք հանդիպում են առաջնորդարանում. «Տեսնելու էր, թէ Տօն Քիշոթի խրոխտ ազգակիցը ինչպէ՞ս նիզակ կը ճօճէր հայ յեղափոխական գործիչներու ստուերներուն դէմ, աղէտի բովանդակ պատասխանատուութիւնն անոնց վրայ ծանրացնելով և թուրք բարբարոսութիւնն բոլորովին արդարացնելով»[206]: Սակայն, երբ Երամյանը նրան բացատրում է պատմությունը և բուն ճշմարտությունը, «նիզակը ձեռքէն վար ինկաւ, փըրփուրը շոգիացաւ շրթունքներու վրայ և խոստովանեցաւ, որ արդարև ինքն շատ նախապաշարուած էր եղեր Թուրքիոյ իրադարձութեանց և համիտեան կոտորածներու իսկական դրդապատճառներու մասին»[207]:

Հ. Երամյանն իր առանձնահատուկ վերաբերմունքն ու գնահատականն ուներ նաև 1896 թ. Վանում գործող դոմինիկյան հայրերի առնչությամբ, որոնք երեքն էին.

1. Ֆրանսիացիների հյուպատոսական նորահաստատ գործակալության ներկայացուցիչ Հայր Դեֆրանսը:

2. Դեֆրանսի պաշտոնակից գասկոնցի Հայր Տյուբլան. «Բէռ տը Ֆրանսի հաւասար սրամիտ և առատախօս, բայց միանգամայն բարձր հմտութեամբ օժտուած կրօնաւոր մ'էր, ...նախանձախնդիր նաև իր քրիստոնէական պարտականութեանց՝ ամէնուն հանդէպ անխտիր»: 1893 թ. Երամյանի հիվանդության ժամանակ գրեթե ամեն օր այցելում էր նրան:

3. Հայր Ժակը կամ Հայր Ռեթորեն հմուտ էր արաբերենի, ասորերենի մեջ, իսկ Մարտիրոս Նալբանդյանից լավ հայերեն է սովորում[208]:

Վերոնշյալ դոմինիկյան երեք հայրերին համեմատելով հայ հոգևորականության հետ՝ Երամյանը ցավով նշում է. «Վանի մեր եկեղեցականներէն ոչ ոք հմտութեամբ ու պերճախօսութեամբ կրնար զուգակշռել սոյն երեք տօմինիկեանները և իրենց քանի մը յաջորդները, անոնցմէ վար էին նոյնիսկ ամերիկեան միսիոնարները: Միտքս բացայայտ ճշմարտութիւն մը պարզել է միայն, և ո՛չ թէ մեղադրել մեր կղերականները, որոնք, սակաւ բացառութեամբ, տիրող պայմաններու բերումով, հազիւ տարրական կրթութիւն մը առած՝ հոգեւորական պատասխանատու պաշտօնի կը կոչուին առ ի չգոյէ լաւագոյնի: Այսուամենայնիւ մեր այս կարգի եկեղեցականներն անգամ կը յաջողէին իրենց հօտը կապուած պահել հայ քրիստոնէութեան հետ, այնպէս որ կաթոլիկ միսիոնը վանեցիներու հետ այնքան մօտիկ յարաբերութիւններ մշակելով հանդերձ՝ հազիւ ութ տասն ընտանիք որսալ յաջողեցաւ մինչեւ 96 թուականը»[209]:

ՎԱՐԺԱՐԱՆՆ ԱՊԱՔԻՆԵԼՈՒ ՃԻԳԵՐԸ

1896 թ. օգոստոսին դպրոցը փորձում են վերաբացել, և շնորհիվ երկու աջակիցների՝ ռուսաց փոխհյուպատոս Վ. Մանսկու և միսս Քեմպլի՝ այդ նպատակի համար հավաքվում է մոտ 90 ոսկի[210]: Ցավոք, ջարդերից կորուստներ էր կրել նաև ուսուցչակազմը, որի մասին աշակերտներից (հետո՝ նաև ուսուցիչ) Ա. Փո-

201 Նշվ. աշխ., Ա, էջ 365-366:
202 Նշվ. աշխ., էջ 382:
203 Նույն տեղում:
204 **Փոխարեան Ա.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1938, № 1, էջ 53:
205 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 377-378:
206 Նշվ. աշխ., էջ 421:
207 Նշվ. աշխ., Ա, էջ 422:
208 Նշվ. աշխ., էջ 392: Հայտնի է, որ Հայր Ժակը «...հայերէն աշխարհաբար լեզուով բանաստեղծական տետրակ մըն ալ գրած էր «Գրեց Յակոբ Օտարազգի վերնագրով...» (**Գրիգոր Ա. Քաջբերունի**, Կեանքիս համեստ պատմութիւնը, Պէյրութ, 1965, էջ 44):
209 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 392-393:
210 Նշվ. աշխ., էջ 423:

խարյանը նշում է. «1896-ի մեծ դէպքերը աղէտալի հետեւանք ունեցան նաեւ Երամեան դպրոցի վրայ: Գօնտաքճեան Երուանդէն բացի, Երամեանի թեւ ու թիկունք ծառայող սան-ուսուցիչներ չկային այլեւս: Սմսարեան Յոլակը սպաննուեր էր: Նալբանդեան Մարտիրոսը կազդուրուելու նպատակով Կովկաս էր անցեր: Մամբրէ Մկրեանը նախապէս Բաղէշի դպրոցի տեսչութեան պաշտօնին կանչուած էր: Բարսեղ Տ. Բարսեղեանը մահացեր էր: Անոր եղբայրը՝ Մկրտիչ, հետագային բանտարկուեցաւ:

Այդ պատճառով Երամեանը հարկադրուեցաւ պաշտօնի հրաւիրել «իր օճախին» (հակառակորդներու բացատրութեամբ) անհարազատ տարրեր, ինչպիսին էին՝ Յովհաննէս Կուլօղլեանը, Կարապետ Աճէմ-Խաչօեանը (Արմենական շրջանակէն), Օհաննէս Բարաղամեանը, Բարունակ Տէր Յարութիւնեանը եւ հետագային Ղեւոնդ Սրուանճտեանը:

Ուսուցիչներու յանկարծական այս փոփոխութիւնը խոր ցնցում առաջ բերաւ դպրոցի մասնաւորաբար կարգապահութեան վրայ: Ջեռնհասութիւնը չէր, որ կը պակսէր նոր ուսուցիչներու մէջ. ոմանք նոյնիսկ աւելի հմուտ էին իրենց նախորդներէն, զանազան ճիւղերու մէջ, բայց ոչ մէկը չունեցաւ նախորդներու անձնուիրութիւնը, սրտցաւ վերաբերմունքն ու հաւատարմութիւնը դպրոցի աւանդական կարգ ու կանոնին, որուն հետեւանքը եղաւ աշակերտական ուժեղ ըմբոստութիւններ ու անկարգութիւններ...»[211]:

Հրավիրյալ ուսուցիչների թվում էր նաև Սանասարյան վարժարանի շրջանավարտ Հարություն Տեր-Սարգիսյանը: Այսպիսով՝ կազմվում է նոր շրջանի ուսուցիչների ցուցակը: Ժողովներ են գումարվում Թարկուլյանենց տանը[212]:

Մինչև 1896 թ. օգոստոսի 1-ը Երամյանն ընտանիքով փոխադրվում է ֆրանսերենի թարգմանիչ Միհրան Թարկուլյանի տուն. «Ամէն դիւրութիւն կը վայելէի և հոն կ'ընդունէի նաև իմ հիւրերը»[213]: Նույն թվականի օգոստոսի 10-ը նշանակվում է դպրոցի վերաբացման օր[214]:

1896 թ. սեպտեմբերին Երամյանը դարձյալ ստիպված է լինում ապաստան գտնել ռուսական հյուպատոսարանում, իսկ պատճառը 1896 թ. սեպտեմբերին Հայոց ձոր գավառից եկած և քաղաքում ամրացած մի խումբ դաշնակցականներն էին, որոնց ուզում էին հեռացնել քաղաքից: Այդ ժամանակ Վանում էին հայկական վեց նահանգների բարձր կոմիսար Շաքիր փաշան և փոխհյուպատոս Մաևսկին: Նրանց ջանքերով քաղաքում արյունահեղություն չի լինում, միայն կառավարական զորքը հետապնդում և պաշարում է Նորաշենում՝ Կաշաշյանենց և Փախչանենց տներում ամրացած հեղափոխականներին: Սանդխտյան վարժարանի տանիքին տեղադրված կառավարական թնդանոթներն անմիջապես ավերում են այդ տները, իսկ խումբը փախուստի է դիմում. «Ես կրկին վազեցի դէպի փրկութեան տապանը, ռուս հիւպատոսարանը, որուն պարտէզն ու յարկերն արդէն խճողած էին և ես հազիւ անցք մը և անկիւն մը գտայ տեղաւորուելու..., այս երկրորդ դէպքն առանց արիւնի պիտի անցնէր և հիւպատոսարանն ու դրացի տունները պիտի պարպուէին շուտով: Մայէվսքին սակայն մասնաւոր սենեակ մը յատկացուց ինձ՝ արտօնելով զիս ընտանիքովս և բարեկամներովս այնտեղ գալ ապաստանիլ, երբ կրկին դժխեմ հարկ մը ստիպէ զմեզ հեռանալ մեր տուներէն»[215]:

Ի դեպ, Վանի անգլիացի դերհյուպատոս թրքամետ Ուիլյամսն ամերիկուհի միսիոներ Քեմպլին մի առիթով ասել էր. «Եթէ Աւետիսեանի և Երամեանի պէս մարդոց հետ ես մօտիկ յարաբերութիւններ սկսած լինէի, քանի մը նեղմիտ բողոքականներու խօսքերուն վրայ հիմնուելով՝ կարգ մը սխալներու զոհ չպիտի երթայի»[216]:

1896 թ. Անգլիայի հյուպատոս Իռլանդացի Մորգանի զարմանքին, թե «հայերն իրենց վարժարաններուն մէջ այնքան ընդարձակ կ'աւանդեն օտար ազգաց պատմութիւնը, մինչդեռ անգլիական նախակրթարանները տարրական կրթութիւն մը միայն կուտան»[217], Երամյանը տալիս է հետևյալ պատասխանը. «Պատմութեան ուսուցչի հանգամանքովս պարտաւոր եմ գիտնալ այդ բաները և միանգամայն սորվեցնել աշակերտներուն: Մենք՝ հայերս քաղաքական պայմաններու բերումով հարկադրուած ենք ո՛չ միայն պետական թուրքերէնը, այլ և գէթ եւրոպական մէկ երկու լեզուներ եւս աւանդել մեր դպրոցաց մէջ: Բաց աստի, պարտաւոր ենք հին և նոր ազգաց պատմութիւնն եւս ծանօթացնել հայ ուսանողներուն, զի մեր անցեալն ու ներկան ամէն կերպով կապուած են օտարներու հետ»[218]:

ՎԱՐԺԱՐԱՆԸ ՀԱՄԻԴՅԱՆ ՋԱՐԴԵՐԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1896 թ. աշնանից սկսում են «խրախճանքներով տօնել անդորրութեան նորածագ թուական մը: Առաջին բազմամբոխ հարսնիքի մը մէջ՝ ապագայի յոյսով ոգեւորուած՝ խօսք կուղղէի երկսեռ ամուրի երիտասարդներուն. «Աճեցէ՛ք և բազմացարու՛ք, լցէք զտեղի անկելոց»: Վերջէն շատեր պիտի ըսէին ինձ. «Մենք ձեր մարգարէաշունչ յորդորներէն սրտապնդուած՝ կ'ամուսնանանք ահա»[219]:

211 **Փոխարեան Ա.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1938, № 1, էջ 53-54:

212 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 424: Այդ տանը Երամյանը հաճախ է ապաստան տվել Սենեքերիմ Թաշճյանին, ինչպես նաև Հակոբ Ճանոյանին, որն ամբողջ հարստությունը գավառի գյուղերում վատնելուց հետո անցնում է Պարսկաստան և կրկին հարստանալով՝ շուրջ 15 տարի հետո գալիս է Վան:

213 Նշվ. աշխ., էջ 396:

214 Նշվ. աշխ., էջ 424:

215 Նշվ. աշխ., Ա, էջ 395-396: Սեպտեմբերյան դեպքերի մասին մանրամասն տե՛ս էջ 388-389:

216 Նշվ. աշխ., էջ 401:

217 Նույն տեղում:

218 Նշվ. աշխ., էջ 402:

219 Նշվ. աշխ., էջ 457:

1896 թ. սեպտեմբերին՝ վերաբացվելուն պես, վարժարանը «այնչափ յաջողութիւն պիտի գտնէր և թոշակները այնչափ մեծ արդիւնք մը պիտի տային, որ ես ուսուցչաց կամաւոր զեղչերն ևս պիտի յաջողէի հատուցանել և միանգամայն ամբողջ տարի մը, 96-97, պաշտօնեութեան կէսօրուան ճաշն ևս դպրոցէն մատակարարել»[220]: Ընդհանուր առմամբ դադարում են նաև Երամյանի դեմ 1880 թ.-ից ի վեր ծայր առած և մինչև 1896 թ. շարունակվող քաղաքական հետապնդումներն ու հալածանքները[221]:

Անդրադառնալով Համիդյան ջարդի օրերին Վանի կուսակալ Նազըմ փաշայի (1895-1897) շնորհիվ Պոլոնց թաղը միանգամայն անվնաս մնալու մասին՝ հավելում է, որ նրա հետ հանդիպել է 1897 թ. «Մէկ հետեւորդով միայն կ'անցնէր առանց նախորդ կուսակալներու շռնդալից շքախմբերուն: Կեցաւ նա, իմ, ուսուցիչներու և աշակերտներու որպիսութիւնը հարցուց և երկու երեք վայրկեան ինձ հետ խօսելէ յետոյ՝ անցաւ գնաց»[222]: Նույն կուսակալը 1897 թ.՝ ամռան ավարտական քննությունների ժամանակ, այցելում է չորս տարբեր դպրոցներ, այդ թվում՝ Երամյան վարժարան. «Մեր քննութեանց ընթացքին, առաջնորդական տեղապահը՝ կուսակալութեան օգնական Յովհաննէս Ֆէրիտ պէյի տունը կը հրաւիրէ զիս ու երկուքը մէկէն կը յայտնեն ինձ թէ, հետեւեալ օրն իսկ կուսակալը մեր դպրոցը պիտի բարեհաճի այցելել և կը թելադրեն, որ ինչ-ինչ առարկաներու քննութիւնները տանք թուրքերէն լեզուով: Անսովոր բան մ'էր այս պահանջը, և սակայն մենք ժամանակին փափկութիւնը նկատի առնելով՝ զանազան կարգերէ յարմարագոյն աշակերտներ ընտրեցինք հապճեպով, որոնք ի ներկայութեան կուսակալին և իր օգնականին, ինչպէս և տեղապահին և հայ և թուրք երեւելիներու՝ պետական լեզուով բաւական յաջող քննութիւն մը պիտի անցունէին գիտական և պատմական առարկայից ու լեզուներու մէջ: Կուսակալը խիստ գոհ մնաց»: Այդ ամենը վերջանում է հրապարակային քաջալերանքի և խրախուսական խոսքերով, որը մինչև 1908 թ. Սահմանադրությունը դառնում է «ընկալեալ սովորութիւն»[223]:

Նոր՝ 1897 ուսումնական տարին Երամյանը ցանկանում էր «բանալ վերամուտի հանդէսով մը, ինչ որ նախորդ տարի տեղի չէր ունեցած դժբախտաբար»: Մտադրությունն իրականացնելու համար իսկույն դիմում է տեղապահ Արսեն վարդապետին և Հարությունն էֆենդի Գալճյանին, որը «մասնաւոր շնորհ մը կը վայելէր Շէմսիի մօտ»: Հանդեսին ներկա էր նաև կուսակալը, նրա կողմից «գատին (դատաւոր) բազմաթիւ հետեւորդներով, իսկ ներկայ ազգայնոց խուռն բազմութեան հրճուանքն ի տես վերադարձի հին օրերուն՝ աննկարագրելի էր»[224]:

1898 թ. լրանում է վարժարանի հիմնադրման 20-ամյակը. «Մեր դպրոցը, նախ իբրև Խնամատար ընկերութեան որբանոց, հիմնուած լինելով 1878ին, քսանամեայ շրջան մը բոլորած կը լինէր մինչև 1898, վայելելով հանդերձ համակրանքը հայ հասարակութեան և միանգամայն վստահութիւնը թուրք կառավարութեան, թէպէտ Խալիլ՝ մանաւանդ Պահրին պահ մը հալածանքի ենթարկեցին զայն և զիս, անոր հիմնադիր տնօրէնը»[225]: Այնուամենայնիվ, քաղաքի կրթական մյուս հաստատությունների նման «Երամեան վարժարանն ալ, իբր քաղաքիս բարձրագոյն ուսումնարանն, հաստատուն քայլերով յառաջ կերթայ»[226]:

Ընդառաջ Հ. Երամյանի տնօրինությամբ գործող վարժարանի 20-ամյա հոբելյանին՝ աշակերտներից շատերը ցանկանում էին մի հանդես կազմակերպել, սակայն 1896 թ. կոտորածների սոսկումները հիշողության մեջ դեռևս թարմ լինելով՝ բավարարվում են միայն սահմանափակ հանգանակությամբ, որով պատրաստվում է թեյի արծաթյա գեղակերտ սպասք, իսկ Հիսուսյան վարժարանի նախկին աշակերտներից Հովհաննես Տեր-Հակոբյանը «...իւղաներկ մեծադիր կենդանագիրս նկարել տուած էր Միւնիր անուն թուրք հարիւրապետի մը»[227]: Նվերները Երամյանին են մատուցում «պատշաճ ուղերձով մը՝ 98-99ի քսանը-մէկերորդ շրջանի բացման հանդէսին առթիւ»[228]:

Վարժարանի 21-րդ ուստարվա տեղեկագիրը խրախուսում և այդ առթիվ գոհունակություն է հայտնում նաև Պոլսո պատրիարքարանը. «Վանայ Հայկական-Որբանոց վարժարանի հիմնադիր-տնօրէն Համբարձում էֆ. Երամեան, ասկէ առաջ վարժարանին 20րդ շրջանի ծրագիրն եւ 21րդ շրջանի տեղեկագիրը ղրկած էր Ս. Պատրիարք Հօր, որ Ուսումն. Խորհրդոյ նկատողութեան յանձնած էր: Ուսումն, Խորհուրդն իր տեղեկագրովը բաւական գոհացուցիչ գտած է վարժարանի ծրագիրն ու տեղեկագիրը: Ս. Պատրիարք Հայրն ըստ առաջարկութեան Ուսումն. Խորհրդոյ քաջալերական գիր մը ուղղած է յիշեալ վարժարանին աչազուրկ, բայց եռանդուն և գործօն հիմնադիր-տնօրէնին»[229]:

Միևնույն ժամանակ շեշտվում է նաև, որ վարժարանի «...ուսուցչական խումբը բաղկացեալ է քաղա-

220 Նշվ. աշխ., Ա, էջ 426:

221 **Մարտիկ**, նշվ. հոդվ., «Զարթոնք», 1919, պր. 3-4, էջ 53:

222 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 6:

223 Նշվ. աշխ., Բ, էջ 5:

224 Նշվ. աշխ., էջ 6-7:

225 Նշվ. աշխ., Բ, էջ 18: Նաև՝ «Այս տարի կը բոլորէր սոյն վարժարանի քսանամեայ շրջանը» («Բիւզանդիոն», 1898, № 390, 5/17 փետրուարի, էջ 1):

226 «Բիւզանդիոն», 1898, № 390, 5/17 փետրուարի, էջ 1:

227 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 19: Նաև՝ «Այս առթիւ մի քանի ականաւոր անձինք, գնահատելով դպրոցի հիմնադիր-տնօրէն Համբարձում էֆ. Երամեանի գործունէութիւնը, տարեգլուխի օրն անոր նուիրեցին իր իւղաներկ պատկերը: Երամեան էֆ. թէև աչազուրկ, դպրոցին բոլոր նիւթական և բարոյական մատակարարութեան հոգն իր վրայ ունենալով հանդերձ բարձրագոյն դասարանաց մէջ կը դասախօսէ պատմութեան և մատենագրութեան դասերը» («Բիւզանդիոն», 1898, № 390, 5/17 փետրուարի, էջ 1):

228 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 19:

229 «Բիւզանդիոն», 1898, № 628, 11/23 նոյեմբերի, էջ 3:

քիս առաջնակարգ 10 ուսուցիչներէն»[230], իսկ 1898 թ. սովորում էր 260 աշակերտ (100-ը՝ անթոշակ)[231]:

Հակառակ նյութական դժվարություններին, ընդառաջ Հ. Երամյանի հորդորներին՝ դպրոցի աշակերտությունը 1899 թ. գարնանը մասնակցում է աղքատներին աջակցելու նախաձեռնությանը. «Անցեալ շաբթու Երամեան վարժարանի աշակերտներն ալ իրենց համակրելի տեսչին, Համբարձում էֆ. Երամեանի, սրտառուչ յորդորանաց վրայ՝ իրենց մէջ իբր չորս ոսկիի գումար մը հանգանակեցին ի նպաստ աղքատաց»[232]:

1899 թ. ամառային արձակուրդներին Երամյանը շրջագայում է գավառի գյուղերում և արձանագրում ընդհանուր զարթոնքի ուշագրավ երևույթը. «99ի արձակուրդին՝ Վանէն հիւսիս և հարաւ մէկ մէկ և աւելի օրուայ հեռաւորութեան վրայ գտնուած գիւղեր ու վանքեր տեսանք մենք երկապատիկ և եռապատիկ բարգաւաճ, քան ինչ որ էին 95էն առաջ»[233]:

1899 թ. հանդեսից հետո շրջանավարտների պատվին Վանի առաջնորդի տեղապահ Ներսես Ասլանյանի նախագահությամբ խնջույք է կազմակերպվում: Հրավիրված էին նաև վարժարանի ուսուցիչներն ու ծնողները, իսկ Ասլանյանի «քաղցր ներկայութիւնը և բարոյալից սրախօսութիւնները զմայլելի մթնոլորտ մը կ'ստեղծէին սեղանին շուրջը»[234]:

ՎԱՐԺԱՐԱՆԸ 1900-1903 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ի դարի սկզբին վարժարանն արդեն առաջատար դիրքերում էր: Կից գործում էին գրադարանը (հիմքն էին կազմում Երամյանի միջնեկ եղբոր՝ Վարդանի գրքերը). «...ես յետոյ վարժարանիս պիտի յատկացնէի, իբրև կորիզ անոր հարուստ մատենադարանին» (բյուջեից տրամադրելով գումարներ՝ Երամյանը գրքերի թիվը հասցնում է մոտավորապես 3000-ի, ինչպես նաև համալրում է քարտեզներով, 30-ի հասնող բառարաններով, հայ և օտարազգի պարբերական մամուլով)[235], բնագիտական թանգարանը[236]: Վարժարանն ուներ հանքային նյութերի հավաքածու[237], իսկ թատերական խումբը պարբերաբար ներկայացումներ էր տալիս[238]:

1901 թ. տարեկան քննություններից հետո ներկայացված տպավորիչ հանդեսի առթիվ Բաղեշի առաջնորդ և Երուսաղեմի միաբան Եղիշե Չիլինկիրյանը նշում է. «Հրաւիրմամբ Որբանոց-Վարժարանի եռանդուն հիմնադիր-տնօրէն Համբարձում էֆ. Երամեանի, յետ վարժարանական քննութեան՝ վարժարանի ընդարձակ սրահին մէջ տրուած տարեկան պաշտօնական հանդէսին ներկայ գտնուեցայ՝ ընկերակցութեամբ Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վարդապետի: Ի քաջալերութիւն ժրաջան տնօրէնին եւ ուսանողաց՝ ներկայ էին կուսակալ Թահիր փաշա, Զինուորական հրամանատար Ֆէրիք Հիւսէյին փաշա, դատաւոր, տէֆթէրտար եւ միւֆթի էֆենտիները, կառավարական եւ զինուորական երկոտասանեակ մը բարձրաստիճան պաշտօնատարք եւ ազգայինք մեր: ...Հանդէսը փայլուն էր եւ տպաւորիչ, և հանդիսականք գոհունակ տպաւորութեամբ մեկնեցան վարժարանէն: Սոյն վարժարանը Վանայ մէջ եզակն է»[239]:

Հատկանշական է, որ Եղիշե եպիսկոպոսի ներկայությամբ և մանավանդ նրա ելույթով տպավորված էր նաև Երամյանը. «Չիլինկիրեանը այցելեց նաև մեր վարժարանը և պաշտօնական քննութեան օրը՝ ի բացակայութեան առաջնորդին, իր թուրքերէն մէկ բանախօսութիւնէն շատ գոհ պիտի մնային կուսակալ Թահիր և թուրք ու հայ հանդիսականները: Երեք շաբաթ վայելեցինք իր հաճելի ներկայութիւնը, և սակայն այդ կարճատև միջոցն իսկ բաւ եղաւ որ իր դիւրահաղորդ և համակրելի բնաւորութեամբ քաղցր յիշատակներ թողուր մեր մէջ»[240]:

Նույն՝ 1901 թվականին Պոլսի Պերպերյան վարժարանի 25-ամյա հոբելյանի կապակցությամբ Երամյանը, ոգեշնչված հիմնադրի օրինակով և գործով, որը «քառորդ դարէ ի վեր, իբրև լուսաճաճանչ փարոս մը, կը փայլէր մեր կրթական հորիզոնին վրայ», փորձում է համեստ ընծայով մասնակցել և ուղարկում է հոբելյարի մեծացրած լուսանկարը՝ արված իր աշակերտներից մեկի՝ Գարեգին Հյուսյանի կողմից. «Այդ սեւանկար կենդանագիրը՝ արծաթեայ ոսկեզօծ վարդերով զարդարուած ու քանի մը վանքերու պատկերներէ դրուագուած՝ ընտիր ընկուզի շրջանակով մը Պոլիս ղրկեցինք, տարիէ մը ի վեր Ռօպէրթ գօլէճի ուսանող որդւոյս Վարդանի և Յովհաննէս Տէր Յակոբեանի միջոցաւ, մատուցուելու համար յոբելեանի հանդէսին օրը»[241]:

1902 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը ցանկանում է հանդիպել Երամյանին՝ «դպրոցի գոյութիւնն ընդմիշտ ապահովելու՝ և միանգամայն ծրագիրն աւելի բարձրացնելու մասին

230 «Բիւզանդիոն», 1898, № 390, 5/17 փետրուարի, էջ 1:
231 Նույն տեղում:
232 «Բիւզանդիոն», 1899, № 765, 22 ապրիլի/4 մայիսի, էջ 3:
233 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 430:
234 Նշվ. աշխ., Բ, էջ 23: Ի դեպ, Ն. Ասլանյանը ներկա է եղել նաև 1899 և 1900 թթ. քննություններին. «Շատ կը սիրէր դպրոցն ու դպրոցականները», ամենայն համբերությամբ լսում էր յուրաքանչյուր աշակերտի և ոգևորում բոլորին (նույն տեղում):
235 Նշվ. աշխ., Ա, էջ 44, 159, Բ, էջ 124: Հետագայում բազմաթիվ անհատներ նվիրատվություններ են կատարում գրադարանին (**Երամեան Հ.**, Տարեկան տեղեկագիր Երամեան վարժարանի, «Աշխատանք», 1913, № 41, 24 օգոստոսի, էջ 7):
236 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 426:
237 Նշվ. աշխ., էջ 381, 401:
238 Նշվ. աշխ., Բ, էջ 125-126: Տե՛ս նաև **Էվոյան Վ.**, **Հովհաննիսյան Ջ.**, նշվ. հոդվ., էջ 65:
239 **Չիլինկիրեան Ե.**, Յիշատակներ Բաղէշի առաջնորդութենէս, Երուսաղէմ, 1925, էջ 103-104:
240 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 26:
241 Նշվ. աշխ., Բ, էջ 27-28: Պերպերյանը շնորհակալություն է հայտնում Երամյանին՝ ուղարկելով 30 ոսկի և գեղեցիկ նամակով իր համեստ գնահատականը (էջ 28):

խորհրդակցութիւններ կատարելու մտօք»[242]: Այս նպատակով իր եղբորորդու՝ Խորենի (Հովհաննես Սանթուրճյան) միջոցով ուսուցչապետին է փոխանցում նամակ-հրավերը: Սակայն Երամյանը, որը միանգամայն իրազեկ էր առկա քաղաքական կացությանն ու տեղի իշխանությունների վերաբերմունքին, որոշում է մերժել կաթողիկոսի՝ Էջմիածին այցելելու հրավերը. «Օրուան կուսակալ Թահիր փաշայի (1898-1906) վստահութիւնը վայելելով հանդերձ՝ ապագայի կասկածներով զգուշացած էի ընդառաջելէ այդ հրաւէրին, զի Մայր Աթոռն և անոր մեծ գահակալն որ հայութեան ազատատատենչ բաղձանքները կ'անձնաւորէր, երբեք լաւ աչքով չէին դիտուեր թուրքերու կողմանէ առ հասարակ»[243]:

1903 թ. վարժարանի միայն նախակրթարանն արդեն ուներ «չորս տարուայ շրջան» այն դեպքում, երբ Կենտրոնական ծխական վարժարանը բացվեց Երամյան վարժարանի ուսումնարանին հավասար 6-ամյա ծրագրով՝ «իբրև լրացուցիչ հինգ Ծխականներու՝ նախ վեցամեայ, ապա հնգամեայ դասընթացքին»: Կարճ ժամանակ անց Կենտրոնականը պետք է «վերջին երկու տարին զեղչեր», որով նրա շրջանավարտները Երամյան ուսումնարանի հինգերորդ, իսկ Ծխականների շրջանավարտներն առաջին դասարանները «միայն կրնային մտնել»[244]:

1902/1903 ուստարում վարժարանն ուներ 230 աշակերտ, 9 մշտական և 2 երթևեկ ուսուցիչ[245]:

1903 թ. հունիսին նշվել է. «Միայն Երամեանի վարժարանն է, որ իբրև այս քաղաքի ամենից աւելի բարեկազմ վարժարան՝ ամենից աւելի է ծախսում, այն է՝ տարեկան իբր 300 օսմ. լիրայ, չնայելով, որ նրա հասոյթի միակ հաստատուն աղբիւրը աշակերտների վճարած թոշակներն են...»[246]:

Ի լրումն վերնասացյալի (դեռևս 1900 թ. Վանի ծխական վարժարանների գլխավոր ուսուցիչները միանալով՝ Նորաշենում կազմակերպում են երկամյա բարձրագույն դասընթացներ, որտեղ սկսում են հաճախել նաև մյուս նախակրթարանների ուսանողները), հունվարից դրամի և շինանյութի հանգանակություն կատարելով, նույն տարում կառուցում են Ծխականաց կենտրոնական վարժարանը: Գործը սատարում և քաջալերում է առաջադեմ առաջնորդ Սահակ եպիսկոպոս Բագրևանդյանը[247]: Ահա այսպիսին էր իրավիճակը, երբ ոմանց թվում էր, թե «Կեդրոնական վարժարան»-ի ծնունդը կարող էր Հ. Երամյանի կողմից ընկալվել որպես մրցակից հաստատություն և մտահոգությունների պատճառ դառնալ: Իրականում մեծապես սխալվում էին, քանի որ ողջ էությամբ կրթական գործի նվիրյալ ու ջատագով ուսուցչապետին այդ փաստը միմիայն անկեղծ ուրախություն էր պատճառում: Խնդրո առթիվ ուշագրավ են նոր վարժարանի հիմնարկեքի կապակցությամբ տեր Ղևոնդ Սաֆրաստյանի հարցումն ու Երամյանի պատասխանը.

Հարց. «Կեդրոնականի մը հիմնարկութիւնն ու յաջողութիւնը ձեր շահուն դէմ է, ուստի և դուք բնականաբար պիտի հակառակիք, ինչպէս որ կը շշնջեն շատերը»[248]:

Պատասխան. «Երբեք վախ մը չունիմ մրցակից հաստատութենէ մը և ընդհակառակն բաղձացող եմ անոր գոյութեան՝ հետևեալ նկատումներով.

Ա. Կեդրոնականը իբրև Ծխականներու լրացուցիչ, պիտի ունենայ անխուսափելիօրէն խառն վարչութիւն և ուսուցչութիւն ամէն թաղէ:

Բ. Մինչև որ այդ նոր հաստատութիւնը կազմակերպուի և ի վիճակի դրուի մրցելու կարողութեան, մերինը արդէն կուռ և կազմ աւելի յառաջ պիտի անցնի շնորհիւ լիազօր վարիչ մը և ուսուցչական մարմինին համերաշխ գործակցութեան:

Գ. Մենք ունինք նաև հարուստ գրադարան, գիտական ճոխ հաւաքածոներ և աթլասներու ու պատկերներու մեծաքանակ մթերքներ, ինչ որ Կեդրոնականը ի չգոյէ ստեղծելու դժուարին հարկին մէջ կը գտնուի:

Դ. Մեր նախակրթարանի և ուսումնարանի դասընթացքներու միջև միեւնոյն ուղղութեամբ կամ ոգիով հետեւողական ձգտում և որոշ նպատակ մը կը տիրապետէ, հիմնուած տարիներու փորձառութեան վրայ, հզօրագոյն ազդակ մը կանոնաւոր և արդիւնաւոր զարգացման...

Այո՛, մրցակցի մը գոյութիւնը ուղղակի պիտի շեշտէ նաև մեր այս առաւելութիւնն...: Վերջապէս թոշակապահանջ Կեդրոնական մը պիտի դիւրացնէ նաև մեր սահմանած թոշակներու գանձումը և միանգամայն անուղղակի պիտի նպաստէ անոնց յաւելումին»[249]:

ՎԱՐԺԱՐԱՆԻ 25-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ 1903 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Վարժարանի հիմնադրման 25-ամյակը նշվելու էր 1903 թ. օգոստոսի 14-ին[250]: Այդ առթիվ նախ առաջարկվում է կառուցել հարմարավետ մի շենք և անձնական բնակարանի հետ միասին նվիրել ուսուցչապետին՝ ի փոխարինումն այն զոհաբերության, որ 13 տարի առաջ ստիպված էր վաճառել

242 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 34:
243 Նույն տեղում:
244 Նշվ. աշխ., էջ 29:
245 **Մերոբեան Մ.**, Նամակ Թիւրքիայից, «Նոր-Դար», 1903, № 129, 25 յուլիսի, էջ 2: Այլ տվյալով՝ նույն թվականին կրթարանում ուսանում էր 223 տղա (**Առաքելեան Հ.**, Թիւրքաց հայերի կրթական վիճակը, «Մշակ», 1903, № 106, 21 մայիսի, էջ 2):
246 **Մերոբեան Մ.**, նշվ. հոդվ., «Նոր-Դար», 1903, № 129, էջ 3:
247 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 28:
248 Նշվ. աշխ., Բ, էջ 28:
249 Նշվ. աշխ., էջ 28-29:
250 «Իրաւունք», 1903, № 11, 8 փետրուարի, էջ 3:

հայրական տունը և ապահովել վարժարանի գործունեությունը[251]: Այդ կապակցությամբ 1903 թ. փետրվարին հավաքվում է գործադիր մասնախումբ հետևյալ կազմով՝ Ավետիս Թերզիպաշյան, Իգնատիոս Հյուսյան, Մկրտիչ Ջրբաշխյան, Մարկոս Երամյան, Մարտիրոս Նալբանդյան: Սակայն ձեռնարկը հետաձգվում է մինչև հաջորդ տարի՝ Կենտրոնական ծխական վարժարանի «շինութիւնը չխաչաձեւելու դիտումով»[252]:

Դեռևս 1902 թ. 25-ամյա հոբելյանին[253] անդրադարձած «Արարատ»-ը գրում է. «1903 թուականի օգոստոսին Վանում տօնուելու է Երամեան վարժարանի 25 ամեայ յոբելեանը: Վարժարանի հիմնադիրն՝ Համբարձում Երամեան, որ ամբողջ 25 տարի աննկուն ջանքերով առաջ է տարել իր գործը՝ չընկճուելով ոչ մի արգելառիթ հանգամանքի առաջ, որ իր ընտրած ասպարէզում աչերի լոյսը կորցնելուց յետոյ էլ չի քաշուել գործից, արդարև արժանի է ամէն քաջալերութեան: Մի ցաւալի իրողութիւն է, որ այսօր Տաճկահայ գաւառներում կրթութեան գործը բացառութեամբ մէկ երկու տեղի, մնացել է բոլորովին երեսի վրայ՝ այն տխուր հանգամանքի բերմամբ, որ այնտեղ ուսման և գիտութեան սպասաւորների ամբողջ ուշն ու միտքը կենտրոնացած է եղել Պոլսի վրայ: Երամեան վարժարանի հիմնադիրն այլ կերպ էր մտածում: Հաւատարիմ մնալով այն համոզման, որ գաւառում սիրով ծառայելու համար՝ ապագայ ուսուցիչն իր նախնական զարգացումը գաւառում պէտք է ձեռք բերէ, –իր անձնական ջանքերով խնամել, առաջ է տարել մի գործ, որի պտուղներն այսօր վայելում է Վանն իր շրջակայքով: Այժմ Երամեան վարժարանի ուսուցչական խմբի անդամները մեծ մասամբ Երամեան սաներ են, որով դպրոցի ուսումնական վիճակն աւելի գթոտ, հոգածու ձեռքերի է յանձնուած, նիւթական մասն էլ զեղծումներից ըստ կարելւոյն ազատուած: Որքան յայտնի է մեզ՝ մամուլի մէջ դեռ ո՛չ մի տրտունջ չէ լսուած այդ հաստատութեան հասցէին, այնպէս որ իրաւունք չենք համարում կասկածելու հետևեալ տողերի վրայ, որ գտնում ենք «Սուրհանդակ»-ի 1149 թուում, յիշեալ յոբելեանի կարգադիր մասնախմբի կողմից գրուած. «Արդ, Երամեան, մեր արդիւնաւոր դաստիարակը, իր աչազուրկ վիճակին մէջ յաջողած է կրթական հաստատութիւն մը հիմնել Վանայ մէջ և վարել ամբողջ 25 տարի՝ շատ նպատակայարմար, պատուաբեր և արդիւնաւոր ուղղութեամբ, օժտելով իր դպրոցը մշակուած ծրագրով մը, բաւական ճոխ գրադարանով մը, ուսմանց բազմազան ձեռնարկներով և գործնական միջոցներով, ըստ կարելւոյն նորագոյն մանկավարժական մեթոտներու կիրարկութեամբ, իբր 250 լիրայի թոշակաց հասոյթով, և այս ամենէն զատ, ի սէր իր ձեռնարկին, կուրծք տալով ամէն դժուարութեանց և զոհողութեանց, այնքան հանրօգուտ դեր մը կատարելով իր միջավայրին մէջ, և վերջապէս հաստատամտութեան և աննկուն կորովի գովելի օրինակ տալով»: –Անշուշտ Հայ հասարակութիւնն անփոյթ չի գտնուիլ՝ իր օժանդակութեամբ քաջալերելու բազմերախտ Երամեանին. իսկ ինչ վերաբերում է կարգադիր մասնախմբին, ցանկալի էր, որ նա այժմեանից պատրաստէր հրատարակելու համար մի տեղեկագիր, որտեղ արձանագրուած լինէին վարժարանի տարեկան ելն ու մուտքը, տարիների ընթացքում ուսմանց ծրագրի մէջ մտած փոփոխութիւնները, իւրաքանչիւր տարուայ ընթացաւարտների թիւը, նրանց ընտրած ասպարէզներն, ու, վերջապէս, ներկայի վիճակը մանրամասնօրէն: Լաւագոյն միջոցն է այս, որով կարելի է արժանանալ հասարակութեան բանիմաց դասակարգի վստահութեանն ու խրախուսանքին»[254]:

Ուսուցչապետը, ի թիվս հոգևոր և աշխարհիկ դասի ներկայացուցիչների հղած բազմաթիվ շնորհավորանքների, արժանանում է նաև կաթողիկոս Խրիմյան Հայրիկի հայրապետական կոնդակին. «Մեծայարգ Համբարձումայ Երամեան, հիմնադիր հայկական որբանոց-վարժարանի և բազմամեայ արդիւնաւոր պաշտօնէի յուսուցչական ասպարիզի, հարազատ որդւոյ Մայր-Աթոռոյս, նուիրեմք ողջոյն և օրհնութիւն հայրապետական:

Վաստակք վաստակաւորիդ և բազմաժամանակեայ ազգօգուտ ջանք քո ի դժուարատար ասպարիզիդ, ուսուցչութեանն ասեմ, և առաւելագոյն զոհողութեանցն պահպանութեամբ որդեգրած յառանձին հաստատութեան այդօրինակ համբերատար ոգւով և անընկճելի եռանդեամբ ի վաղ ժամանակէ ծանօթ մեզ գոլով, չեն պիտոյ մերձաւորագոյն վկայութեանց: Զարդիս՝ յորժամ ժամ է վաստակոցն վարձատրութեան և աշխատանացն գնահատման, թէև ո՛չ բովանդակապէս, զի յայս օրինակ առիթս առաւել թանկ շռայլեն զանազան դրուատիք քան նիւթական քաջալերութիւնք, մխիթարեա՛ց այդու ևս խրախուսանօք, ո՛ կրթասէր մշակ, որ քան զբազում լուսաւորս առաւել լուսատու հանդիսացար լուսաւորելով զմիտս բազմաց, որք յուսով լուսոյն գիտութեան առ քեզ դիմէին: Եւ մեզ ի ճահ է աստանօր դրուատել ճշմարտապէս, եթէ որ կարօտաւորն էիր առաջնորդի՝ բազմաց խարխափելոց եղիր առաջնորդ, որ զուրկ ի մխիթարութենէ երկրաւորին էիր, զբազումս մխիթարեալ՝ մխիթարութեան Երկնաւորին գիտակս արարեր, որ ծարաւին ճառագայթից իմանալի լուսոյն էիր՝ զբազումս ճառագայթից լուսոյ գիտութեան յանդիման կացուցեր, որ աղերսարկուն առ մեծատունս

251 **Երամեան Հ.**, Բ, էջ 30: Տե՛ս նաև **Տէր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., Ա, էջ 431:

252 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, 30-31:

253 «Արարատ», 1902, ԺԱ-ԺԲ, էջ 1125:

254 «Արարատ», 1902, ԺԱ-ԺԲ, էջ 1125-1126: Տե՛ս նաև **Զարմայր**, Յոբելեան մը, «Սուրհանդակ», 1902, № 1149, 21 նոյեմբերի, էջ 1: **Իրազեկ** /Տիգրան Պաղտասարյան/, Երամեան դպրոցը. Բացման հանդէսը – շէնքի խնդիրը, «Աշխատանք», 1911, № 29, 20 օգոստոսի, էջ 8-9:

էիր աշխարհիս՝ զբազումս ի սովելոց կշտապինդ հացիւ լցուցեր, մատակարարելով անանխանձ հոգւով լոյս, գիտութիւն և հաց հանապազօրեայ, և այսօր իբրև երախտաւոր որք ի բազմաց երախտաւորելոց արժանապէս ընդունիս զփոխարէնն:

Եւ մենք իբրև հայր հասարակաց և Հայրապետ լրութեան ազգիս, գնահատեալ արժանանապէս զվաստակս քո և զաշխատանս, սովին հայրապետական կոնդակաւ մերով յայտնելով քեզ զգոհունակութիւն մեր և զշնորհակալիս հանդերձ հովուապետական խնդակցութեամբ, օրհնեմք առ յաւէտ զքեզ, զջանսդ, զյարկդ լուսաւորութեան և կրթութեան, զբարերարս և զնախանձաւոր օժանդակիչս կրթարանիդ, զուսուցիչս հանդերձ աշակերտովք: Մաղթեմք՝ զի յաջողեսցէ քեզ Փրկիչն կատարել և զյիսնամեայ յոբելեանն վաստակոցդ առաւել յաջող և ի բարեդէպ հանգամանս: Եւ որքան զոհեալ կայք յանձնականէ Ձերոյ ընդ սեփական քրտանցն՝ ինքնին Տէրն լիցի վարձահատոյց աստ արդիւնաւոր փոխանակութեամբ և ի հանդերձելումն անանց փառաց:

Օրհնեսցէ՛ Տէր զնախաձեռնողս, զաշխատաւորս և զկարգադրիչս Յոբելեանիդ, որք երախտահատոյցք հանդիսացան վաստակողիդ և ծանեան ըստ Աւետարանին, թէ «Արժանի է մշակն վարձու իւրոյ»: Խաչն փրկչական, Աջն անեղական և օրհնութիւն մեր հայրական և հայրապետական անպակաս ի քէն այժմ և յաւիտեան: Ամէն»[255]:

Նոյն՝ 1903 թ., երբ Երամյանի տնօրինությամբ գործող 230 սան և 11 ուսուցիչ[256] ունեցող վարժարանը բոլորում էր իր պատմության քառորդդարյա շրջանը, և այդ կապակցությամբ անթիվ շնորհավորանքներ էին հասնում, ուսուցչապետի շուրջ մի անախորժ պատմություն էր պտտվում. «Կարծենք 903-ին էր, երբ Երամեան դպրոցի 25 ամեակը կը լրանար, երբ այդ դպրոցի շէնքի շրջանաւարտները միտք ունեցած են իրենց տեսչի աշխատութեան ի փոխարէն շէնք մը գնել: Այդ մտադրութիւնը արձականգ գտաւ դուրսն ալ եւ շատերը ցանկութիւն յայտնեցին մասնակցել, երբ Գահիրէաբնակ Պ. Կարապետեան հարուստ մը, 907 մայիս 7 թիւ նամակով կը յայտնէր, որ պատրաստ է 6 տարի շարունակ 100-ական լիրայ նուիրել շէնքին համար, որ այդ շէնքը թափու լինի Յանկոյսներու եկեղեցիին, որպէսզի որեւէ պարագային դպրոցը փակւած միջոցին, շէնքը գազաններու ձեռքին չիյնայ, իսկ իբրեւ վարձատրութիւն Հ. Երամեանին, նոյն բարերարը կը խոստանար 100 լ. խրկել, երբ իւր պայմանները ընդունուէին:

Մեր ձեռքի տակ ունեցած նամակներէն կերեւի, որ պ. Երամեան թէեւ նախապէս ընդունած է այդ պայմանը, բայց չը գործադրելուն համար, 908 յունուար 30-ի եւ մայիս 23-ի նամակներով Պ. Կարապետեան յետ պահանջած է նախապէս ուղարկած 200 լիրան, քանի որ շէնքի փոխանցումը չի կատարուած: 909 մայիսի 11-ի նամակէն ալ կերեւի, որ նախորդ նամակներու վրայ Երամեան համաձայնած է, որ Պ. Կարապետեան խրկած է 200 լիրայ ալ:

Միւս կողմէն սակայն Պ. Երամեան կ'աշխատի խնդիրը տարբեր հիմքի վրայ դնել եւ աշխատել հէօճէթի շէրիով վերջացնել ու այդպէս ալ գոհացնել բարերարին: Այդ ծածկւած գործողութիւնը բարերարը կիմանայ «Բիւզանդիոն» թերթէն, որու 4394 թիւ մէջ Վանէն թղթակցութիւն մը բացած է խնդիրը: Կարապետեան խիստ վշտացած այս «բաշիբոզուկութենէն» (Բիւզանդիոնի բառն է զոր իւր նամակի մէջ գործածած է Կարապետեան) այս տարւայ ապրիլի 30-ին Պատիարքարանին եւ մայիս 3-ին Առաջնորդարանին գրած նամակներով յետ կը պահանջէ իւր դրամը, հակառակ պարագային դատ բանալու սպառնալիքով, որու համար փաստաբան ալ վարձած է Պոլսոյ մէջ:

Այժմ խնդիրը մինչեւ հոս հասած է:

Պ. Երամեան կսպասէր Սարաճեան եպ.-ին[257], անոր միջոցով խնդիրը կարգադրել տալու համար: Յուլիս 22 թւով նա Առաջնորդարանին յանձնած է տեղեկագիր մը, որով կը ջանայ արդարանալ: Կիմանանք, որ Առաջնորդարանը կ'աշխատէ խնդիրը «անուշ տեղի մը կապել»:

Բնաւ տեղին չէ խօսելու, թէ Կարապետեան իւր տւած 700 լիրայով իրաւունք ունէ՞ր այդպիսի պայման մը դնել տարիներու աշխատաւորին: Ցանկալի էր, որ այդ պայմանը չը լինէր, իսկ երբ պ. Երամեան նախապէս կը համաձայնի դրւած պայմանին, ինչ որ կը հաստատեն Տ. Աւետիս քհնյ. Շաղոյեանի Գահիրիէն ու Գ. Շաղոյեանի (սա Կարապետեանի կողմէն փոխանորդ նշանակւած է) տեղէս գրած նամակները, այլեւս մեզ համար, ըսելիք մը չի մնար: Պ. Երամեան պարտաւոր է կամ գործադրել ընդունած պայմանը, կամ յետ վերադարձնել ստացած գումարը, հոգ չէ թէ «իր օձիքը պահանջատէրերու ձեռքին կը մնայ ու փակւած են նիւրատուներու դռները», ինչպէս կը գրէ ինքը, այլապէս ոչ կառավարութենէն ստացած պատւանշանը եւ ոչ ալ տարեկան 100 լիրան ոչ մի կերպով չը պիտի փրկեն իւր դպրոցի պատիւը ու չը պիտի ապահովեն անոր շարունակութիւնը»[258]:

Ի դեպ, «Վանայ Երամեան վարժարանի յօբելեանի օրը նշանակւած էր Ս. Համբարձման տօնի օրը, բայց որովհետեւ կատարուած հանգանակութեան նպատակն է միանգամ ընդմիշտ հաստատուն վիճակի մը մէջ դնել վարժարանին մատակարարու-

255 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 33-34: Երամյանի՝ կաթողիկոսական կոնդակի արժանանալու մասին տե՛ս նաև «Արարատ», 1903, Է, էջ 584:

256 **Կարսեցի**, Վան-Տոսպ, «Մուրճ», 1903, № 9, էջ 40: Ի դեպ, 1903/1904 ուստարում ունեցել է 83 շրջանավարտ («Կոչնակ», 1904, № 198, 24 սեպտեմբերի, էջ 1579):

257 Հովսեփ արք. Սարաճյանը (1849, Պոլիս – 02.10.1913, Վան) Վանի առաջնորդն էր 1910 թ. հուլիսից մինչև կյանքի վերջը: Մանրամասն տե՛ս «Աշխատանք», 1913, № 47, 5 հոկտ., էջ 1:

258 **Իրազեկ**, նշվ. հոդվ., «Աշխատանք», 1911, № 29, էջ 8-9:



1904-1905 թթ. կառուցված Երամյան վարժարանի շենքը

թիւնը եւ առանձին շէնք մը կառուցանել վարժարանին համար, ուստի խնդրուեր է ս. պատրիարքէն, որ օրհնութեան կոնդակ մը տրուի և յօբելեանին օրը յառաջիկայ օգոստոսին որոշուի, որպէսզի մինչև այն օրը կարելի ըլլայ կարևոր արդիւնք մը ձեռք բերել»[259]:

1900-ական թթ. սկզբներին Երամյանը երկու տարի պատմություն է դասավանդում (անվարձահատույց) նաև Միսիոներական ժողովրդային ընթերցատանը, որը հիմնել էին ամերիկյան շրջանավարտները: Նրանք կազմակերպում էին նաև դասախոսություններ լեզուների և զանազան գիտությունների վերաբերյալ[260]:

Ուշագրավ է, որ դպրոցի քառորդդարյա հոբելյանից նույնիսկ տարիներ անց դեռևս շարունակվում էին լույս ընծայվել նյութն արծարծող առանձին թղթակցություններ: Դրանցից էր, օրինակ, 1910 թ. սույն հաղորդումը. «Վանի մէջ Պ. Երամեանի հիմնած կրթական տաճարի քսանհինգամեայ յոբելեանը քանի մը տարի առաջ շքեղապէս արդէն տօնուեցաւ: Այս վարժարանի հիմնադիր-տնօրէն, որ իր նախանձելի շատ մը ձիրքերուն հետ կը լծորդէ կորովի կամք մը, կրցած է ամէն տեսակ զոհաբերութիւններ յանձն առնելով՝ դնել իր հոգեհատոր վարժարան մի այնպիսի անկախ դիրքի մէջ, որ այս վերջին զերծ մնացած է կռուածաղիկ ըլլալէ եւ աւելի քան երեսուն տարիներէ ի վեր տգիտութեան դէմ իր մղած ճակատամարտին մէջ յառաջ կը խաղայ անվեհեր: Հոն ազատ սէր քարոզուած չէ եւ աշակերտներ ծեծած չեն իրենց ուսուցիչ: Պ. Երամեան իր գաւառի մէջ պատիւ ունեցող մարգարէ մը է, եւ եթէ անոր համար աչքի հանգանակութիւն մ'ընել կարելի ըլլար, վստահ եմ թէ իր կորսնցուցած երկու աչքերուն տեղ, երկու հարիւր աչք պիտի ունենար»[261]:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒՄԸ ԵՐԱՄՅԱՆ

Վարժարանի նոր շենք կառուցելու նպատակով 1904 թ. սկզբներին գնվում է Մարգար Թոխմախյանի տունը պարտեզով, որը գտնվում էր Այգեստանի Կենտրոնական թաղում՝ Սղգայի մեծ պողոտայում: Շինության հանձնախմբի անդամներից էին Մանուկ Կոսպարյանը, Մկրտիչ Խանիկյանը, Հովհաննես Նալբանդյանը և Հրանտ Գոնտաքճյանը[262]:

Կառույցի հիմքերը դրվում են 1904 թ. մայիսի 1-ին, իսկ մայիսի 24-ին Սահակ եպիսկոպոս Բագրևանդյանը կատարում է հիմնարկեքի արարողությունը: Շինարարությունը մեծ թափով առաջ է ընթացել:

259 «Կոչնակ», 1904, № 181, 28 մայիսի, էջ 1443:

260 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 445-446:

261 **Ղարասէֆէրեան Ն.**, Ամերիկաբնակ վանեցիներուն, «Կոչնակ», 1910, № 51, 17 դեկտեմբերի, էջ 1217:

262 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 31: Ի դեպ, հողը գնվել էր 150 ոսկիով («Կոչնակ», 1904, № 190, 30 յուլիսի, էջ 1515): Բացի այդ՝ 1904 թ. սկզբին դպրոցական շենքի կառուցման համար հավաքվել էր 300 լիրա, որն էլ դրվելու էր Երամյանի տրամադրության ներքո (**Լևոնեան Խ.**, Նամակ Թիւրքիայից, «Մշակ», 1904, № 9, 24 յունվարի, էջ 3):

թանում: Երկրորդ հարկը ծածկվում է ձմեռնամուտից առաջ: Սակայն այդ ամենից հետո շենքը, այնուամենայնիվ, «անկատար, կահազուրկ և մերկ վիճակի մէջ ինձ պիտի թողուէր»[263]:

Ի դեպ, շենքի նախագծի (այն ներառում էր նաև բնակարան Երամյանի համար) հեղինակն էր ճարտարապետ Հովհաննես Քաջազնունին, որը, խուսափելով իր դեմ կազմակերպված դավերից, առժամանակ ապրում և գործում էր Վանում[264]:

Եվ ահա հիմնադրումից քառորդ դար անց՝ սկսած 1904 թ.-ից, դպրոցն անվանակոչվում է հիմնադրի անունով՝ Երամյան վարժարան. «Ամբողջ 37 տարի, 1878-1915, վարժարանս իր գոյութիւնը շարունակեց միակ անձի մը՝ այն է իր հիմնադրին տնօրէնութեան ներքև, կոչուելով յաջորդաբար նախ՝ որբանոց մինչև 1888, ապա՝ սոյն թուականէն գիշէրօթիկ դրութեան բարձումով՝ որբանոցի վարժարան մինչև 1904ի քսանհինգամեակը և այնուհետև Երամեան վարժարան»[265]: Անվանակոչությունը վավերացվում է Օրմանյան պատրիարքի օրհնության կոնդակով. «Օրմանեան պատրիարքը օրհնութեան կոնդակ մը ղրկեց Երամեան անուամբ մկրտելով դպրոցը, որ մինչև այդ օրերը կը կոչուէր Որբանոցի վարժարան՝ իբրև շարունակութիւնը նախկին գիշերօթիկ հաստատութեան»[266]:

Վերջապես 1905 թ. սեպտեմբերին վարժարանը փոխադրվում է նորակառույց շենք, որն ուներ հետևյալ տեսքը. «Կրկնայարկ և բարձրադիր շէնքը կը բարձրանար հաստատուն հիմերու վրայ, որով երրորդ յարկ մը ևս պիտի կրնար աւելցուիլ ապագային՝ ըստ կանխորոշ յատակագծի մը: Առաջին յարկը խաչաձև սրահով մը և արտաքին չորս դռներով բաժնուած էր գրեթէ չորս տարբեր մասերու, երկերկու սենեակնոց: Վերնայարկին կեդրոնը կը ձեւացնէր ընդարձակ սրահ մը, հիւսիսային և հարաւային ճակատներու վրայ զոյգ զոյգ փոքր սրահներով: Հարաւային ճակատը ունէր գեղեցիկ յաւելուած մը իբրև պատշգամ (քէօշկ) ընդարձակ հորիզոնով: Շէնքն ամբողջ կը բարձրանար բուրումնաւէտ պարտէզներու մէջտեղ, իսկ վերնայարկի պատուհաններուն առջև՝ արևմուտքէն կը հայելիանար ծովին իր ընդարձակ շրջագծին մէջ պարուրուած, հարաւէն Ս. Խաչի լեռը, համանուն վանքի սպիտակ գմբէթով, արևելքէն Վարագայ լեռները՝ Կարմրուոր վանքի կաթողիկէով, հիւսիսէն Ակրբիի լեռնաշղթան՝ պատմական Թօփրակ-Գալէով պսակուած: Այցի եկող օտար հիւպատոսներ և Օսմ. պանքայի պաշտօնեաներ կը նախընտրէին պատշգամը բազմիլ՝ այլազան տեսարաններով հմայուելու համար: Իսկ ես, որ աւաղ՝ զուրկ էի այդ գերազանց հաճոյքէն, կը մխիթարուի լսելով բանաւոր մեղուներու բզզիւնը և ողջունելով նոր սերունդի շուրջ 3-4 հարիւր վառվռուն ներկայացուցիչները»[267]:

Վարժարանի հանդիսասրահի որմերը զարդարված էին աշակերտների «մատներու գեղեցիկ արտադրութիւններով»: Հյուսիսային ճակատին բարձրանում էր բեմը, որը հարմար էր նաև թատերական ներկայացումների համար: Դպրոցը պետք է ունենար «տակաւին սեփական՝ հին ու նոր կեանքի բաւականաչափ ճոխ հանդերձանքներ»[268]:

Ցավոք, հանգանակության հետ կապված որոշ խնդիրների պատճառով Համբարձում Երամյանին է հանձնվում վարժարանի նոր շենքն առանց կահավորանքի: Այդ մասին նա մտահոգությամբ գրում է. «Ես 1905-ին անհրաժեշտ կահաւորումներ կատարելէ եւ վարժարանը նոյն տարւոյ սեպտեմբերին նոր շէնքը փոխադրելէ վերջ՝ պիտի հարկադրուէի այնուհետև ամեն տարի մեր վտիտ պիւտճէէն կլորիկ գումարներ յատկացնել շէնքի աստիճանական կահաւորման և բարեզարդութեան»[269]:

Չնայած 1905 թ. վերջին դպրոցի կահավորումն ամբողջությամբ ավարտված չէր, այնուհանդերձ, դա չի խանգարում, որ դասավանդումն ընթանա նույն ոգով և բարձր մակարդակով. «Երամեան վարժարանի կահաւորութիւնը աւարտելուն վրայ է, բայց պարտքով: Պոլսոյ վրայ պր. Երամեանի ունեցած յոյսերն անհրագործելի մնացին ծանօթ պատճառներով: Կովկասէն ալ նոյնպէս յայտնի հանգամանքներու մէջ ոչ մի ակնկալիք չենք կրնար ունենալ: Չը նայած, որ դպրոցի պիւտճէն բաց է, շինութեան առթիւ մեծագումար պարտք մը գոյացած է և ուսուցիչները 7-8 ամիսներէ ի վեր ամսական ստացած չեն՝ գործը կը շարունակուի սովորական ոգևորութեամբ»[270]:

263 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, նույն տեղում: Բագրևանդյանը, ցավոք, չի հաստատում շինությունն ավարտված տեսնել: Հարկ է շեշտել նաև, որ շինարարական աշխատանքներն ընթանում էին հայության համար քաղաքական և տնտեսական բավականին ծանր ժամանակաշրջանում (1904 թ. Սասնո երկրորդ աղետը, բարեկամների կորուստները, հայ-թաթարական ընդհարումները, Վանի համաճարակն ու իրարահաջորդ զանազան աղետները՝ երկրաշարժ, հրդեհներ տարբեր գավառներում և այլն), և կարծես թե մոռացվել էր վարժարանի գոյության մասին: Նրանք «պիտի համագրաւէին ուշադրութիւնը ոչ միայն Պատրիարքարանի, այլ և նոյնիսկ Խրիմեան Հայրիկին» (նշվ. աշխ., Բ, էջ 36): Հավելենք, որ անհրաժեշտ փայտը նույն թվականին բերվել էր Կտուց անապատի անտառից և Աղթամարից («Կոչնակ», 1904, № 192, 13 օգոստ., էջ 1531):

264 **Յարութիւնեան Վ.**, Կոյր աչքերով, պայծառ մտքով, «Վարագ», 2007, № 54, էջ 52-53:

265 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 172:

266 Նշվ. աշխ., Բ, էջ 33:

267 Նշվ. աշխ., Բ, էջ 31-32:

268 Նշվ. աշխ., էջ 32:

269 Նշվ. աշխ., էջ 31: 1905 թ. մայիսի 16-ի թղթակցության մեջ նշվել է կրթօջախի նյութական ծանր վիճակի մասին. «Վանայ յառաջադէմ համարված Երամեան որբանոցը (անունով միայն որբանոց, այլ հարուստանոց) ոչ պակաս նիւթականի նեղութիւն կը կրէ, թէպէտ քանիցս Պոլսոյ թերթերուն մէջ հանգանակութիւն ելաւ և պատրիարքը ամենայն կերպով աջակցեց այդ գործին» (*******, Նամակ Թիւրքիայից, «Մշակ», 1905, № 119, 16 յունիսի, էջ 2):

270 **N.**, Նամակ Վանէն, «Արաքս», 1906, № 11, 13 յունուարի, էջ 83:

1906 թ. սկզբին, ի նպաստ Երամյան վարժարանի, ամերիկաբնակ հայերը որոշել են «...10-ական ոսկի նուիրատուութիւն ընեն 30 ազգայիններ՝ որոնցմէ մէկն ալ ըլլալ փափաքած է տիար Յ. Թավշանճեան»[271]: Նույն թվականի փետրվարի 4-ի թղթակցություններից մեկով՝ վարժարանին նյութապես աջակցելու նպատակով Վան քաղաքում ներկայացվել է «...„Մայր և ընտանիք„ տեղական կեանքէն առնուած տրամա մը, թէ հայերէն և թէ թիւրքերէն լեզուներով...: Երամեան վարժարան զուտ հասոյթ ունեցեր է հինգ հազար ղուրուշ...»[272]: Հունիսի 20-ին էլ նշվել է. «Ի նպաստ Երամեան դպրոցի 40 օսմ. լիրայ խրկուեցաւ Գահիրէի միացեալ որբախնամին կողմէն: Սոյն բազմարդիւն որբախնամն ամէն գովասանաց արժանի է իր այս կրթասիրական ջանից համար, որ քանի մը տարիէ ի վեր տասնեակ մը երկսեռ որբեր կը պահէ Վարագայ և Ս. Գրիգորի որբանոցներուն մէջ և այլուր»[273]:

Արդեն 1906 թ. կեսին, համեմատելով Կենտրոնականի հետ, «...համեմատաբար աւելի բարեկարգ Երամեան վարժարանը, որ միջնակարգ էր իր ծրագրով, անմատչելի էր իր բարձր թոշակների պատճառով...»[274]:

Վարժարանի կահավորման համար անհրաժեշտ նյութական բացը լրացնելու հույսով 1906 թ. օգոստոսին Վանի առաջնորդական տեղապահ Մեսրոպ ծ. վ. Ճանիկյանը հրատարակում է մի կոչ, որը բավականաչափ լայն արձագանք է գտնում: Հայտնվում են նվիրատուներ Պոլսից, Թիֆլիսից, իսկ հոկտեմբերին կահիրեաբնակ կրթասեր Պետրոս Կարապետյանը միանվագ 700 ոսկի է նվիրաբերում (իրենց դրական դերակատարությունն ունեին Ավետիս քահանա Շաղոյանը և առաջնորդ Մկրտիչ ծ. վ. Աղավնունին): Այդ ամենի շնորհիվ վարժարանն ազատվում է 500 ոսկի պարտքից[275]:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆ ԱՌ ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Երամյանը ժամանակի մտավորականների այն ազդեցիկ ներկայացուցիչներից էր, ովքեր չէին ընդունում և մեղմ ասած անխոհեմ էին համարում բոլոր այն գործողությունները, որոնք հանգեցնում էին խաղաղ բնակչության սպանդին: Ի մասնավորի՝ նա այդ շարքին էր դասում 1896 թ. օգոստոսի 14/27-ին Պոլսում օսմանյան դրամատան գրավման գործողությունը, որին սուլթանը պատասխանեց մինչև 10000 անմեղ քաղաքացիների արյունը հեղելով. «Տեղի կ'ունենար օսմանեան պանքայի խօլ[276] ցոյցը, որ ութը տասը հազար հայերու արիւնը յոսեցուց ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ներկայացուցիչներուն և մասնաւորապէս Բարիզի և Պերլինի դաշինքներն ստորագրող մեծ տէրութեանց դեսպաններու աչքին առջեւ իսկ...: Պանքայի դէպքը հանրածանօթ և արդէն պատմականացած լինելուն՝ իմ կողմանէ առ այդ „խօլ„ որակումս բաւ կը համարեմ իբրև իմ անձնական կարծիքս...: Ցուցարարները դեռ Պոլսոյ ջուրերէն չհեռացած՝ մայրաքաղաքի փողոցներն ու խաները թատր կը հանդիսանային արիւնալի տեսարաններու: Շղթայազերծ խուժանն արձակ համարձակ կոտորեց տասը հազարի չափ հայ՝ յագուրդ տալու համար գազանային կիրքերուն Ելլտըզի հրէշին, որ կարծես իր աչքովն իսկ տեսնալ ու ճաշակել

271 «Արաքս» [Բոստոն], 1906, № 19, 10 մարտի, էջ 150:

272 «Արաքս», 1906, № 20, 17 մարտի, էջ 157: Տե՛ս նաև «Ռազմիկ», 1906, № 38, 1 մարտի, էջ 3: Ի դեպ, 1906 թ. հունվարի 13-15-ին դպրոցի սրահում ուսուցիչների և ավագ աշակերտների մասնակցությամբ բեմադրված «Թորոսի տունը» ներկայացմամբ բացատրվում էր արբեցողության վնասը: Հօգուտ դպրոցի՝ հավաքվում է 30-40 լիրա (**W. X.**, Կրթական գործը Վանի մէջ, «Արաքս», 1906, № 28, 12 մայիսի, էջ 223):

273 Մատենադարան, Կյուրեղ Սրապյանի արխիվ, թղթ. 82, վավ. 1046, թ. 1 շրջ.:

274 **Պատրիկ Ս.**, Վանի կրթական ընդհանուր վիճակը, «Ալիք», [Թիֆլիս], 1906, № 76, 30 յուլիսի, էջ 2:

275 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 37-38: Ի դեպ, դեռևս 1908 թ. ժամանակի մամուլը նշել է. «Վանայ Երամեան վարժարանի հիմնադիր տնօրէն Համբարձում էֆ. Երամեան 100 ոսկիի մասնավճար մը ընդունած է եգիպտոսաբնակ վանեցի Պետրոս էֆ. Կարապետեանէ, որ խոստացած է 600 ոսկի նուիրել վերոյիշեալ վարժարանին («Կոչնակ», 1908, № 4, 25 յունվարի, էջ 62): Հետագայում՝ 1914 թ. վերջերին, երբ Երամյանը գտնվում էր Եգիպտոսում, Կահիրեում իր երախտագիտությունն է հայտնում Պետրոս Կարապետյանին. «Մովսէս պէյ Անանեանցի ընկերակցութեամբ գացի երախտագիտութեան պարտքս հատուցանելու Պետրոս Կարապետեանին, որ 1907-1909 թուականին՝ 700 ոսկւոյ նուիրատուութիւն մը ըրած էր մեր դպրոցին» (նշվ. աշխ., Բ, էջ 313): Նշվել է նաև հետևյալը. եգիպտաբնակ վանեցի Պետրոս Կարապետյանը 600 ոսկի է նվիրում Երամյան վարժարանին՝ «...շինութեան պարտքը վճարելու համար, պայմանով, որ շէնքը այժմէն իսկ փոխանցուի տեղին Յանկոյսներ եկեղեցիին վրայ իբր ազգապատկան կալուած, սակայն մնայ Երամեան Համբարձումի և անոր յաջորդներու տրամադրութեան տակ անվարձ, ցորչափ «Երամեան» անունով դպրոցը գոյութիւն ունենայ: Սակայն Երամեան շատ ձգձգումներէ ետք, դեռ դրամը ամբողջովին չընդունած, յանձնառու եղաւ միայն Շէրիի ատեանին առջև վազքի օրէնքով արձանագրել տալ յիշեալ եկեղեցիին վրայ, Պ. Կարապետեանի դրած պայմաններով, առանց թափուով փոխանցում կատարելու: Այն ատենի Վանայ Գաւառ. վարչութիւնը և նուիրատուն չգիտնալով վազքի օրէնքին բծախնդրութիւնները, ընդունեցին այդ ձեւը և 600 ոսկին դրին պ. Երամեանի տրամադրութեան տակ: Այժմ Շէյխիւլ-իսլամութիւնը մերժած է վաւերացնել Վանայ Շէրիի ատեանին վճիռը այդ մասին, և հետեւաբար պ. Երամեան ամէն յանձնառութենէ ազատուած է, պարտքերը վճարած և շէնքը իւրացուցած լինելով: Նուիրատուն այս պարագային դէմ բողոքած էր Պատրիարքարանին, որ յանձնարարած էր Վանայ Գաւառական վարչութեան՝ քննել խնդիրը: Այժմ նոյն Գաւառական վարչութիւնը ընդարձակ տեղեկագրով մը խնդրին պատմականը ընելէ ետք, կը ծանուցանէ, որ վերջին անգամ պ. Հ. Երամեան ժողովին առջեւ յայտարարած է, թէ՝ չի կրնար նոր քայլ մը առնել, թէ "արդէն բարերարը առաջ իր նուէրը առանց պայմանի ընել մտադիր էր, ուրիշներն են, որ անոր միտքը պղտորեր են և թէ բացարձակապէս կը մերժէ թափուով փոխանցել այդ կալուածը" («Ազատամարտ», 1911, № 746, 16/29 նոյեմբերի, էջ 3): Տե՛ս նաև **Իրազեկ**, նշվ. հոդվ., «Աշխատանք», 1911, № 29, էջ 8-9:

276 Խոշ բազմիմաստ բառը տվյալ դեպքում գործածվել է անմիտ իմաստով:

կուզէր դէպի Վոսփոր քաշքշուող բիւրաւոր անմեղ զոհերու դիակոյտը...: Կարեւոր կը գտնեմ յիշատակել Պանքայի ցոյցին առթիւ Բէռ տը Ֆրանսի յետագայ դիտողութիւնը. „Եւրոպա զձեզ մինչև այսօր գառնուկ կ'ենթադրէր, այլ այժմ կը տեսնէ որ դուք գայլէր էք: Պանքայի գրաւումը Եւրոպայի համակրանքէն աւելի անոր հակակրութիւնը պիտի զարգացնէ ձեր դէմ: Դուք շարունակելով այսպիսի յանդուգն և անմիտ ցոյցեր, աւելի պիտի զայրացնէք սուլթանն, որ վայրենի մարդ մըն է և որ ինքն ըստ ինքեան անվնաս պիտի մնայ, եթէ դուք գնդասեղի հարուածներով չգրգռէք զայն դէպի գազանութիւն: Եւրոպա առանց ձեր ցոյցերուն ու բողոքներուն՝ ձեր կարծածէն աւելի քաջատեղեակ է Թուրքիոյ ներքին իրադարձութեանց...»[277]:

Ահա այսպես էր գնահատում և դատում Երամյանը, որին ընդհանուր առմամբ համակիր էր վանեցիների մեծագույն և հատկապես գիտակից մասը: Իրավիճակ և իրողություն, որոնք տրամաբանորեն հակառակ էին Դաշնակցության որդեգրած գործելաոճին: Ընդ որում, իրենց գաղափարական քարոզների համար պարարտ հողի բացակայության գլխավոր մեղավորներից հենց Երամյանին դիտարկելով, փորձում էին թե՛ լեզու գտնել ուսուցչապետի հետ և թե՛ նույն ժամանակ հնարավորինս վարկաբեկել նրան՝ չխորշելով անգամ էժանագին զրպարտություններից: Դրանցից էր 1906 թ. հուլիսի 13-ի սույն հրապարակումը. «...Երամեան անհատական վարժարանն է, երկու տարի առաջ նա արդէն անցաւ իր 25-ամեայ տարեշրջանը: Լինելով անհատական վարժարան, չունենալով հաստատուն եկամուտ, որբանոց անունով սկսած այդ հաստատութիւնը, դէպի ինքը գրաւեց հարուստ դասակարգի որդիները, ռոճիկով գէթ իր գոյութիւնն ապահովելու համար և այդ նրան յաջողուեց. մենակ Երամեան դպրոցը հաւաքում է այնքան թոշակ իր աշակերտներից, որչափ Վանի մնացեալ 6-7 դպրոցներով միասին վեր առած... նրա ճկուն վարիչը կարողացել է վերջին տասնամեակներում այնքան վարպետ կերպով յարմարեցնել դպրոցի ուղղութիւնը տիրող հոսանքներին, որ մնացել է կանգուն, առանց որև է կասկած հրաւիրելու կառավարութեան կողմից. և դրա բնական հետևանքն այն է եղել, որ դպրոցը արտադրել է անգոյն, որոշ ուղղութիւնից զուրկ մի սերունդ, որ իր նպատակների բովանդակ իրագործումն է գտել այս կամ այն վաճառականի խանութում...: Ահա մի դպրոց Տաճկաստանում, որ կեանք է ունեցել, սերունդ է արտադրել. ճշմարիտ է, որ նա նպաստել է հասարակական կրթութեան մակարդակի բարձրանալուն, բայց նա չի ծառայել հասարակութեան այրող պահանջներին, սրանց յարմար բարիքներ չէ կարողացել տալ»[278]:

Միևնույն ժամանակ դաշնակցական որոշ գործիչներ հույս էին տածում, որ իրենց գաղափարներով Երամյանին վարակելով՝ կփորձեն ազդել ուսուցչապետի ազգային-գաղափարական դիրքորոշումներն անվերապահորեն ընդունող ուսուցչական և ուսանողական զանգվածի վրա: Հենց այս մտադրությամբ էլ նախքան 1906 թ. Երամյանին է հանդիպում Վահան Փափազյանը (Կոմս)[279], որն իր հուշերում հետագայում գրում է. «Սկիզբէն իսկ ինձ հանգիստ չէր տալիս որբանոցի շուրջ խմբուած համեմատաբար լաւ պատրաստուած մտաւորականութեան անտարբերութիւնը և նոյնիսկ ոչ բարեկամական վերաբերմունքը դէպի յեղափոխական աշխատանքները: Յամառ ցանկութիւն ունէի քանդել նրանց կաշկանդող պատնէշը. ցրել հեռուից-հեռու մեր մասին նրանց սնուցած թիւր կարծիքները և լծել աշխատանքի: Պէտք էր մօտենալ Երամեանին. եթէ գոնէ անձնապէս լաւ տպաւորութիւն թողնէի, գուցէ հնարաւորութիւն ստեղծուէր այնուհետև շփում ունենալ նրան շրջապատողների հետ: Ինձ յաջողուեց գայթակղեցնել Պ. Երամեանին, որ յանդգնութիւն ունեցայ ընդունիլ ինձ իր տանը մէջ...: Աղաւաղուած հասկացողութիւններ ունէր Դաշնակցութեան մասին ընդհանրապէս ու երկրում նրա նահատակների մասին մասնաւորապէս:

Նրա կարծիքով Դաշնակցութիւնը միայն ռումբի և տերրորների կուսակցութիւն է, որ վարում են հայդուկ-ֆիդայիները. նա միայն քանդելու պաշտօն ունի. ի նկատի չի առնում ժողովուրդի գոյութեան սպառնացող վտանգները. երկրի գործիչները հլու կամակատարներ են արտասահմանի կեդրոնի. նա հալածում է ունեւոր դասակարգին և խլում նրանց ինչքը:

Յանձին Պ. Երամեանի խօսում էր Վանի չէզոք մտաւորականութիւնը և ոչ-կուսակցական հանրային կարծիքը: Այդ պատճառով յարմար առիթ էր հանգամանօրէն պարզելու մեր սկզբունքները և տեսակէտները: Խիստ ուշադիր լսում էր ինձ՝ իր լուսազուրկ հայեացքը դէմքիս բեւեռած: Իր ակնարկներից նկատեցի, որ իմ ինքնութիւնս անծանօթ չէ իրեն. դա մի կողմից անշուշտ նպաստաւոր հանգամանք էր գործի յաջողութեան համար. նա աւելի վստահութեամբ էր վերաբերւում և հաւատում ինձ...

Այդ տեսակցութիւնից յետոյ, փոքր առ փոքր մոտենում էին մեզ նրա նախկին աշակերտները և ուսուցչութիւնը, որոնցից մի քանիսը մեր օգտակար ընկերներից դարձան:

Աւելի դիւրին, գրեթէ ինքնաբերաբար մեզ շրջապատեցին Կեդրոնականի շուրջ համախմբուած երիտասարդները: Մենք օտար չէինք միմիանց: Շուտով

277 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 383:

278 **Պատրիկ Մ.**, Վանի կրթական ընդհանուր վիճակը, «Ալիք» [Թիֆլիս], 1906, № 76, 30 յուլիսի, էջ 2:

279 Վահան Մեսրոպի Փափազյանը (1876, Թավրիզ-1973, Բեյրութ) ՀՅԴ ականավոր ներկայացուցիչներից էր (ծածկանունները՝ Կոմս, Բժիշկ):

փոխադարձ վստահութիւն ստեղծուեց մեր և նրանց միջև և սերտ ընկերական կապ...»[280]:

1906 թ. նոյեմբերին Կոմսը երկրորդ անգամ է հանդիպում Երամյանին: Այս մասին արդեն հարկ ենք համարում ունկնդրել ուսուցչապետին. «Ուրեմն դպրոցներէն և կէս անդամալուծեալ շուկայէն մինչև գիւղական խրճիթները տրտունջ ու գայթակղութիւն: Իրաց այս վիճակը նկատի առնելով՝ ըստ Կոմսին՝ երկրորդ յանդգնութիւն մը ունեցայ հրաւիրելու Արամն ու Իշխանը՝ Մեսրոպ և Տիգրան անուամբ իրենց գործակիցներուն հետ միասին մեր ուսուցիչներէն Հրանդ Գօնտաքճեանի տունը՝ նոյեմբեր 1906ին: Հոն անոնք մեզ հետ մնացին 48 ժամ, բարեբախտաբար փօլիսներու և լրտեսներու աչքերէն թաքուն և անքոյթ վիճակի մէջ»[281]:

Երկօրյա քննարկումների «...ընթացքին խոսեցանք անոնց հետ վերոյիշեալ խնդիրներու շուրջ երկար և համարձակ, անոնց առաջ պարզելով ու բացատրելով ամէն ինչ: Ահա բիւրեղացած ամփոփումը մեր տեսակցութեան՝ հետեւեալ խնդիրներու մասին.

Ա. Ուսուցչական մարմիններուն կրնաք թելադրել, եթէ չունին արդէն, կազմակերպութիւն գրադարաններու և այլ զարգացողական միջոցներու. առանց սակայն ջանալու կազմել անոնցմէ անկախ ուսանողական միութիւններ: Ատոնց անխուսափելի արդիւնքը պիտի լինի աշակերտներու ցրուածութիւն, դասերու մէջ յետադիմութիւն և նոյնիսկ անկարգապահութիւն, որոնք երբեք չեն նպաստեր լուրջ նկարագրի կազմութեան:

Բ. Դուք ձեր ահագին զինամթերքի գաղտնիքը ստիպուած էք վստահիլ, չընելու համար մատնիլ 40է աւելի պահեստապետներու. որոնցմէ քանիները, զորս մենք ձեզմէ աւելի աղէկ կը ճանչնանք. ցուցամոլական և արկածախնդիր ոգւով միայն յարած են ձեզ: Անոնք լուրջ և ազնիւ նկարագրէ զուրկ՝ շատ դիւրութեամբ իրենց կարգին կառավարութեան պիտի մատնեն ձեր գաղտնիքները: Լաւագոյն էր ուրեմն պակաս մթերք ունենալ և յոյժ հաւատարիմ գործակալներ միայն դարձնել հաղորդ ձեր գաղտնիքներուն: Իսկ եթէ ինքնապաշտպանութիւն կամ ընդհանուր շարժում մը կազմակերպել է ձեր նպատակը, ինչպէս կը պնդէք, առ ի՞նչ այդ զէնքերը փտեցնել հողի տակ, մինչ խեղճ գիւղացին կը հարկադրէք իր եզն անգամ վաճառել անպէտ զէնքեր ձեռք բերելու համար:

Գ. Քաղաքացիին և գիւղացիին միջև դուք պատնէշ քաշելով և իրարմէ ցրտացնելով՝ կը հակասէք նոյնիսկ ձեր նպատակին, մէկ կողմէ ուժացնելով ձեզմէ քաղաքացի ունեւոր տարրը կամ վաճառականն ու դրամատէրը, որոնք այնքան ալ հարստահարիչ չեն՝ ինչպէս կը կարծէք. և միւս կողմանէ աւելի թշուառ գերութեան մը կը մատնէք գիւղացին, որ յաճախ կ'ստիպուի հարկապահանջ կամ պարտապահանջ թուրքն ու քիւրտը իր ընտանեկան յարկերու ներքև հիւր պահել օրերով:

Դ. Ձեր զինեալ խումբերու պտոյտները՝ գիւղական և գաւառական շրջաններու մէջ՝ իրաւ է, որ կը խանդավառեն ու կը հրապուրեն անգիտակից տարրերը, և սակայն այդ շարժումները կը ծառայեն աւելի արթնցնելու թուրքն ու քիւրտը՝ իրենց կարգին հայ գիւղացիէն շատ աւելի դիւրութեամբ զինուելու: Կառավարութեան գալով, մի՛ կարծէք թէ կը քնանայ. ան պատեհ ժամուն կ'սպասէ իր լախտի հարուածն իջեցնելու ու անասելի դժուարութիւններով ձեր կուտակած զինամթերքները գրաւելու. ինչ որ պիտի պատահէր երկու տարին դեռ չանցած, շնորհիւ իրենց ամենահաւատարիմ մէկ գործակալի մատնութեան»[282]:

Հանդիպման արդյունքի մասին Երամյանը նշում է. «Արամն ու Իշխանը այլևայլ առարկութիւններ ընելով հանդերձ, ի վերջոյ կատարելապէս համամիտ ցոյց տուին ինքզինքնին մեր տեսութիւններուն և սիրալիր համաձայնութեամբ բաժնուեցանք իրարմէ: Եւ սակայն յաջորդ տարին իսկ տեղի պիտի ունենար տխրահռչակ Նոր սերնդական շարժումը, որու դէմ պայքարելու վտանգալից հարցը ինձ պիտի վիճակուէր իրերու բերումով»[283]:

Դեռևս 1904 թ. Երամյանը, տեսակցելով Արամ Մանուկյանի հետ, զգուշացնում է, որ «Ամբոխին միտքը լուսաւորելէ, սիրտն ազնուացնելէ և հոգին բարձրացնելէ առաջ՝ վտանգաւոր է անպատրաստ տարրերու ձեռքը զէնք տալ: Անոնք ի հարկին այդ զէնքերն անգիտակցօրէն իրարու կամ յեղափոխութեան դէմ պիտի ուղղեն, հողի տակ պիտի թաղեն փտեցնեն կամ կառավարութեան պիտի յանձնեն»: Երեք տարի հետո Արամը «դժբախտաբար դառն փորձառութեամբ և հանդիսաւորապէս իրաւունք պիտի տար իմ այս տեսութեան»[284]:

Այս ամենը հաստատում է նաև Երամյան վարժարանի աշակերտ, հետագայում՝ նաև ուսուցիչ Արմենակ Փոխարյանը՝ իր հուշերում գրելով այսպես. «Երամեանի առաջին հանդիպումն Արամի հետ տեղի ունեցաւ Տիգրան Տէրոյեանենց տունը, երբ Դաշնակցութեան այդ եռանդուն ներկայացուցիչը նոր էր մտեր Վան: Հետաքրքիր էր ունկնդրել այդ երկու առաջնակարգ գործիչներուն, որոնցմէ մէկը կը գլխաւորէր կրթական գործը, իսկ միւսը յեղափոխական շարժումը: Մէկը միւսը կը լրացնէր, եւ երկուքն ալ դէ-

280 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 52-53: Ի դեպ, Երամյանն իր աշխատության 49-53 էջերում մեջբերում է կատարել Կոմսից, որոնք վերաբերում են Վանի տարբեր կրթօջախներին (Փորթուգալյանի, Վարագա վանքի Ժառանգավորաց) և նշել է աղբյուրը՝ «Հայրենիք», 1924, № 10, էջ 103-105:

281 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 59:

282 Նշվ. աշխ., Բ, էջ 59-60: Խոսքը վերաբերում է Դիերցի Դավոյի՝ 1908 թ. փետրվարի 6-ին կատարած մատնությանը:

283 Նշվ. աշխ., էջ 60-61:

284 Նշվ. աշխ., էջ 58, 119:

պի հայկական ազատագրութեան նոյն իտէալին կը դիմէին:

– Հայ ժողովրդի, մանաւանդ հայ գիւղացու ձեռքը հրազէն դնելէն առաջ, անհրաժեշտ է զինել զայն ուսման եւ գիտութեան զէնքով, – կ'ըսէր Երամեան Համբարձումը –որպէսզի նա կարողանայ ժամանակին ըստ արժանւոյն գործածել իր հրացանը: Զէնքէն առաջ՝ գիտակցութիւնն ու գաղափարը պէտք է:

– Իրաւունք ունիք, պ. Երամեան, բայց թռիչքն արդէն կատարուել է, ու ետ դառնալ անկարելի է: Մնաց որ, մենք արդէն չափազանց ուշացել ենք: Մեր հայրերը պէտք է սկսէին այն աշխատանքը, որ մենք ենք անում այսօր: Ստիպուած՝ երկու շարժումը միասին ենք տանում, – դուք ձեր բաժինը, մենք էլ մերը, պայմանով, սակայն, որ իրար չխանգարենք օժանդակելու փոխարէն: Ներկայ սերունդը պէտք է դաստիարակուի աւելի ազատական ոգիով: Պէտք չէ կաշկանդել անոր յեղափոխական թռիչքները խոհեմութեան սպանիչ խրատներով: Արդէն 600 տարի է, ինչ խոհեմութիւնը ինքնասպանութեան աստիճանին հասցրինք: Այժմ մեզ հարկաւոր է նախապաշարմունքից ու երկչոտութեան աւերմունքից մաքրուած բիւրեղ մի սերունդ:

– Պ. Արա՛մ, կարելի է լինել յեղափոխական մինչեւ ոսկորներու ուղն ու ծուծը, բայց միեւնոյն ժամանակ խոհեմութիւնը ձեռքէ բաց չթողնել: Չպէտք է արթնցնել քնած առիւծը: Մասնակի դէպքերով եւ ընդհարումներով չպէտք է Սուլթանին ենթադրել տալ, թէ հայ ժողովուրդը ոտից ցգլուխ զինուած է, մինչդեռ մեր զինական ուժը չնչին ու անբաւական է մինչեւ իսկ մեր ինքնապաշտպանութեան համար:

– Մի՛ կարծէք, պարո՛ն Երամեան, որ մենք փընտռում ենք առիթներ տաճիկ զօրքին հետ ընդհարում առաջ բերելու համար: Ընդհակառակը, աշխատում ենք հնարաւորութեան սահմաններում խուսափել այդ առիթներից: Պատահածները կամքից անկախ են լինում, եւ այդ անխուսափելի է. կենդանի գործը կունենայ նաեւ իր կենդանի արտայայտութիւնը: Բացի դրանից, մի՛ մոռացէք, որ մեր մէկ մարտական խմբի մղած մէկ յաջող կռիւը, տաճկական հարիւրաւոր զօրքի դիմաց, յեղափոխական այնպիսի ուժեղ մի պրոպագանդ է, որ չի կարելի ձեռք բերել տասնեակ տարիների քարոզով: Տեսնո՞ւմ էք, Նիկոլ Դումանի հերոսական հմայքը տիրել է այս ժողովրդի հոգուն, եւ նրա երգերը թնդում են երիտասարդութեան բերանում: Սա արդէն յեղափոխութեան կատարած նուաճումներից մէկն է:

– Հապա ի՞նչ կըսէք Վարդգէսի ձերբակալութեան տուած հակահարուածի մասին, որի վատ տպաւորութիւնը ժողովուրդի տրամադրութեան վրայ ողբալի է:

– Լա՛ւ տեղին խփեցիք, պ. Երամեան: Սակայն, դրան ես ունեմ նոյնքան ցաւալի պատասխան, որ ձեր ակնարկած մասնակի դէպքերից շատերը, ինչպէս նաեւ Վարդգէսի ձերբակալութիւնը չէր պատահի, եթէ մեր ժողովուրդի մէջ չգտնուէին մատնիչ-դաւաճաններ եւ կառավարութեան գործակից սողուններ: Հէնց դրա համար եմ ասում՝ տուեցէ՛ք մեզ յեղափոխական ոգուով դաստիարակուած, անշահախնդիր ու անձնուէր մի սերունդ, եւ դուք կունենաք ձեր պահանջին համապատասխան գործ: Ձեր դրպրոցները պարտաւոր էին մինչեւ հիմա հասցրած լինել այդ յեղափոխական սերունդը եւ եթէ չլինէին հատ ու կէնտ մի քանի անհատներ, ես ամայութեան մէջ պիտի գործէի:

– Եթէ աւելի լայն ծանօթութիւն հաստատէք իմ աշակերտներուս հետ, կարծեմ դժգոհ չպիտի մնաք անոնց մտաւոր ու հոգեկան պատրաստութենէն առհասարակ:

– Պ. Երամեա՛ն, այդ առիթը ունեցել եմ ու պիտի ասեմ, որ լաւ տպաւորութիւն եմ ստացել: Ձեր աշակերտութեան մէջ կան հետաքրքիր տիպեր, որոնք կարող են պիտանի ուժեր դառնալ մեր գործին...»[285]:

Ինչ վերաբերում է ազատագրական շարժման ծավալման ռազմավարությանը, ապա դարձյալ Փոխարյանից քաղելով՝ հարկ է նշել, որ Երամյանն «Անոր բարեյաջող լուծումը կը պայմանաւորէր, առաջին՝ կրթութեամբ, երկրորդ՝ տնտեսական զարգացումով եւ երրորդ՝ յեղափոխութեամբ, որուն համար օրուան յեղափոխական գործիչներէն տարբեր ըմբռնում ունէր: Չեմ սխալուիր, եթէ ըսեմ, որ այս կէտին մէջ Երամեանը պահպանողականութեան սահմանին հասած Զգուշութիւն կը քարոզէր: Կ'ընդունէր, որ հայ ժողովուրդը նախապատրաստուի յեղափոխական անշշուկ քարոզով ու գաղափարով»[286]:

Արամի հետ հանդիպումներից մեկի մասին Երամյանը հիշատակում է. «...նոյնիսկ դաշնակցական ծանօթ Արամ, որ 1908ի Սեպտեմբերին ուղղեց ինձ հետեւեալը՝ շատերու ներկայութեան. «Պահեցէ՛ք դուք ձեր ցարդ հետեւած անկախ և անկուսակցական ուղղութիւնը, որով լաւագոյնս պիտի կրնաք ծառայել ազգին: ...ձեր դաստիարակչական դրութիւնն ու ոգին մօտէն ուսումնասիրելու առիթ ունենալով, այսօր մեծապէս կը գնահատեմ զայն և իբրև ապացոյց՝ ահա ձեզ կը բերեմ կը յանձնեմ Սերոբ փաշայի (Սերոբ-Աղբիւր) որդին, որպէս զի ձեր վարժարանին մէջ կրթուի»[287]:

ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐՍԵՐՆԴԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

Երամյանի գաղափարներն ու մտահոգությունները առերես ընդունած դաշնակցականները իրենց գործողություններով պարզում են գրեթե հակառակը: Մասնավորապես «Նոր Սերունդ» խմորատիպ թերթի հրատարակմամբ և «Նորսերնդական» շարժ-

285 **Փոխարեան Ա.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1938, № 1, էջ 56-57:

286 Նշվ. հոդվ., էջ 56:

287 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 164; Բ, էջ 119:

ման գաղափարների տարածմամբ ինչպես Երամյան վարժարանում, այնպես էլ մյուս ուսումնական հաստատություններում հրահրում են ներպառակտիչ խմորումներ[288]: Ծայր են առնում «ուսանողութեանը հանդէպ ուսուցիչներուն և եկեղեցականներուն» հրահրելու անխոհեմ «ըմբոստական շարժումներ», որոնց արձագանքները, ի դեմս մի քանի սաների, բորբոքվում են նաև «Երամեան դպրոցի եւ Ամերիկեան որբանոցի ուսանողութեանց միջոցաւ, բայց շուտով զսպուեցան»[289]: Այդ ամենի հետևանքով վարժարանի կարգապահության դեմ ըմբոստացած սկզբում՝ երկու, ապա ևս երեք աշակերտ վտարվում է դպրոցից: Նորսերնդականները սկսում են դասադուլների թռուցիկներ տարածել քաղաքում[290]:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ Երամյանին է փոխանցվում Կոմսի նամակը, որով հանձնարարվում էր «անյապաղ վերակոչել վտարուածները՝ ուրիշ անախորժութիւններու առաջքն առնելու համար»: Վերջինիս ուսուցչապետը պատասխանում է. «Մենակ աշակերտները կրնանք վերընդունիլ միայն, երբ անոնք ինքնակամ և անբռնադատ մեզ դիմեն»[291]: Երկրորդ նամակը ստանալով և այն անպատասխան թողնելով՝ գիշերը Երամյանը հանդիպում է Կոմսին և դարձյալ մնում իր տեսակետին: Նույն օրը երրորդ նամակով ուսուցչական կազմին տրվում է 24 ժամ, այլապես ենթակոմիտեն սպառնում էր վերջապես գործադրել իր որոշումները: Երամյանի կողմից գումարված ժողովի ժամանակ ուսուցիչները մնում են անդրդվելի. «Մենք պատրաստ ենք ձեզ հետ մեռնելու ի սէր դպրոցի հեղինակութեան ու պատիւին»[292]: Վարժարանի աշակերտների ծնողներից կամ խնամակալներից շատերը դիմում են առաջնորդական տեղապահ Մեսրոպ ծ. վ. Ճանիկյանին և խնդրում նրա միջամտությունն անհարկի ոտնձգությունների դեմ՝ ասելով. «Եթէ երբէք Երամեան տեղի տայ նոր սերնդական պահանջներուն և վտարուած աշակերտներն առանց ո և՛ է պայմանի վերընդունի, իրենք իրենց զաւակներն այդ վարժարանը չպիտի ղրկեն»[293]:

Հաջորդ օրը տեղապահ Մ. Ճանիկյանն այցելում է դպրոց, «զիս մեկուսի տեսչարանն առաւ և յայտնեց որ նախորդ երեկոյ Կոմսն իրեն այցելելով՝ յանձնարարած է իրեն՝ գալ զիս համոզել, որ գոհանամ միայն վտարուածներու ձեռքի նշանով մը թրքական թէմէննոյով: Մերժեցի...»[294]: Այդ ժամանակ տեղապահը փորձում է հիշեցնել կուսակցության դավադրական մեթոդների մասին. «Կրնայ պատահիլ, որ դուք ևս դաշոյնի մը կամ գնդակի մը զոհ երթաք. մտածեցէք ուրեմն որ այդու ո՛չ միայն ձեր ընտանիքը պիտի դժբախտանայ և օգտակար հաստատութեան մը գոյութիւնը թերևս վտանգուի, այլ և կառավարութիւնը անշուշտ խուզարկութեան պիտի դիմէ և առաջին զոհերը պիտի լինի այդ եօթը պատանիներն իրենց պարագաներով»[295]: Երամյանը պատասխանում է հետևյալ կերպ. «Այդ բանը կուսակցութիւնը և դուք նկատի առէք, ...ես միմիայն իմ և ուսուցչական պատիւը և հեղինակութիւնը կը մտածեմ այս պարագային, աչք առնելով ամէն վտանգ»[296]:

Նույն մտահոգությամբ դիմելով վարժարանի ուսուցիչներին՝ տեղապահը նրանցից ստանում է հետևյալ պատասխանը. «Աշակերտները և դպրոցը Երամեանին կը պատկանին, եթէ նա կուզէ համակերպիլ՝ ազատ է, իսկ մենք այլևս չպիտի կրնանք պաշտօնավարել այնպիսի հաստատութեան մը մէջ, ուր տեսչի և ուսուցչի հեղինակութիւնը պիտի չքանայ բացարձակապէս և ուրիշներու կամքը պիտի յաղթանակէ»[297]: Կորցնելով տիրապետումը՝ Ճանիկյանը բղավում է «բրավո» և ասում. «Ապրիք դուք և ձեր տեսուչը, դուք զիրար կ'արժէք արդարև»[298]:

Դեպքերի զարգացումները ցավալիորեն հասնում են իրենց տրամաբանական վախճանին, այն տարբերությամբ, որ զոհը լինում է ոչ թե Երամյանը, այլ Սանդխտյան վարժարանի ուսուցիչ Գրիգոր Աճեմյանը (1907 թ. մարտ). «Աճէմեանի ահաբեկումը սաստկագոյն սարսափ տարածեց ամենուն վրայ և բարեկամներէս մին կը յորդորէր զիս, նմանօրինակ վախճանէ մը խուսափելու համար, համակերպիլ կուսակցութեան պահանջին»[299]:

Գր. Աճեմյանի սպանությունից հետո պարզելու համար, թե արդյո՞ք աշակերտները կապ ունեն այդ ամենի հետ, վարժարան է այցելում ոստիկանության երրորդ կոմիսար Նազարեթ Չարուխճյանը: Երամյանի տված արդար ցուցմունքների շնորհիվ բանտարկված բոլոր աշակերտներն ազատ են արձակվում: Նրանցից երկուսը վերադառնում են վարժարան. «Եկան, արտասուալից աչքով համբուրուեցանք և յաջորդ երկուշաբթի օրը անոնք դպրոց գալով յայտնեցին զղջում ու հնազանդութիւն ու շարունակեցին իրենց դասերը»[300], իսկ մյուս երեք աշակերտները խնդիրը փակվելուց հետո հաճախում են այլ դպրոց, սակայն ամեն առիթով դատապարտում իրենց: Նրանցից մեկը վարժարանի մասին ասել է հետևյալը. «Մեր մայր վարժարանի առաւելութիւններու գաղտնիքը՝ արդարև, հոն տիրող խիստ և անաչառ կարգապահութեան մէջ կը կայանայ»[301]:

288 Նշվ. աշխ., Բ, էջ 61:
289 **Լրաբեր**, Նամակ Վանէն, «Կոչնակ», 1908, № 21, 23 մայիսի, էջ 327:
290 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 62:
291 Նշվ. աշխ., Բ, էջ 63:
292 Նշվ. աշխ., էջ 64:
293 Նույն տեղում:
294 Նույն տեղում:
295 Նշվ. աշխ., Բ, էջ 64:
296 Նույն տեղում:
297 Նշվ. աշխ., էջ 65:
298 Նույն տեղում:
299 Նշվ. աշխ., էջ 66: Տե՛ս նաև «Ազգ», 1907, № 10, 22 յունիսի, էջ 1:
300 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 67:
301 Նշվ. աշխ., էջ 67-68:

Ուսուցչապետի հերթական հանդիպումը Կոմսի հետ 1908 թ. մարտի վերջերին էր, երբ մի գիշեր ինչ-որ կոշկակարի գլխավորությամբ հանկարծ Երամյանի տուն է («կ'իշխէր Փոքր Քէնտրրչիի քառուղիին վրայ») ներխուժում 5 դաշնակցական, իսկ հաջորդ օրը երկու ընկերներով տան դիրքն ուսումնասիրելու նպատակով գալիս է Կոմսը: Երկար զրույցից հետո Երամյանը կարողանում է համոզել Կոմսին. «Դուք չէ՞ք գիտեր, որ կրթական բազմամեայ հաստատութեան մը գոյութիւնն իսկ կրնայ վտանգուիլ՝ եթէ իմ անձիս ապահովութիւնը երկրորդական կը համարէք: Դարձեալ դուք ինչպէ՞ս կը վստահիք մեր տան դիրքապահ խմբապետին, զոր մենք շատ լաւ կը ճանչնանք և որ առաջին առթիւ երկրորդ Դաւս մը կրնայ դուրս գալ»: Փափազյանը նույն գիշերը, ինչպես խոստացել էր, հրաժարվելով տան դիրքից, խմբին փոխադրում է ուրիշ տեղ. «Այսպէս երկրորդ անգամ լինելով, Փափազեան կը փրկէր զիս դժուարին կացութենէ, նախ՝ անցեալ տարուոյ նոր սերնդական պայքարին և երկրորդ՝ այս վերջին խնդրոյն առթիւ»[302]:

Ուսուցչապետի կամքին և ճիգերին հակառակ՝ Դաշնակցությունն ի վերջո պատճառ է դառնում, որ Երամյան վարժարանի շենքը ևս կառավարությունը գրավի: Դա տեղի է ունենում 1908 թ. մայիսի 2-ին. «Գրաւուեցան նաև մեր վարժարանը, զոր Արամ իրենց համար կառուցուած անառիկ ամրոց մը յորջորջած էր: Կառավարութիւնը սակայն պիտի կանխէր գրաւել այդ ամրոցը, որուն մէջ աշակերտներու փոխարէն յիսնեակ մը զինուոր եկան տեղաւորուեցան»[303]:

Այս ամենով հանդերձ, ինչպես նշվել է ժամանակի մամուլում, «Վարժարանը անցեալ դպրոցական տարուոյն վերջը 5 շրջանաւարտներ տուած է. ներկայիս մէջ 227 աշակերտներ ունի»[304]:

ՎԱՐԺԱՐԱՆԸ 30-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ՕՐԵՐԻՆ

1908 թ., երբ խուզարկությունների պատճառով դպրոցը փակ էր, և դրանով էլ պայմանավորված՝ հասույթի աղբյուրները բոլորովին սպառված էին, Երամյանն ընկնում է ծանր պարտքերի տակ: Մինչև անգամ մի ամբողջ շաբաթ նրանց ընտանիքը սովի է մատնվում. «Կէս անօթի, կէս կուշտ անցուցած էինք գրեթէ չորաբեկ հացով միայն: Թէպէտ բարեկամաց վստահութիւնը և ինքնանվեր փոխատուութիւններ անպակաս եղած են, սակայն կեանքիս մէջ ստէպ տեսած եմ այսպիսի նեղ օրեր երբ՝ յոգիս ապաստան կ'ոգորէի բախտի ժլատութեան դէմ»[305]:

Վարժարանի հիմնադրման 30-ամյա հոբելյանը լրանում էր 1908 թ. հուլիսին.

«Երեսնամեակն էր սոյն տարին գործիս,
Որոշեցինք տօնել եւ զտասն Յուլիս:

Այո՛, խնամատար ընկերութիւնը կազմուած լինելով 13 Յուլիս 1878ին, անկէ ծնունդ առած վարժարանս տասն տարի, 78-88, իբրև գիշերօթիկ և ապա իբր ցորեկօթիկ շարունակելով՝ երեսնամեայ շրջան մը բոլորած կը լինէր մինչև Յուլիս 1908»[306]: Ելնելով իրադարձություններից՝ որոշվում է այն կատարել և «անոր կցել և ցնծատօն մը՝ յանուն Յուլիս 10ի թուրք յեղափոխութեան»: Ի վերջո տոնակատարության օրը որոշվում է օգոստոսի 17-ը (հին տոմարով)[307]: Հանդեսի առաջին մասը տեղի էր ունենալու զուտ մայրենի լեզվով և նվիրվելու էր դպրոցի հիմնադրման 30-ամյակին և այդ տարվա շրջանավարտներին, իսկ երկրորդ մասը՝ Սահմանադրության հռչակմանը հայերենով, թուրքերենով, ֆրանսերենով[308]:

Տոնակատարության օրը նախ հայ նահատակների ընդհանուր հոգեհանգիստ է կատարվում Արարուց թաղի մեծակառույց եկեղեցում: Այնուհետև նվագախումբը խուռներամ բազմության ընկերակցությամբ Արարք թաղից անցնում է Նորաշեն, այնտեղից էլ՝ «Յանկոյս Ձորոյ եկեղեցին՝ մահերգներ հնչեցնելու համար նաև Պահրի փաշայի օրով կախաղան բարձրացած Շատուրեան Մանուկի շիրմին վրայ»[309]:

Վարժարանի ընդարձակ սրահը հարակից սենյակներով, զբոսավայրն ու փողոցը հանդեսի բացումից ժամեր առաջ արդեն լցված էին ծովածավալ մարդկանցով՝ թուրք զինվորականներ, քաղաքային պաշտոնյաներ, հյուպատոսներ: Ներկա էր նաև կուսակալը. «Մինչ այս մինչ այն, և ահա հայերուս բարեկամ, զինուորական հրամանատար և միանգամայն առժամեայ կուսակալ ազնիւ Մահմուտ փաշա մեծ շքախումբով վարժարանի փողոցը կը մտնէր: Աննկարագրելի էր խանդավառութիւնը հայ ժողովրդին, որ իր որոտընդոստ ծափողջոյնները կը խառնէր զինուորական երաժշտութեան»[310]: Հոբելյանական հանդեսի փակման խոսքը վերապահված էր Վանի առաջնորդական տեղապահ Զավեն Տեր-Եղիայանին[311]:

302 Նշվ. աշխ., Բ, էջ 81-83:
303 Նշվ. աշխ., էջ 81:
304 «Կոչնակ», 1908, № 4, 25 յունվարի, էջ 62:
305 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 96-97:

306 Նշվ. աշխ., Բ, էջ 94:
307 Նույն տեղում: Մի աղբյուրի համաձայն՝ հանդեսը եղել է 1908 թ. օգոստոսի 26-ին՝ երեկոյան ժամը 7-ին, որին ներկա էր նաև Ֆերիկ փաշան (**Արշամ**, Ազատութիւնից յետոյ, «Գործ», 1908, № 4, 14 սեպտեմբերի, էջ 2): Այլ աղբյուր վկայակոչում է 1908 թ. սեպտեմբերի 6-ը. «Շէնքը լեցուած էր հանդիսականներով...: Թուրք սպաներ ատենախօսութիւններ ըրին» (**Յ. Պ.**, Նամակ Վանէն, «Կոչնակ», 1908, № 44, 31 հոկտ., էջ 696):
308 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 94:
309 Նշվ. աշխ., էջ 94-95: Ի դեպ, արմենական Մանուկ Շատվորյանը Նուրի էֆենդուն սպանող Վանի ոստիկաններից էր և մահապատժի է ենթարկվել 1894 թ. փետրվարի 1/13-ին (**Մ. Փ.**, Մի նոր նահատակ ալ, «Արմէնիա», 1894, № 46, 16/28 փետրվարի, էջ 1):
310 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 95:
311 Նշվ. աշխ., էջ 96: Զավեն Տեր-Եղիայան (1868, Մոսուլ–1947, Բաղդադ). 1908 թ. նշանակվել է Վանի առաջնորդական տեղապահ և պաշտոնավարել մեկ տարի, իսկ 1913-1922 թթ. Կ.Պոլսի պատրիարքն էր:

Ելնելով նյութական միջոցների ծայրահեղ սղությունից՝ վարժարանի նախկին սան և ուսուցիչ, Երամյանի հավատարիմ բարեկամ Հրանդ Գոնտաքճյանը ծախսում է 3-4 ոսկի՝ «օրուան հանդէսի օտար ու հայ հիւրերուն պատշաճ մեծարանքներ մատուցանելու համար»[312], իսկ ուսուցչապետն իրեն զրկել էր անգամ տարվա շրջանավարտներին ավանդական «սեղանը տալու հաճոյքէն»[313]:

Վարժարանի հանդեսներին ու քննություններին միշտ ներկա էին ֆրանսիացի հյուպատոսներ Ռոպենը և Գալվիեռը. «Զոյգ հիւպատոսները մեր հանդէսներուն ու քննութիւններուն ներկայ էին միշտ և առաջին անգամ լինելով, Գալվիէռն էր, որ Ալիանս Ֆրանսէզէն գիտական մրցանակներ սահմանեց մեր յաջողագոյն աշակերտներուն»[314]: Ըստ ամենայնի, սույն հանդեսին ներկա էր նաև դաշնակցական գործիչ Կոմսը, քանի որ իր հուշերում նշել է. «Կազմակերպած էր պաշտօնական հանդէս մը, ուր հրաւիրուած էին կուսակալը, հրամանատարը, ռուսական հիւպատոս Ալֆէրիէվը և քանի մը բարձր պաշտօնեաներ: Հոս արդէն հայ մէպուսական թեկնածուներու ճառերու մրցումն էր...: Տեսուչ Երամեանը բացաւ հանդէսը և չմոռցաւ յիշել, որ Դաշնակցութեան և Արմենականներու այսօրուան թեկնածուները իր դպրոցէն են ելած»[315]:

1908 թ. օգոստոսին 17-ին՝ վարժարանի հոբելյանական հանդեսի օրը, Երամյանենց տանը միայն երկու հավկիթ կար, ինչպես նաև՝ «քիչ մ'ալ հացի փշրանք»: Երբ առավոտյան կինը նրան է հյուրասիրում հավկիթները, Երամյանը հրաժարվում է և հարցնում. «Հապա զաւակնե՞րդ»: Կինը պատասխանում է, որ մեծ տղան դպրոցում է, փոքրը «քանի մը ընկոյզով կրնայ գոհանալ...», և նորից հավկիթները մեկնում է նրան՝ ասելով. «... դուն այսօր շատ գործ ունիս, հետեւաբար գոնէ դուզնաքեայ սնունդ մը առնելու ես»[316]: Հավկիթներն ուտելու ժամանակ տուն է հասնում անդրանիկ որդին՝ Վարդանը, ուտելիք խնդրում մորից: Խեղճ կինը մատնացույց է անում հավկիթները, իսկ Վարդանը հուզված և անոթի հեռանում է[317]:

Հանդեսից հետո հանկարծ Երամյանին տնից լուր են բերում, որ մոտավորապես 10 ազգայիններ սպասում են իրեն. «Դժնդակ և գրեթէ գայթի գայթ գացի զիրենք ընդունելու. կը խորհէի թէ ինչո՞վ պիտի մեծարեմ զիրենք: Սակայն տուն մտնելուս պէս, համադամներու անուշահոտ բուրմունք մը զիս հանելուկի առջև դրաւ: Անհամբերութիւնէս դեռ հիւրերուն չներկայացած՝ մեկուսի կանչեցի կինս և հարցուցի. «Ի՞նչ է այն»[318]: Հանելուկը պարզվում է. Համբարձում Սարգսյանը, երբ առավոտյան անցնում է Երամյանենց տան մոտով, լսում է կրտսեր որդու՝ Վաչագանի «անօթի եմ, հաց» աղաղակը, զայրացած և փղձկալով հասնում է շուկա, «քսան վայրկեան վերջ՝ 6-7 քաշ միս և 10-12 քաշ հաց կը բերէ տուն և քսակն ալ կը պարպէ, ըսելով. «Ա՛ռ, տիկի՛ն, ես գիտեմ որ այս իրիկուն հիւրեր պիտի ունենաք, շուտով հարկ եղած պատրաստութիւնները տե՛ս...: Փնտռեցինք զայն, բայց նա մէջտեղ չկար, պատրաստ էր բազմախորտիկ սեղանը. հրաւիրեցի և մի քանի ուսուցիչներ, կերանք, խմեցինք՝ օրհնելով մեր նոր Եղիան»[319]:

Վարժարանի ընթացիկ աշխատանքներին զուգահեռ՝ ուսուցչապետը հետևում էր ներազգային բոլոր անցուդարձերին և հարկ եղած դեպքում նաև արձագանքում: Այդ շարքից էր, օրինակ, 1908 թ. օգոստոսի 5-ին կրկին Պոլիս վերադառնալու կապակցությամբ Մաթեոս արքեպիսկոպոս Իզմիրլյանին հղած շնորհավորագիրը. «Ձեր Ամենապատուութեան ազատութիւնը փառապսակն է ընդհանուր Հայ Ազգի ցնծութեան՝ շնորհիւ Օսմանեան և Ազգային սահմանադրութեանց վերահաստատման:

Իբրև պատրիարք տասնեակ տարիներ առաջ երկաթի կամքով պաշտպանեցիք Հայկական դատը, իսկ այսօր Ազգն համօրէն Ձեր յաջորդ տասնեակ տարիներու աքսորական մենութեան մէջ առ Բարձրեալն ուղղուած ջերմեռանդ խնդրուածոց կատարումն կը ողջունէ Ձեզ հետ աննման խանդավառութեամբ:

Թող փութա ուրեմն Ազգն համօրէն կոչել զՁեզ ի յաջորդութիւն Ամենայն Հայոց կարօտամաշ Հոգեւոյս Վեհափառ Ս. Հայրիկին, զի ամէն յոյսն ու հաւատք ունինք, որ Ձեր Ամենապատուութիւնը իբրև հաւատարիմ ժառանգ Նորա ծրագիրներուն և իղձե-

312 Նշվ. աշխ., Բ, էջ 97:
313 Նույն տեղում:
314 Նշվ. աշխ., էջ 77:
315 **Փափազեան Վ.**, Իմ յուշերը, հ. Բ, Պէյրութ, 1952, էջ 42:
316 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 96:
317 Նույն տեղում:
318 Նշվ. աշխ., էջ 97:

319 Նշվ. աշխ., Բ, էջ 97-98: Համբարձում Սարգսյանի մասին հայտնի է հետևյալը. Մեծ սովի տարում՝ 1880 թ., մի գյուղացի ցնցոտիների մեջ փողոցում ընկած գտնում է 10-ամյա տղային: «Խնամատար»-ի ընկերները նրան բերում են Երամյանի մոտ: Վերջինիս խնդրանքով ընկերներից մեկը 1 ամիս պահում է իր տանը և արդեն կազդուրված երեխային վերադարձնում «Խնամատար»-ին: 1887 թ. Համբարձումն ուսումն ավարտում է և Մկրտիչ Խանիկյանի տանը հյուրընկալվելով՝ նրա ոսկերչության խանութում սովորում է փորագրության արհեստը: Ուշիմ աշակերտը շուտով կարողանում է իր հաշվին մի խանութ բացել: Ամուսնանում է Քաղաքամեջում նոր տուն գնում: Որպես կյավարցի՝ ձեռք է բերում պարսկահպատակություն: 1896 թ. Համիդյան ջարդերի ժամանակ, պարսկական փափախը գլխին, սուրը մեջքին, որպես հյուպատոս Հյուսեին խանի գավազ, շրջում է վտանգավոր թաղերում և բազմաթիվ հայերի փրկում՝ նրանց տեղավորելով պարսկական հյուպատոսարանում: Ձվարթ բնավորության և նման արարքի համար բոլորը կոչում էին Փափախ Համբարձում: Հետագայում՝ 1914 թ., երբ Պոլսում Դանիել Վարուժանի խնդրանքով Երամյանն իր կյանքի պատմությունն էր հյուսում, մեծ գրողը, լսելով Համբարձում Սարգսյանի նման արարքը, ասում է. «Սքանչելի վէպի մը նիւթ կրնայ կազմել այդ»: Հետո ավելացնում է. «...թէև քու բովանդակ կեանքդ կարելի է արդէն վիպական համարել» (էջ 98):

ռուն՝ պիտի տեսնենք ինչ որ նա չտեսաւ, և Հայ պատմական եկեղեցին ալ Ձեզմով պիտի ողջունէ վերածնութեան և վերանորոգման փառապանծ դարագլուխ մը:

Թոյլ տուէք ուրեմն, Սրբազան Տէր, որ մենք ալ փութանք մեր ջերմաջերմ շնորհաւորումները և խանդավառ հիացումները միացնել Ձեր Ամենապատուութեան շուրջ արտայայտուած ընդհանուր խանդավառութեան:

Որով մնան սրտագին մաղթանօք վասն երջանկափառ արևշատութեան Ձերոյ ամենախոնարհ որդի և ծառայ.

Հիմնադիր տնօրէն Վանայ Հայկական որբանոցի վարժարանի. Հ[ամբարձում] Երամեան»[320]:

Մինչև հոկտեմբեր ամիսը Վանում էր գտնվում Կարինի առաջնորդ տեր Սմբատ եպիս. Սաատեթյանը: Նա և Վանի առաջնորդ Զավեն Տեր-Եղիայանն այցելում են վարժարան. «Գրեթէ ամբողջ կիրակի օր մը արմաշական դպրոցակից այս զոյգը մեզ մօտ անցուց, թողլով իմ մէջ անջնջելի քաղցր յիշատակներ»[321]:

ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1908/1909 ՏԱՐԵՇՐՋԱՆԸ

1908 թ.՝ ընդհանուր զարթոնքի ժամանակ, վարժարանի բյուջեն «300է 500 ոսկիի բարձրացուցինք և ըստ այնմ նախահաշիւ ներկայացուցինք երեսնամեակի մեծափառ հանդէսին մէջ»[322]:

Արդեն տարեվերջին երևան են գալիս առաջին սատարողները. «Ուսուցչաց ամսականներուն և նորանոր պէտքերու յաւելմամբ, մեր պիւտճէի նոր բացը 120 ոսկիի բարձրանալով՝ Պոլսեբնակ թանկագին բարեկամիս՝ Վանեցի Պետրոս Տէր Պօղոսեանի և անոր աջակից Յովհաննէս Սանթուրճեանի միջոցաւ կրկին դիմեցինք Պատրիարքին»: Նրանց շնորհիվ Օրմանյան պատրիարքը բավարարում է Երամյանի խնդրանքը: Այդ ժամանակ Պոլիս էր հասել 1901 թ. որպես ուխտավոր Վան այցելած Բիթլիսի առաջնորդ Եղիշե Չիլինկիրյանը, որն էլ իր դրական վկայություններով զարկ պիտի տար գործընթացին, իսկ «Մասիս» շաբաթաթերթի խմբագիր Տիգրան Արփիարյանը, հիմնվելով Չիլինկիրյանի նպաստավոր տեղեկությունների վրա, հուզիչ կոչ է հրապարակում: Օրմանյանը հանձնաժողով է կազմում Պոլսի պարսկական դեսպանատան պատվակալ թարգմանիչ Գրիգոր խան Շամտանճյանի նախագահությամբ՝ օգնականներ նշանակելով Ազնիվ Տեր-Ահարոնյանին և Պետրոս Տեր-Պողոսյանին, որոնք էլ «120 ոսկիի հանգանակութեամբ մը օգնութեան փութացին մեզ՝ հաւասարակշռելու մեր պիւտճէն»[323]:

1908 թ. հետո վարժարանի բյուջեն «աստիճանաբար մինչև 1200 ոսկիի բարձրացաւ, ինչ որ Վանի համար մեծ գումար մըն էր և ինչ որ չունէր ո՛չ ամերիկեան և ո՛չ ալ ազգային ո և է հաստատութիւն»[324]: 1908-1909 թթ. շրջանը «մեր պարտքն ու պահանջը պիտի հաւասարակշռէր, այսինքն աւելի քան 1000 ոսկւոյ հասոյթ մը բերելով մեզ՝ իբր 100 ոսկւոյ գումար մը ևս պիտի խնայուէր յաջորդ շրջանի համար: Աշակերտաց ծնողները յաւելեալ տարեվճարներով և հաստատութեանս մերձաւոր ու հեռաւոր բարեկամներն առատաձեռն նուիրատուութիւններով փառաւոր պատասխան մը պիտի տային զիս խելագար համարողներուն»[325]:

Որպես անհատական վարժարան՝ «մատչելի կը դառնար ամէն դասակարգի»: Սկզբնական շրջանում տարեկան վարձը կազմում էր 7 արծաթ մեճիտ, վերջին տարիներին՝ մինչև 8 ոսկի: 1908-1915 թվականներին «տարեկան 500-700 ոսկիի հասոյթ մը կը գոյանար թոշակներէ: Պակսածը կը հոգացուէր նըպաստներով և թատերական ներկայացումներով»[326]:

Մինչև 1909 թ. մարտ ամիսը Վանի առաջնորդ Զավեն Տեր-Եղիայանի կողմից փորձ է արվում հիմնել ուսուցչանոց կամ բարձրագույն դասընթաց, քանի որ կար դրա անհրաժեշտությունը, մանավանդ՝ վարժարանը նույնպես շահագրգռված էր դրանում. «Տեսնելով, որ մենք եւս տրամադիր ենք մեր վարժարանի ծրագրին վրայ երկամեայ դասընթացք մը աւելցնել այդ ուղղութեամբ, մասնաւոր գրով յանձնարարեց Պոլիս, Միացեալ Ընկերութեանց Տնօրէն Խուրիուրդին՝ տարեկան նպաստով մը օժանդակել մեզ առ այդ»: Սակայն 1909 թ. մարտի «ռէաքսիոնը» և հոկտեմբերին նրա հրաժարականը «ամլութեան դատապարտեցին իր այդ առաջարկը»[327]:

320 Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ը (այսուհետ՝ ՎՀԵՊ, հմպտ. հատորով և էջով), Մատթէոս Բ Իզմիրլեան, Երեւան, 2001, էջ 175: Հերթական շնորհավորագիրը Հ. Երամյանը Մատթեոս Բ Իզմիրլյան նորընտիր կաթողիկոսին հղում է 1909 թ. փետրվարի 16-ին. «Ի խորոց սրտէ կը մաղթեմ ուրեմն կենդանի ս. Նահատակիդ երկար և բարեյաջող կեանք, իրագործելու և տեսնելու ազգանուէր Վեհ սրտիդ ազգաշէն նպատակները և նուիրական ըղձիցդ կատարեալ լրում» (նշվ. աշխ., էջ 249):

321 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 121: Սմբատ Սաատեթյանը Կարինի առաջնորդն էր 1908-1909 թթ.: Եղերական վախճանն է գտնում 1915 թ.:

322 Նշվ. աշխ., էջ 99: Կազմելով նման նախահաշիվ՝ Երամյանը շեշտում է, թե դա արել է այն դեպքում, երբ գրպանում ընդամենը 5 փարա ուներ, իսկ ուսերին՝ ավելի քան 400 ոսկու պարտք: Հանդեսից հետո նրան են մոտենում նախկին աշակերտներ Մկրտիչ Ջրբաշխյանը (1920-ական թթ. արդեն մահացած էր) և Մարգար Թերզիպաշյանը և ասում. «Եթէ փորձուինք խորհիլ, թէ դուք ձեր հաշուետուութեան մէջ կը ստէք, զրպարտած կը լինինք զձեզ. իսկ եթէ ենթադրենք, թէ դուք յայտնապէս խելագարած էք, որ այդքան պարտքի դիմաց բան մը չունենալով հանդերձ՝ ձեր այնքան նիհար պիւտճէն ևս գրեթէ կը կրկնապատկէք, չգիտենք՝ ապագան մե՞զ, թէ ձեզ իրաւունք պիտի տայ» (էջ 99-100):

323 Նշվ. աշխ., Բ, էջ 27:

324 Նշվ. աշխ., Ա, էջ 152:

325 Նշվ. աշխ., Բ, էջ 100:

326 Նշվ. աշխ., Ա, էջ 151:

327 Նշվ. աշխ., Բ, էջ 119: Այս գործը հետագայում կյանքի է կոչվում՝ շնորհիվ Միացյալ ընկերության: Անդրադառնալով Ա-

1909 թ. Երամյանը Վռամյանի հրավերով ներկա է լինում Դաշնակցականների ակումբում, որտեղ և առաջին անգամ հանդիպում է հուլիսին Վանի կուսակալ նշանակված չերքեզ Պեքիր Սամիին, իսկ Հնչակյանների ակումբում էլ, հակառակ իր ցանկության, Լևոն Կանտսյանը և Փանոս Մարությանը հայտնում են նրա՝ ով լինելը: Խոսելով օրվա խորհրդի մասին՝ Երամյանը տալիս է հետևյալ պատասխանը. «Մենք ալ ձեզի չափ կը սիրենք ու կը գնահատենք նոր ռէժիմը: Մենք մոռցած էինք նաև համիտեան նախճիրները և կը պատրաստուէինք զինուորագրութեամբ մեր ընտրանիի արիւնն ևս նուիրելու հասարակաց հայրենիքին: Բայց գրկախառնութիւններէ և սիրակէզ ճառերէ յետոյ՝ մեր տրիտուրն եղաւ Ատանան իր ահաւոր դրուագներով և շատ տեղեր տակաւին կը հոսի հայ արիւնը և մեր կրօնական ու ընտանեկան սրբութիւնները դեռ անպատիժ կը պղծուին..., ...մինչդեռ հայն է, որ դարերէ ի վեր իր միտքն ու բազուկն ի սպաս կը դնէ օսմանեան պետութեան փառքին ու մեծութեան: Մենք այս բոլոր զոհողութիւնները միամտութեամբ յանձն առած էինք ոչ կրօնակից գահ մը ճանչնալով պաշտպան և խարիսխ մեր եկեղեցւոյ անկախութեան և ազգային գոյութեան»[328]: Լսելով Երամյանի խոսքերը՝ կուսակալն ասում է. «Իրաւունք ունիք» և ավելացնում. «Մենք և դուք սակայն այսուհետև համերաշխութեամբ ջանանք դարմանել անցեալին սխալները»[329]: Երամյանը տալիս է հետևյալ պատասխանը. «Մենք արդէն, մեր հասարակաց հայրենիքը սիրած ենք և պիտի սիրենք անենգ և բոլորանուէր և կը յուսանք որ յետ այսորիկ ձեզպիսի լուսամիտ պաշտօնատարներ, անխտրականութեան ոգւով պիտի գնահատեն հաւատարիմ հայ ազգի զոհաբերութիւնները և կարողութիւնները»[330]: Ի դեպ, Պեքիր Սամի բեյը, վերոնշյալ ակումբներում լսելով Երամյանի կարծիքը հայ և թուրք բարեկամության, Սահմանադրության և այլ հարցերի վերաբերյալ, այսպես է արտահայտվել. «Ես կը շնորհաւորեմ զձեզ, որ այսպիսի մարդիկ ունիք ձեր մէջ և շատ ուրախ եմ, որ այսպիսիններու հետ գործ պիտի ունենամ»[331]:

1909 թ. սեպտեմբերին Սամի բեյն իր ներկայությամբ պատվում է տարեմուտի հանդեսը, որտեղ էր նաև Վանում գտնվող պատգամավոր Վահան Փափազյանը[332]: Նույն թվականին կուսակալի կարծիքի և գնահատականների հիման վրա Կրթական գործոց նախարարությունը որոշում է ուսուցչապետին պարգևատրել «Ուսմանց և արուեստից նորահաստատ կարգի երրորդ աստիճանի պատուանշանով», որը նա պիտի ստանար միայն երկուսուկես տարի հետո[333]:

1909 թ. սեպտեմբերի 23-ին Մատթեոս Բ Իզմիրլյան կաթողիկոսին հղած նամակով Համբարձում Երամյանն առաջարկում էր միջնորդել եկեղեցական հոգաբարձությունների առջև՝ վարժարանին նյութական օգնություն ցույց տալու համար. «Բռնակալութեան ամբողջ շրջանին իմ իսկ հիմնարկած դպրոց մը վարեցի Վանայ պէս տեղ մը և այսօր ազատութեան շրջանին արդէն երեսուներկուերորդ դպրոցական տարին սկսած եմ ինն դասարանի համար տասներկու անձերէ բաղկացեալ ընդհանուր ուսուցչական խմբով մը և մօտ հարիւր լիրայի պիտճէ:

Ամբողջ երեսունմէկ տարի մեր հաստատութիւնը պատուար մը հանդիսացած է օտար կրթութեան և մարդորսութեան դէմ և աւելի քան քսան տարիներէ ի վեր իբրև Վասպուրականի բարձրագոյն վարժարան՝ արձակած է իւր ծոցէն հարիւրաւոր թերաւարտներէ զատ հարիւր տասէ աւելի շրջանաւարտ, որք իբրև ուսուցիչ, փաստաբան, գրագէտ, արհեստաւոր, վաճառական, սեղանաւոր և այլն, կարևոր տեղեր գրաւած են Վանայ և շրջակայից մէջ և այս տարեկան միջին հաշուով երկու հարիւր աշակերտի համար երկու հարիւր լիրայի ծախքով ընդ սմին երեսուն տարուայ համար վեց հազար ոսկիէն նուազ գումարով մը: Դպրոցի միակ հաստատուն աղբիւրն եղած է տարեվճարը աշակերտաց, որոց մէկ-երրորդը եղած է միշտ ձրի, ինչպէս ներկայ երեսուներկուերորդ շրջանի երկու հարիւր վաթսուն աշակերտաց վաթսունէ աւելին անվճար, ոմանք դպրոցէն ընդունելով նաև գրենական պիտոյք և հարիւրէ աւելին մէկ, երկու կամ երեք մէճիտ տուող են իբրև տարեթոշակ:

Ծրագիրը կը պահանջէ տասն տարի, և աւարտողները կարողացած են ցարդ ընդունիլ Գէորգեան ճեմարանի հինգերորդ, վեցերորդ դասարաններ, Պոլսոյ իրաւաբանական դպրոց, Պեյրութի բժշկական համալսարան և այլն: Դպրոցն ըստ կարելւոյն յաջողած է ունենալ մատենադարան մը հայերէն,

---

րարատյան ծրագրին՝ առաջադրվում է Վանում ստեղծել նոր վարժապետանոց: Պաշտոնը հանձնվում է վանեցի պրոֆեսոր Հովհաննես Հակոբյանին: Որոշվում է Պոլսից անցնել Եգիպտոս, բանակցել Բարեգործական հիմնադիր Պողոս Նուբար փաշայի և Կենտրոնական վարչության ժողովի հետ: Նրանք համաձայնում են անդրանիկ դասարանի կազմության համար հատկացնել 600 ոսկի և հետագայում բազմապատկել այդ գումարն ավելացող դասարանների շնորհիվ: 1911 թ. սեպտեմբերին Վան է վերադառնում Հովսեփ Գույումճյանը՝ որպես Վարժապետանոցի տեսուչ և տարբեր վարժարաններից իրեն դիմած մի քանի տասնյակ աշակերտներից ընտրելով 24 հոգու՝ կազմում է առաջին դասարանը «երկրորդական վարժարանի մը հիման վրայ այնպիսի ծրագրով մը, որ երկու տարիով միայն բարձր պիտի ըլլար մերինէն: Ինչպէս երբեմն Փորթուգալեան, նոյնպէս և իր կարգին Գույումճեան կը վկայէր, որ մեր վարժարանէն Վարժապետանոց ընդունուող աշակերտներն են քան զամէն լաւագոյնս պատրաստուածները»: Ահա այս ձևով է իրականացվում Վանի առաջնորդ Զավեն Տեր-Եղիայանի՝ մեկ տարի առաջ արված առաջարկությունը (էջ 120):

328 Նշվ. աշխ., Բ, էջ 130:

329 Նույն տեղում:

330 Նշվ. աշխ., էջ 130-131:

331 Նշվ. աշխ., Բ, էջ 131:

332 Նույն տեղում:

333 Նշվ. աշխ., էջ 132:

թուրքերէն և ֆրանսերէն գրքերու, երեք լեզուով քարտէզներ, բնագիտական գործիքներ, գիտական պատկերներ և այլն, և իւր կազմակերպութեամբ ու կանոնաւորութեամբ խթան հանդիսացած է տեղւոյս ազգային թէ օտար բոլոր հաստատութեանց: Բարեբախտաբար կը համարիմ յիշել նաև որ վարժարանս իւր երկարատև գոյութեան մէջ միշտ զերծ մնալով կուսակցութեանց ազդեցութիւնէն և անտեղի ոտնձգութիւններէն, և վերջերս ալ նոր սերնդական ծանօթ շարժումներէն ու շփոթութիւններէն արժանացած է լուրջ դասակարգի և օտարաց համարման և վստահութեան:

Սակայն թոյլ տուէք ինձ յայտնել, որ հակառակ այս ամենուն, Վանայ հասարակութիւնը սոսկ թոշակներով չկրնար պահպանելու սոյն կրթարանը, և մենք մեր ուսերուն վրայ ծանրացող աւելի քան չորս հարիւր լիրայ պարտքի բեռէն հազիւ թեթևցանք եգիպտահայ Ազնուաշուք Պետրոս էֆ. Կարապետեանի երեք ամիս առաջ ղրկած գումարով՝ որով և ի վարձ մեր քսանհինգամեայ ծառայութեան, մեր աշակերտաց և բարեկամաց նուիրատուութեամբ հինգ տարի առաջ կառուցուած դպրոցի շէնքը վագրֆ ըրինք Յանկոյսներ թաղի եկեղեցիին վրայ, ըստ պահանջման վերոյիշեալ բարերարին:

Մեր ազգի դժբախտութիւններէն մեր բոլոր կրթական և բարեգործական հաստատութիւնները կապրին Բարերարներու նպաստներով և ժողովրդի նուէրներով, որով և մեր վարժարանն ալ կը պարտաւորուի այսօր դիմել Ձեր Վեհափառութեան՝ խնդրելով որ շնորհի բերեք Ձեր Հայրական բարձր Հովանին իւր վրայ ալ տարածել և ռուսահայ կրթասէր բարերարներու և ընկերութեանց և կամ Պետրսպուրկի ու Մոսկուայի եկեղեցական հոգաբարձութեանց միջոցաւ տարեկան գէթ երկու հազար ռուբլիի հաստատուն եկամուտ մ'ապահովել սոյն հաստատութեան»[334]:

1909 թ. հոկտեմբերին Վանի ուսումնական խորհուրդը ձգտում է իր իրավասությունը տարածել նաև Երամյան վարժարանի վրա: Սակայն թե՛ առաջնորդը և թե՛ ընդհանուր տեսուչ Սարգիս Բարսեղյանը «ընդհակառակը խրատեցին զայն հրաժարիլ այդ գաղափարէն, միաձայն յայտարարելով թէ Երամեան վարժարանի կազմակերպութենէն և բարեկարգ ընթացքէն թէ՛ Ուսումն. Խորհուրդը և թէ՛ ծխական վարժարանները շատ բան ունէին սորվելիք»[335]: Վանի առաջնորդ Զավեն Տեր-Եղիայանի և նրանից մի քանի տարի հետո պաշտոնավարած Հովսեփ եպիսկոպոս Սարաճյանի օրոք ևս ուսումնական խորհուրդը, «փորձելով վերահսկողութեան իրաւունք մը ունենալ մեր դպրոցի վրայ», մերժվում է՝ ստանալով երկու առաջնորդներից էլ հետևյալ պատասխանը. «Դուք Երամեանին մի՛ դպչիք, ընդհակառակն ձեր իրաւասութեան ենթարկուած ծխականները թո՛ղ ջանան անոր օրինակէն օգտուիլ»[336]:

Համաձայն ժամանակի մամուլի վկայակոչման՝ 1909 թ. Վանի կրթական հաստատությունների շարքում վարժարանը զբաղեցնում էր առաջին տեղը. «Վան քաղաքում, բացի մի քանի տարրական դպրոցներից, որոնց թիւը հետզհետէ աճում է, կան 2 միջնակարգ դպրոցներ, Երամեան վարժարան, որը այս տարի ԼԲ տարեշրջանը թևակոխեց և Վանի Կենդրոնական Վարժարանը: Համեմատաբար Երամեան դպրոցը աւելի բարեկարգ վիճակ ունի»[337]: Ողջ հանրության և հատկապես կրթական ոլորտի գործիչների կողմից գնահատված և բարձր համարում ունեցող վարժարանը, ըստ էության, այդ վարկանիշը պահպանում է մինչև Մեծ եղեռնը:

ՎԱՐԺԱՐԱՆԸ 1910 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎ ԵՐԱՄՅԱՆԻ ՋԱՆՔԵՐՈՎ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԻՄՆՈՒՄԸ ՎԱՆՈՒՄ

Դաշնակցությունից հետո 1910 թ. մարտին Հընչակյան կուսակցությունը նույնպես Իթթիհատական կառավարության կողմից օրինական է ճանաչվում: Դրանից հետո բազմաթիվ մարդիկ ցանկանում էին ազգօգուտ աշխատանք կատարել՝ առանց որևէ կուսակցության անդամակցելու:

Հ. Երամյանը նախաձեռնում և որոշում է Վանում հիմնել Հայ բարեգործական ընկերության մասնաճյուղ. «Ուրեմն, իսկոյն յարեցի, մենք ալ Եգիպտոսի Հայ Բարեգործականին մասնաճիւղ մը կազմենք, ինչ որ քանիցս թելադրած էր ինձ Եգիպտոսէն՝ անդրանիկ զաւակս Վարդան»[338], ուստի և 1910 թ. մայիսին Մեսրոպ ծ. վ. Ճանիկյանի հրավերով առաջնորդարանում գումարված ժողովում դրվում է Վանի մասնաճյուղի հիմքը: Վարչական ժողովի ատենապետ է ընտրվում Պետրոս Գափամաճյանը, որը միաժամանակ վարում էր նաև Վարագի հոգաբարձության ատենապետի և Վանի քաղաքապետի պաշտոնները[339]:

334 ՎՀԵՊ, գիրք Ը, էջ 427-428:

335 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 118:

336 Նշվ. աշխ., Ա, էջ 166:

337 «Նոր Դպրոց», 1909, № 10, էջ 90:

338 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 144:

339 Նույն տեղում: Ի դեպ, հազիվ մի քանի ամիս անց՝ տարեվերջին, Վանում հիմնվում է Բարեգործական ընկերության Վարժապետանոցը: Դեռ տարին չբոլորած՝ նորընտիր առաջնորդ Հովսեփ եպիսկոպոս Սարաճյանի նախագահությամբ 1911 թ. մայիսին Վարժապետանոցի համար սեփական շենք կառուցելու նպատակով Պետրոս Գափամաճյանի և մյուս անդամների ջանքերով հավաքվում է 700 ոսկի: Այգեստանի արևելյան կողմում գնվում է մի հողատարածք: Շինարարությունն ավարտվում է 1912 թ. աշնանը: Վարժարանի կահավորման գործը շարունակում է որդին՝ Սեթը: 1912 թ. դեկտեմբերի վերջերին Պետրոս Գափամաճյանը զոհ է գնում դավադիր գնդակից. «...կ'անհետանար դէմք մը, որ գրեթէ 70 տարեկան հասակին մէջ երիտասարդական աշխուժով մը կը վարէր ո՛չ միայն Բարեգործականի մասնաճիւղին և Վարա-

1910 թ. օգոստոսի 15-ին «Երամեան վարժարանը սկսել է արդէն իր նոր տարեշրջանը, ...մի հանդէսով վերաբանալով դպրոցը: ...վարժարանի այս հանդէսները մի առանձին բաւականութիւն են պատճառում դպրոցասէր հասարակութեան, որովհետև աչազուրկ մի մարդ իր առանձին ոյժերով 33 տարուց ի վեր վարում է մի հաստատութիւն, որ շատ օգտակար դեր է ունեցել, ամբողջ մի սերունդ պատրաստելով գրեթէ ու տալով հասարակութեան բազմաթիւ լուրջ ու կարևոր անդամներ, որոնք ուտօքիաների ետնից չեն գնում: Երամեանը լուրջ, իրական կրթութիւն է տալիս, պատրաստելով մարդիկ կեանքի իրական պայքարի համար, և ոչ թէ վերացական վարդապետութիւններով և սնամէջ գաղափարներով օժտվածներ, որոնք շատ անգամ անպէտք են լինում իրական կեանքի համար: Երամեան վարժարանի այդ հանդէսին ներկայ էին հանդիսատեսների մեծ բազմութիւն, վալի Բէքիր բէյ, ռուսաց հիւպատոսը, զինուորական ու քաղաքացիական պաշտօնեաներ և այլն: Դպրոցը ունէր այս տարի ութն ընթացաւարտ աշակերտներ, որոնցից մի քանիսը կարդացին աւարտական թէզեր հայերէն, թուրքերէն ու ֆրանսերէն...: Ուսուցիչներից մէկը կարդաց դպրոցի տարեկան տեղեկագիրը, իսկ ուսումնարանի տնօրէն Համբարձում Երամեանը երկար խօսեց, տալով բացատրութիւններ կարդացած տեղեկագրի մասին և պարզելով իր հաւատը ապագայի և յոյսը իր գործի շարունակութեան մասին:

Երամեան դպրոցը ունի նախնական ու միջնակարգ կրթութեան բաժիններ, տասն տարուայ շրջանով: Անցեալ տարի ունեցել է 250-ի մօտ աշակերտներ և 4000 ռուբլու բիւջէ, որից 2200-ը գոյացել է թոշակներից, 1000-ը՝ թատերական ներկայացումներից և ուրիշ պատահական աղբիւրներից, իսկ 800 ռ. պարտք է մնացել: Իսկ ներկայ տարեշրջանում դպրոցը սկսվել է 5000 ռ. բիւջէով, որ պիտի փակվի միմիայն աշակերտների թոշակներով, որովհետև դպրոցը ուրիշ եկամուտներից զուրկ է և այդ պատճառով էլ ձրիավարժ աշակերտների թիւը քիչ է, հազիւ 30-35, որը նշանակում է, թէ աղքատ ծնողների զաւակները զուրկ են մնալու միջնակարգ կրթութիւնից: Իրաւ է, որ Կենտրօնական վարժարանը լրացնում է այդ թերին, բայց հենց այդ պատճառով էլ Երամեանը արիստոկրատների դպրոց լինելու հանգամանքն է ստանում, մի բան, որ երբէք ցանկալի չէ...: Սրանում մեղաւոր չէ երբէք վարժարանը կամ նրա տնօրէնը, որովհետև հասարակութիւնը միջոց չէ տուել նրան աւելի ձրիավարժ սաներ ընդունելու. որչափ իմանում ենք, Բօստոնի ու Նոր-Նախիջևանի հայրենակիցները միայն մէկ սան պահում են այս կրթարանում, ուրիշ հինգ սաներ էլ պահվում են ռուսահայ հանգուցեալ Պօպօվի կտակած 1000 ռուբլու տարեկան տոկոսովը: Երամեանի գործը արժանի է քաջալերութեան և ցանկալի է, որ գտնվէին բարերարներ, որոնք յօժարէին հաստատուն կտակներով ապահովել դպրոցի յարատևութիւնը: 33 տարուց ի վեր մի մարդու անհատական ջանքերով շարունակված և ազգին այնչափ օգուտներ տուած մի հաստատութիւն, որպէս է Երամեան վարժարանը, արժանի է լաւագոյն բաղդի»[340]:

1910-1911 թթ. Վան այցելած և Երամյան վարժարանում հյուրընկալված Առաջին քննիչ հանձնաժողովի անդամներից Բիթլիսի կուսակալ Իսմայիլ Հագգը բեյը Երամյանին նմանեցրել էր «ժէօն թուրքերու Սելանիկցի մէկ դաստիարակին, որ բազմաթիւ սերունդներ հասցուած է եղեր»[341]:

Սկսած 1910 թ.-ից՝ բոլոր վարժարաններում զգալի բարեփոխումներ էին կատարվում[342]:

Ռուս փոխհյուպատոս Սերգեյ Պետրովիչ Օլֆերիևի առաջարկով (Սահմանադրությունից հետո անարգել էին դարձել դեպի Կովկաս տանող ճանապարհները, Վանի առևտուրը Ռուսաստանի հետ ավելի էր զարգացել, և ռուսերենի իմացությունը կարևոր էր դարձել) վարժարանում ցանկանում են ավելացնել նաև ռուսերենի դասաժամեր, որի համար արտաքին գործոց նախարարության բյուջեից տարեկան հատկացվում է 1000 ռուբլի[343]: Այդ ամենից հետո կրթական հայտագրում 1910-1911 ուստարում ավելանում է նաև ռուսերենը[344]:

ՎԱՐԺԱՐԱՆԸ 1911 Թ. ԵՎ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ՝ ԵՐԱՄՅԱՆԻՆ ՎԱՐԿԱԲԵԿԵԼՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՃԻԳԵՐԸ

1910-1911 թվականներին «դպրոցական օրերու գումարն է 223, իսկ աւանդական դասերու գումարը 8927: Տեղի ունեցած են 40 ուսուցչական ժողով, 15 փորձնական դաս: Մուտքն եղած է 70,938 ղրշ., ելք

գայ հոգաբարձութեան ատենապետի կրկնակ պաշտօնները, այլև Վանի քաղաքապետութիւնը, որուն նախագահն էր քանի մը տարիներէ ի վեր» (նշվ. աշխ., Բ, էջ 144-145): Գևորգ և Փանոս եղբայրների հետ հիմնադրել էր նաև առևտրական մի ընկերություն: Գափամաճյանի թերությունը, ըստ Երամյանի և նրա եղբոր՝ Փանոսի կարծիքով, ցուցամոլությունն էր: Ուներ 1 որդի՝ Սեթը (մահացել է Կ.Պոլսում 1923 թ.) և 4 ամուսնացած աղջիկներ, որոնք, ինչպես վանեցիներն են ասում, «այլոց ճրագը վառելու գացած են»: Եղբայրը՝ Գևորգը, ուներ 2 աղջիկ, իսկ Փանոսն անզավակ էր: Ահա այս ձևով մարում է Գափամաճյան գերդաստանը, որը կես դար Վանում կարևոր տեղ էր գրավում (էջ 145-146):

340 **Մտրակ** /Երվանդ Հովհաննիսյան/, Արձագանքներ Թիւրքահայաստանից, «Մշակ», 1910, № 209, 23 սեպտեմբերի, էջ 1:

341 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 139:

342 Նշվ. աշխ., էջ 136:

343 Նշվ. աշխ., էջ 134: Մինչ այդ Երամյանը խորհուրդ է հարցնում մեարիֆ մյուդիրից և կուսակալ Պեքիր Սամի բեյից: Առաջինը դժգոհում է, իսկ վերջինն իր ազատամտությամբ միայն ողջունում է նման քայլը՝ ասելով. «Ընդհակառակը, ուշ մնացած էք, քանի որ դուք վանեցիներդ անմիջական դրացնութեամբ և օրըստօրէ զարգացող առեւտուրով այնչափ սերտիւ կապուած էք Կովկասի հետ» (նույն տեղում):

344 **Մտրակ**, նշվ. հոդվ., «Մշակ», 1911, № 206, 22 սեպտեմբերի, էջ 2:

նոյնչափ»[345]: Ի դեպ, նշյալ ուստարում վարժարանն ուներ 302 աշակերտ[346]:

1911 թ. հունիսի 5-ին՝ երեսփոխանական ժողովի ժամանակ, առաջնորդարանի գրագիրը, ի թիվս ներհայկական մի շարք քննարկելիք խնդիրների (ամուսնալուծություն, նորսերնդական հոսանք, հողային հարց, քուրդ բռնակալներ, սպանություններ, օժանդակ մարմիններ, թաղական խորհուրդներ, թեմերի կառավարություն, Սալնապատի որբանոց, Վարագի և անապատների խնդիր, առաջնորդական խնդիր, նպաստից գումարներ, Կիլիկյան աղետ, եկեղեցիների շինություն, Հայկավանքի գերեզմանատուն, Սրվանձտյանի կտակ, Ազգ. պանդոկը շուկայի վերածելու խնդիր, Վարժապետանոց և այլն), նշում է նաև Երամյան վարժարանի մասին[347]:

Ուսումնական տարեշրջանի բացման և ընթացավարտների հանդեսը տեղի է ունենում 1911 թ. օգոստոսին. «Ամսուս 14-ին Երամեան դպրոցի 34-րդ շրջանի բացման եւ 20-րդ կարգի ընթարցաւարտներու վկայականներու բաշխման հանդէսը կատարուեցաւ»[348]:

Նույն թվականի օգոստոսին վկայվել է՝ Վանի 21 զանազան դպրոցների թվում Երամյան վարժարանը միակն էր, որ շարունակաբար հրապարակում էր իր տարեկան տեղեկագիրը. «Քաղաքի ու Այգեստանի մէջ կան 21 դպրոցներ, որոնցմէ 12-ը արական են եւ 9-ը իգական: Այդ 21 դպրոցներէն 11-ը ազգ. իշխանութեան տակ կը գտնուին, 2-ը անհատական են (Երամեան ու Գօնդակչեան), իսկ 8-ը անկախ հաստատութիւններու կը պատկանեն, որոնք ունեն ուրոյն ծրագիրը-կանոնագիրը: Ձեռքի տակ չունենք այս վերջիններու տեղեկագիրը, որով կարողանայինք ճշգրիտ պատկերը տալ նոցա դպրոցներուն: Այս կողմէն միայն օրինակելի է Երամեան դպրոցը, որը ամէն տարի կը հրատարակէ իւր դպրոցի տեղեկագիրը»[349]: Հենց այդ տեղեկագրից պարզվում է, որ «...դպրոցը ուսումն. տարեայ մէջ ունէր 9 դասարաններ 304 աշակերտներով (32 ձրիավարժ) եւ 14 ուսուցիչներ. մուտք ունեցած է 57499 ղրշ. իսկ ելքը՝ 70, 938 ղրշ, ուրեմն 13439 ղրշ. բաց: Մուտքի մեծ մասը կազմված է թոշակներէ (մօտ 40,000 ղրշ) եւ ստացած նուէրներէ, օրինակ 100 լ. Կովկասէն Ե. Լալաեանի միջոցով: Ուսումն. տարեայ մէջ 83 աշակերտներ, քննութիւններու համար դասադուլ ըրած են, որոնք յետոյ ստիպած են եղեր դպրոց յաճախել: Ուսուցչական խումբը վերջապէս համաձայնելով, ձեռք քաշած է հրապարակային քննութիւններէ: Այս տարի դպրոց ունէր 16 շրջանաւարտներ: Յառաջիկայ ուսումն. տարեայ համար ուսուցչական խումբը կազմած է արդէն եւ պիտճէն որոշած է 750 լ., որու 400 լ. թոշակներ պիտի լինեն, իսկ մնացորդը պիտի հոգացուի կողմնակի միջոցներով...»[350]:

Հայտնի է, որ 1911 թ. նոյեմբերին կրթական նախարարության՝ մասնավոր վարժարաններին տրամադրված 100 ոսկուց «60 ոսկի տրուած է Երամեան վարժարանին»[351]: Ինչ վերաբերում է ուսուցչակազմին, ապա 1910/11 ուստարում նրանք 14-ն էին. «Մնայուն ուսուցիչներն եղած են 12, այցելու 2»[352]:

Երամյանի գաղափարական այն բոլոր հակառակորդները, ովքեր ջանում էին ուսուցչապետին թեկուզ մասնակիորեն իրենց ազդեցության տակ առնել՝ զանազան միջոցներ գործադրելով (բանակցություններ, սպառնալիքներ, զրպարտություններ, այսպես կոչված «նորսերնդական շարժում» և այլն), ի վերջո, հուսախաբ են լիում:

Մյուս կողմից Վանում հաստատված դաշնակցական գործիչները շատ լավ էին հասկանում մի բան. Երամյանն այն աստիճան էր սիրված, ճանաչված ու հարգված հասարակության կողմից, որ Գրիգոր Աճեմյանի նման նրան ևս ֆիզիկապես վերացնելն անվերապահորեն իրենց նկատմամբ ավելի հակակրանք (գուցե և համավասպուրականյան), քան համակրանք կառաջացներ: Կշռելով այդ ամենը և ակնհայտորեն առաջնորդվելով սոսկ կուսակցական շահերով՝ դաշնակցականները Երամյանի դեմ իրենց կույր պայքարի շարունակության համար ընտրում են լավ քողարկված, սակայն, ըստ էության, առավել նողկալի նոր գործելաոճ: Օգտագործելով կուսակցական մամուլի քարոզչական բոլոր հնարավորությունները՝ սկսում են Վանում լույս տեսնող «Աշխատանք» պարբերականի էջերը լցնել մեկը մյուսին հաջորդող այնպիսի հրապարակումներով, որոնցով իբր բացահայտում էին վարժարանում առկա անհարկի խստությունները, գործող կրթական ծրագրերի՝ իբր վաղուց սպառած ու հնացած մեթոդներով գործադրումը, ամենամյա քննությունների

345 «Կոչնակ», 1912, № 6, 10 փետրվարի, էջ 152:

346 **Մտրակ**, նշվ. հոդվ., «Մշակ», 1911, № 206, էջ 2:

347 **Աշխատակից**, Մեր երեսփոխանական ժողովը, «Աշխատանք», 1911, № 20, 12 յունիսի, էջ 3-6:

348 **Իրազեկ**, նշվ. հոդվ., «Աշխատանք», 1911, № 29, 20 օգոստոսի, էջ 7-8: Ի դեպ, թղթակիցն առիթը բաց չի թողնում նաև հեգնելու ուսուցչապետին. «Երկու կէս ժամ տեւող այս հանդէսը, եթէ երբէք ուրախալի մի կողմ ունէր, դա հաշուետուութիւնն է, այլապես ոչ աշակերտներու հայերէն, թիւրքերէն եւ ֆրանսերէն ճառերը եւ ոչ ալ պ. Երամեանի, տիեզերքի ծնունդէն սկսող ու իրմով վերջացող բանախօսութիւնը ոչինչ արդիւնուին» (էջ 8):

349 **Մարս**, Մէկ տարեայ տեղեկագիր, «Աշխատանք», 1911, № 29, 20 օգոստոսի, էջ 5:

350 **Իրազեկ**, նշվ. հոդվ., «Աշխատանք», 1911, № 29, էջ 8:

351 «Կոչնակ», 1911, № 49, 9 դեկտեմբերի, էջ 1193:

352 «Կոչնակ», 1912, № 6, 10 փետրվարի, էջ 152: Ի դեպ, 1911-1912 ուստարում վարժարանն ուներ «...700 լիր. պիտճէ, 350 աշակերտ, 11 ուսուցիչ եւ երկու ուսուցչուհի...» (**Ա.**, Անցնող ուսումն. տարեշրջանը, «Աշխատանք», 1913, № 37 (133), 27 յուլիսի, էջ 3): Մեկ այլ տվյալով՝ ուսումնական նույն տարեշրջանում Երամյան «տարրական, միջնակարգ և բարձրագոյն անհատական վարժարանն ալ ունի 340 աշակերտ, 8 աշակերտուհի, 10 ուսուցիչ և 3 ուսուցչուհի» (**Շահպազեան Յ.**, Վան քաղաքի կրթական պատկերը (1911-1912), «Ազատամարտ», 1912, № 991, 4/17 սեպտեմբերի, էջ 1):

անտեղի լինելը, ուսուցչական կազմի մեծ մասի՝ իբր իրենց կոչմանն անհամապատասխանությունը և այլն: Այդ բոլորի հիմքով էլ սկսում են հնչեցնել դասադուլի կոչեր, որոնք իբր ծագել էին «...Երամեան դպրոցի խիստ կարգերէն...»[353]:

Բացառապես ծածկանունների ներքո հանդես եկող թերթի որոշ թղթակիցներ, ովքեր ընդհանրապես ի վիճակի չէին ընկալելու և գնահատելու միայն անսահման նվիրումի և աննկուն կամքի շնորհիվ ավելի քան երեք տասնամյակ Վանում կրթօջախ ապրեցրած մարդու վաստակը, իրենց հրապարակումներում ուսուցչապետի հասցեին սկսում են թույլ տալ ամեն տեսակ հեգնական և վիրավորական արտահայտություններ (օրինակ՝ «...իսկ Երամեանին բան մը չ'է կարելի ըսել, որովհետեւ նա խորհուրդի, նոր առաջարկներու, կամ մանկավարժական նոր ծանօթութիւններու պէտք ալ չունի»[354]):

Երամյանի մանկավարժական գործունեությունը բարձր է գնահատվել նաև թուրքական իշխանությունների կողմից. «Կրթական նախարարութիւնը գնահատելով Վանայ մէջ բազմաշխատ Համբարձում էֆ. Երամեանի միջնակարգ կրթութեան մատուցած ծառայութիւնները, նախորդ կուսակալ Պէքիր Սամի պէյի միջնորդութեամբ բարեհաճած է Կրթական շքանշանով գնահատել անոր անձնուէր ծառայութիւններն և տարեկան 100 ոսկի նպաստ յատկացնել անոր վարած Երամեան բարձր. վարժարանին: Շատ ի դէպ էր Կրթական նախարարութեան սոյն նպաստը վարժարանի պիւտժէին, որ այս տարի կազմուած է 300 ոսկի բացով»[355]:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՐԱՄՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

Սկսած 1880 թ.-ից[356՝] թատերական ներկայացումները, որպիսիք, կարելի է ասել, Երամյան վարժարանի տարեգրության անբաժան մասն էին կազմում, բացի դպրոցի մշակութային կյանքն աշխուժացնելուց և ուսումնառության գործընթացին թարմություն հաղորդելուց, նպատակ ունեին նաև փոքր-ինչ մեղմելու կրթօջախի նյութական կարիքները: Այս մասին վկայել է նաև ժամանակի մամուլը. «Երամեանը իր դպրոցների օգտին ներկայացումներ է տալիս», վերջինը՝ Մուրացանի «Ռուզան»-ը[357]:

Հատկանշական է, որ վարժարանում ներկայացումներ էին բեմադրվում ոչ միայն սեփական ուժերով, այլև տեղ էր տրվում հյուրախաղերով Վան այցելող թատերական դրսեկ խմբերին:

Վերջիններից արժանահիշատակ է, օրինակ, Հովհ. Զարիֆյանի[358] խումբը. «Վանի հայ հասարակութեան համար իսկական վայելք մըն են այն ներկայացումները՝ զորս Զարիֆեան պատուական խումբը սկսած է տալ Երամեան վարժարանի սրահին մէջ. այդ թատերաբեմն իսկ, որ սովորաբար անշուք եւ անհրապոյր էր, շնորհիւ Զարիֆեանի արուեստ կը բուրէ»: Առաջին ներկայացումը՝ «Ոճրագործի ընտանիքը», հունիսի 25-ին էր, երկրորդը՝ «Շերլոկ Հոլմս»-ը՝ 29-ին[359]: Այնուհետև բեմադրվում են «Տրիլբի»-ն, «Թանկագին համբույր»-ը և «Մարվող ճրագներ»-ը[360]:

Հայտնի է, որ 1911 թ. հուլիսի 2-ին Զարիֆյանի խումբը ներկայացնում է Կարլ Գուցկովի «Ուրիել-Ակոստա»-ն, որն անմահ Պետրոս Ադամյանի՝ այնքան «թանկագին զաւակներէն մէկն էր», և Խ. Աբովյանի «Քաջն Աղասի»-ն[361]:

1911 թ. հուլիսի 24-ին նշվել է, որ «Անցեալ շաբթու Զարիֆեան խումբը ներկայացուց Շիլլէրի «Սէր ու խարդաւանանք» և «Աւազակները» և Ե. Գօրգինի «Միրզա-Էֆրօգը»[362], իսկ վանեցի մի խումբ մտավորականներ մինչև հուլիսի 31-ը, «հացկերոյթ տուին Զարիֆեանի դերախումբին, եւ նուիրեցաւ արծաթեայ պսակ մը»[363]: 1912 թ. ընթացքում Զարիֆյանի խումբը ևս 13 թատերական ներկայացումներ է տալիս վարժարանում[364]:

---

353 Ազգ. մարմիններն ու մեր դպրոցները, «Աշխատանք», 1911, № 22, 3 յուլիսի, էջ 1-3: Տե՛ս նաև **Բիրամօ**, Դպրոցական կեանքէն, «Աշխատանք», 1911, № 19, 5 յունիսի, էջ 10: «Աշխատանք», 1911, № 19, 5 յուն., էջ 15: **Մարս**, Հին ցաւ եւ վտանգաւոր դարման, «Աշխատանք», 1911, № 20, 12 յունիսի, էջ 6-8:

354 **Ս-օ**, Մեր ծխական դպրոցները, «Աշխատանք», 1911, № 27, 7 օգոստոսի, էջ 4-6:

355 **Ս. Ն.**, Գաւառի կեանքը, «Բիզանդիոն», 1911, № 4341, 21 յունուար/3փետր., էջ 1: Տե՛ս նաև «Բիւզանդիոն», 1911, № 4459, 14/27 յունիսի, էջ 3 («Թուրք թղթակիցը մեծ գովեստով կիսօսի Երամեան էֆ.-ի վրա, և կըսէ, թէ որքա՛ն ալ նպաստ տրուի անոր, քիչ է»):

356 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 133-134: Տե՛ս նաև **W. X.**, Կրթական գործը Վանի մէջ, «Արաքս» [Բոստոն], 1906, № 28, 12 մայիսի, էջ 223: «Արաքս», 1906, № 20, 17 մարտի, էջ 157:

357 «Նոր Դպրոց», 1910, № 3, էջ 88: Տե՛ս նաև **Մտրակ**, թղթակց., «Մշակ», 1910, № 36, 17 փետրվարի, էջ 3: Ի դեպ, վարժարանի նյութական կացությունը հոգալու նպատակով 1909 թ. հունվարի 17-ին Հ. Երամյանը «...տուաւ «Արշակ Բ» թատերգութիւնը: Երիտասարդ ուսանողութեան գիտակից մէկ մասը նախապէս գիտնալով, թէ ինչ հետեւանք կունենայ եղբայրութեան այսպիսի օրերու մէջ այդ տեսակ ներկայացում մը՝ երեք շաբաթ առաջ երկար բացատրութիւններով բոյքօտ յայտարարած էր այդ թատրոնին դէմ» («Ռազմիկ», 1909, № 321, 14 փետրուարի, էջ 3):

358 Հովհաննես Զարիֆյան (23.03.1879, Ալեքսանդրապոլ-09.07.1937, Բոստոն)՝ հայ դերասան, թատերական գործիչ:

359 **Ֆիմի**, Գեղարուեստական, «Աշխատանք», 1911, № 22, 3 յուլիսի, էջ 13-14: Տե՛ս նաև «Մշակ», 1911, № 153, 17 յուլիսի, էջ 3:

360 **Ֆիմի**, Թատերական, «Աշխատանք», 1911, № 23, 10 յուլիսի, էջ 6:

361 Նշվ. հոդվ., «Աշխատանք», 1911, № 24, 17 յուլիսի, էջ 8-9:

362 «Աշխատանք», 1911, № 25, 24 յուլիսի, էջ 15:

363 «Աշխատանք», 1911, № 26, 31 յուլիսի, էջ 14: Ի դեպ, 1911 թ. Հ. Երամյանը մասնակցում է հնագիտական ուսումնասիրություններ կատարելու նպատակով Վան այցելած Թիֆլիսի Ազգագրական ընկերության հիմնադիր-վարիչ Երվանդ Լալայանի պատվին կազմակերպված խնջույքին, որին մասնակցել է նաև ռուս հյուպատոս Օլֆերիեֆը (**Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 137):

364 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 32:

Առանձնապես տպավորիչ են եղել 1913 թ. ներկայացումները. «Երամեանի այս նոր-տարուայ հանդիսին, ի դէպ ըսենք որ, աշակերտները խաղցին երեք փոքր մանկական պիէսներ, կատարեալ յաջողութեամբ»[365], որոնց առանձնահատուկ գրավչություն է տվել համերգային մասը. «...Երամեանի այս տարուայ երաժիշտ ուսուցիչ պ. Խոսրով Փախչանեանի[366] կազմակերպածները մեր տեսածները գերազանցեցին, աւելի մօտ էին մեր սրտին և աւելի բուռն գնահատութեան արժանացան, քան Վարժապետանոցի երաժիշտ պ. Պուճիգանեանի[367] պատրաստածները, որովհետև վերջիններս որքան ներդաշնակ և վարժ, բայց տիրացուական եղանակներ էին»[368]:

1913 թ. նոյեմբերի 9-ին վարժարանի սրահում Թատերասիրաց խումբը, հօգուտ «Մարտիկ» գրադարանի», ներկայացնում է «Մետիա» եղերերգը[369]:

ՎԱՐԺԱՐԱՆԸ 1912-1913 ԹԹ.

Հ. Երամյանը ոչ միայն իր, այլև Վանի մյուս կրթօջախների հեղինակության պաշտպանն ու ջատագովն էր: Իրողությունն ակներև է դառնում, երբ, օրինակ, 1912 թ. մայիսին ուսուցչապետը հարթում է Վանի երկրորդ վարժապետանոցում գլուխ բարձրացրած ներքին խնդիրները («Տեղի 46 սաներից 22-ը դժգոհ նոր տեսուչ Միքայել Մինասեանի «կարգադրութիւններէն՝ բողոքի թռուցիկ մը արձակեցին և այդ պատճառով կախակայուեցան»: Նրանցից ոմանք դիմում են ուսուցչապետին՝ նոր տարեշրջանում սովորելու Երամյան վարժարանում. «Այդ 22էն ոմանք, արձակուրդի շրջանին ինձ դիմելով խընդրեցին՝ նոր տարեշրջանն մեր դպրոցն ընդունուիլ և կը հաւաստէին միանգամայն, որ միւսներն ալ իրենց օրինակին պիտի հետեւին»: Սակայն. «...նկատելով որ հարուած մը պիտի լինէր այդ նոյն հաստատութեան վարկին ու գոյութեան և միանգամայն չուզելով քաջալերել աշակերտական ըմբոստութիւն մը, մերժեցի ինձ եկող աշակերտներու և անոնց ծնողներէն մէկ երկուքի խնդրանքը, միանգամայն յորդոր կարդացի, որ կրկին Մինասեանին դիմելով անոր հետ համաձայնին»[370]:

Վարժարանի բացման հանդեսը տեղի է ունենում 1912 թ. օգոստոսի 12-ին: Հյուրերի թվում էր երկրորդ քննիչ հանձնաժողովի նախագահ Ոսկան Մարտիկյանը[371], որը «պերճախօս ճառով մը ի վեր հանեց օրուան պահանջները և մեր վարժարանի դերն անցեալի մէջ և կոչումը յառաջիկայի համար: Ոսկան իր լուրջ և համակրելի բնաւորութեամբ քաղցր տրամադրութիւններ կ'ստեղծէր ի պատիւ իրեն տրուած սեղաններու ընթացքին: Կ'արժէ յիշատակել մասնաւորապէս օսմանեան պանքայի գանձապետ և Ոսկանի հայրենակից երգնկացի Սեպուհ Խանճեանի տուած խնճոյքը, որ կէս ակադեմիական հաւաքոյթի մը հանգամանք ստացաւ»[372]:

Նույն թվականի աշնան սկզբին նշվել է. «Վանի Երեմեան Վարժարանը 130 ոսկիի չափ բաց մը ունի. վարժարանին մուտքը եղեր է անցեալ շրջանին 77,490 ղրշ. իսկ ելքը եղեր է 77,708 ղրշ.»[373]: Նշյալ ուստարում, ինչպես վկայում է ուսուցչապետը, վարժարանի ուսման վարձերն ավելի բարձր էին, քան Վանի Վարժապետանոցինը: Այդ պատճառով աշակերտներից ոմանք նույնիսկ դիմել էին այնտեղ փոխադրվելու համար, սակայն երկու ամիս անց վերադարձել էին Երամյան վարժարան[374]:

Ըստ 1912-1913 ուստարվա տեղեկագրի՝ տարեսկզբին վարժարանն ուներ 343 սան, իսկ տարեվերջին՝ 366, որից «...թոշակաւոր աշակերտներու թիւը 304 էր, ձրիավարժներուն՝ 59-ը և 3-ը Պոպովեան սաները: Մնայուն ուսուցչաց թիւը 15, երթեւեկներուն 4»[375]:

365 **Հուր** /Բարունակ Կապուտիկյան/, Ընթացիկ կեանքը Վանի մէջ. ակնարկ մը Վանի թատերական գործի անցեալին եւ ներկային վրայ, «Հորիզոն», 1913, № 52, 8 մարտի, էջ 2:

366 Երաժշտության ուսուցիչ Խոսրով Փախչանյանը Կոմիտաս վարդապետի աշակերտներից էր: Դասավանդել է Վանի Կենտրոնական և Սանդխտյան վարժարաններում: «Երկրորդ անգամ էր, որ նա երևցաւ այս տարի բեմին վրայ, առաջինը Երամեանի նոր տարուայ հանդիսին և երկրորդը Սանդրխտեանի կօնցերտին, որ երգեցին «Ձինւոր ես, կռանալ մի», «Գարուն ա, ձիւն ա», «Լօ, լօ», «հիմի էլ լռենք» և ուրիշներ: Ափսոս որ թոքախտ ունի յիշեալը, թոյլ չը տար իրեն հետևելու և կատարելագործելու իր սիրած արուեստը» (**Հուր**, Ակնարկ մը Վանի թատերական գործի անցեալին եւ ներկային վրայ, «Հորիզոն», 1913, № 52, 8 մարտի, էջ 2): Վախճանվել է 1913 թ. Կահիրեում և ամփոփվել տեղի հայոց գերեզմանոցում:

367 Խաչատուր Պուճիգանյան (1889, Չնքուշ – 1954, Նյու-Յորք). երաժիշտ, դաշնակահար, երաժշտության ուսուցիչ: Հայտնի է, որ Վանի 1915 հերոսամարտին վարել է հայկական շեփորանվագը /ֆանֆարը/ (տե՛ս «Ազդակ», 1954, № 281, 31 յունուարի, էջ 3):

368 **Հուր**, Ակնարկ մը Վանի թատերական գործի անցեալին եւ ներկային վրայ, «Հորիզոն», 1913, № 52, էջ 2:

369 «Աշխատանք» [Իզմիր], 1913, № 48, 14/27 դեկտ., էջ 3:

370 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 177: Շնորհիվ Երամյանի՝ ըմբոստները վերադառնում են Վարժապետանոց: Ի դեպ, Երամյանն անգամ իր վարժարան չի ընդունում Առնտրական դատարանի, ապա պատժական նախադաս ատյանի նախագահ Թուխման Պասմաճյանի որդուն՝ այն դեպքում, երբ Պասմաճյանը բանտից ազատել էր Երամյանի փեսային: Այդ պատմությանը ներկա եղած տեսուչ Մինասյանը կատարվածի մասին տեղեկացնում է Պոլիս՝ տնօրեն ժողովին: 1914 թ., երբ Երամյանը Պոլսում էր, Միացյալի վարչական խորհրդի ատենապետ վերապատվելի Արսեն Շմավոնյանն իր պաշտոնակիցների առջև շնորհակալություն է հայտնում Երամյանին և խնդրում կարծիք հայտնել խնդրո վերաբերյալ (նշվ. աշխ., նույն տեղում):

371 Ոսկան բեյ Մարտիկյանը (1865, Երզնկա-07.07.1947, Կահիրե) Կ.Պոլսի Ազգային ժողովի անդամ էր, Օսմանյան կառավարության թղթատարական նախարար):

372 Նշվ. աշխ., Բ, էջ 159: Տե՛ս նաև **Թղթակից** /Խաչատուր Լեոնյան/, Լուրեր Արեւելեան գաւառներէն, «Բիւզանդիոն», 1912, № 4832, 4/17 սեպտեմբերի, էջ 1:

373 «Կոչնակ», 1912, № 42, 19 հոկտեմբերի, էջ 1018:

374 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 178:

375 **Երամեան Հ.**, Տեղեկագիր Երամեան վարժարանի (1912-13) ուսումն. շրջանի, «Վան-Տոսպ», 1913, № 33, 7 սեպտեմբերի, էջ 394-395: Հմմտ. **Բագրունի Հ.**, Երամեան վարժ-ի 36-րդ տարեշրջանի բացման հանդէսը, «Աշխատանք», 1913, № 41, 24 օգոստոսի, էջ 3, նաև՝ «Դպրոց ունեցած է 220 դպրոցական օր, 2 շրջագայութիւն» (նույն տեղում):

Նշյալ ուստարում ծախսերը կազմում էին 99368 ղրշ. և 20 փր., որից ելքային ծախսերը՝ 124447 ղրշ., հետևաբար 35-րդ ուստարեշրջանի բացը կազմել էր 25078 ղրշ. և 20 փր.[376], իսկ «նոր դպրոցական տարեշրջանի նախահաշիւ–պիւտճէն կազմուած է 1200 լիրայով...»[377]:

Ուստարվա կտրվածքով ավանդված դասաժամերը, ուսուցչական ժողովների և այլնի քանակը հետևյալ պատկերն էր կազմել. «Դասարան չփոխողներու թիւը 25: Ամբողջ դասարաններու մէջ աւանդուած դասերուն տարեկան գումարը՝ 12007: Ուսուցչ. ժողովներու թիւը՝ 37, Փորձնական դաս՝ 7: Բարձրագոյն կարգերու համար բանախօսութիւններ՝ 17...»[378]:

Վանի դպրոցների՝ 1912-1913 ուստարվա հաշվետու տվյալների համաձայն՝ Երամյան վարժարանն ուներ «...1100 լիրայ պիւտճէ, 370 աշակերտ, 5 աշակերտուհի, 18 ուսուցիչ, 11 կարգ, 12 ընթ...»[379]:

Մինչև 1913 թ. դպրոցի «...ելեւմտացոյցը աստիճանաբար 1200 ոսկիի պիտի բարձրանար, ինչ որ Վանի համար ակնբախ նոյնիսկ յանդուգն իրողութիւն մը կը ներկայացնէր»[380]:

1912-1913 թթ. Երամյանը նախաձեռնում է վարժարանի բնագիտության լսարանի արդիականացման գործը, որի համար էլ հանձնարարականներ էր տվել Բեռլինից ձեռք բերել ուսումնառության օժանդակող մի շարք իրեր, իսկ ուսուցիչներին հավելավճարներ հատկացնելու հետևանքով վարժարանի բյուջեում դարձյալ 400 ոսկու բաց էր գոյացել: Վիճակը շտկելու խնդրում իր ազդու խոսքով ուսուցչապետին սատարում է Վանի առաջնորդ Հովսեփ Սարաճյանը. «Ես ձեզմէ շատերու դէմքին վրայ ժպիտներ նկատեցի, երբ Երամեան կը ներկայացնէր դպրոցական նախորդ շրջանի մուտքն ու ելքը և յաջորդ շրջանի նախահաշիւը: Սակայն դուք մի՛ տարակուսիք և մի՛ վախենաք, Երամեան իր գործը գիտցող մարդ է, միայն թէ դուք ևս պարտիք սիրայօժար ընդունիլ ձեր տղոց տարեթոշակի յաւելումները, քանի որ վարժարանը այսքան զոհողութիւններ յանձն կառնու ձեր զաւակաց օգտին համար միայն»[381]: Առաջնորդի հորդորները զուր չեն անցնում, քանի որ «թոշակադրամներու տարեկան գումարը 700 ոսկին պիտի անցնէր, մինչդեռ Վանի ազգային և միսիոնարական բոլոր վարժարանները հաւաքաբար տարին ընդամէնը 1000 ոսկի հազիւ կը գանձէին»: Թոշակներից բացի՝ վարժարանը կարևոր

376 **Երամեան Հ.**, Տարեկան տեղեկագիր Երամեան վարժարանի, «Աշխատանք», 1913, № 41, 24 օգոստոսի, էջ 7: Ելևմտից առավել հանգամանալի հաշվետվությունը Հ. Երամյանը ներկայացրել էր 1913 թ. օգոստոսի 21 թվակիր տեղեկագրով (**Երամեան Հ.**, նշվ. հոդվ., էջ 6-7: **Նույնի՝** Տեղեկագիր Երամեան վարժարանի (1912-13) ուսումն. շրջանի, «Վան-Տոսպ», 1913, № 33, 7 սեպտեմբերի, էջ 394-395: Կրճատումներով՝ նաև «Աշխատանք» [Իզմիր], 1914, № 76, 28/11 յուլիսի, էջ 2-3: Ի դեպ, նշյալ՝ 99.368 դուրուշի մի նշանակալի մասը գոյացել էր նվիրատվությունների շնորհիվ, որոնց մասին էլ Երամյանը նշել է. «...տէր և տիկին Փիրումեանէ փոխան ծաղկէպսակի 324 ղրշ., պր. Իշխան Միքայէլեանէ՝ 216 ղրշ., ռուս հիւպատոս պր. Աքիմովիչէ, բառարաններ գնելու աշակերտաց համար՝ 540 ղրշ., տիար Յովհաննէս Անթօյեանէ (պիթլիզցի) փոխան ծաղկեպսակի՝ 108 ղրշ., տիար Մարտիրոս Աթթարեանէ (տիգրանակերտցի)՝ 54 ղրշ., Պոլսոյ Ալեանս Ֆրանսէզի կողմանէ, Վանի վարժապետանոցէն, ֆրանսերէնի ուսուցման համար 1944 ղրշ., տիար Գարեգին Յովնանեանի ձեռամբ հանգանակուած ի Մարսիլիա՝ 580 ղրշ., Ս. Պետերբուրկի հայոց եկեղ. խորհուրդէն՝ 12,464 ղրշ., Կովկասէն պր. Երուանդ Լալայեանի ձեռամբ՝ 10800 ղրշ., վսեմ. Ոսկեան էֆ. Մարտիկեանի նախաձեռնութեամբ հանգանակուած՝ դպրոցիս համար դաշնակ մը գնելու նպատակաւ 1912 օգս. 14-ին՝ 1832 ղրշ.» (նույն տեղում: **Նույնի՝** Տարեկան տեղեկագիր Երամեան վարժարանի. շրջան ԼԵ (1912 օգոստ.-1913 օգոստ.), «Ասպարէզ», 1913, № 270, 10 հոկտ., էջ 3): Հմմտ. **Բագրունի Հ.**, նշվ. հոդվ., «Աշխատանք», 1913, № 41, 24 օգոստոսի, էջ 3:

377 **Բագրունի Հ.**, նշվ. հոդվ., «Աշխատանք», 1913, № 41, 24 օգոստոսի, էջ 3:

378 **Երամեան Հ.**, Տարեկան տեղեկագիր Երամեան վարժարանի, «Աշխատանք», 1913, № 41, 24 օգոստոսի, էջ 6-7: Այս և հարակից խնդիրների մասին ավելի մանրամասն տեղեկություններ առկա են Հ. Երամյանի՝ 1913 թ. օգոստոսի 21-ին ներկայացրած վարժարանի 1912/13 ուստարվա գործունեությունը լուսաբանող հաշվետվության մեջ (նույն տեղում: **Նույնի՝** Տարեկան տեղեկագիր Երամեան վարժարանի. շրջան ԼԵ (1912 օգոստ.-1913 օգոստ.), «Ասպարէզ», 1913, № 270, 10 հոկտեմբերի, էջ 3): Վերոնշյալ տարեկան տեղեկագրում նշվել է նաև. «Ընդունած ենք հետևեալ գրական նուէրներ. "Թան" և "Մաթէն" Պոլսոյ Ալիանս Ֆրանսէզի մասնաճիւղէն, "Ճէրիտէի Շարդիէ" և "Միութիւն" Հ.Բ.Ը. միութենէն, "Մշակ", "Մշակի 40-ամեայ յոբելեան" և "Մշակ ու հայ կին"՝ տիար Մանուկ Նալբանդեանէ, "Արմէնիա" տիար Խաչատուր Ալանեանէ, "Տաճար" և "Տաճար մանկաց"՝ տիար Սիմէօն Գազանճեանէ, "Ուսումնարան"՝ տիար Ա. Տ. Պօղոսեանէ, "Երկունք"՝ տիար Զաւէն Կորկոտեանէ, Տարեցոյց մը (1913ի)՝ տիար Ստեփան Մրտիկեանէ, "Մայրենի աշխարհ" և "Էյլի Մէջրում"՝ տիար Տ. Չիթունիէ, 3 ռուս. գիրք՝ տիար Մարգար Տ. Յարութիւնեանէ, 1 պատի օրացոյց և գործ. քերականութիւն մը՝ տիար Յովհ. Բիւզանդեանէ, 1 Սրբազան պատմ.՝ տիար տր. Միսաք Խոստիկեանէ, 2 ֆրանս. գիրք՝ տիար տր. Խոսրով Չիթունիէ, Խալաթեանցի ռուս. Հայոց պատմ.՝ վսեմ. պր. Օլֆէրիէվէ, Շիրվանզատէի "Երկերու ժողովածու"՝ օր. Ս. Նարլեանէ, "Էէ փօէթ զ'Առմէնիէն" Չերազի՝ օր. Հ. Ներսէսեանէ... (**Երամեան Հ.**, Տարեկան տեղեկագիր Երամեան վարժարանի. շրջան ԼԵ (1912 օգոստ.-1913 օգոստ.), «Ասպարէզ», 1913, № 270, 10 հոկտեմբերի, էջ 3):

379 **Ա.**, Անցնող ուսումն. տարեշրջանը, «Աշխատանք», 1913, № 37, 27 յուլիս, էջ 3:

380 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 136: Սա որոշ չափով ձեռնտու չէր ծխական վարժարանների հոգաբարձուներին՝ նշելով, որ ուսուցչապետի այդ քայլով իրենք ևս հարկադրված են նման ձևով վարձատրել իրենց ուսուցիչներին: Երամյանը պատասխանում է. «Անոնք իրենց իրաւունքին մէջ են, իսկ դուք պարտաւոր էք ընդ առաջ երթալ օրուան տնտեսական և բարոյական պահանջներուն, մանաւանդ որ ձեր մատակարարած եկեղեցիներու կալուածական հասոյթները շատ դիւրութեամբ կրնաք աճեցնել՝ եթէ կամք ու կորով ղնէք ձեր գործունէութեան մէջ: Բաց աստի դուք ևս աշխատելու էք ծնողները թոշակի վճարման վարժեցնելու» (էջ 136-137):

381 Նշվ. աշխ., էջ 137: Հովսեփ Սարաճյանը մահացել է 1913 թ. հոկտեմբերի 2-ին: Երամյանը, նրա մահվան լուրը լսելով Թիֆլիսում, գրում է, որ Հովսեփ եպիսկոպոսը «վերջին առաջնորդն պիտի լինէր Վանի թեմին, որ Հայաստանի հարիւրաւոր թեմերուն պէս իր գոյութիւնն առած էր քրիստոնէութեան պաշտօնական հաստատութեան թուականէն, այսինքն Տըրդատի և Լուսաւորիչի օրերէն և շարունակուած անընդհատ աւելի քան 1600 տարի» (Բ, էջ 138):

նպաստներ էր ստանում դրսից և ներսից, որի շնորհիվ «մեր ելեւմուտքը պիտի հաւասարակշռուէր»[382]:

Նշյալ ուստարում վարժարանը, ի թիվս Հայկազյան վարժարանի և Վարժապետանոցի, «...ունին շաբաթական բանախօսութիւններ ուսանողներու եւ ուսուցիչներու համար: Երամեան վարժ. ունի մոգական լապտեր, որով ցոյց կը տրուին դասախօսութեան նիւթի էակներ եւ տեսարաններ»[383]:

1913 թ. հուլիսին նշվել է, որ վարժարանը «Միակ այդ դպրոցն է, որ մեր միջավայրին մէջ քիչ շատ ուսում կուտայ և հոն կայ աշխատանք... ու ժողովուրդը ամենայն իրաւամբ կօժանդակէ անոր»[384]:

ՎԱՐԺԱՐԱՆԸ ԵՎ Հ. ԵՐԱՄՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ 1913 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍԸ

Ուսուցչապետը մշտապես հետևում էր համազգային կարևոր իրադարձություններին և զանազան միջոցառումների ու տոնական հանդեսների միջոցով փորձում ոչ միայն աշակերտությանը, այլև ողջ հանրությանը հաղորդակից դարձնել համահայկական մշակութային նշանակալից դեպքերին: Երամյանի՝ ազգի լուսավորության գործին անբիծ նվիրվածությունը և յուրաքանչյուր խնդրին խոհեմ ու շրջահայաց մոտեցումները հասարակության բոլոր շերտերում նրա նկատմամբ առաջ էին բերել անվերապահ վստահություն: Սույն իրողությամբ պայմանավորված՝ Դաշնակցական և Ռամկավար կուսակցությունների ծայրահեղ լարված հարաբերությունները կարգավորելու նպատակով հենց նրան են դիմում (1913 թ. մարտին նույնիսկ փոխադարձ սպանություններ էին տեղի ունեցել)[385]: Ժողովուրդը, տեսնելով եղբայրասպան արյունահեղ ընդհարումները, կուսակցություններից պահանջում է խաղաղ փոխհամագործակցություն. «Երեք կուսակցութեանց շէֆերուն հետ եւս բարեկամական յարաբերութիւններ ունէի, ի հարկին քննադատելով հանդերձ այս կամ այն կուսակցութեան սխալը կամ թերութիւնը... Փարամազ[386] ...նոյնպէս ինձ կը թելադրէր այդպիսի փորձ մը ընել...:

Սրտիս շատ մօտ էր կուսակցութեանց համերաշխութիւնը, ուստի և քաջալերուած ինձ եղած թելադրանքներէն, կը ձեռնարկեմ ի գործ: Նախ կը տեսնեմ Իշխանն ու Վռամեանը, որոնք ի սկզբան նկատելի ոյժ մը չգտնելով հակառակորդ կուսակցութեանց մէջ, աննպատակ կը համարէին, որ «կազմակերպուած զօրաւոր կուսակցութիւն մը», որպիսին էր Դաշնակցութիւնը իրենց կարծիքով «բանակցութեան մտնէ քանի մը անկապակից խումբերու հետ»[387]: Ի վերջո, Երամյան վարժարանի ուսուցիչներից Մարտիրոս Նալբանդյանը սիրահոժար տրամադրում է իր տունը՝ որպես կուսակցականների ժողովի վայր: Վեց կուսակցականներ (2 հոգի՝ Դաշնակցականներից, Հնչակյան կուսակցությունից՝ Փարամազ, Աբրահամ Բրուտյան, Սահմանադիր-Ռամկավարից՝ վարժարանի նախկին սան Հարություն Կաքավյանց, Արշակ Դարբինյան) և «երկու անկախներ՝ Նալպանտեան և ես՝ պիտի աշխատէինք հակառակութիւններու և ազգավնաս պայքարներու վերջ մը տալ և միանգամայն համերաշխ գործակցութեան բերել երրեակ հակընդդէմ հոսանքները»[388]:

Ավելի քան 13 նիստերի ժամանակ քննարկվում են տարբեր բնույթի հարցեր, որտեղ սիրով ընդունվում է Երամյանի՝ որպես միջնորդի և նախագահի կարծիքը: Ի վերջո ստորագրվում է մի համաձայնագիր, որտեղ նշված էր. «Առաջին՝ իւրաքանչիւր կուսակցութեան բրօբականտի շրջանակը, երկրորդ՝ կը պայմանաւորէր ընտրական խնդիրներու մէջ խաղաղ և օրինական պայքար, երրորդ՝ ինքնապաշտպանութեան գետնի վրայ մի այն կը սահմանափակէր զինեալ գործողութիւնները, կանխագծելով համագործակցութեան եղանակը ու միջոցները դէպ ի կռուի...: Ես համոզուած լինելով վեց լիազօրներու անկեղծութեան. ջանացի զայն ապացոյցներով հաստատել, գլխաւորապէս այն հիման վրայ, թէ մէն մի կուսակցութիւն ինքն եւս յամոզուած է որ առանձինն ոչինչ կրնայ ընել և թէ ժամանակի հրամայական պահանջներէն թելադրուած՝ ամէնքն ալ առանց վերապահութեան ընդունած են համագործակցութեան պէտքն և օգուտը»[389]:

1913 թ. ապրիլի վերջերին վարժարան է այցելում ռուսական հայտնի թերթերից մեկի թղթակիցը. «Վանայ կողմերը գտնուող «Ռուսքոյէ Սլօվօյի» թղթակիցը Երամեան վարժարան այցելած ըլլալով, իրեն ի պատիւ հացկերոյթ մը տրուեր է, որուն ներկայ գտնուեր են նաև տեղւոյն ծանօթ անձերէն ոմանք և պատուաւոր ազգայիններ»[390]:

1913 թ. ապրիլ-մայիս ամիսներին վարժարանը դարձյալ կանգնած էր նյութական դժվարությունների առաջ, սակայն ազգօգուտ հաստատությունն արդեն այնչափ ճանաչում և համակրանք ուներ, որ նրան սատարելու հրապարակային կոչեր հնչեցնելն այլևս Հ. Երամյանի ուսերին չէր, այլ հասարակու-

382 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 137:

383 **Վանիо**, Վասպուրականի կեանքը, «Կոհակ», 1913, № 69, էջ 605: «Մոգական լապտերը», թերևս նախահայրն է հետագայի սահիկներ ցուցադրող լուսարձակ սարքի:

384 Նոր թաղականական մարմինների ընտրութեան առթիւ, «Աշխատանք», 1913, № 38, 3 օգոստոսի, էջ 2:

385 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 164:

386 Փարամազ՝ Մատթեոս Սարգիսյան (1863, Մեղրի – 1915, Կ.Պոլիս) Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության անդամ:

387 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 165:

388 Նշվ. աշխ., էջ 165-166:

389 Նշվ. աշխ., էջ 166: Խնդրո առնչությամբ տե՛ս **Սուրէն** /Վարդան Պապիկյան/, Կուսակցական համերաշխութիւնը, «Վան-Տոսպ», 1913, № 12, 13 ապրիլի, էջ 132-134:

390 «Հորիզոն», 1913, № 94, 2 մայիսի, էջ 3:

թյունն ինքն էր տեր կանգնում կառույցի հոգսը փարատելու գործին: Այդ է վկայում, օրինակ, եպիսկոպոս Հովսեփ Սարաջյանի՝ ապրիլի 22-ին շարադրված սույն նամակը. «Վանայ Երամեան վարժարանը իբր միջնակարգ հաստատութիւն (եօթնամեայ իտատի) քաջածանօթ է արդէն իր 35 ամեայ արդիւնալից կեանքովը և տուած լուրջ ու հիմնաւոր կրթութեամբ, որով ստացած է գոյութեան և իր դերը շարունակելու իրաւունքը: 1878 թ. թականին հիմնուած սոյն վարժարանը, ընդ ղեկավարութեամբ անոր բազմարդիւն տնօրէն Համբարձում էֆ. Երամեանի, իր գոյութեան ընթացքին ամենայաջող և արդիւնաւոր կրթական հաստատութիւնը եղած է Հայաստանի մէջ: Նա իր դիրքով եղած է տիպար հաստատութիւն մը ու խթան Վանայ ազգ. վարժարաններու և զորեղ պատուար մը օտար կրթութեան դէմ: Անոր հարիւրաւոր ընթացաւարտներն ու կիսաւարտներն այսօր Վասպուրականի մէջ և այլուր աչքառու տեղ կը գրաւեն իրենց խնամեալ կրթութեամբ և գործնական կեանքի մէջ ունեցած դիրքովը: Այս արդիւնքը և վարժարանի օգտակար դերը գնահատած են Վան եկող ամէն այցելուները՝ հայ թէ օտարազգի, նաև եւրոպացիները և կառավարութեան շատ մը բարձրաստիճան պաշտօնեաները: Գնահատած են զայն նաև ազգիս հայրապետներն ու պատրիարքները իրենց գոհունակութեան և օրհնութեան կոնդակներով: Այս վարժարանը, որ 1100 ոսկւոյ մօտ տարեկան պիւտճէ ունի, այսօր տնտեսական ճգնաժամ մը կանցուցնէ: Պատերազմի առաջ բերած ընդհ. տնտեսական տագնապը ազդած է նաև անոր պիւտճէին վրայ և այսօր անիկա 400 ոսկի խոշոր բացի մը հանդէպ կը գտնուի, որ կսպառնայ արդէն զայն մատնել կործանումի և մարել մի լուսաւոր փարոս: Այսօր, երբ նիւթապէս ապահովուած ուրիշ ազգ. հաստատութիւններ ու կրթական ընկերութիւններ իսկ ազգին կոչում ընելու պէտքին առաջ կը գտնուին, Երամեանը իր սոսկ անհատական ուժերով և սովորական միջոցներով ինչպէս պիտի փրկէ իր վարժարանը, որ ներկայիս ունի 370 աշակերտ, շատերը կիսաթոշակ և ձրի և 18 կարող ուսուցիչներէ բաղկացեալ խումբ մը: Նա իրաւունք ունի հանրային խնամքին ու գուրգուրանաց առարկայ ըլլալու, որովհետև, որչափ մասնաւոր հաստատութիւն մը, այնուամենայնիւ անոր աչազուրկ տնօրէնը, ոչ միայն զայն շահադիտական ձեռնարկ մը չէ դարձուցած, այլև անօրինակ անձնազոհութեամբ վրայ տուած է մինչև անգամ իր հայրենի տունը և նոյնիսկ իր առողջութիւնը: Բազմարդիւն կրթարանի մը այդ տագնապալի կացութիւնը ներկայացնելով համայն կամ ժողովրդեան ուշադրութեան, լիայոյս կոչ կընենք անոր ամէն դասակարգերու հայրենասիրական զգացումներուն, կոչ կընենք հարուստին, վաճառականին ու արհեստաւորին, հայրենակիցներուն և օտարաբնակներուն, որպէսզի փութան օգնութեան հասնիլ սոյն վարժարանին, որուն սպառնացող վտանգը աղէտ մը պիտի ըլլայ Վասպուրականի համար»[391]:

Նոյնպիսի կոչ-ահազանգ է հնչեցնում նաև վանեցի մանկավարժ, հասարակական գործիչ Բարունակ Կապուտիկյանը մայիսի 17-ի գրություններից մեկում. «Տեղական թերթերը հրատարակեցին Սարաջեան եպիսկոպոսի «կոչ առ համայն ազգայինս» յայտարարութիւնը Երամեան վարժարանի մասին, որ 400 լիրայի մօտ չորս ամեայ այս հաստատութեան մասին աւելի ընդարձակ տեղեկութիւններ տալ «Հորիզոն»-ի ընթերցողներուն...

...Մեր հայրենակիցները, մասնաւորաբար արտասահմանում գտնուող վանեցիները, արժէր որ հանգանակութիւնով մը եթէ ոչ մնայուն ֆոնդ մը կազմէին այդ դպրոցին համար, գոնէ առայժմ դպրոցի այդ բացը գոցէին: Երամեան դպրոցը ասկէ շատ աւելի արժէ, բաւական է յիշել, որ այդ դպրոց բիւտճէն բացառաբար կազմուած է աշակերտներուն վճարած տարեկան 800 լիրայի մօտ թօշակներէն, իսկ վանեցի ծնողներու հազիւ վճարող 200 աշակերտի համար այդքան դրամ տալը ինքնին ապացոյց է, որ Երամեանը ինչքան տեղ ունի բռնած անոնց սրտերուն մէջ: Ինչպէս կը տեղեկանանք, պ. Երամեանը շուտով Կովկաս և Ռուսիա պիտի անցնի իր դպրոցի գոյութեանը համար միջոցներ գտնելու: Մենք կոչ կընէինք ռուսահայ մամուլին, գրագէտներուն եւ հասարակական գործիչներուն, որ ամեն կերպ օժանդակեն քաջալերանքի արժանի այս հաստատութեանը»[392]:

Հունիսի 1-ին, ի նպաստ «Ազատ-Լույս» գրադարանի, վարժարանի սրահում ներկայացվում է Լ. Շանթի «Ճամբու վրայ»[393] դրաման. «Անցեալ շաբաթ երեկոյ Երամեանի սրահին մէջ ներկայացուեցաւ Շանթի վերոյիշեալ դրաման: 1896-ի Վանայ կոտորածներու սգակիր յիշատակին առիթով, փակագծի մէջ ըսենք՝ անպատեհ առիթ մը, ի նպաստ Ազատ. Լոյս գրադարանին...: Նախ քան ներկայացումը ընկեր Ա. Վռամեան բանախօսեց, օրուան հրատապ խնդիրներու շուրջ: Ներկայացումը վերջացաւ շատ ուշ, բաւական շատ ալ հասարակութիւն կար ներկայ, որոնցմէ պատկառելի մաս մը «դերասանա-

391 **Յովսէփ եպիսկոպոս**, Առ համայն կրթասէր ազգայինս, «Հորիզոն», 1913, № 96, 4 մայիսի, էջ 4: Նշենք նաև, որ խնդրո առթիվ նույն թվականի օգոստոսի 13-ին Հովսեփ եպս. Սարաճյանը հասարակական գործիչ, լրագրող Համբարձում Առաքելյանին գրում է. «Պէտք չկայ մեր կողմէն ալ յիշեալ դպրոցին և անոր բազմարդիւն տնօրէնին գովեստներ կրկնել, որ քաղաքիս օգտարագոյն մի հաստատութիւն է և որ պատերազմի պատճառաւ պարտուց ներքև ինկած ըլլալով, արդէն մեր կոչովը, որ հրատարակուեցաւ «Մշակ»-ին մէջ, ազգայնոց ուշադրութիւնը հրաւիրած էինք...» և հավելում, որ 2000 ռուբլի նվիրատվությունը ուշանալու պատճառով Երամյանը չի կարողանում քայլեր ձեռնարկել դպրոցը վերաբանալու ուղղությամբ (ԳԱԹ, **Համբարձում Առաքելյանի ֆոնդ**, գ. 1627, թ. 1):

392 **Հուր**, Ընթացիկ կեանքը Վանի մէջ, «Հորիզոն», 1913, № 122, 5 յունիսի, էջ 3:

393 «Աշխատանք», 1913, № 29, 1 յունիսի, էջ 8: Նաև՝ «Ասպարէզ», 1913, № 266, 12 սեպտեմբերի, էջ 3:

կան» տոմսակներով»[394]: Ի դեպ, վարժարանի աշակերտությունը ևս գրադարանի աշխույժ ընթերցողներից էր: Հայտնի է, որ 1912 թ. հունիսի 15-ից մինչև 1913 թ. հունիսի 15-ը գրադարանից օգտվել է 550 երկսեռ աշակերտություն, որից 130-ը Երամյան վարժարանից էին. «Ուսումնարանի Զ. դասարանէն.-8 աշակերտ. կարդացեր են անոնք ֆրանսերէն քանի մը գրքեր: Վեպեր: Բանաստեղծութիւններ, մեծ մասը հասարակագիտական՝ օրինակ՝ «Ինչ է իրաւական պետութիւն», «Հարուստներ եւ աղքատներ», «Ներկայացուցչական կառավարութիւն», «Համաժողովրդական բանակ»: Վարանդեանի աշխատութիւններ եւայլն: Ոմանք կարդացեր են նաև մանկավարժական, կենսագրական, եւ Շիլլէրի, Շէքսպիրի, Վ. Հիւկոյի թատերգութիւնները:

Ուսումն. Ե. դասարանէն.–15 աշակերտ, կը կարդան ֆրանսերէն դիւրամատչելի վէպեր "L'agent secret", "Les deux orphelines": Եվրոպական ռոմանթիք գրականութենէն ջոկուած եւ սիրուած կտորներ՝ «Յո երթաս», «Լուսադեմին», «Լծի տակ» եւ այլն: Առաւելապէս հայ կենցաղագիր հեղինակներն են կարդացեր: Շանթի, Նար-Դոսի, Շիրվանզատէի, այլեւ Փափազեանի, Ահարոնեանի եւ Ռաֆֆիի ընտրուած գրքեր: Ոմանք կը կարդան նաեւ կենսագրականներ: Հակումը դէպի վիպական կենցաղական գրականութիւնն է:

Ուսումն. Դ. դասարանէն.–16 աշակերտ, կարդացեր են՝ Ահարոնեանէն, Փափազեանէն եւ Ռաֆֆիէն ընտրութեամբ կտորներ: Ոմանք կենսագրականներ՝ հայ եւ օտար դէմքերու. թատերգութեան հետեւողներ ալ կան: Մեծ տոկոսը կը սիրէ եւ կը կարդայ Սիամանթոյի, Թումանեանի, Իսահակեանի, Ադա-Նեգրիի քերթուածները: Հակումը գրեթէ տաղաչափական գրականութեան կողմը կը թեքի:

Ուսումն. Գ. դասարանէն.–22 աշակերտ, գրադարանապետի ընտրութեամբ վիպական, մանկական հետաքրքիր եւ յուզող վեպիկներ՝ «Թշնամիներ», «Եղբայր եղբօր դէմ»: «Սրնազին», «Այծարած», «Արդար ծերունի» եւ այլն:

Ուսումն. Բ. դասարանէն.–26 աշակերտ, թեթեւ մանկական գրքեր, որոնք կը ծառայեն աւելի հետաքրքրութիւն սրելու, հարցասիրութեան պահանջ ստեղծելու եւ նոր ծանօթութիւններ տալու: «Անահիտ», «Սիրտ», «Ջուհան շահ», «Փայտաշէն խրճիթ» եւն.:

Ուսումն. Ա. դասարանէն.–25 աշակերտ, գրեթէ նոյն ուղղութեամբ ինչ որ Բ. դասարան:

Դ. Նախակրթարանէն.–15 աշակերտ, կը տրւին մանկական փոքրիկ, սիրուն պատկերազարդ գրքեր» «Կարմիր գլխարկ», «Գուլլիվէր», «Լուսատտիկներ» եւայլն»[395]:

Հայտնի է, որ երբ 1913 թ. հունիսին Երամյանը հանդիպում է Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միության ընդհանուր վարիչ պաստոր Լոհմանին (վերջինս փորձում է հիշեցնել գերմանացիների մարդասիրական արարքների մասին՝ սկսած 1890-ական թթ.-ից), ստանում է հետևյալ պատասխանը. «Այո՛, ձեր կառավարութիւնը, որ այսօր պատնէշ կը քաշէ ռուսական հայանպաստ ծրագրին դէմ և որ անցեալի մէջ ճկոյթի շարժումով մը կրնար արգիլել հայկական հէքաթօմպները[396], թողուց որ կոտորուի հայն ու անոր մնացորդները մուրացիկ դառնան, որպէսզի դուք՝ յանուն մարդասիրութեան կամ Քրիստոսի՝ առատ առա՞տ ողորմութիւն բաշխէք մեզ: Քրիստոս ո՛չ թէ զայդ, այլ արդարութիւն կը պահանջէ որբին և այրիին: Տուէ՛ք մեզ կեանք ապահով, գէթ մի քաջալերէք դահիճն անգորով, թէ ոչ որքան մեծ լինի ձեր հասցուցած բարիքը, չկրնար զուգակշռել ձեր քաղաքականութեան պատճառած չարիքները»[397]:

1913 թ. հուլիսի 28-ին կայացած թաղականական մարմինների ընտրության առթիվ գրված հոդվածում, որտեղ խոսվում է թաղականների կատարելիք աշխատանքների մասին, որպես օրինակելի և ուսում տվող հաստատություն՝ ի ցույց է դրվում Երամյան վարժարանը. «Միակ այդ դպրոցն է, որ մեր միջավայրին մէջ քիչ շատ ուսում կուտայ և հոն կայ աշխատանք... ու ժողովուրդը ամենայն իրաւամբ կօժանդակէ անոր»[398]:

Նույն թվականի ամռանը պրոֆ. Լևոն Արծրունին մոր՝ Փառանձեմի հետ, ի նպաստ Երամյան վարժարանի, Ֆրեզնոյում ձեռնարկում է հանգանակություն (միայն տիկ. Փառանձեմի ձեռնարկի շնորհիվ հավաքվում է 33 անգլիական լիրա)[399]: Բացի այդ՝ Ֆրեզնոյում հրատարակվող «Ասպարեզ» թերթի խմբագրակազմն էլ իր հերթին «Վանի Երամեան դպրոցը եւ անոր հիմնադիր տնօրէնը» խորագրով հոդվածով կոչ է անում ամերիկաբնակ վանեցիներին նյութապես աջակցել վարժարանին. «Համբարձում Երամեանն էր..., որ իր ծաղիկ հասակէն իսպառ աչազուրկ մը թէև, բայց քանի մը սերունդներու կրթական լուսաւորիչը եղաւ: Իր հիմնադրութեամբ և տնօրէնութեան տակ համանուն վարժարանը աւելի քան 30 տարիներէ հետէ հայութեան այդ մեծ ոստանին լուսաշող փարոսը եղած է առանց հոգեհանգիստներ ունենալու: ...այս մեծ հայը, որ դժուարութեանց դիմաց չընկրկիր, որ իր նպատակէն չի շեղիր, որ նախաձեռնութեան, յարատևութեան հերոսը և կրթական ասպարէզին մէջ յաջողութեան միակ հաւատացեալն է, որ դեռ շատ չծերացած, նկատուած է

394 Ճամբու վրայ, «Աշխատանք», 1913, № 30, 8 յունիս, էջ 8:

395 **Յ. Մ.**, Վանի «Ազատ-լոյս, գրադարանի միամեայ հաշուետուութիւնը, «Աշխատանք», 1913, № 31, 15 յունիսի, էջ 5-6:

396 Մարդկանց զանգվածային կոտորած:

397 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 174:

398 Նոր թաղականական մարմինների ընտրութեան առթիւ, «Աշխատանք», 1913, № 38, 3 օգոստոսի, էջ 2:

399 «Ասպարէզ», 1913, № 258, 18 յուլիսի, էջ 4:

արդէն Վանի նոր սերունդի գրեթէ կէսին կրթական հայրիկը: ...փութանք գործնականապէս ապացուցանել, թէ կը մեծարենք մարդը և լիովին կը գնահատենք գործը, ապահովելով հաստատութիւն մը, որ Պոլսոյ Պէրպէրեան վարժարանէն աւելի նշանակութիւն ունի Վանի համար...»[400]:

1913 թ. օգոստոսի 3-ին վարժարանի սրահում Խոսրով Փախչանյանի ղեկավարությամբ տրվում է նվագահանդես[401]:

Կրթօջախը (Ամերիկյան վարժարանի և Վարժապետանոցի հետ միասին) օգոստոսին համարվում էր երկրորդական վարժարան: Ըստ Ուսումնական խորհրդի որոշման՝ լրիվ դասընթացն ավարտած աշակերտին տրվում էր ուսուցչական վկայագիր[402]: Ըստ հայտարարությունների՝ աշակերտների ընդունելությունը նոր ուստարում սկսվելու էր 1913 թ. օգոստոսի 12-ից[403]:

Օգոստոսի 18-ին կատարվում է վարժարանի 36-րդ տարեշրջանի վերամուտը. «...սրահին մէջ ի ներկայութեան բաւական մեծ բազմութեան մը: Հանդէսին հրաւիրուած էին նաև պաշտօնական մարմիններ:

Հանդէսի մուտքին համար քառասունական փրյ. նշանակուած էր (տեղ և կարգ պահպանելու համար, ըստ իրենց) և որը պիտի գործածուի յօգուտ գիտական թանգարանին:

Քանի մը ճառերէ և արտասանութիւններէ յետոյ խօսեցաւ պ. Հ. Երամեան: Կարդացուեցաւ դպրոցի 912-13 ուսումն. շրջանի ընդհանուր տեղեկագրի՝ դպրոցի բարոյական վիճակի, նիւթական մատակարարութեան և նուիրատուութեանց մասին, որմէ երևան կուգար, թէ վերջապէս կարկտանուած է պ. Երամեանի ծակ քսակը և գոցուած մշտապէս բաց պիւտճէն, թէև առ այժմ կարգ մը դրամական կարևոր նուիրատուութեանց չ'հասնելուն պատճառաւ, տակաւին բաց կը մնայ այս շրջանին, մօտ 25,000 ղրշ.:

Խօսեցաւ նոյնպէս կուսակալ Թահսին պէյ[404], քաջալերականներ ուղղեց Երամեան էֆ.ին և խոստացաւ 100 լիրայի նուիրատուութիւն մը, պետութեան կողմից, իսկ ինք անձնապէս նուիրեց 10 օսմ. լիրայ, առաջարկելով որ հանգանակութիւն շարունակուի, յանձնախումբ մը պիտի շարունակէ:

Երամեան վարժարան յառաջիկայ շրջանին պիտի ունենայ եօթնամեայ իտատիէի վերջին դասարանը...

Յ. Գ. Թահսին պէյի բանախօսութենէն կերևան, թէ ինք կը զարմանար, որ հակառակ հայերու այսքան ճնշուած վիճակին, նոքա կարող են այս և ասոր նման հաստատութիւններ ունենալ Վանի մէջ:

Արդարև պ. Երամեան, իբր մարդ իւր ունեցած թերութիւններու հետ, ունի նաև առաւելութիւններ և մասնաւորաբար ձեռներէցութիւն, որու համար արժանի է քաջալերանքի»[405]:

Իր հերթին Մոսուլում Գերմանիայի փոխհյուպատոս Հոլշտայնը «1913ին Երամեան վարժարանին կը խոստանար տարեկան 5000 մարքէ աւելի նպաստ մը, եթէ գերմաներէնի ուսումը եւս աւելնար ֆրանսերէնի և ռուսերէնի վրայ (ռուսերէնը կաւանդուէր Երամեան վարժարանին մէջ 911էն և նոր վարժապետանոցին մէջ՝ 918էն սկսեալ, և Պիրժէվէեայ Վէտոմօսքի թերթի թղթակիցը [Անտուան Բերեզովսկի - Օլգինսկի, կեղծանունը՝ Տ. Օլգենին – Ս.Կ.] այցելելով Վանի վարժարանները 913 փետրուարին, և «Երամեան»ի մէջ ռուսերէն դասերը քննելով և ռուսերէնէ ֆրանսերէն ու փոխադարձաբար թարգմանութիւններ ընել տալով բարձրագոյն կարգին՝ իր հիացումը կը յայտնէր թերթի նոյն տարուոյ № 13471ի մէջ: Ֆրանսական հիւպատոսներն ալ աշակերտաց յառաջադիմութիւնը ֆրանսերէնի մէջ խրախուսելու համար՝ Ալիանս Ֆրանսեզէն գրական մրցանակներ և վարժարանի համար ալ տարեկան նպաստ մը սահմանել կուտային, նոյն բանը ըրին նաեւ 1911ին հիմնուած նոր վարժապետանոցին համար»[406]: Հատկանշական է, որ տպավորված իրենց այցելությունից՝ փոխհյուպատոս Հոլշտայնն ու պաստոր Լոհմանն ասել էին. «„Ձեր դպրոցը եւրոպական

400 «Ասպարէզ», 1913, № 261, 8 օգոստոսի, էջ 1: Ի դեպ, արձագանքելով Երամյան վարժարանին նյութապես աջակցելու կոչին՝ ամերիկաբնակ վանեցիները մինչև 1913 թ. վերջը հանգանակում են 33 անգլիական լիրա, որի համար վարժարանի փոխտնօրեն Մարտիրոս Թ. Նալբանդյանը շնորհակալություն է հայտնում բոլոր նվիրատուներին («Ասպարէզ», 1913, № 281, 26 դեկտեմբերի, էջ 5: Նվիրատուների ցանկը տե՛ս № 262, 15 օգոստոսի, էջ 4; № 265, 5 սեպտեմբերի, էջ 4):

401 «Աշխատանք» [Իզմիր], 1913, № 21, 31/13 սեպտ., էջ 3:

402 «Աշխատանք», 1913, № 38, 3 օգոստոսի, էջ 7: Ի դեպ, բարձր նախակրթարան էին համարվում Կենտրոնականը, Վարագի, Սանդխտյան, Արարքի իգական և Գերմանական վարժարանները:

403 «Վան-Տոսպ», 1913, № 29, 10 օգոստոսի, էջ 348: Տե՛ս նաև «Աշխատանք», 1913, № 39, 10 օգոստոսի, էջ 8:

404 Կուսակալ Թահսին բեյը մասնավորապես նշել է. «Ես քաղաքիս բոլոր վարժարանները տեսայ, քննեցի և առաւելութիւնը սոյն հաստատութեան մէջ գտայ: Կը շնորհաւորեմ Վանի հայութիւնը, որում մէկ զաւակն իր կամքի ուժովը յաջողած է այսպիսի վարժարան մը կազմակերպել: Դուք Վանեցիներդ պարտաւոր էք արձան մը կանգնել այս հաստատութեան հիմնադրին՝ դեռ նա չմեռած...» (**Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 180):

405 «Վան-Տոսպ», 1913, № 31, 24 օգոստոսի, էջ 370-371: Տե՛ս նաև **Բագրունի Հ.**, Երամեան վարժ-ի 36-րդ տարեշրջանի բացման հանդէսը, «Աշխատանք», 1913, № 41, 24 օգոստոսի, էջ 3-4): «Աշխատանք» [Իզմիր], 1913, № 23, 7/20 սեպտեմբերի, էջ 3: Ի դեպ, ինչպես նշում է Երամյանը, «Դպրոցս կ'ունենայ այս շրջանին նաև եօթնամեայ իտատիի վերջին դասարանը, ուր օրէնգիտութեան և քաղաքական տնտեսութեան դասերը ստանձնուած է անձնուիրաբար նահանգիս ընդհ. դատախազ ազնուաշուք Մատթէոս էֆ. Էպլիղաթեան» (**Երամեան Հ.**, Տարեկան տեղեկագիր Երամեան վարժարանի. շրջան ԼԵ (1912 օգոստ.-1913 օգոստ.), «Ասպարէզ», 1913, № 270, 10 հոկտեմբերի, էջ 3):

406 **Երամեան Հ.**, Հայ-ֆրանսական յարաբերութիւնները, «Վերածնունդ», 1918, № 14-15, 14 յուլ.-1 օգոս., էջ 306-307: Օլգենինի հոդվածը տե՛ս **Ольгенин Т.** Армения в первой половине 1913 г. Составитель: *В. А. Погосян*. Ереван, 2023. С. 130-134.

Երամյան վարժարանի ուսուցչակազմը 1913 թ. (կենտրոնում, ձեռնափայտը ձեռքին, Հ. Երամյանն է)

հաստատութեան մը տպաւորութիւնը կը թողու, ինչո՞ւ ուրեմն թուրք ըէժիմէն կը գանգատիք,,»[407]:

1913 թ. օգոստոսի 24-ին ստացված թղթակցությունը հայտնում է. «Վարժարանները այս շաբաթում մեծ մասամբ վերաբացվեցին. ուսուցչական խմբերը գրեթե անփոփոխ են մնում, թէև եկեղեցիների թաղական խորհուրդները փոխվեցին, նոր ընտրություն կատարված լինելով: Ուրախալի է, որ նորընտիր թաղ. խորհուրդները լաւագոյն համարեցին համերաշխական ուղիի վրա դնել իրանց անդրանիկ գործունէութիւնը, սա անշուշտ խելացի կարգադրութիւն պիտի համարել, որովհետև միակողմանի որոշումներն ու կարգադրութիւններն անցանկալի հետևանքների էին հասցնում: Երամեան վարժարանը ...սկսեց իր 36-րդ շրջանը: 35 տարի է, ինչ այդ վարժարանը նորմալ կերպով առաջ է ընթանում ու դաստիարակում է Վասպուրականի մի քանի սերունդները. մեր ժողովուրդը ընդհանրապէս գոհ է մնալու նրա գործունէութիւնից ու միշտ առանձին համակրանքով ու քնքշութեամբ է վերաբերվում դէպի վարժարանը, այդ է անշուշտ պատճառը, որ դպրոցը իր բիւջէն 200 ոսկուց հասցրել է մինչև 1200 ոսկու, որի կէսից աւելին գոյանում է աշակերտների թոշակներից: Դպրոցի տարեկան տեղեկագրից յայտնվեց, որ Պետերբուրգի եկեղ. խորհրդի, Ա. Մելիք-Ազարեանի և Հ. Առաքելեանի միջոցով ծանուցված 3000 ռուբլի նպաստով՝ դպրոցի դեֆիցիտը փակվել է ու դպրոցը պարտքի բեռից ազատված՝ մտնում է նոր շրջան»[408]:

Տարվա ընթացքում վարժարանի գրադարանը համալրվում է բազմաթիվ գրական աշխատություններով և ուսումնական ձեռնարկներով, ինչպես նաև, որպես նվիրատվություն, ստանում են բազմաթիվ տետրեր և դպրոցական այլ պարագաներ: Բաղդասար Մելքոնյանը դպրոցին նվիրում է էլեկտրական գործիք[409]:

Երամյան վարժարանն իրապես ամեն ինչով առաջադեմ էր Վանի զույգ քաղաքամասերում (Քաղաքամեջ և Այգեստան) գործող բոլոր մյուս դպրոցներից: Օրինակ, երբ խոսվում էր ոչ պակաս գրադարանով հայտնի Սանդխտյան դպրոցի մասին, շեշտվում էր հետևյալը. «...Դպրոցի մատենադարանը (ձեռնարկ եւ ընթերցանութեան գրքեր) կը բաղկանայ 400 կտորէ աւելի գրքերէ. ուրիշ խօսքով Երամեան վարժարանէն յետոյ՝ առաջինը՝ բոլոր դպրոցներու մէջ, իսկ մանկական գրքերու բաժինը՝

407 **Մարտիկ**, Կենսագրական ընդհանուր գծեր, «Զարթօնք», 1919, պրակ 3-4, էջ 53:

408 **Մտրակ**, Արձագանքներ Վասպուրականից, «Մշակ», 1913, № 204, 15 սեպտեմբերի, էջ 2:

409 **Երամեան Հ.**, Տարեկան տեղեկագիր Երամեան վարժարանի, «Աշխատանք», 1913, № 41, 24 օգոստոսի, էջ 7: Հարկ է նշել, որ գրադարանում, բացի գրքերից, առկա էին հայերեն, թուրքերեն, ռուսերեն և ֆրանսերեն պարբերականներ («Աշխատանք» [Իզմիր], 1914, № 76, 28/11 յուլիսի, էջ 3):

ամենաճոխ՝ բոլոր դպրոցներու մէջ»[410], կամ մասնագիտական լսարաններում ուսումնառության համար անհրաժեշտ հավաքածուների մասին խոսելիս դարձյալ (Սանդխտյան վարժարանի կապակցությամբ) շեշտվում էր, որ «Գիտական գործիքներու եւ հաւաքածուներու կողմանէ՝ ետ կը մնայ միայն Երամեանէն և Վարժապետանոցէն»[411]:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԻ ՆՈՐ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ 1913 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ ԵՎ ՆՐԱ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ

1913 թ. սեպտեմբերին վարժարանն ուներ «...13 սենեակով և վերնայարկ ընդարձակ սրահով իր սեփական շէնքը, մատենադարանը, գիտական թանգարանը, թատրոնական բեմը և աւելի քան 400 աշակերտ՝ բաժնուած 11 կարգի վրայ, 4 նախակրթարան, 7 ուսումնարան, ուրոյն ուրոյն դասարաններու մէջ: Ունէինք տակաւին ընդարձակ ուսուցչանոց մը, ուր դարակներու մէջ զետեղուած էին գիտական գործիքներ և մի ուրիշ սենեակ՝ տեսչարանի համար»[412]:

Նույն թվականի աշնան սկզբին դպրոցի առաջադիմությունն առավել բարձրացնելու և նյութական միջոցներ հայթայթելու նպատակով ուսուցչապետը որոշում է մի նոր ուղևորություն կատարել: Նա «...ճգտում է իր անունով եղած վարժարանը վերածել մի հայկական կօլէջի, որպէսզի այդպիսով՝ օտար հսկայ մեծութիւնների հասնող բարձրագոյն կրթութեան դէմ մի թումբ կազմէ: Հ. Երամեան Վանի կրթական նահապետն է համարվում, որովհետև Վանի երիտասարդութեան մի մեծ մասը նրա դպրոցումն է ուսումն առել: Երամեան դպրոցը 35 տարուց ի վեր շարունակում է իր գոյութիւնը և առաջադիմում անդադար, իսկ այսօր 400-ի մօտ աշակերտներ ունի՝ 10,000 ր. տարեկան բիւջէով...: Այդպիսի մեծ հաստատութիւն վարում է ահա այս աչազուրկ մարդը՝ մեծ ձեռնհասութեամբ. իսկ այժմ էլ ճգտում է մի աւելի վեհ նպատակի, հայկ. կօլէջի, որով... պսակել է ուզում իր կեանքի վախճանը: Նա կոչ է անում հայ բարերարներին, հայ ժողովրդին ու հայ մամուլին և սպասում է, որ իր ձայնը արձագանք գտնէ, որ հայ ժողովուրդը պսակէ կրթական անխոնջ մշակի ջանքերը: Իսկ Երամեանի պահանջը մի մեծ բան չէ կարծենք. նրա դպրոցը նախնականից սկսած ունի արդէն 11 տարիների դասընթացք, որի վրա ուզում է աւելացնել երեք տարվայ շրջան էլ՝ կօլէջի ուղղութեամբ: Արդ՝ Երամեան վարժարանը այժմ իր 10,000 ր. բիւջէի կիսից աւելին հայթայթում է աշակերտների թոշակներից, 1000 ռուբլի էլ խոստացել է տալ վալի Թահսին բէյը պետական բիւջէից, 1000 ր. էլ մի այլ աղբիւրից է ստանում. ուրեմն մնում է իր դպրոցի մշտական դեֆիցիտ տարեկան մօտ 3000 ր., աւելացնենք սրա վրա – 3000 ր. էլ կօլէջի երեք դասընթացքի ծախսերի համար, ուրեմն նրա պահանջն է տարեկան մօտ 5-6000 ր. կամ այդչափ տոկոս բերելու համար մի ֆօնդ, որով ոչ միայն Երամեան վարժարանն ընդմիշտ կապահովվի նիւթապէս, այլ նաև կունենայ մի կօլէջ, որ կը կարողանայ մրցել օտար բարձրագոյն հաստատութիւնների հետ ու պատիւ բերել հայ ժողովրդին ու Վասպուրականին»[413]:

Երամյանն իր բացակայության ընթացքում վարժարանի ղեկավարությունը հանձնում է տեսուչ-փոխտնօրեն Մարտիրոս Նալբանդյանին: Նա «իր դասընկեր Մկրեանի նման իբր 7 տարի աշակերտի և այնուհետև ուսուցչի հանգամանքով իր բախտը կապած էր մայր վարժարանին, զոր այնուհետև իմ բացակայութեան միջոցին ինքն պիտի վարէր՝ մանկավարժական ժողովներու խորհրդակցութեամբ՝ այնքան ձեռնհասօրէն, մինչև Վան-Վասպուրականի աւերումը, 1915»[414]:

Ճամփորդության առաջին կարևոր հանգրվանը Վաղարշապատն էր: Այստեղ 1913 թ. հոկտեմբերի 11-15-ը Հ. Երամյանը, որպես Վանի դպրոցների և հասարակության պատգամավոր, մասնակցում է Հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյակներին նվիրված համազգային տոնակատարություններին[415]:

Էջմիածնի Մայր տաճարի մատենադարանի մեծ սրահում Գևորգ Ե կաթողիկոսը Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի պատվին հուշարձաններ կանգնեցնելու նպատակով ցանկանում է ստեղծել դպրոցական ֆոնդ: Թիֆլիսը, Բաքուն, Մոսկվան և Նոր Նախիջևանը խոստանում են խոշոր նվիրատվություններ, որոնք հասնում են մինչև մեկ միլիոն, իսկ տաճկահայերը (առհասարակ՝ արևմտահայությունը) որևէ մասնակցություն չեն ունենում, քանի որ «ռուսահայոց մէջ խնդիր պիտի ծագէր, թէ դպրոցական ֆօնտը միայն ռուսահա՞յ, թէ համազգային հանգամանք ունենալու է»[416]: Այդ խնդիրը որոշվելու էր հոկտեմբերի 12-ին մատենադարանի մեծ սրահում 200 պատգամավորների մասնակցությամբ

410 **Փափազեան Դ.**, **Ճինկօզեան Լ.**, Երկու խօսք եւ կոչ մը Սանդխտեանի մասին, «Աշխատանք», 1913, № 40, 17 օգոստոսի, էջ 5:

411 Նույն տեղում:

412 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 193: Տե՛ս նաև **Տէր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., էջ 431:

413 **Մտրակ**, Արձագանքներ Վասպուրականից, «Մշակ», 1913, № 243, 1 նոյեմբերի, էջ 2: Տե՛ս նաև **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 194: **Տէր-Մկրտիչեան Ե.**, նշվ. աշխ., էջ 431:

414 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 193: Հմմտ. **ՎԱՆԻՈ**, Վասպուրականի կեանքը, «Կոհակ», 1913, № 69, էջ 605: Մամբրե Մկրյանը՝ գրականագետ Մկրտիչ Մկրյանի հայրը, հայտնի էր որպես «առաջնակարգ տաճկագետ եւ ֆրանսագէտ, բնագէտ եւ քիմիաբան» (**Թիւթիւնճեան Խ.**, Հմայեակ Մանուկեան, «Վարագ», 1969, № 63-64, էջ 32):

415 **Մտրակ**, Արձագանքներ Վասպուրականից, «Արարատ», 1913, Ժ, յաւելուած, էջ 8, 13:

416 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 213:

հրավիրված ժողովում, որը «տենդագին կը յուզուէր մամուլի մէջ»[417]: Քվեարկության համաձայն՝ ժողովականները դպրոցական ֆոնդը հռչակում են համազգային[418]:

Հնչում են տարբեր ելույթներ, նաև՝ նմանատիպ. իբր ռուսահայերը տարբեր առիթներով կատարել են իրենց պարտքը թուրքահայերի նկատմամբ, ուստի ֆոնդը պետք է հատկացնել միայն ռուսահայության կրթական կարիքների համար: Ի պատասխան Երևանցի մեծահարուստ Խաչատուր Աֆրիկյանի ելույթի («Արդարութիւն չէ մեր գիւղացի մանուկներուն բերնէն փշրանքներն առնել և տալ թրքահայերուն, որ ի վիճակի են ինքզինքնին հոգալու»)՝ Հ. Երամյանն ասում է հետևյալը. «Փշրանքներ բառը սաստիկ վիրաւորեց տաճկահայի արժանապատուութիւնս և նստած տեղէս բողոքելով պահանջեցի, որ ետ առնէ իր խօսքերը: Ապա խօսք առնելով ջանացի փաստել թէ ֆօնտին համազգային հանգամանքը պիտի փրկէ անոր ապագան: «Յիշեցէ՛ք, ըսի, ռուսահայ կալուածոց խնդիրը և Պոլսոյ եկեղեցական համագումարի և հոգելոյս Խրիմեանի բողոքներն ու առարկութիւնները՝ թէ այդ կալուածները նուիրուած կամ ձեռք բերուած են ժամանակին հայութեան բոլոր հատուածներու կողմանէ, բաց աստի չի՞ կրնար պատահիլ որ գեղեցիկ օրին մէկը երկաթեայ ձեռք մը իջնայ դպրոցական ֆօնտին վրայ ևս՝ եթէ միայն ռուսահայութեան սեփականութիւն նկատուի այն»[419]:

Աֆրիկյանի այն խոսքերին, թե ռուսահայերը միշտ օգնել են տաճկահայերին, Երամյանն առաջ է բերում. «Մենք, տաճկահայերս, շեշտեցի, չենք ուրանար այդ», և թվարկելով ռուսահայերի մի շարք օժանդակություններ, ավելացնում է. «Սակայն... դուք ռուսահայերդ ապահով տնտեսութիւն և բարոյական ու նիւթական բարգաւաճման ամէն դիւրութիւնները կը վայելէք և չունեցաք ո՛չ սով սրածութիւն, ո՛չ ջարդ, հրդեհ և թալան, մէկ խօսքով՝ դուք զերծ էք թուրք բռնակալ րէժիմի ճիրաններէն: Դուք հայ-թաթարական ընդհարումները միայն տեսաք, սակայն ձեզ հետ տաճկահայերն ալ չկռուեցա՞ն ի Գանձակ և այլուր: Մենք՝ տաճկահայերս երբեք վարդէ անկողիններ չվայելելով և դամոկլեան սուրի մղձաւանջին տակ դժոխմբեր կեանք մը քաշքշելով հանդերձ՝ արդարև յաջողած ենք մեր ինքնօգնութեան ու կորովին շնորհիւ հիմնել մեր գիւղական, ծխական ու մասնաւոր վարժարանները, կրթական ընկերութիւններ, որբանոցներ և Փրկչի մեծ հիւանդանոցը: Եթէ տաճկահայութիւնը բաղդ ունենար վայելելու ձեր բոլոր առաւելութիւնները, բնաւ երբեք չպիտի կարօտէր արտաքին օգնութեան: Իսկ թուրք կառավարութենէն հայ դպրոցներու յատկացած փանաքի նպաստը որ է տասանորդի տրոց 1ուկէս առ % տոկոսն անուանապէս՝ ամենաչնչին մասը կը կազմէ մեր կրթական ծախքերուն...: Վերջացուցի խօսքս կրկին հրաւիրելով Ափրիկեանը յետս կոչել իր վիրաւորիչ ակնարկութիւնը և յարգել տաճկահայոց պատուոյ զգացումները»[420]:

Վերոնշյալ՝ հոկտեմբերի 12-ի ժողովի երկրորդ խնդիրն էլ հայերենի ուղղագրությունն էր: Ի թիվս վաստակաշատ լեզվաբաններ Մանուկ Աբեղյանի, Հովհաննես Մալխասյանի՝ ելույթ է ունենում նաև Երամյանը. «Ես ի սկզբան նախընտրեցի լսել միայն թեր ու դէմ պարզուած տեսութիւնները և չէի համարձակիր կարծիք յայտնել մասնագիտական այնքան ծանր խնդրոյ մը շուրջ, ականաւոր և հեղինակաւոր գրագէտներէ բաղկացած մասնախմբի մը մէջ, որ կոչուած էր միակ օրէնքի մը լծել հայ լեզուն և բոլոր գրողները. և սակայն ի վերջոյ նախագահ Կարապետ եպիսկոպոսի հրաւիրմամբ խօսեցայ մօտաւորապէս հետեւեալը. «Արդէն ռուսահայ և արեւմտահայ աշխարհաբարներն իրենց ստրոք մէկ մէկէ այլազան տարազներ կը ներկայացնեն. բաց աստի, ռուսահայ գրողներէն շատեր տարբեր ուղղագրութիւններ որդեգրած են արդէն, մինչ սոյն մասնախումբն ևս արեւելեան մտաւորականութեան բոլոր հոսանքները չի պարփակեր: Որով կասկածելի է, թէ նոյնիսկ ռուսահայութեան մէջ ընդհանուր ընդունելութիւն պիտի գտնե՞ն ձեր գծելիք օրէնքները կամ փոփոխութիւնները, թերեւս արդէն տիրող քաոսին, ինչպէս կ'ակնարկեն ոմանք, վատթարագոյն քաոս մը յաջորդէ:

Գալով արեւմտահայութեան, որ զանց կ'առնուի այսպիսի կարեւոր հարցի մը ուսումնասիրութեան մէջ, ապահովապէս մեծ հակառակութեամբ պիտի դիմաւորէ ձեր գալիք որոշումները: Աւելի տրամաբանական և նպատակայարմար չէ՞ր ուրեմն սոյն հարցը յանձնել այնպիսի կաճառի մը, որուն մէջ արեւելահայերէ զատ ներկայացուցիչներ ունենային նաև Պոլիս, Իզմիր, Արմաշ, Երուսաղէմ, զոյգ Մխիթարեանները և նոյնիսկ գաւառացի մտաւորականութիւնը: Իմ խոնարհ կարծիքով, եզրակացուցի, ազգին զոյգ մեծ հատուածներու ներկայացուցիչներէ կազմուած համազգային ակադեմիա մը և եթ իրաւասու է այս մասին և նա միայն պիտի յաջողի լուծել հայ լեզուի ուղղագրութեան մէջ տիրող տարբերութեանց և դժուարութեանց կնճիռը:

...գուցէ այդպիսի ակադեմիա մը իսկ ինքզինք անձեռնհաս նկատէ փոփոխութիւններ ներմուծելու 15 երկար դարերու հայ գրականութեամբ և ժողովուրդի գործածութեամբ նուիրագործուած ուղղագրութեան դրութեան մէջ. մեր երանելի նախնիք անշուշտ ժամանակին նկատի առած են հայ կենդանի բարբառներու օրէնքները և հնչումները և ըստ

417 Նույն տեղում:
418 Նշվ. աշխ., Բ, էջ 215:
419 Նշվ. աշխ., էջ 214:
420 Նշվ. աշխ., Բ, էջ 214-215: Ի դեպ, հաջորդ օրը՝ կեսօրվա ճաշի ժամանակ, Աֆրիկյանն իր ասած խոսքերի համար ներողություն է խնդրում Երամյանից (էջ 216):

այնմ կազմած են այբուբէնը, զոր հայ ժողովուրդը ընդունած և իւրացուցած է մինչև այսօր:

Վերջապէս, ըստ իս, ուղղագրութեան հարցին չափ կարեւոր է կազմութիւնը հայ լեզուի նոր բառարանի մը, որուն մէջ ընտրանօք մուտ գտնեն գաւառաբարբառներու բառերը, ոճերը, ասութիւնները ևն. ևն»[421]:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Իր առաքելութեանը հավատարիմ՝ Վաղարշապատից հետո Երամյանի հաջորդ կարևոր հանգրվանն է լինում Թիֆլիսը: Այստեղ 1913 թ. նոյեմբերի 12-ին վարժարանի համար նյութական միջոցներ հայթայթելու նպատակով տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ կազմվում է մի մասնաժողով (անդամներն էին բժ. Բ. Նավասարդյանը, Հ. Առաքելյանը, Ալ. Մելիք-Ազարյանը, Մ. Քալանթարյանը, Ստ. Մալխասյանը, բժ. Ա. Շխյանը, Ավ. Եզեկյանը)[422]:

1913 թ. դեկտեմբերի 11-ին Թիֆլիսում՝ Կովկասի հայոց բարեգործական ընկերության դահլիճում, Հ. Երամյանի դասախոսությունը տևում է 2 ժամից ավել, որի մասին նշվել է. «Պ. Երամեան, որ տեսողութիւնից զուրկ է, կարողացաւ յիշողութեամբ տալ ունկնդիրներին բաւականին նիւթ ընդհանրապէս Վանայ վիլայէթի և մասնաւորապէս Վան քաղաքի ու նրա ազգաբնակչութեան մասին: Պ. Երամեան հիմնադիրն է եղել Վանայ «Երամեան վարժարանի, որ իր գոյութիւնը պահել է 36 տարուց ի վեր: ...պ. Երամեան, խօսեց նաև իր վարժարանի մասին և ասաց, որ ռուս կառավարութիւնից տարեկան 100 ռսկի օգնութիւն է ստանում, ռուսաց լեզուն դասաւանդելու համար: Այդ վարժարանը այժմ ունի 4 նախակրթարաններ և 7 հիմնական դասարան, իսկ VIII էլ առաջիկայ տարի բացելով՝ նա պիտի լինի հայկական կոլէժ, և որ մրցելու է օտարների հետ»[423]:

Ինչպես ինքը՝ Երամյանն է նշում, վարժարանը բարձրագույն ուսումնական հաստատության մակարդակին և կարգավիճակին հասցնելն իր վաղեմի երազանքն էր. «Վարժարանը եւրոպական իմաստով երկրորդական աստիճանի (secondaire) կամ լիսէի բարձրացնել ուսմանց բոլոր ճիւղերուն մէջ...: Հաստատութեանս աստիճանական բարձրացումը մինչև 1913 և իր գրաւած դիրքը կը քաջալերէր և միանգամայն կը մղէր զիս ի գործ: Նիւթականը կը պակսէր սակայն և վերջին տարիներու յարաճուն խոշոր պիւտճէովն իսկ կարելի չէր գոհացում տալ իմ ձգտումներուս, որոնց նպատակն էր ուսումնախնդիր երիտասարդութիւնը մայրենի հողին հետ կապուած պահել և ըստ կարելւոյն տալ անոր բաղձացուած կրթութիւնը ազգային շնչով»[424]:

ԵՐԱՄՅԱՆԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ ԵՎ ԻԶՄԻՐՈՒՄ

1914 թ. ապրիլին Թիֆլիսից Հ. Երամյանը մեկնում է Կ.Պոլիս: 1886 թ.-ից ի վեր արդեն երկրորդ անգամ էր գտնվում Պոլսում. «Համբարձում Երամեան Վանայ համանուն վարժարանին աչազուրկ հիմնադիրն ու տնօրէնը Պոլիս կը գտնուի այս պահուս: Ս. պատրիարքին նախագահութեամբ իրեն ի պատիւ հաւաքոյթ մը տեղի ունեցած է և գնահատական ատենախօսութիւններ եղած են»[425]: Նա հանդիպում է արևմտահայ գրականության խոշորագույն դեմքերից մեկին՝ Դանիել Վարուժանին[426]:

1914 թ. մարտի 9/22-ին Սիլլոդոսի սրահում տեղի է ունենում ուսուցչապետին նվիրված հանդես, որին մասնակցում էին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Զավեն Եղիայան Պաղտատցին, Երուսաղեմի պատրիարքական փոխանորդ Սմբատ վրդ. Գազազյանը, Զարմայր քահանա Կյոզուրյանը և 200-ից ավելի հրավիրյալներ, վանեցի վաճառականներ և ուսանողներ: Ելույթ ունեցողների թվում էին Կ.Պոլսի պատրիարքը, Վահան Փափազյանը, Մարկոս Նաթանյանը, Կարապետ Սոլախյանը, Գեղամ Վանիկյանը, Զարմայր քահանան, Մելքոն Կյուրճյանը (Հրանտ) և Գրիգոր Զոհրապը, իսկ վարժարանի սաներից Գեղամ Վանիկյանը «եռանդուն ատենախօսութեամբ մը բացատրեց այդ դպրոցի դաստիարակութեան ոգին. «Անհատական է, ըսաւ, բայց բուն իսկ հին ռէժիմի ատեն, նորագոյն ոգիով, ազգային ոգիով կը կրթուէին աշակերտները: Այդ դպրոցը ընտանեկան յարկ մըն է, ուր ուսուցիչներն ալ՝ տնօրէնին նման փարած են գործին: ...յիշեց պ. Համբարձումին մէկ խօսքը, թէ՝ «Իմ ամբողջ փառասիրութիւնս այն է, որ իմ մահէս ետքը դպրոցը նոյն շաւղով քալէ»[427]:

Արևմտահայ ակնառու գրողներից մեկը՝ Գրիգոր Զոհրապը, բարձր գնահատելով Երամյանին, նշում է. «Ամէնքն ալ... այս ծերունին կը յարգեն իբր մտքի, կրթութեան վեթերան մը, իսկ ես, պ. Երամեան, ձեր մէջ կը տեսնեմ և կ՚ողջունեմ վիպասան մը. դուք ո՛չ թէ վէպ գրած էք, այլ ձեր կեանքը վէպ մը եղած է. ամէնէն առասպելականը չգրեցիք դուք, այլ ապրեցաք անոր մէջ: Ջողի նման բնութենէ զրկուած մը ...կ՚ընկճուի, իսկ դուք, փոխանակ ընկճուելու, փոխանակ ուրիշին բեռ ըլլալու, դուք հարիւրաւորներու բեռը տարիք: *Լոյսէ զուրկ, լոյս տարածեցիք*»[428]: Գր.

421 Նշվ. աշխ., Բ, էջ 217-218:

422 «Մշակ», 1913, № 254, 14 նոյեմբերի, էջ 3:

423 **Գ. Վ.**, Պ. Երամեանի դասախօսութիւնը Վանայ մասին, «Կովկասի լրաբեր», 1913, № 279, 13 դեկտեմբերի, էջ 3: Այս դասախոսության մասին տե՛ս նաև «Մշակ», 1913, № 277, 13 դեկտեմբերի, էջ 2: **Ա. Գ.**, Հ. Երամեանի դասախօսութիւնը, «Հորիզոն», 1913, № 280, 14 դեկտեմբերի, էջ 4:

424 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 194:

425 «Ազգ», 1914, № 43, 15 ապրիլի, էջ 1:

426 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 98:

427 «Ազատամարտ», 1914, № 1460, 11/24 մարտի, էջ 3:

428 Նույն տեղում:

Զոհրապը զուգահեռներ է անցկացնում նրա և Մկրտիչ Սանասարյանի միջև. «...Երամեանի գործը աւելի մեծ է, քան Սանասարեանինը, որ հեռաւոր տեղէ իր հարստութեան աւելցուքներով դպրոց մը հիմնեց Կարինի մէջ, ,,Իրապէս յարգելի ձեռնարկ, բայց անբաղդատելի Երամեանի հետ, որ չեղածէն ստեղծեց,,»[429]:

Շնորհակալական խոսքում ուսուցչապետն ընդգծում է, որ հաջողության գաղտնիքը «...այդ գործին նուիրման մէջն է. ,,Ես կեանքի քանի մը կանոններ ընտրեցի. գործը երբէք հաճոյքի չզոհել, չազդուիլ ո՛չ գովեստներէ և ո՛չ պարսաւներէ, օգտուիլ քննադատութիւններէ, ամբողջ կեանքի մէջ սովորող ըլլալ, և այլն: Եւ այդ կանոններով յաջողեցայ...: Ես դեռ ծերունի չեմ, ...այլ բաւական ծեր. 57 տարեկան եմ, դեռ գոհ չեմ, դեռ պարտականութիւններ ունիմ կատարելիք և ֆիզիքական ուժերս փորձեցի ու տեսայ, որ կարող եմ: Նոր հորիզոններ բացուած են այժմ Հայաստանի մէջ Բարենորոգումներու գործադրման ատեն, եթէ Հայաստանի հայը կրթութեամբ և զարգացմամբ չպայքարի, կ'այլասեռի և օտար մրցմանց չպիտի կրնայ տոկալ, որով օտարներուն ձեռքը կ'անցնի ամէն ինչ,,»[430]: Այնուհետև հավելում է, որ իր համոզմամբ՝ «անհատական հսկողութեամբ, առանց ազգային մարմիններուն գլուխը ցաւեցնելու, աւելի լաւ կը յարատեւէ դպրոցը. ,,իմ սաներուս, իմ ուսուցիչներուս և իմ զաւակներուս պիտի յայտնեմ իմ այդ վերջին կամքս: Իսկ եթէ անոնք անընդունակ եղան տանելու գործը, այն ատեն իրաւունք պիտի տամ, որ Ազգը ձեռք դնէ դպրոցի վրայ»[431]:

Զավեն պատրիարքը, արժևորելով Երամյանի գործունեությունը, հանդեսը եզրափակում է հետևյալ գնահատականով. «...Վանայ մէջ, որուն հողը ամէն տեսակ ծաղիկներու սերմեր կ'աճեցնէ, նոյնպէս միտքը ամէն գաղափարներու տեղ կուտայ, և այդ հակընդդէմ գաղափարներու և բուռն հովերու միջև 35 տարի տոկաց Երամեան, կոյրի մ'է պէս հանդարտ, բայց հաստատուն քայլերով: Իր մեծութիւնը ահա ատոր մէջ է»[432]: Հարկ է նշել, որ Պատրիարքարանն իր հերթին «հանգանակութիւն մը բացուած է ի նպաստ Վանայ Երամեան կրթական հաստատութեան, որ հիմնուած անհատական նախաձեռնութեամբը աչազուրկ ուսուցիչ Պ. Համբարձում Երամեանի, 1878ին, և պահուած ու զարգացած է անընդհատ մինչեւ այժմ, ճիշտ 36 տարի: Մինչեւ հիմա հոն ուսում առած են երեք հազար հոգի: Վարժարանը Վանի բարձրագոյն կրթական հաստատութիւնն է, ունի 400 աշակերտ, որուն մէկ չորրորդը ձրի. ուսուցիչներու թիւն է 20, կարգերու թիւը՝ 11, տարեկան պիտուճէն 1,600 օսմ. ոսկի»[433]:

Պոլսահայերին և ընդհանրապես հայ հանրությանը վարժարանն առավել ճանաչելի դարձնելու նպատակով Հ. Երամյանի՝ Պոլսում գտնվելու ժամանակ լույս է տեսնում կրթօջախի պատմությանն ու ներկային նվիրված մի գրքույկ[434]:

Կ.Պոլսից Հ. Երամյանը 1914 թ. հունիսին հասնում է Իզմիր՝ «իր դպրոցին ապագան ապահովելու և հաստատուն պիտուճէ մը ստեղծելու համար»[435]: Ի դեպ, Հրանտ Մամուրյանը կրթօջախին նյութապես աջակցելու կոչ է տպագրում իր խմբագրությամբ լույս տեսնող «Դաշինք» օրաթերթում[436], իսկ հուլիսի 6/19-ին Սբ. Մեսրոպյան վարժարանի բակում տեղի է ունենում «բազմավաստակ Ազգ. դաստիարակ» Հ. Երամյանին նվիրված հանդես, որի ընթացքում «Ֆրանսերէն արտասանութիւն պիտի ընէ պ. Ն. Մ. Գասպարեան (երբեմնի սան Երամեան վարժարանի), պիտի նուագէ քնարի ֆանֆառը և պիտի երգէ երգեցիկ խումբը»[437]:

ԵՐԱՄՅԱՆԻ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՀԱՆԳՐՎԱՆԸ՝ ԵԳԻՊՏՈՍ

1914 թ. սեպտեմբերին (նոր տոմարով՝ հոկտեմբերին)՝ երկուսուկես օրվա նավարկումից հետո, ուսուցչապետը հասնում է Եգիպտոս. «Եւ ահա նոր սինէմա՝ աւելի քան 50 դարերու պատմական անցից: Քանի-քանի ազգեր ու լեզուներ իրարու յաջորդած են յԵգիպտոս, թողլով իրենց ետեւէն անթիւ աստուածներ ու փայլուն քաղաքակրթութիւններու հետքեր»[438]: Մտորելով տեղի հայերի մասին՝ նշում է. «Աւա՜ղ, կորած են հին սերունդները, գլխաւորապէս այն պատճառաւ, որ չունէին հայ դպրոց, որ գաղթավայրերու մէջ եկեղեցիէն աւելի անհրաժեշտ պայմանն է ազգային գոյութեան պահպանման»[439]:

Նույն թվականի նոյեմբերի սկզբներին Ալեքսանդրիայում Երամյանի պատվին Պողոսյան վարժարանում (տեսուչ՝ Մեսրոպ Ժամկոչյան) կազմակերպված բարի գալուստի թեյասեղանի շուրջ (նախագահն էր Պարսկաստանի դերիայուպատոս Տելեմաք բեկ

429 Նույն տեղում:
430 Նույն տեղում:
431 Նույն տեղում:
432 Նույն տեղում:
433 «Ազատամարտ», 1914, № 1502, 16 մայիսի, էջ 3:

434 Վանի Երամեան վարժարանը, Կ. Պոլիս, 1914: Ի դեպ, որպես բնաբան՝ Երամյանը զետեղում է բրիտանացի փիլիսոփա Ջոն Ստյուարտ Միլի (1806-1873) հետևյալ խոսքերը. «Կյանքը ոչ վիշտ է և ոչ հաճույք, այլ բեռ է, որ հարկ է պատվով կրել»:
435 **Ար.**, Ընթացիկ կեանքը, «Հորիզոն», 1914, № 218, 3 հոկտեմբերի, էջ 4: Ի դեպ, Իզմիր է հասնում շոգենավով («Աշխատանք» [Իզմիր], 1914, № 76, 28/11 յուլիսի, էջ 2):
436 **Հ. Մ.**, Վանի Երամեան վարժարանը, «Դաշինք» [Իզմիր], 1914, № 1494, 28 յունիսի, էջ 1: Կրթօջախի գործունեության և աջակցության կոչի մասին տե՛ս նաև Տեղեկութիւններ Վանի Երամեան վարժարանի մասին, «Դաշինք», 1914, № 1495, 29 յունիսի, էջ 1:
437 «Աշխատանք» [Իզմիր], 1914, № 77, 5/18 յուլիսի, էջ 3: Նշենք նաև, որ հանդեսի ժամանակ «...կրթական հարցին շուրջ հմտալից բանախօսութիւն մը ըրաւ Վանի Երամեան վարժարանի հիմնադիր պ. Համբարձում Երամեան» («Աշխատանք», 1914, № 78, 12/25 յուլիսի, էջ 3):
438 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 299:
439 Նշվ. աշխ., էջ 301:

Թյուրյունճյանը) ուսուցչապետը, ի պատասխան դերիյուպատոսի ոգևորության, խոսք է խնդրում և շնորհակալություն հայտնելուց հետո ռուսամետ անձերին ասում հետևյալը. «Կը փորձուիմ կասկած յայտնել ռուսներու քաղաքականութեան և վճռական յաջողութեան նկատմամբ, յայտարարելով, թէ ռուսները ոչ թէ միայն բարեացակամ չեն դէպի հայկական անկախութիւնը, այլև նոր նահանջներով կրնան ինչպէս անցեալին՝ կրակի ու սուրի մատնել գրաւեալ վայրերու հայ բնակչութիւնը: Ներկաներէն մասնաւորապէս ծխախոտի գործարանատէր Տիգրան Կամսարական, Շահնազարի ու Արփիարի «Հայրենիք»-ին երբեմնի աշխատակից ու հայ գրականութեան մեծ վարպետը, նաև հրապարակագիր և օրէնսգէտ Լեւոն Մկրտիչեան ուժգին կը բողոքեն իմ յոռետեսութեանս դէմ: Անոնք հայութեան փրկիչ կ՚անուանեն Հիւսիսի հսկան, մանաւանդ որ ճնշուածներու բարեկամ արեւմտեան երկու մեծ պետութիւնները՝ Ֆրանսա և Անգլիա՝ դաշնակիցներն են անոր»[440]:

ԵՐԱՄՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆ ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ինչպես վերնասացյալում նշել ենք, մեկնումից առաջ Երամյանը հոգու ամենայն հանգստությամբ վարժարանի կառավարման ողջ պատասխանատվությունը դրել էր փոխտեսուչ Մարտիրոս Նալբանդյանի վրա. «...իմ ձեռնասուն անդրանիկ սաներէս միոյն՝ Մարտիրոս Նալպանտեանին, որ պիտի օգտուէր ո՛չ միայն իր կարողութիւններէն և պաշտօնակիցներու անձնուիրութենէն, այլև դպրոցի աւանդական հմայքէն՝ իրեն վստահուած թանկագին աւանդը անվթար պահպանելու համար մինչև յուլիսեան նահանջը՝ 1915»[441]:

Կրթօջախի կառավարման խնդրի կազմակերպման վերջին տարիների մասին ուշագրավ է ուսուցիչ Արմենակ Փոխարյանի վկայությունը. «Իմ օրինակով քաջալերուած՝ Երամեանը յաջորդ տարուան աւարտողներէն չորս հոգի պահեց դպրոցը, իբր ուսուցիչ, եւ հեռացուց բոլոր խորթ ու անհարազատ տարրերը, որով դպրոցը մնաւ իր բնականոն հունին մէջ: Մարտիրոսն ու Մամբրէն ալ վերադարձած լինելով՝ Երամեանը վերջին տարիներուն հանգիստ սրտով դպրոցը յանձնեց իր սաներու խնամքին ու ինք արտասահման անցաւ դպրոցի ապագան ապահովելու նպատակով»[442]:

Արդեն ուսուցչապետի բացակայության պայմաններում 1913 թ. սեպտեմբերի 15-ին վարժարանի սրահում տեղի է ունենում Գոնտաքչյան իգական վարժարանի հինգերորդ տարեշրջանի բացման հանդեսը (մուտքը՝ 2 դուրուշ)[443]:

1913 թ. հոկտեմբերին տրվում է «կուսակալութեան կողմէն Երամեան դպրոցին խոստացուած 100 ոսկիէն 50ը վճարելու հրաման»-ը[444]: Դարձյալ հոկտեմբերին «Երամեան վարժարանի սրահին մէջ Վանի բոլոր հայ դպրոցներու, ընկերութիւններու եւ մամուլի ներկայացուցիչները մօտաւորապէս 50-60 հոգի ժողով մը ունեցան, ուր երկարօրէն խորհրդակցելէ ետք համազգային յոբելեաններու առթիւ կրթական ֆօնտ մը կազմելու մասին՝ ընտրեցին հանգանակիչ յանձնաժողով մը: Այդ յանձնաժողովին նպատակը պիտի ըլլայ սկսիլ հանգանակութեան: Պատրիարքարանի կողմէ այդ տօներու առթիւ, եթէ համազգային ձեռնարկ կը ըլլայ, հանգանակուելիք գումարը պիտի յատկացուի այդ ձեռնարկին, հակառակ պարագային պիտի տրուի տեղական կրթական գործին»[445]:

Նոյեմբերին նշվել է, որ կառավարության արտոնությամբ «Երամեան վարժարանի մէջ բացուած է փափագողներու համար, ռուսերէնի դասընթացք, ամէն օր, կէսօրէ վերջ». ցանկացողները դիմեն ուսուցիչ Ավետիք Տ. Գասպարյանցին[446]:

1913 թ. դեկտեմբերի 1-ին վարժարանի սրահում նշվում է Մարսելում հիմնադրված «Արմենիա» թերթի 25-ամյա և Մկրտիչ Փորթուգալյանի գործունեության 40-ամյա հոբելյանը[447], իսկ 7-ին՝ հայ հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ հիմնադիր-անդամ Սիմոն Զավարյանին նվիրված գրական-երաժշտական երեկույթ[448]:

1913/14 ուստարում վարժարանում ավելանում է 7-րդ դասարանը, որով և Վարժապետանոցի և Երամյան վարժարանի ծրագրերը հավասարվում են[449]: Նույն ուստարում «աշակերտաց թիւն եղած է 382, որոնցմէ 82-ը ձրիավարժ: Ունեցել է 12 դասարան և 20 ուսուցիչ»[450]:

1914 թ. հունվարի 11-ին և 18-ին Երամյան վարժարանի սրահում ներկայացվում է ֆրանսիացի

440 Նշվ. աշխ., Բ, էջ 310-311:

441 Նշվ. աշխ., Ա, էջ 174:

442 **Փոխարեան Ա.**, նշվ. հոդվ., «Հայրենիք», 1938, № 1, էջ 55:

443 «Աշխատանք», 1913, № 45, 21 սեպտեմբերի, էջ 6:

444 «Աշխատանք», 1913, № 50, 26 հոկտեմբերի, էջ 8:

445 «Աշխատանք», 1913, № 48, 12 հոկտեմբերի, էջ 16:

446 «Աշխատանք», 1913, № 3, 16 նոյեմբերի, էջ 8:

447 **Մտրակ**, Արձագանքներ Վասպուրականից, «Մշակ», 1914, № 7, 18 յունվարի, էջ 4: Տե՛ս նաև **Արէգ**, Մ. Փորթուգալեանի յոբելեանական հանդէսը, «Հորիզոն», 1913, № 290, 26 դեկտեմբերի, էջ 3: Նշելի է, որ տակավին 1912 թ., թերթի հոբելյանական հանձնաժողովի կազմում ընդգրկված Երամյանի առաջարկով որոշվում է տոնել նաև հայ ազատագրական շարժման գործիչ, «Արմենիա» թերթի հիմնադիր, ուսուցիչ Մկրտիչ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական գործունեության 40-ամյակը (**Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 271):

448 **Ա. Հրահատ** /Արսեն Աբրահամյան/, Երեկոյթ ի յիշ. Զաւարեանի, «Աշխատանք» (Իզմիր), 1914, № 53, 18/31 յունվարի, էջ 2-3:

449 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 178-179: Վարժապետանոցի չորրորդ՝ 1913/1914 տարեշրջանում տեսուչ Մինասյանը նոր դասարան կազմելու համար ընդունելությունն այնքան է դյուրացնում, որ Երամյան վարժարանի ուսումնական բաժնի Գ. դասարանն ավարտողներն անգամ կարող էին ընդունվել Վարժապետանոցի առաջին դասարան:

450 **Ար.**, Ընթացիկ կեանքը, «Հորիզոն», 1914, № 218, 3 հոկտեմբերի, էջ 4:

թատերագիր Էժեն Սկրիբի հայտնի «Հրէուհի» դրաման՝ ի նպաստ «Աշխատանքի տան» ֆանֆառին: Չնայած աննպաստ եղանակին՝ սրահը լեփ-լեցուն էր մինչև դուռը[451]: Տարեսկզբին Թիֆլիսի «Հորիզոն» թերթը, Բաքվի «Зугульбинский водопровод» ընկերության վարչությունից ստանալով 400 ռուբլի (խմբագրությունն իր հայեցողությամբ թերթի օրինակներ պետք է ուղարկեր զանազան վայրեր), վարժարանի տնօրինությանն է ուղարկում «Հորիզոն» թերթից[452]:

1914 թ. մայիսի 10-ին՝ «շաբաթ, երեկոյեան ժամը 2-ին Երամեան սրահին մէջ ներկայացուեցաւ «Դամոկլեան սուր» դրաման և «Չարշըլը Արթին» զաւեշտը: Սրահը հազիւ 3/4 լեցած էր, ներկայացումը ընդհ. առմամբ յաջող անցաւ. արդիւնքը պիտի յատկացուի «Կարմիր օրեր»-ու (Վանի 1896-ի դէպքերու նկարագրութիւնը) վերստին հրատարակման համար, աւելի ճոխացեալ և գործող, կուռող ու նահատակող յեղափոխականներու նկարներով»[453]:

Հունիսի 7-ին «Երամեան սրահին մէջ, կուսակալի նախագահութեան ներքև, թուրքերէն լեզուով ներկայացուեցաւ Մոլիէրի «Ակամայ բժիշկ»-ը ի նպաստ նոր գնուելիք զրահաւորին: Դերասանները Հնչակեան կուսակցութեան պատկանող կամ համակիր հնչակեան անհատներ էին: Սրահը գրեթէ լեցած էր, հանդիսականներն էին թիւրք զինուորական ու քաղաքական պաշտօնեաներ, կոնսիլներ և բողոք. միսիոնարներ: Ջուտ շահի կ'ենթադրուի 100-120 լիրայ»[454]:

Սեպտեմբերի 25-ին Վանի դպրոցները վերաբացվում են, սակայն «Ներկայ քաղաքական հանգամանքներու պատճառաւ Երամեան վարժարանը չկարողացաւ ունենալ դպրոցին բացման հանդէսը: Դպրոցը վերաբացուեցաւ, ունենալով նախորդ տարուան կազմում պատրաստ ուսուցչական խումբը: Բ. տարին է, որ պ. Մարտիրոս Նալբանդեան (դպրոցի տեսուչը) ամենայն յաջողակութեամբ կը պահպանէ պ. Հ. Երամեանի իրեն պահ տուած աւանդը»[455]:

Սեպտեմբերի 29-ի թվակիր նամակի համաձայն՝ «Երամեան վարժարանը ունեցած է 146,360 1/4 ղրշ. մուտք: Այս տարի ել և մուտք զիրար կը հաւասարակշռեն, ինչ որ մխիթարական երևոյթ մըն է: Գլխաւոր եկամուտն է աշակերտաց թոշակը, որ այս տարի հասաւ 68,558 1/2 ղրշ., իսկ թուրք կառավարութենէն ստացած է 5,258 ղրշ, ռուս կառավարութենէն 10,800 ղր., իսկ կովկասահայերէն պ.պ. Մելիք-Ազարեան և Բոգդան Տ. Գասպարեան նուիրած են 21,600 ղր. և պ. Համբարձում Երամեան Պոլսէն ղրկած է 21,600 ղր. ևն»[456]:

1914 թ. Վանի կուսակալ Թահսին բեյը, որ հայտնի էր հայերի նկատմամբ իր բարյացակամ վերաբերմունքով, Համբարձում Երամյանին շնորհում է «Ուսմանց եւ արուեստի» մեդալը[457]:

Վարժարանին նյութապես որոշ չափով սատարում էր նաև պետությունը: Մասնավորապես 1913/14 ուստարում Վանի նահանգի կրթական 807,500 ղուրուշ կազմող բյուջեից ոչ մահմեդականներին հատկացվող 77,000-ից 2,400 ղուրուշ տրամադրվել էր Երամյան վարժարանին[458]:

Պետք է նշել, որ 1914 թ. ապրիլին Պոլսի լրագրերը հաղորդում են, «...թէ Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը որոշած է 4000 ռուբլի յատկացնել հետևեալ թիւրքահայ հաստատութեանց. 1000 ռուբ. Կարնոյ Նոր Սանասարեանին, 1000 ռ. Վանայ Կեդրոնական վարժարանին, 1000 ռ. Աղթամարի թեմական վարժարաններուն, 1000 ռ. Մուշի դպրոցներուն»: Այս բաշխման մեջ Երամյան վարժարանի անվան բացակայությունը մեծ զարմանք էր պատճառել, որի առթիվ նշվել է. «Հ. Երամեանի հաստատութիւնը մասնաւոր անհատական վարժարան մըն է, որ գէթ անկուսակցական գետնի վրայ 35 տարիներէ ի վեր նուիրուած է գաւառացւոց: Հ. Երամեան երկրորդական կրթութիւն մը տալով տեղւոյն վրայ Վանայ երիտասարդութեան՝ վերջնոյս ստոր միջավայրեր առաջնորդուելու հոսանքին կընդդիմանայ և անոնք երկրին կը պահէ: Մինչդեռ կը տեսնուի, որ, ընդհակառակը, բոլոր այն պատանիները, որոնք կը թողուն իրենց հայրենիքը և Կ. Պոլիս կամ այլուր կը դիմեն երկրորդական կրթութիւն առնելու համար, այլեւս չեն ուզեր դառնալ իրենց հայրենիք: Հետևաբար Հ. Երամեան շատ գնահատելի ծառայութիւն մը կը մատուցանէ՝ հայրենի երկրին մէջ ծառայելով ազգային կրթութեան»[459]:

1914-1915 թթ. ձմռանը Երամյան վարժարան է այցելում Հովհ. Քաջազնունին (Միրմանյան ծածկանունով)[460]:

ՊԱՇՏԵԼԻ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԵՎ ՀՈԳԵԶԱՎԱԿ ՎԱՐԺԱՐԱՆԻՑ ՀԵՌՈՒ, ՍԱԿԱՅՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱԿՆԹԱՐԹ ՆՐԱՆՑ ՀԵՏ

Մտքով ու հոգով անվերջ իր վարժարանի և Հայրենիքի հետ՝ 1915 թ. սկզբներին Ալեքսանդրիայի «Բրեն-

451 «Հորիզոն», 1914, № 36, 19 փետրուարի, էջ 4:

452 «Հորիզոն», 1914, № 29, 7 փետրուարի, էջ 3:

453 **Արէգ**, Ընթացքիկ կեանքը, «Հորիզոն», 1914, № 115, 30 մայիսի, էջ 4:

454 «Հորիզոն», 1914, № 141, 2 յուլիսի, էջ 3:

455 **Ար.**, նշվ. հոդվ., նույն տեղում:

456 Նույն տեղում:

457 **Յարութիւնեան Վ.**, Կոյր աչքերով, պայծառ մտքով, «Վարագ», 2007, № 54, էջ 52: Կարծում ենք՝ տարեթվի շփոթ կա: Թերևս խոսքը վերաբերում է 1913 թ. օգոստոսի 18-ին կայացած վարժարանի 36-րդ տարեշրջանի վերամուտին, որին մասնակից էր նաև Թահսին բեյը (հավելենք, որ Երամյանն այդ պարգևատրման մասին որևէ տեղեկություն չի հաղորդում):

458 **Ասպետ**, Կառավարութիւնը ինչպէ՞ս կը բաշխէ կրթական պիւտճէն, «Աշխատանք», 1913, № 43, 7 սեպտեմբերի, էջ 2: Ի դեպ, 1914 թ. Թուրքիայի կրթության նախարարությունը հատկացնում է 5000 ղուրուշի նպաստ («Ասպարէզ», 1914, № 293, 20 մարտի, էջ 2):

459 **Շառայլ**, Վոսփորի ափերէն, «Մշակ», 1914, № 94, 3 մայիսի, էջ 3-4:

460 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 468:

թանիա» թատրոնում Դաշնակցության կազմակերպած երեկույթ-հանդեսին Երամյանն իր ելույթում կուսակցություններին կոչ է անում գոնե այս վճռորոշ պահին միավորվել հանուն Հայրենիքի. «Ես շեշտեցի գլխաւորապէս այն միտքը, թէ երբ գոյութեան պայքարն է, որ կը մղուի և լինել չլինելու խնդիրն է, որ կը համադրուէ բովանդակ հայ ժողովուրդը, պէտք է ուրեմն որ կուսակցութիւնները մոռնան իրենց եսը և ամէնքը մէկ դրօշակ ընտրեն, այն է՝ հայրենիքի դրօշակը և անոր ներքև կռուին: Ո՞ր կուսակցութիւնն է, որ գոչեցի, կը յաւակնի հայրենիքի փրկութեան ահաւոր պատասխանատուութիւնը միայնակ ստանձնել...: Եթէ կամաւորական շարժման նպատակն է կատարուած իրողութեան մը հանդէպ դնել անխիղճ դիւանագիտութիւնը, որ ուժին առջև միայն տեղի կուտայ, առնուազն ո՛չ թէ 7-8, այլ 50 հազար սուիններ պէտք են՝ ոյժ տալու համար կաթողիկոսական պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպարին, որ կանանչ սեղաններու զօրապաշտ ասպետներուն հետ սակարկելու և հայութեան ճակատագիրը վճռելու կ'երթայ»[461]:

1915 թ. մարտին Կահիրեի հայկական ակումբում տեղի են ունենում բանախոսություններ: "Le Journal du Caire"-ի խմբագիր Ժորժ Վեյսիեն հորդորում է «հայ ազգը չափաւորելու ոգեւորութիւնը և մանաւանդ ձգտումներ կամ յոյսեր չտածելու Կիլիկիոյ մասին, որ Սուրիայի հետ Ֆրանսայի բաժինը պիտի լինէր՝ անդամատուելիք Թուրքիայի աւարէն...: Ժորժ Վէյսիէի բանախօսութիւնը մեր երազներուն խանդաբորբ կաթսային վրայ պաղ ջուր կը լեցնէր թէպէտ, սակայն մենք չէինք ուզեր կամ չէինք կրնար անսիրտ դիւանագիտութեան դիւային ծրագիրներուն խորը թափանցել և պիտի շարունակէինք մեր յուսավառ ու ազատատենչ ձգտումներուն համապատասխան գործունէութիւն մը, զոր օտարներ ևս քաջալերեցին և արծարծեցին, զմեզ գործիք դարձնելով իրենց նենգ քաղաքականութեան:

Ամէնէն առաջ, Կովկասի փոխարքան Վորոնցով-Դաշկով՝ այդ ծեր աղուէսն էր, որ դեռ նոյնիսկ պատերազմի չսկսած, բարոյական և զինական միջոցներով պիտի խրախուսէր հայ գործիչները և մասնաւորապէս դաշնակցականները՝ յառաջապահ և օժանդակ հանդիսանալու ռուսական արշաւանքին, ինչպէս եղած էր Ներսէս Աշտարակեցիի օրերը և յաջորդ արեւելեան պատերազմներուն: Ցարին կառավարութիւնը հայերը սիրաշահելու դիտումով արդէն 1912ին ազատ արձակած էր բոլոր հայ քաղաքական յանցաւորներն ու աքսորականները, որոնք մեծ մասամբ դաշնակցականներ էին: Իբրև հետևանք սոյն իրողութեանց՝ պատերազմի յայտարարութեան վաղորդայնին Կովկասի մէջ սկսան հնչել կամաւորական գոռ մարտակոչեր: Թիւրքերն՝ իրենց կարգին՝ Դաշնակցութեան Էրզրումի համաժողովին, հոկտ. 1914, առաջարկ կը բերէին թրքահայերէ կամաւորական գունդեր կազմել ռուսաց բանակին դէմ կռուելու համար, ի փոխարէն խոստանալով թրքական Հայաստանէն մաս մը Ռուսահայաստանի հետ միացնել և ինքնավար հայկական նահանգ մը ձեւացնել Թուրքիոյ հովանաւորութեան տակ: Համաժողովը բանաւոր առարկութիւններով կը մերժէ այդ առաջարկը...

Թուրքերը նմանօրինակ խոստումներով պիտի յաջողէին սակայն իրենց կողմը շահիլ վրացիները որ պատերազմի սկիզբէն Թուրքիոյ հանդէպ բարեկամական և Ռուսիոյ հանդէպ թշնամական վերաբերում ցոյց պիտի տային և այս պատճառաւ իսկ ո՛չ միայն կոտորածներէ զերծ պիտի մնային ամբողջ պատերազմի ընթացքին, այլ և Պրէսթ-Լիթովսքի դաշնագրութեամբ, մարտ, 1918, մեծ Վրաստանի մը տէր պիտի դառնային գրեթէ առանց ո՛նէ զոհողութեան:

Այլ էր սակայն հայոց պարագան. հայերը չէին կարող ազգային զգացումը խեղդելով իրենց դահիճներուն հետ դաշնակցիլ՝ կռուելու համար ռուսաց բանակին դէմ, որուն մէջ տասնեակ հազարաւոր ռուսահայ զինուորներ ու անձնուէր կամաւորներ կը գտնուէին և որ իբրև արևելքի քրիստոնեաներու ազատարար՝ կուգար այս անգամ ըստ ընդհանուր ակնկալութեան՝ ազատելու Թրքահայաստանը կամ գէթ կերպով մը գործադրելու Սան-Սթէֆանոյի դաշնագրութեան 16րդ յօդուածը...

Ո՛վ կրնար գուշակել սակայն, որ ռուս բանակին նենգժոտ հրամանատարները, 1914ի աշունէն մինչև 1916ի ամառը, Ասիոյ իբր 300 մղոն երկարութեամբ ռազմաճակատի վրայ հերոսացող 7-8 հազար հայ կամաւորներուն ամէն առթիւ զրկանք ու պատրանք պիտի վերապահէին: Իսկ նոր փոխարքան՝ Նիքոլա պիտի ցրուէր հայ կամաւորական վաշտերը և վերջապէս պոլշէվիկեան խօլ շարժումը 1917ի հոկտ., նոյեմ.ին պիտի գար յաղթական ռազմաճակատը թուրքերուն լքելու, որով խանդաբորբ հայերն ըստ կարգի իրենց դժխեմ բաղդին պիտի մատնուէին անօգնական»[462]:

Ապրիլյան հերոսամարտի ժամանակ Երամյան վարժարանի շենքը, բարեբախտաբար, գտնվում էր Այգեստանի պաշտպանական գծից ներս և դրա շնորհիվ էլ անվնաս է մնում: Ուսուցչապետի գնահատմամբ «Վանի ապրիլեան հերոսամարտը նոյն թուականին ո՛չ այլ ինչ էր, բայց եթէ արդիւնք երրեակ կուսակցութեանց համերաշխ գործակցութեան»[463]: Խնդրո առթիվ նաև արձանագրել է. «...անհրաժեշտ կը համարեմ յիշատակել, որ դուրսէն շատերու կողմէ խստիւ քննադատուեցաւ՝ իբրև ուղղակի ապստամբութիւն թուրք կառավարութեան դէմ և նախապատճառ ընդհանուր տեղահանութեան»[464]: Մինչդեռ

461 Նշվ. աշխ., Բ, էջ 321:

462 Նշվ. աշխ., Բ, էջ 317-319, 322:

463 Նշվ. աշխ., էջ 167:

464 Նշվ. աշխ., էջ 323:

«Այո՛, Վանի ինքնապաշտպանութիւնն է, զոր պատմութիւնը պիտի արձանագրէ իբրև միակ մխիթարական երեւոյթ կամ պատահական բարեբաստիկ միջադէպ այս ահաւոր տռամի թաւալման ընթացքին: Եւ սակայն չգիտեմ ո՞ր Աստուծմէ անիծուած հայու անողոք ճակատագիրը վճռած էր Վան-Վասպուրականն եւս պատժել իր կարգին՝ կարճատև ազատութենէ մը յետոյ»[465]:

1915 թ. մայիսի 6-ին ռուսական բանակի հրամանատար Նիկոլանի և սպաների կողմից դպրոցի սրահում, ի պատիվ վանեցիների, կազմակերպվում է մեծ ճաշկերույթ[466]:

Հունիսի 6-ին, երբ Երամյանը մասնակցում է Վանի Ապրիլյան հերոսամարտի հաղթանակի առթիվ Ալեքսանդրիայի Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու ընդարձակ բակում կազմակերպված մեծ ցնծատոնին, բոլորի պես չի կիսում այն խանդավառությունը, որ կար, և նշում է. «Ամենուն մէջ արդեօք ե՞ս միայն չէի բաժներ այդ խանդավառութիւնը, և երբ խօսելու հրաւէր եղաւ ինձ, գրեթէ յակամայից պոռթկացի. «Կանխահաս չէ՞ր արդեօք այս ցնծատօնը, արդեօք ռուսներն իրենց սովորական թաքթիքով նոր նահանջներ չպիտի՞ կազմակերպեն»: Ապա համառոտակի յիշելով Մեծն Պետրոսի, Կատարինէ Բ.ի և ԺԹ դարու երրեակ արեւելեան պատերազմներու միջոցին ռուսաց դաւաճան վերաբերումը դէպի հայեր, մաղթեցի, որ մոսկօֆներն այս անգամ գէթ ամրակուռ կռուան մը հաստատեն գոնէ իրենց մինչև այժմ գրաւած գաւառներու մէջ (Ալաշկերտ-Խնուս-Վան գիծը) և անվնաս պահպանելով Կարնոյ, Պիթլիսի և Վանայ հայութիւնը՝ կազմեն ինքնավար փոքրիկ Հայաստան մը իրենց գերիշխանութեան տակ»[467]: Շատերն են սկսում քննադատել Երամյանին հոռետեսության համար: Միհրան Տամատյանը նրան է ուղղում հետևյալ խոսքերը. «Դուք՝ քաջ Վանեցիքդ արդարև վանեցիք թշնամին, բայց կրակը միայն ձեր բաղարջի՞ն տակը կուզէք»[468]: Միայն Կոստանդին Կամսարականն էր, որը, որպես պետական մարդ և քաջատեղյակ ռուսական նենգ քաղաքականությանը, «լիովին իրաւունք կուտար ինձ»[469]:

1915 թ. հունիսի 29-ին վարժարանի սրահում տեղի էր ունենալու «մեծ պատրաստութեամբ և ճոխ բովանդակութեամբ նուագահանդէս մը»[470]:

Մինչև նույն թվականի հուլիսյան գաղթը վարժարանը ծառայում էր որպես կամավորական սպայակույտի կենտրոն. «Երամեան վարժարանն ալ յատկացուած է Հայ կամաւորներու բնակութեանը»[471]: Հուլիսի 17-ին նշվել է, որ «դպրոցի մէջ հաստատուած կամաւորական «շտաբը» զէնք կը ցրուէր պատահողին, առանց նկատի առնելու պատրաստուած ցանկերը»[472]:

Ի մեծ հուսախաբություն և երբևէ անմորմոքելի վիշտ՝ հուլիսյան գաղթի ժամանակ վանեցիներն այրում են բոլոր մեծ շենքերը, «ընդ որս և մեր դպրոցը, ...անոնց աւերակներուն տակ թաղելով» Համբարձում Երամյանի «տեսիլներն ու ծրագրերը»[473]:

Ահասարսուռ լուրերը հասնում են նաև Եգիպտոս. «Այն լուրը, թէ Վանի Երամեան վարժարանը, ի միջի այլոց, բոցաճարակ եղած է, դժբախտապէս կը հաստատուի նոյն վարժարանի հիմնադիրտնօրէն տիար Համբարձում Երամեանէ, որ Եգիպտոս կը գտնուի այժմ, խմբագրութեանս ստացած մէկ մասնաւոր նամակով...: Ահաւասիկ քաղուած մը կը դնենք այստեղ տ. Հ. Երամեանի վերոյիշեալ նամակէն և մենք յոյս կը յայտնենք, որ Վասպուրականի բախտը որոշուելէն յետոյ, հայ ազգը պարտք պիտի զգայ իր օժանդակութիւն չխնայել բաղձացուած աստիճանին բարձրացնելու համար Վանի կրթական անվիատ գործիչ տ. Հ. Երամեանի այդ բազմարդիւն վարժարանը.

...Ափսո՜ս, Վան այսօր աւերակոյտ մ՚է դարձած եւ 40 տարուայ անդուլ ճգնացս արդիւնքն եղող սիրելի վարժարանս ալ անոր ծխացող մոխրակոյտերէ մին...: Քանի մ՚օր առաջ էր, որ հազար նեղութեամբ հազիւ Իգդիր հասնիլ յաջողած փոխանորդէս հապճեպով գրուած նամակ մը ստացայ, որով նա կը նկարագրէր գաղթի մանրամասնութիւնները, ուսուցչական խմբի, աշակերտներու, ընտանիքիս ցրուիլը եւ ճանապարհին խառնիխուռն, հետիոտն, մերկ գրէթէ, անօթի եւ ծարաւ փախչելու պարագան. կը գուժէր Վանի հրկիզումը, որուն մէջ մեր դպրոցը բացառութիւն չէր կրնար կազմել անշուշտ, շատ մը սիրելիներու եւ ծանօթներու մահեր եւ այլն եւ այլն:

465 Նշվ. աշխ., Բ, էջ 337:

466 «Աշխատանք», 1915, № 18, 16 մայիսի, էջ 3:

467 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 326: Հանդեսի մասին մանրամասն տե՛ս «Արեւ», 1915, № 16, 14 յունիսի, էջ 3; № 17, 16 յուն., էջ 1-2:

468 **Երամեան Հ.**, Բ, նույն տեղում:

469 Նույն տեղում:

470 «Աշխատանք», 1915, № 28, 27 յունիսի, էջ 4:

471 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 341: Տե՛ս նաև «Կոչնակ», 1915, № 34, 21 օգոստոսի, էջ 721:

472 **Ա. Ս.**, Վերջին օրը հայրենի երդիքին տակ, «Վան-Տոսպ», 1916, № 34, 17 յուլիսի, էջ 8:

473 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 341: Տե՛ս նաև **Մարտիկ**, Կենսագրական ընդհանուր գծեր. Հ. Երամեան, «Զարթօնք», Կահիրէ, 1919, պրակ 3-4, էջ 53: Նաև՝ «Վանի մէջ վառուած 250 հայ տուներուն մէջ են նաեւ Սանդուխտեան ու Երամեան վարժարանները, Վարժապետանոցը, երկու եկեղեցի, եւ Աշխատանքի ու Վան-Տոսպի խմբագրատները» («Կոչնակ», 1915, № 47, 20 նոյեմբերի, էջ 1049): Այս տեղեկությունների կողքին առկա է նաև հետևյալը, ըստ որի՝ «Վանի մէջ Ջէյդէտը վերջին նահանջի ժամանակ այրել է տալ մօտ 250 տուն...», որոնց թվում՝ Երամյան վարժարանը («Հորիզոն», 1915, № 213, 22 սեպտեմբերի, էջ 3): «Ջէնքերու պահեստը Երամեան վարժարանն էր: Մեր կառավարութիւնը նահանջի ատեն այրեց զայն, փլատակներու տակ թաղելու համար ամբողջ զինամթերքը, թշնամիին ձեռքը չանցընելու դիտումով: Տարի մը յետոյ, երբ կրկին վերադարձանք, ուզեցինք օգտուիլ այդ պահեստէն, բայց ամբողջութեամբ փճացած էր ան» (Յուշեր Արմենակ Եկարեանի, Պէյրութ, 1985, էջ 202): Նաև՝ «Արմենիա», 1915, № 11, 30 սեպտ./13 հոկտ., էջ 2:

Աւա՜ղ, ինք զինքս կորսնցուցած, ի՜նչ գրելս անգամ չգիտեմ: Անձնական վիշտս լա՞մ, հայրենիքիս աւե՞րը ողբամ, ամբողջ տաճկահայութիւնը աւաղե՞մ, թէ հայութեան ու Հայաստանի վրայ սգամ...: Յո՛յս մը, միա՛կ յոյս մը կայ, որ ապրելու համար ոյժ կուտայ ինծի եւ այդ յոյսը վաղուան յոյսն է, բոլորիս ալ վարդագո՛յն ... յոյսը»[474]:

ԵՐԱՄՅԱՆԻ՝ ԱԿԱՄԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԵԼՆ ՈՒ ԱՎԱՆԴԸ ՏԵՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հակառակ հայրենաբաղձ հոգուն, մտքին, կամքին, ծրագրերին ու երազանքներին՝ դեպքերի հուսակոտոր զարգացումները պատճառ են դառնում, որ Հայրենիքին նպաստ բերելու առաքելությամբ դժվար ճամփորդության ելած մեծն ուսուցչապետն ակամա հաստատվի Ալեքսանդրիայում:

Հակառակ հոգեկան ծանրագույն կացությանը (ողջ մի կյանք փայփայած-շենացրած տանից դուրս ես գալիս, որ նույն տանդ զորացման համար մի քիչ ավել միջոցներ գտնես, և ընթացքում պարզվում է, որ նվիրական փարոսդ այլևս մոխրակույտ է)՝ Համբարձում Երամյանն իր մեջ ուժ է գտնում կարողություններն ի սպաս դնելու այս անգամ արդեն Ալեքսանդրիայի հայկական ուսումնարաններին:

Հայտնի է, որ նկատի ունենալով Երամյանի մանկավարժական մեծ փորձը՝ ՀԲԸ Միությունը 1916 թ. սկզբին նրան նշանակում է «Սիսուան» վարժարանի վերատեսուչ. «Մասնաւոր հաճոյքով վեր կը հանենք, թէ Վանի Երամեան վարժարանի (այժմ՝ քանդուած) տէր և հիմնադիր տ. Համբարձում Երամեան «Սիսուան»[475] վարժարանի վերատեսուչ անվանուած է՝ վերին հսկողութեան պաշտօնով...: Աւելորդ է ըսել, թէ տ. Հ. Երամեանի նման վաղեմի և ձեռնհաս կրթական գործիչի մը ներկայութիւնը, Կիլիկիեան գաղթավայրին մէջ, մեծ բարիք մը պիտի ըլլայ ո՛չ միայն վարժարանին համար, այլ նոյնիսկ ամբողջ գաղթավայրին համար: Տ. Երամեան մասնաւորապէս պիտի կազմակերպէ օգնական երկսեռ ուսուցիչներու յատուկ վարժապետանոցի դասընթացք մը, ինչպէս նաև ընդհանուր զարգացեալներու համար կիրակնօրեայ դասախօսութիւններ»[476]:

Քննելով Ալեքսանդրիայի Պողոսյան և Գալստյան վարժարանների աշակերտության մակարդակը՝ Երամյանը հայտնում է հետևյալ կարծիքը. «Արդարութեան պարտք մըն է ընդգծել, որ Պօղոսեանի և Գալուստեանի շրջանաւարտները Եգիպտոսի օտար վարժարաններու մէջ լեզուական տկարութիւն կը ցուցնեն միայն, մինչ ընդհանուր զարգացումով աւելի բարձր են իրենց յատկացած դասարաններէն...: ...մասնաւոր վարժարանները ոևէ յարաբերութիւն չունին թէ՛ մէկ մէկու և թէ՛ ազգային հաստատութեանց հետ, այլև նոյնիսկ Պօղոսեանի և Գալուստեանի ուսուցիչներն իրարու ինչպէս և անհատական վարժարանաց ուսուցիչներու հանդէպ կարծես օտարներ են: Կը պակսի համերաշխութիւն կամ ընդհանուր կրթական գործին շուրջ խորհրդակցութիւն ու համաձայնութիւն: Իրաց սոյն վիճակին մասամբ մը պատասխանատու չէ՝ արդեօք ազգային իշխանութիւնը, որուն պարտքն է համերաշխ գործակցութեան մէջ դնել մեր կրթական ուժերն ու ծխական թէ մասնաւոր վարժարանները»[477]:

1916 թ. մայիսին Պորտ Սաիդի գաղթականական ճամբարում նշվում է Երամյանի 60-ամյակը. «Յոբելեանի նման հանդէս մը ունեցանք, բազմերախտ հայ ուսուցչապետին՝ «Սիսուան» երկսեռ վարժարաններու վերատեսուչ պ. Հ. Երամեանի ծնունդի վաթսուներորդ տարեդարձին ու միանգամայն անուանակոչութեան տօնին առթիւ գեղեցիկ երեկոյթ մը: Սուէտիացիներուն համար իսկապէս մեծ բաղդաւորութիւն մըն է իրենց «Սիսուան» վարժարան-

474 «Արմէնիա», 1915, № 12, 7/20 հոկտեմբերի, էջ 2: Վանեցի Ավետիս քահանա Շաղոյանն էլ, ցավով և միաժամանակ վստահ Երամյանի կամքի մեծ ուժի վրա, մտահոգությամբ գրում է. «Ահա Երամեան վարժարանի աւերակները. աւա՜ղ, ամեն ինչ վառուած է, կահ կարասիներով մէկտեղ...: Խե՜ղճ պ. Համբարձում. քառասուն երկար տարիներ յոգնաջան աշխատութեամբ կառուցածդ վարժարանն ալ վրայ տուիր, մինչդեռ դուն արտասահման ելնելով անոր ապագան ապահովել կը յուսայիր, ուշդ ու ուրուշդ կեդրոնացուցած էիր անոր յառաջդիմութեան վրայ. ահա՜ երախտաւորիդ փառաց պսակը... Ծերութեան դուռը հասած, այժմ ո՞ւր պիտի գտնես բազմաթիւ աշակերտներդ ու պաշտօնեաներդ, որ գէթ անոնց հետ անցունես օրերդ ու անոնցմով մխիթարուիս, եթէ երբէք աշխատելու եռանդ մնացած է վրադ: Սակայն ես փորձով տեսած եմ, որ դուն յուսահատիլ չունիս, վասն զի հաւատքդ շատ մեծ է, ինչպէս որ դուն ալ մեծ ես կատարածդ գործերովը: Դուն դարձեալ քու հաստատամտութեամբ պիտի ջանաս վերաշինել վարժարանդ ու շարունակել նուիրական պաշտօնդ, ի՜նչ եղանակաւ կամ ի՜նչ միջոցաւ ալ ըլլայ զայն յաջողեցնելու գործը... Կը մաղթեմ, որ փխրին հայ հարուստներու կարծրացած սրտերը. կը մաղթեմ, որ նոքա տեսնեն ձեր վիճակը, հասկանան ձեր ազգին մատուցած ծառայութիւնները և իրենք ալ ի գութ շարժին, օրինակ առնելով գահիրէաբնակ տիար Պետրոս Կարապետեանին՝ վարժարանիդ մատուցած վեհանձն նուիրատուութենէն» (**Ա-Քաշ**, Բռնագաղթը, «Արմէնիա», 1915, № 20, 2/15 դեկտեմբերի, էջ 2-3): Ըստ Արտակ Դարբինյանի՝ 1915 թ. հոկտեմբերի 29-ի գրության՝ «Վանի Երամեան վարժարանի տնօրէն Հ. Երամեան Ալէքսանդրիայէն տեղեկութիւն կը խնդրէ իր և Հ. Փեհրիզեանի ընտանիքներու մասին» («Մշակ», 1915, № 242, 1 նոյեմբերի, էջ 4):

475 «Սիսուան» վարժարանը բացվել է 1915 թ. հոկտեմբերի 20-ին:

476 «Միութիւն», 1916, № 49, յունվար-փետրվար, էջ 3: Նաև՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) «...վերատեսչութեան պաշտօնին հրաւիրեց ծանօթ կրթական գործիչ տ. Համբարձում Երամեան, Վանի համանուն վարժարանի հիմնադիրն ու տէրը, որ իր ներկայ տարագրութեան միջոցին իրեն համար մասնաւոր հոգածութեան առարկայ ըրաւ «Սիսուան»-ը եւ աւիւնոտ գործունէութեան մը մէջ փնտռեց իր վիրաւոր սիրտին սփոփանքը» (Հ.Բ.Ը. միութեան Բօր-Սայիտի «Սիսուան» վարժարանը, «Միութիւն», 1916, № 52, յուլիս-օգոստոս, էջ 57): Նշանակման մասին տե՛ս նաև «Ազգ», 1916, № 34, 10 փետրուարի, էջ 3:

477 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 391-392:

ներուն գլուխը ունենալ պ. Երամեանի նման հազուագիւտ դէմք մը: Աւելորդ է անդրադառնալ, թէ ուսուցչական կազմը ու բոլոր ուսանողութիւնը ո՛րքան կը սիրեն ու կը յարգեն զինք: Այս երեկոյթին ներկայ էին քէմբի մտաւորական դասը գրեթէ ամբողջութեամբ, ընդամէնը թուով վաթսունի չափ: Ասոնց կարգին՝ ուսուցչական դասէն զատ, պէտք է յիշել քէմբի հրամանատարը, պ. Ն. Թոգաթլեան, Կարմիր Խաչի կազմը առաջնորդութեամբ տոքթ. Տէօվլէթեանի, նաև պ. Չաքըճեան, տէր եւ տիկ. Պատ. Անդրէասեան, ևն»[478]: Հունիսից Հ. Երամյանի և Հմայակ Գրանյանի ջանքերով Պորտ Սաիդում սուեդիացի թրքախոս հայերին մայրենի լեզուն սովորեցնելու նպատակով ծրագրվում է զուտ հայերենով շաբաթական ցերեկույթներ[479]:

1916-1917 թթ. Ալեքսանդրիայի՝ արդեն Պողոսյան վարժարանի տեսչի պաշտոնը ստանձնած Երամյանը գրում է. «Վերջապէս ամէն ուղղակի կամ անուղղակի և հնարաւոր միջոցներ սկսայ ի գործ դնել՝ միեւնոյն ոգիով ներշնչելու համար ուսուցիչները դէպի դաստիարակութեան և ուսուցման սուրբ գործը և անոնց օրինակին բարերար ազդեցութեամբ պատրաստել նաև աշակերտութիւնը:

Ա՛յս է եղած իմ իտէալը և կէտ նպատակին քառասնամեայ ուսուցչութեանս ձիգ ու փշոտ ասպարէզիս մէջ: Առ այս կեդրոնացուցի իմ բոլոր ջանքերս նաև յԵգիպտոս: Յաջողուեցա՞յ արդեօք գէթ դոյզն մասամբ իրագործել իղձերս: Եթէ տրուէր ինձ քանի մը տարի սոյն ուղղութեամբ գործել ի Սիսուան կամ յԱղեքսանդրիա, պիտի յաջողէի՞ արդեօք զգալի չափով մը ընել այն, ինչ որ ըրած էի հայրենիքիս մէջ ի Վան-Վասպուրական...: Բայց տնօրէն մը գէթ քանի մը տարի շարունակաբար պաշտօնավարելու է, որ կարողանայ դնել իր դրոշմը սանուց մտքին և հոգւոյն վրայ»[480]:

1917 թ. հունվարի 11-ին Հ. Երամյանը հայտարարություն է տարածում հաջորդ օրը՝ 12-ին կայանալիք Ամանորի հանդեսի առթիվ[481]: Մտահոգ առկա կացությամբ՝ Պողոսյան ազգային մանկապարտեզի փոքրիկ սաների պատրաստած Ամանորի հանդեսից հետո «...Ազգ. վարժարանի յարգելի տնօրէն տիար Հ. Երամեան բեմ բարձրանալով մի քանի խիստ դիտողութիւններ ըրաւ հայրերու, մանաւանդ հարուստ և ազնուական դասակարգի ծնողներու դէպի ազգ. կրթական հաստատութիւնը ցոյց տուած անտարբերութեան համար, մատնանշեց օտար կրթութեան վնասները և յորդորեց ոյժ տալ մայրենի լեզուի ուսման և ազգ. դաստիարակութեան գործին»[482]:



Ալեքսանդրիայի Պողոսյան վարժարանի շենքը

Փետրվարին Համբարձում Երամյանն աշակերտների տոնական հանդեսներից գոյացած գումարը (580,50 ղ. ռ.) փոխանցում է Ալեքսանդրիայի որբախնամ ընկերությանը[483]: Նույն թվականի մայիսին Պողոսյան երկսեռ վարժարանի Գ և Դ դասարանների աշակերտուհիները «ի պատիւ տնօրէն տ. Հ. Երամեանի անուան տարեդարձին» 80 դահեկան են փոխանցում Ալեքսանդրիայի հայ որբախնամ ընկերությանը[484]:

Մայիսի 23-ին տնօրեն Հ. Երամյանը «...փափաքելով իր տարագրութեան մէջ պահ մը իր սիրելի հայրենիքին և Վանի մէջ հիմնարկած վարժարանի քաղցրիկ կեանքը վերապրիլ, վարժարանի երկսեռ ուսուցչութիւնը և բարձրագոյն չորս կարգերու երկսեռ աշակերտները թէյասեղանի հրաւիրած էր կէսօրէ վերջ մանկապարտեզի սրահին մէջ, որոյ ճակատին վրայ կերեւէին Երամեան վարժարանի շէնքի և ուսուցչ. խումբի լուսանկարները»[485]:

ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏԸ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Անվհատ ու անդավաճան մինչև վերջ սիրասուն ազգին ծառայելու իր գաղափարին ու կոչմանը հավատարին Երամյանը 1920-ական թթ. շարունակում է ապրել նվիրյալ հայի ամենահամեստ կյանքը՝ մշտապես ականջալուր և հաղորդակից ազգային հասարակական կյանքի անցուդարձերին:

1920 թ. օգոստոսի 23-ին Ալեքսանդրիայի «Ալհամպրա» թատրոնում Ալեքսանդր Խատիսյանի դասախոսության ժամանակ ելույթ է ունենում նաև «...կրթական բազմավաստակ գործիչ...» Համբարձում Երամյանը[486]:

1922 թ. հունվարին Երամյանը հեղինակում է Վարդան և Վարդգես որդիներին, Երամյան վարժարանի ուսուցիչներին և աշակերտներին ուղղված կտակով ավարտվող իր տաղաչափական ինքնակենսագրությունը.

478 **Վարազդատ**, Կիլիկեցիները Բօր-Սայիտի մէջ, «Արեւ», 1916, № 12, 7 յունիսի, էջ 2:
479 Նույն տեղում:
480 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 416-417:
481 «Արեւ», 1917, № 105, 11 յունվարի, էջ 3:
482 «Արեւ», 1917, № 108, 17 յունվարի, էջ 3:
483 «Արեւ», 1917, № 122, 21 փետրվարի, էջ 3:
484 «Արեւ», 1917, № 7, 25 մայիսի, էջ 3:
485 «Արեւ», 1917, № 8, 28 մայիսի, էջ 3:
486 Պ. Խատիսեանի Բ բանախօսութիւնը Ալհամպրայի մէջ, «Արեւ», 1920, № 48, 30 օգոստոսի, էջ 1:

Համբարձում Երամյանը

Կտակ թողում ձեզ Վարդան եւ Վարդգէս,
Ձեր կեանքն մեր երկիրն տարէք ողջակէզ,
Վերականգնեցէք ուսման մեր տաճարն,
Գլեցէք անցէք գործի մէջ ձեր հայրն:

Հուսկ յետին կտակս եւ ձեզ թող խօսի
Ո՞վ իմ աշակերտք եւ ջերմ գործակիցք,
Թէ կրկին ընդ ձեզ գործել չվիճակուի,
Դուք հատուցէք լրիւ պարտքս դէպ հայրենիք:

Խլեակ մ'եղայ ես՝ հալածուած բաղդէն,
Եւ անժառանգ մը, ո՞հ, լոյսի պարգեւէն,
Ցայսօր կեանքս հաշուէ շատ հանգրուաններ,
Իցի՞ւ Եգիպտոս վերջակէտ չդնէր:

Բայց բան մը արժե՞ց կեանքս եւ առ ի՞նչ գրել,
Է՞ր ընթերցողաց թանկ ժամեր գրաւել,
Դիպուա՞ծ մը արդեօք թէ Նախախնամութիւն
Ձիս բերաւ մինչ Նեղոս եւ ի՞նչ իւր դիտումն:

Ապրիլ կուզեմ ես, գործել տակաւին
Երկրիս շինութեան տանիլ դոյզն բաժին,
Յաւե՛լ, Տէ՛ր, ինձ կեանս եւ ոյժ հոգեկան,
Տո՛ւր հողն հայրենեաց հուսկ յետին կայան:

Նիւթական ոչինչ ունիմ այժմ ես հէք տարագիրս,
Թողուլ իմ որդւոց՝ բայց թէ յուշագիրս,
Եթէ յԵգիպտոս գայ վախճան կեանքիս,
Սեւ խաչ եւ ծառ մը փափաքիմ շիրմիս:

Սեւ խաչ մի, այո՛, եւ ո՛չ մի այլ ցոյց,
Քահանայ մ'եւեթ եւ մի լուռ հոգւոց
Պիտ խոռվի հոգիս թէ յետ իմ մահուս
Ճառ դամբանական խօսուի պերճահիւս:

Ո՞վ որ ընթեռնուք զայս կենսագրական,
Գիտցէ՛ք որ աչք ո՛չ, կամքն է կարեւորն,
Եթէ դժբախտ կոյր մը ըրաւ սին մի բան,
Թո՛ղ շատ աւելին փորձէ լուսաւորն:

Թէ գիտակցութիւն ունիք կոչումի,
Անոր բարձրութեան վրայ միշտ կացէ՛ք,
Միամիտ եղէ՛ք իբրեւ աղաւնի.
Խորագէտ իբր օձ՝ թէ խաբկանք մերժէք:

Դուք պիտի կազմէք ճակատագիրն ձեր,
Կամք եւ արթնութիւն ձեզ անլոյծ ընկեր,
Անկարօտ այլոց դոյզն իսկ օգնութեան,
Միշտ անկախ ապրիլ թող լինի ձեր ջան:

Միշտ յոռին կամ լաւն տեսնելն է սխալ,
Թէ հոգւով մարմնով դուք առողջ գոլ կ՚ուզէք,
Եղէք սրատես եւ զուարթ մի՛շտ ալ,
Ցաւոց հովտի մէջ կեանք պիտ վայելէք:

Թէ նկարագիր ունիք ասպետի,
Մի՛ զարմանաք երբ ձեր գործ թիւր մեկնուի,
Թո՛ղ իբր դատաւոր ձեր խիղճ ձեզ խօսի,
Բաւէ, որ ձեր դէմք ամօթէն չշիկնի:

Եթէ իտէալ մը գրաւէ ձեր հոգին,
Վարդերու փոխան թէ փուշ ոտքի տակ
Եւ ժայռ դուք գտնէք հանդէպ ձեր ճակտին,
Յառաջ խոյացէք, մի՛ լաք անճարակ:

Աստուած եւ բարին, ազգ եւ հայրենիք
Աստղ ձեզ բեւեռի ընդ ալիս ծովուն
Մինչեւ ի խարակս նաւաբեկ փշրիք,
Կամ գտնէք հանգիստ ի կեանս, ի մահու[487]:

Հայտնի է, որ 1923 թ. մարտին «Համբարձում Երամեան 25 ե. դ. կը նուիրէ Աղքատախնամին ողբ. Արշակ Շահինեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի»[488]:

Ի սփյուռս աշխարհի՝ ուսուցչապետի սաներն ու բարեկամները հիշում էին կրթության իրենց անխոնջ մշակին և պատեհ առիթներով փորձում աջակից լինել: 1924 թ. նոյեմբերի 2-ին, օրինակ, Դետրոյթի վասպուրականցիների կողմից «թէյասեղան մը տրուեցաւ ի նպաստ բազմավաստակ ուսուցիչ, աչազուրկ պրն. Համբարձում Երամեանի»: Ատենախոսում են Խաչիկ քահանա Գռուզյանը, վերապատվելի Ե. Խ. Ռշտունին: Կատարված հանգանակությունը՝ 303 դոլար, 80 սենթ, պետք է ուղարկվեր Երամյանին[489]:

1925 թ. հունիսին հոգեցունց ապրումների հերթական մի հարված է հասցնում Վարագա Պարոն Պետրոսի ինքնասպանության լուրը (ծովախեղդ դին հայտնաբերվել էր Միջերկրականի ափին): Երամյանը գրում է հայրենազրկման վշտից խելագարված Պարոն Պետրոսի մահախոսականը[490]:

1926 թ. մի խումբ վասպուրականցիներ՝ Վարդան Մուրատխանյանը, Ահարոն Պապիկյանը, Ղևոնդ Ապաղյանը, Տեր և Տիկ. Տեր-Ավետիսյանները, Դա-

487 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 433-435:

488 Նուիրատուութիւն, «Արեւ», 1923, № 81, 17 մարտ, էջ 2: Արշակ Շահինյանը բնիկ սեբաստացի էր: 1896 թ. Համիդյան ջարդերից ճողոպրելով՝ ապրել է օտարության մեջ: Վախճանվել է 1923 թ. Ալեքսանդրիայում:

489 «Հայաստանի կոչնակ», 1924, № 52, էջ 1648:

490 **Երամեան Հ.**, Վարագա Պետրոս, «Արեւ», 1925, № 1921, 19 հունիսի, էջ 2 («Երբ քանի մը օր առաջ «Արեւ»ի մէջ կը կարդայի խորիմաց մտածողի մը «Անմռունչ անցնողները», մտքէս չէր անցնէր, թէ շուտով Աղեքսանդրիոյ թղթակիցը պիտի գուժէր ցաւալի մահ մը, որով կէս դարու աշխատաւոր մը կերթար միանալու այդ կարաւանին:
Վարագայ Պետրոսն էր այդ, որուն կեանքը 1870ական թուականներէն սկսեալ Վարագայ սեղանին նուիրուած անսպառ խունկ մը եղաւ կարծես: Այո՛, ան աւելի քան յիսուն տարի իբրև մշակ և մատակարար, իբրև երկրագործութեան և ընդհանուր ելեւմտից տեսուչ ու իբրև խորհրդական՝ վանահարց և հոգաբարձութեանց, և ի հարկին նոյն իսկ իբրև վարժարանին հսկող՝ ծառայած է տիւ և գիշեր անհանգիստ:
Ան ճանչցաւ այդ երկար շրջանին եկող գացող բոլոր վանական վարչութիւնները Խրիմեանէն սկսեալ և 1896էն յետոյ աշխարհական հոգաբարձութիւնները, որոնց ամէնքն ալ ամէն բան իրեն կը վստահէին և առանց անոր խորհուրդին ու մասնակցութեան «տերեւ մը անգամ չէր շարժեր», այդ մեծ մայրավանքին մէջ:
Իր անխարդախ նկարագրովն ու բիւրեղեայ սրտով ան կը վայելէր անսահման վարկ մը ծանօթներու շրջանակին մէջ և ընդհանուր յարգանք մը հազարաւոր, մերթ բիւրաւոր ուխտաւորներու մէջ և իր երեւումը կը բաւէր հանդարտեցնելու կիրքով կամ ալքօլով գրգռուած տաքգլուխները: Ան ո՛չ զէնք ունէր և ո՛չ իսկ գաւազան մը ի ձեռին: Իր անձին հմայքը կը կայանար անձնուէր ծառայութեան, մաքուր կենցաղավարութեան և անխարդախ մատակարարութեան մէջ, որ ծանօթ էր բոլորին:
Վարագայ վանքը ամէն ազգէ անցորդներու և կառավարական պաշտօնէութեանց ճամբուն վրայ գտնուելուն՝ պարտաւոր էր ընդունիլ, կերակրել զանոնք: Ինքն էր հիւրընկալը և գիտէր ամէնուն հետ վարուիլ ըստ պատշաճի:
1890ական թուականներէն ի վեր յեղափոխական գործիքները և խմբակներ եւս ստէպ հիւրասիրութիւն, յաճախ ապաստան կը գտնէին Վարագայ մէջ: Քանի քանի անգամ Պետրոս յաջողած է ծածկել կամ փախցնել զանոնք և միանգամայն ապահովցնելով ետ դարձնել խուզարկելու եկող զինուորները, որոնք բացարձակ վստահութիւն ունէին իւր վրայ:
Ան անխտիր կ՚ընդունէր բոլոր յեղափոխականները, չէ՞ որ հայ էին անոնք, ուստի երբ կը ստիպուէին անոնք արծուի բոյնին մէջ պատսպարան կամ սնունդ փնտռել, իր անձին իսկ վտանգով՝ ընդ առաջ կերթար սիրով: Բայց ան գիտէր նաեւ անողոք խստութեամբ մերժել և նոյն իսկ պատժել ոևէ մէկն անոնցմէ, եթէ երբեւէ համարձակէին սրբութիւններն անարգել:
Այսպէս ան անգամ մը Վարագայ տաճարին սեղանէն ապտակելով վար կ՚իջեցնէր ծայրայեղ գաղափարներու քարոզիչ երիտասարդ մը, որ վերջէն պիտի վտարուէր իր պատկանած կուսակցութենէն:
Ան կես դարու կենդանի պատմութիւնն էր նաեւ Վանի ընդհանուր ազգային կեանքին, Առաջնորդներուն, դպրոցներուն, հին և նոր կուսակցութեանց: Ան կը ճանչնար նաեւ ժամանակակից պետական պաշտօնէութիւններն ու թուրք, քիւրտ և ասորի ցեղերու կեանքէն նոյնպէս շատ բաներ գիտէր:
Ան Վարագայ վանքին պահապան հրեշտակն էր, և նախախնամութիւնը կարծես կանխահոգ տնօրինութեամբ մը զերծ պահեց զայն 1896ի և 1915ի ջարդերէն և ուրիշ ոչ նուազ վտանգաւոր փորձութիւններէ: Ան յաճախ վանքի գործերով քաղաք կ՚իջնէր և իր տունը կը գիշերէր: Նախախնամութեան կարգադրութեամբ, ան քաղաք գտնուեցաւ այդ յանկարծահաս աղէտներու օրերուն, որպէսզի ողջ մնար և վտանգն անցնելուն պէս վազէր թաղելու՝ դիակները, ամփոփելու՝ սրբութիւնները, հաւաքելու՝ ցրուած ձեռագիրները և վերջապէս վանքի վերաշինութեան ձեռնարկելուն: Ան ամէն անգամուն եւս վանքին թանկարժէք իրերն ու սրբութիւնները գաղտնածածուկ պահարաններու մէջ թաքցնելով փրկեց և վերջին անգամ տարաւ Էջմիածին յանձնեց:
Ան այսպէս ըրաւ 1896ի յունիսին, երբ միաբան վարդապետները ջարդուած էին, և միայն ծերունազարդ Վրթանէս վրդ. Տէր Սարգիսեանց ողջ կը մնար, այն ալ իրեն պէս քաղաք գտնուելով: Պետրոս իսկոյն երջանկայիշատակ Աբրահամ Աղուանեանի ղեկավարութեամբ աշխարհական հոգաբարձութիւն մը կազմել տալով վերականգնեց ու վարեց վանքը մինչեւ 1915:
Ան նոյն բաները պիտի կրկնէր նաեւ 1915ին և վանքը պիտի չէնցնէր ապրիլեան հերոսամարտէն վերջ:

Համբարձում Երամյանը

նիել Երամյանը, Գրիգոր Կարօղլանյանը, այրի տիկ. Հռիփսիմե Մանուկյանն ու տիկ. Նվարդ Ջիվելեկյանը, վատառողջ Երամյանի դժվարին վիճակը թեթևացնելու նպատակով հավաքվում են Բոստոնում:

Հանգանակվում է 40 դոլար, որն էլ անմիջապես ուղարկում են ուսուցչապետին[491]:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԻ «ՀՈՒՇԱՐՁԱՆ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ» ԵՐԿՀԱՏՈՐՅԱ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1920-ական թթ. սկզբներին Համբարձում Երամյանը լծվում է իր տեսակի մեջ եզակի հարուստ և վավերական արժանիքներով պարզապես անգնահատելի և ծավալուն մի ուսումնասիրության ստեղծման աշխատանքին:

Մինչ այդ՝ 1920-1921 թթ., Երամյանը գրում է ինքնակենսագրությունը, որը բարեկամների խորհրդով փորձում է վերածել արձակի. «Անգործութեան տաղտուկը փարատելու եւ միանգամայն ի մուտս խոնարհող արեւս չափով մը արժեցնելու բաղձանքով, քանի մը տարի առաջ՝ 1920 եւ 1921 թուականներուն, պատրաստուած էի ինքնակենսագրութիւն մը, մօտաւորապէս 10,000 չափածոյ տող: Ի վերջոյ կարգ մը բարեկամներու խորհուրդով զայն արձակի վերածելու ձեռնարկեցի՝ մարտ 1925, եւ ամբողջ 26 ամիս աշխատեցայ նոր դասաւորութեամբ եւ աւելի ընդլայնուած բովանդակութեամբ գրի առնել տալ յուշերս, ապրումներս եւ զանազան տպաւորութիւններս, կեանքիս այլեւայլ հանգրուաններուն զուգորդելով ժամանակակից ազգային եւ քաղաքական դէմքերու եւ դէպքերու համադրական յիշատակութիւններ:

Կարեւոր գտայ նախ համառօտիւ պատկերացնել Վան-Վասպուրականի հեռաւոր եւ մօտաւոր անցեալը եւ ապա պատմութեանս մեկնակէտ ընտրեցի 1820ական թուականը եւ շարունակեցի ամփոփ տեղեկութիւններով մինչեւ ազգային սահմանադրութեան շրջանը՝ 1860: Այնուհետեւ կ'սկսին ապրուած էջեր ժամանակակից պատմութենէն եւ իմ մօտաւորապէս 50 տարուայ հանրային կեանքէն՝ հայրենիքիս մէջ եւ անկէ դուրս:

Սկիզբէն աշխատութեան մեջ փնտռած լինելով իմ գերագոյն վայելքս եւ միանգամայն ցանկանալով չնչին ծառայութիւն մը մատուցանել մեր ազգային գրականութեան, իբրեւ տեսակ մը հատուցում 1913էն սկսեալ անդաստական կեանքիս տխուր շրջանին՝ հանդէպ ինձ ցոյց տրուած հոգածութեանց, պատրաստեցի սոյն գրական գործը:

Ընթերցողները գուցէ պիտի գտնեն սոյն յուշագրութեան մէջ պատմական անճշդութիւններ, եւ զանազան խնդիրներու շուրջ իմ խորհրդածութեանց եւ համոզումներու մէջ իրենց անձնական տեսակէտներուն անհամապատասխան կետեր, եւ սակայն գիտնալու են, որ պատմութեանս իբր գանձարանս ծառայած է ինձ գլխաւորապէս յիշողութիւնը, իսկ դատողութեանցս մէջ՝ ջանքս եղած է լինել անաչառ եւ ներկայացնել իրերն ու անոնց հետեւանքները անկողմնակալ ոգւով, առանց ենթակայական դրոշմ մը տալու իրողութեանց...:

Վանի յուլիսեան նահանջէն յետոյ Վարագը դարձեալ ինքը պիտի վերաշինէր, այս անգամ Վեհ. Կաթողիկոսի նպաստներով մինչեւ 1918 մարտի վերջին նահանջը: Այդ ճակատագրական թուականին ինքն եւս պիտի պարտաւորուէր կրակը սրտին վերջին մնաք բարովն ըսելու Արծուի բոյնին ու Վան-Վասպուրականին և խուճապահար փախստականի ցուպն ի ձեռին բիւրաւոր խլեակներու հետ անցնէր Պարսից սահմանը:

Ծանօթ է, որ հայ և ասորի խումբեր հերոսական կռիւներով իրենց ճամբայ բացին մինչեւ Միջագետք: Ան իր մէկ որդին ճամբուն վրայ պիտի կորսնցնէր: Եւ երբ Պաքուպայէն Աղեքսանդրիա հասաւ իր երկրորդ որդւոյն՝ Համազասպի ընկերակցութեամբ, 1921ին, իր աղեքսանդրիաբնակ անդրանիկ որդին իր ձեռքով պիտի թաղէր քանի մը ամիս վերջը: Չորս տարիի չափ ապրեցաւ ան այս հիւրընկալ երկրին մէջ աղօթելով և ցանկալով, որ երկինք շնորհէ իրեն՝ օր հոգւոյն մշտավառ բոցին հուսկ նուաղուն կայծերը՝ երթալ նուիրել դարձեալ Վարագայ սեղանին ու հայրենիքի տաճարին, այլ աւա՜ղ հոգեբանական անբացատրելի վայրկեանի մը ինքզինքը միջերկրականի ալիքներուն յանձնելով վերջ կուտայ իր մարմրող արեւին:

Վարագայ հոգաբարձութիւնը 1914-1915ին պիտի տօնէր յիսնամեակը արտաքուստ այս շատ պարզ, այլ մեծ-սիրտ մարդուն, եթէ վերահաս պատերազմը արգելք չըլլար:

Օրհնեա՛լ ըլլայ յիշատակդ, բարեկամդ իմ Պետրոս Վարագայ, որ իբրեւ այդ՝ ամենուն էիր: Վասպուրականցիներու ներկայ սերունդը պիտի յիշէ միշտ քու անունդ, իսկ Վարագի աւերակները պիտի յաւերժացնեն քու յիշատակդ»):

491 «Հայաստանի կոչնակ», 1927, № 5, 29 յունուարի, էջ 152:

Անշուշտ լաւագոյն եւ ստուգապատում գործ մը պիտի կրնայի արտադրել, եթէ ունենայի աչք եւ կարենայի օգտուիլ բազմաթիւ աղբիւրներէ, սակայն յոգնած, հիւանդկախ, նիւթական միջոցներէ զուրկ, միշտ այլոց օգնութեան կարօտ եւ արդէն 72 տարիքս թեւակոխած, մէկ ոտքս դէպի անդէնականը, չէի կրնար ասկէ աւելին ընել:

Համոզուած եմ, թէ նախախնամութիւնը յատուկ դիտումով մը աշխարհաւէր պատերազմի արհաւիրքներէն ազատեց զիս ու եգիպտահայութեան հիւրընկալ ծոցին մէջ բերաւ ծուարեց, որպէսզի կարենամ ներկայ աշխատութեամբ Վան-Վասպուրականի եւ ընդհանուր հայութեան վերջին դարաշրջանի յուշարձանը կանգնել, գոնէ իբրեւ փանաքի ատաղձ ժամանակակից պատմութեան համար»[492]:

Հուշերը գրի առնելուն Երամյանին սատարում է Կարապետ Նավասարդը[493]. «Յուշերուս արձանագրութեան համար խնդրեցի գործակցութիւնը Իզմիրի «Ա. Մամուլ»ի նախկին աշխատակից եւ ուսուցիչ պ. Կարապետ Նաւասարդի, որ աւելի քան երկու տարի, անհամապատասխան վճարքի մը փոխարէն յանձն առաւ իմ թելադրութիւններս գրի առնել եւ կատարուած սրբագրութեանց համաձայն կրկին եւ կրկին վերարտագրել բազմաշխատ գործս, գրագէտ վերարտադրողի մը անձանձրոյթ եւ հաճելի օճանն միանգամայն ընծայելով ինձ»[494]:

Վերջինս իր հերթին նշել է. «Արդարև հաճելի ժամանց մըն է ինծի համար, ամբողջ երկու տարի, 1925-1926, գրեթէ անընդհատաբար ամէն օր գլուխ գլխի առանձնութեան մը մէջ գրի առնել ինչ որ Պ. Երամեան տուն կուտար անբաղդատելիօրէն բաց ու պայծառ մտքով ու անստգիւտ շարակարգութեամբ, լոյս աշխարհ բերելով իր անարև ու մշտագիշեր գոյութեան աչքերուն մէջ մթերուած խորհուրդներն ու ծանօթութիւնները, իր կեանքին ու գործին աչքառու դրուագները, իր բաղդորոշ վայրկեանները, և մերթ զուարթ այլ յաճախ տխուր յիշատակները, յիշողութեան ապշեցուցիչ սրութեամբ մը ճշդելով հին ու ժամանակակից անցքերու թուականները, գործող դէմքերու անուններն ու դէպքերու վայրերը:

Պ. Երամեանի այս նոր աշխատութիւնը, զոր կարծեմ ՅՈՒՇԱՐՁԱՆ անունով մկրտել մտադրած է հեղինակը, ինքնակենսագրական մը ըլլալէ աւելի պատմական երկասիրութիւն մըն է, իսկապէս յիշատակարան մը իր կեանքի այլ եւ այլ հանգրուաններուն զուգընթացաբար թաւալող հայ ազգային, քաղաքական, գրական, կրթական, ընկերային և տնտեսական շարժումին ու դերակատար դէմքերուն, ընդգրկելով այսպէս գրեթէ դարաշրջանի մը համայնապատկերը հայ իրականութեան և հայ մշակոյթին...»[495]:

Աշխատությունը, որը ներառում է մինչև 1926 թ. դեպքերը[496], ինչպես վկայում է հեղինակը, «Յիշողութենէս զատ օգտուած են Հայր Գովրիկեանի ժամանակակից պատմութենէն, Առաքել Սարուխանի պատմութեան առաջին հատորէն, Ա. Չոպանեանի «Անահիտ»էն, Պօսքընի «Հայրենիք» ամսագրէն եւ ուրիշ պատահական ընթերցումներ»[497]:

Ինչպես նշում է Կ. Նավասարդը, գիրքը բաղկացած էր 23 մասից, որից «ամենէն աչքառու» խորագրերն են՝ «Վան-Վասպուրական, Արշալոյս, Առաջին քայլեր, Ազգային ոգեւորութեան Ա. շրջան 1878-1895, Երամեան անկախ վարժարան, Առաջին ուղեւորութիւն 1886, Ընդհանուր հալածանք, Միսիոնարներ, Պողոսեան եւ Ապողոսեան վէճ, Պատմական տեսութիւն մը հայկական յեղափոխութեան մասին, Սեւ տարին 1895-96, Անջրպետ մը 1896-1908, Վանի վիլայէթը 1890-1907, Իթթիհատական շրջան, Թատրոնը Հայոց մէջ, Երկրորդ ուղեւորութիւն, Կիսամեակ մը ի Բիւզանդիոն եւ Եռամսեակ մը յ'Իզմիր, Եգիպտոս, Բօր-Սայիտի քէմբը, Եգիպտահայ մթնոլորտը, Նոր դրուագներ, Վերջին ուղեւորութիւն, եւ այլն, եւ այլն:

Այս այլազան և հետաքրքրաշարժ բաժանումները, նոյնքան շահեկան վերնագրեր կրող գլուխներու տակ, ընթերցողի առջև կը պատկերացնեն Հայաստանի սիրտը կազմող հայաշատ Վանի և Վասպուրականի բնական նկարագիրը՝ ազգային և օտար ուղեւորներու կողմէ, անոր վարչական և ցեղային բաժանումները, ազգային, կրթական, տնտեսական և վարչական կացութիւնը, ինքնապաշտպանութեան դրուագները, սովը, հրդեհը, հալածանքները, դրախտագեղ Այգեստանը, որուն խանդավառ տողեր նուիրած է հայրենաբաղձ հեղինակը՝ իր մտքի և յիշողութեան բովանդակ թափովը: Վանի կենսուրախ կեանքը, իր ուղեւորութիւնը դէպի Վիէննա՝ աչքերուն լոյսը վերագտնելու յոյսով և պատրանաթափ ու յուսաբեկ վերադարձը, իր կրթական հիմնարկութեան նիւթականը ապահովելու նպատակով կատարած դիմումները և ձեռնարկները Թիֆլիզ, Էջմիածին, Պոլիս, Իզմիր, Եգիպտոս և այլուր, հայ և օտարազգի եկեղեցական և աշխարհական ականաւոր անձնաւորութեանց հետ իր ունեցած տեսակցութիւնները, եւլն, եւլն:

Մասնաւորապէս «Միջերկրականեան խոհեր» գլխուն մէջ երեւան կուգան Պ. Երամեանի պատմագիտական խոր հմտութիւնը և գերանուրբ յիշողու-

492 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ Ա-Բ; հ. Բ, էջ 435:

493 Լրագրող, թարգմանիչ, մանկավարժ Կարապետ Նավասարդյանը (1860, Նիկոմեդիա – 1940, Հելիոպոլիս) թղթակցել է «Արև», «Արևելեան մամուլ» թերթերին Կ. Ն., Նավասարդ, Վարսամ ծածկանուններով:

494 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ Ա:

495 Նշվ. աշխ., Ա, էջ Գ-Դ:

496 Նշվ. աշխ., Բ, էջ 530:

497 Նշվ. աշխ., Ա, էջ Բ: **Գովրիկյան Գր.**, Ընդհանուր պատմութիւն: Համառօտ: Ազգային դպրոցաց համար, Վիէննա, 1879: **Առաքել Սարուխան**, Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութեան խնդիրն Թիւրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912:

թեան կարողութիւնը: Իսկ «Միսիոնարներ» գլխուն մէջ՝ Հէրպէրթ Ալէնի հետ իր խօսակցութիւնը հայ եկեղեցւոյ և հայ դաւանանքին վրայ՝ պայծառօրէն ի յայտ կը բերէ իր կրօնական առողջ գաղափարները և ողջամիտ հայեացքները»[498]:

Գրքի նախաբանը Երամյանն ամփոփում է այսպես. «Եթէ շնորհէ ինձ երկինք գործիս տպագրութիւնը տեսնելէ յետոյ անգամ մը եւս շնչել Հայաստանի կենսատուր օդը, ինձ նախասահմանուած օրերը պիտի վերջանա՞յ արդեօք, թէ տակաւին երջանկառիթ պատեհութիւններ պիտի ընծայուին ինձ նաեւ իմ ծառայութեանս, դոյզն բաժինը նուիրել Հայաստանի վերաշինութեան սուրբ գործին: Իսկ թէ պիտի շնորհուի՞ ինձ տակաւին տեսնել օր մը մեր սիրեցեալ Վան-Վասպուրականը ու վերականգնել նաեւ վարժարանիս աւերակները, ինչպէս կը գրեն եւ կը մաղթեն ինձ աշակերտներ ու հայրենակիցներ, այն ատեն անպատում երջանկութեամբ առլցուն պիտի մրմնջեմ ես ալ. «Արդ, արձակեա՛ զծառայս քո ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն մերոյս Իսրայէլի»[499]:

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՋԱՆՔԵՐԸ

«Հուշարձան Վան-Վասպուրականի» երկասիրության ստեղծման բարեհաջող ավարտին Կարապետ Նավասարդը նշում է. «Պ. Երամեանի գործը աւարտած է այժմ: Ասիկա՝ ըստ իս՝ ճամբուն կէսն է. կը մնայ գլուխ հանել և աւարտել մնացեալ կէսը, այն է՝ հրատարակութեան գործը, որ դժնդակ մղձաւանջի մը պէս կը ճնշէ հեղինակին մտքին վրայ...

Հետեւաբար կը կարծեմ, թէ բովանդակ հայ ազգին վրայ կը ծանրանայ՝ իբր նուիրական ու անզանցառելի պարտականութիւն մը՝ Պ. Երամեանը արժանապէս գնահատելու ու անոր երկին հրատարակութիւնը յաջողցնելու գործը: Նոյնիսկ գրասէր ու ունեւոր անհատ մեկենաս մը կամ հաւաքական մեկենասութիւն մը, Եգիպտոս թէ արտասահման, կրնայ վեհանձնական մէկ շարժուձեւով գործնական հողի վրայ դնել տպագրութեան խնդիրը:

Երամեան իրաւունք ունի ատոր սպասելու, և իր բազմաթիւ հայրենակիցները, բարեկամներն ու համակիրները, հեռաւոր թէ մտաւոր, գիրք ու գրականութիւն սիրող իր ազգակիցները ապահովապէս ի դերև չպիտի հանեն իր յոյսերն ու ակնկալութիւնը և պիտի չզրկեն զինք իր մտասեւեռումը և իր լուսազուրկ ու դառնացած կեանքին միակ սփոփանքը կազմող այն հաստատ հաւատքէն, թէ ինք աննշան և անյիշատակ չպիտի մնայ: Երամեան անմահութեան կը բաղձայ այն իմաստով, որով Դուրեան կը բաղձար իր օրհասականի անկողնին մէջ.

Իսկ աննշան եթէ մնայ
Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
Եւ յիշատակս ալ թառամի,
Ո՜հ, այն ատեն ես կը մեռնիմ:

Ու այնպէս ընենք, որ Երամեան իր տառապակոծ կեանքի մայրամուտին գերագոյն վայելքն ունենայ ըսելու Ռընանի պէս. «Գործս աւարտեցի, երջանիկ կը մեռնիմ»[500]:

Արդեն 1926 թ. «Տիար Ն. Ղարասէֆէրեանի գրութեամբ մը գահիրէաբնակ կրթական յայտնի մշակ աչազուրկ Պր. Համբարձում Երամեանի նիւթական թշուառ վիճակը պարզելով մէջ կը բերէ յիշեալին կողմէ իրեն ուղղուած մէկ նամակը՝ ուրկէ կիմանան, թէ աչազուրկ այդ մշակը պատրաստած է աւելի քանի 1200 էջէ բաղկացեալ մեծածաւալ երկհատոր երկասիրութիւն մը, ուր ամփոփած է Վասպուրականի հեռաւոր և մօտաւոր անցեալի պատմութիւնը իր զանազան փուլերուն մէջ...»: Այս երկի տպագրության ծախսերը հայթայթելու համար կոչ է արվում մասնավորապես վասպուրականցիներին նյութապես օժանդակել[501]:

Գործադրված ջանքերը տալիս են իրենց սպասված արդյունքը, և երևան են գալիս նաև ուսուցչապետի հեղինակած աշխատանքը հրատարակության հանձնելու ջատագով-աջակիցներ: Ալեքսանդրիայի թեմի առաջնորդական փոխանորդ Մամբրե ծ. վրդ. Սիրունյանը, որպես Երամյանի «Յուշարձան»-ի հրատարակիչ, կենտրոնական հանձնախմբի նախագահ, արձակում է մի կոչ՝ մասնավորապես նշելով. «Բազմավաստակ ուսուցիչ ու դաստիարակ Համբարձում Երամեան, Վանի Երամեան վարժարանի հիմնադիր-տնօրէնը, որ բազմաթիւ սերունդներ հասցուցած և օժտած է զանոնք ազգային ճշմարիտ ոգիով ու հայրենասիրական մաքուր զգացումներով, իր բազմամեայ կրթական գործունէութիւնը, յարակից ազգային դէպքերով ու քաղաքական անցքերով, մանրամասնօրէն գրի առած՝ կը փափաքի հրատարակութեան տալ»: Կազմվում է հանձնախումբ՝ իրականացնելու մեծ մանկավարժի ցանկությունը. «Ներկայիս բացուած կը հռչակենք Համբարձում Երամեանի Յուշարձան տիտղոսուած երկհատոր, պատկերազարդ, 1400 էջնոց երկասիրութիւնը...: Ուստի կոչ կ՚ընենք հայ ժողովուրդի գիտակցական ոգիին, վստահ ըլլալով, թէ ան դրապէս քաջալեր պիտի հանդիսանայ բազմամեայ վաստակաւորին ու պիտի փութայ այժմէն իսկ ապահովել օրինակ մը յիշեալ երկասիրութենէն՝ երջանիկ առիթը ընծայելով անզուգական կրթական մշակին վայելելու իր կէս դարու յոգնաջան աշխատութեան արդիւնքը՝ ի լոյս ընծայելով Յուշարձան մակագրութեամբ իր գրական աշխատութիւնը»[502]: Առաջին նվիրատուներն

498 Նշվ. աշխ., Ա, էջ Դ-Ե:
499 Նշվ. աշխ., էջ Բ:
500 Նշվ. աշխ., Ա, էջ Ե-Զ:
501 «Հայաստանի կոչնակ», 1926, № 50, 11 դեկտեմբերի, էջ 1719:
502 «Արեւ», 1928, № 2997, 13 դեկտեմբերի, էջ 2: Գրեթե նույնությամբ վերատպված՝ «Հայաստանի կոչնակ», 1929, № 4, 26 յունուարի, էջ 120: «Հայրենիք», 1929, № 5085, 23 յունուարի, էջ 3: Հավելենք, որ միաժամանակ անցկացվում է գրքի բաժանորդագրություն:

էին Վիկտորիա Արշարունին, Տիգրան Պողոսյանը, Ղազարոս և Մարտիրոս Թարագճյանները, Հովհաննես Աղամյանը, անհայտ մի անձ (ընդհանուր գումարը՝ 2000 ե. դ.)[503], Խաչիկ Աղամյանը (100 ե. դ.)[504]:

Վերջապես 1929 թ. աշնանը տպագրության հանձնվող գրքի սկզբում հեղինակն ավելացնում է. «Երախտագէտ հրճուանքով կը յայտարարեմ, որ Աղեքսանդրոյ Առաջ. Փոխ. Գեր. Տ. Մամբրէ Ծ. Վ. Սիրունեանի նախագահութեամբ, հետեւեալ Պատ. անձնաւորութիւններէն՝ պ.պ. Աղասի Իփէքեան, Լեւոն Ենովքեան, Կարապետ Մուղալեան, Ղազար Փափազեան, Միհրան Թօքատլեան եւ Սեպուհ Ստեփանեան, կեդր. հրատարակիչ յանձնախումբ մը կազմուելով՝ ձեռնարկուեցաւ գործիս հրատարակութեան: Ուրախ եմ նոյնպէս շնորհակալութեամբ յայտարարելու, որ Աղեքսանդրիոյ, Գահիրէի եւ այլ վայրերու Պատ. ազգայիններ, սոյն կեդր. հրատարակիչ յանձնախումբին կոչերուն ընդառաջելով, նուիրատուութեամբ եւ բաժանորդագրութեամբ քաջալերեցին տպագրութեան ձեռնարկը»[505]:

Գրքի վերջում էլ հավելում է. «Երկասիրութեանս խմբագրութիւնը արդէն աւարտած լինելով 2 ու կէս տարի առաջ, նախորդ 1928 թուականի վերջերը, զայն հրատարակելու նպատակով, Ալեքսանդրիոյ Առաջն. Փոխանորդ Գեր. Տէր Մամբրէ Ծ. Վարդապետ Սիրունեանի ջանքերով, Հրատարակիչ Կեդր. Յանձնաժողով մը կազմուեցաւ Աղեքսանդրիա, եւ Օժանդակ մասնաժողով մը՝ ի Ֆրէզնօ, տեղւոյն Վասպուրականցիներու Միութեան ծոցէն: Գործին ձեռնարկուեցաւ բաժանորդագրութեամբ եւ նուիրատուութեամբ, իսկ տպագրութիւնն սկսաւ անցեալ մայիսին՝ Ա. հատորն տեղւոյս Գասապեան, իսկ Բ. հատորն Ստեփանեան տպարաններուն մէջ: Գործին ծաւալը 65 պրակ, աւելի քան հազար մեծադիր էջ եւ 60է աւելի պատկեր, եւ դրամական դժուարութիւնները՝ պատճառ եղան, որ ամբողջական տպագրութիւնը աւարտի հազիւ ներկայ նոյեմբերի վերջերը, որով դեկտեմբերի սկիզբները միայն պիտի յաջողի մեզ՝ կրկին հատորները միաժամանակ ի լոյս ընծայել:

Խորին շնորհակալութիւն՝ նախաձեռնարկ Գեր. Տ. Մամբրէ Հօր, ինչպէս եւ զոյգ Յանձնաժողովներուն, Եգիպտոսի պատուական մերազնէից եւ վերջապէս Ամերիկայի արեւելեան նահանգներու համար՝ մեր ներկայացուցիչ՝ Վանեցի ազնուասիրտ Տիար Նշան Նալպանտեանի, որ սիրով յանձն առին՝ մեր շիջելափառ Վան-Վասպուրականի Յուշարձանը կանգնել՝ տարագիր Վասպուրականցիներու սրտին եւ բոլոր հայրենասէր հայորդիներու ընտանեկան գրադարաններու մէջ»[506]:

503 «Արեւ», 1928, № 2997, 13 դեկտեմբերի, էջ 2:
504 «Արաքս», 1929, № 9, 16 փետրվարի, էջ 2:
505 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ Բ:
506 Նշվ. աշխ., Բ, էջ 540:

ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏԻ ՄԱՀԸ

Համբարձում Երամյանը վախճանվեց 1929 թ. դեկտեմբերի 20-ին Ալեքսանդրիայում՝ Վանի հավերժական կարոտը սրտում. «Մահը տեղի ունեցած է ուրբաթ, դեկտ. 20ին, կէսօրէ վերջ ժամ 4ին, Քան Տը Սէզարի իր սենեակին մէջ: Մահէն օր մը առաջ, ինչպէս ականատեսները կը պատմեն, «Յուշարձան»ի զոյգ հատորները թևին տակ առած քաղաքը կը պըտտէր և անձամբ բաժանորդներուն կը յանձնէր: Արդէն յաջողած էր 200 երկհատոր իր «Յուշարձան»էն ճամբել Եւրոպա և Ամերիկա՝ տօնական օրերուն իր գիրքը հոն ունենալու համար: Ինք աղիքներու անկանոնութենէ կը տառապէր, իսկ վերջերս նաեւ շունչը կը բռնուէր: Մահէն օր մը առաջ թէեւ ոտքի էր, սակայն կը գանգատէր իր հիւանդութենէն...»[507]:

Հուղարկավորությունը կատարվում է Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցում[508]. «Այս ազնիւ մշակը վերջին տարիներուն երեք տէնչանք ունէր, տեսնել իր «Յուշարձան»-ի ամբողջական հրատարակութիւնը, արժանի ըլլալ իր սիրեցեալ Հայաստանին և Վանի մէջ անգամ մըն ալ վերականգնուած տեսնել «Երամեան» վարժարանը, որուն համար զոհած էր իր հոգիին լոյսը և հօրենական ժառանգութիւնը:

Այս դժբախտ ուսուցչին վիճակուեցաւ սակայն միայն իր երկհատոր «Յուշարձան»-ի վայելքն ապրելու...:

Նկատի առնելով բազմաշխատ ուսուցչին ազգին ընծայած ծառայութիւնները, որոշուած էր ազգային թաղում կատարել:

Կիրակի օր պատարագին վերջ տեղի ունեցաւ թաղման արարողութիւնը: Դագաղը շրջապատուած էր Ազգային Պօղոսեան և Հայկազեան վարժարաններու աշակերտներով, ուսուցիչներով և պաշտօնակ. մարմիններու ներկայացուցիչներով...: Դագաղը փոխադրուեցաւ Շաթպիի Ազգային գերեզմանատունը և հանգուցեալին մարմինը թաղուեցաւ մեր և իր շատ սիրած Հրաչին մօտ»[509]:

Ի հիշատակ «...Վան-Վասպուրականի անխոնջ գործիչ եւ բազմավաստակ ուսուցչապետ Գ. Երամեանի...»՝ տեր և տիկին Ռուբեն Մաթոսյանը և Հ. Տյոքմեճյանը 10 ե. դ. են նվիրում Կահիրեում լույս տեսնող «Յուսաբեր» օրաթերթի ֆոնդին[510], Նուպարյան վարժարանի ուսուցչությունը Նուպարյան կրթասիրացին՝ 50 ե. դ.[511], Սահակ Դերձակյանը և Երվանդ Թոգաթլյանը «Համազգային»-ին՝ 20-ական

507 «Հայաստանի կոչնակ», 1930, № 4, 25 յունուարի, էջ 123: Տե՛ս նաև «Արեւ», 1929, № 3313, 24 դեկտեմբերի, էջ 1: **Ալֆա**, Համբարձում Երամյանի յուղարկաւորութիւնը, «Արեւ», 1929, № 3314, 25 դեկտեմբերի, էջ 2:
508 «Արաքս», 1929, № 2, 21 դեկտեմբերի, էջ 2:
509 **Թոքակից**, Համբարձում Երամեանի ազգային թաղումը, «Յուսաբեր», 1929, № 229, 27 դեկտեմբերի, էջ 2:
510 «Յուսաբեր», 1929, № 228, 26 դեկտեմբերի, էջ 4; 1930, № 235, 4 յունուարի, էջ 3:
511 «Յուսաբեր», 1929, № 229, 27 դեկտեմբերի, էջ 4:



Համբարձում Երամյանի տոհմածառը

ե. դ., Սմբատ Թերզյանը, Չրաքյան ամուսինները՝ 10-ական ե. դ., Թ. և Գ. Թոփուզյան եղբայրները՝ 25 ե. դ.[512], Հարություն Գութնությանը՝ Կահիրեի աղքատախնամին՝ 10 ե. դ.[513], Երամյանի դասընկեր վանեցի Աբրահամ Քաջբերունին՝ 50 ե. դ., Կահիրեի վասպուրականցիների հայրենակցական միությունը՝ 100 ե. դ., Լևոն Աճեմյանը, Միք. Նաթանյանը և Ներսես Իսքենտերյանը, Միսաք Պապիկյանը, Գալուստ Գազանճյանը, Հովի. Աղմամյանը ՀԲԸ միությանը՝ 10-ական ե. դ.[514], Տիգրան Չրաքյանը՝ Երամյանի հուղարկավորության համար՝ 10 ե. դ., իսկ Հովի. Գրիգորյանը՝ 5 ե.դ.[515]:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Ուսուցչապետն ուներ մեկ դուստր և չորս որդի:

Կինը՝ Վարդուհի Փեհրիզյան. «Ի հօրէ և մօրէ որբուհի մ'էր կինս Վարդուհի, դժբաղդաբար ոչ ուսեալ, բայց իբր լաւ տանտիկին կը սիրէր տուն, պարտէզ, ծաղիկ: Նա մօրս հանգոյն հիւրասէր էր և գթասիրտ հանդէպ կարօտեալներու: Ընտանեկան դիւրակեցիկ կեանքի պայմաններ ստեղծած էինք արդէն 1881էն մինչ 1913, երբ ես վերջին ուղեւորութեանս ձեռնարկեցի և այնուհետև պատահեցան 1915ի դժբաղդութիւնները»[516]:

1915 թ. հուլիսյան գաղթին Վարդուհին դստեր և թոռնիկների հետ հասնում է Երևան, իսկ մեկ տարի անց՝ տեղափոխվում Թիֆլիս, որտեղ նրան ընդունում է Տիգրան Նազարյանը գաղթականների համար կազմակերպած ապաստարանում[517]: Կանանց մասնախմբի պատվակալ նախագահի տիտղոսով Վարդուհին 1 տարի աշխատում է Թիֆլիսում, որից հետո վերադառնում է Երևան և ողբում կրտսեր թոռնիկի մահը: Մահանում է 1920 թ.:

Դուստրը՝ Կատարինե-Վարդանուշ. Երամյանի անդրանիկ զավակն էր: Ուներ 2 տղա, ամուսինը՝ Արմենակ Պարիկյանը, պանդխտության էր մեկնել

512 «Յուսաբեր», 1929, № 230, 28 դեկտեմբերի, էջ 3; № 232, 31 դեկտ., էջ 3; 1930, № 236, 8 յունուարի, էջ 3:

513 «Արեւ», 1930, № 3321, 3 յունվարի, էջ 3:

514 «Արեւ», 1930, № 3324, 8 յունվարի, էջ 3; 1929, № 3312, 23 դեկտեմբերի, էջ 2, 3, № 3316, 27 դեկտ., էջ 3; № 3317, 30 դեկտ., էջ 3:

515 «Արեւ», 1930, № 3327, 11 յունվարի, էջ 3:

516 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 532:

517 Հայտնի է, որ 1915 թ. խմբագիր, հասարակական գործիչ Տիգրան Նազարյանը գաղթականների համար նախ հիմնում է արհեստագիտական դպրոց, ապա «Հրատապ սփոփանք Մայր հայաստանցիներին» ապաստարանը (**Նազարյան Մ.**, Տիգրան Նազարյանի կյանքը և գործունեությունը, «Տեղեկագիր ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի. հասարակական գիտություններ», 1965, № 3, էջ 41):

ԱՄՆ: Երամյանը Վանից հեռանալուց առաջ աղջկան տեղափոխում է իր տուն, քանի որ կինը մենակ էր մնացել (Վաչագանը Երամյանի հետ էր, Վարդանը Պոլսում էր, Վարդգեսը՝ Ֆրանսիայում): 1915 թ. հուլիսյան գաղթին Կատարինեն զավակների և մոր հետ հասնում է Երևան: Փոքրիկները տեղավորվում են որբանոցում, իսկ աղջիկն աշխատում է որպես հիվանդապահ:

Հարկ է նշել, որ երախտապարտ վանեցիներն անտարբեր չեն մնում և օգնության ձեռք են մեկնում ուսուցչապետի՝ նյութական ծանր վիճակի մեջ գտնվող ընտանիքին: 1920 թ. մայիսին տպագրվում է Օգնության կոչը, որում մասնավորապես նշվում է. «Վանի Երամեան դպրոցի հիմնադիր Հ. Երամեանի ընտանիքը Երևանի մէջ կապրի նիւթական շատ ծանր դրութեան մէջ: Ծերացած կինը ծանր հիւանդ է, տկար են նոյնպէս անսնունդ մնալու հետեւանքով մանկամարդ աղջիկը և իւր փոքր երեխան:

Կոչ կընենք Վանի հասարակութեան ընդհանրապէս և Երամեան նախկին աշակերտներուն մասնաւորապէս, սրանց վրայ պ. Երամեան մեծ երախտիք ունի, օգնութեան հասնել սերունդներ կրթող Վանի վաստակաւոր և բազմերախտ ուսուցչի անօգնական ընտանիքին և ազատել զայն ներկայ տառապալի կացութենէն»[518]:

Արձագանքելով կոչին՝ սպա Վահե Չոփուրյանը փոխանցում է 500, Արմենակ Փոխարյանը՝ 250, Կ. Աղապապյանն ու Ռ. Փիլոյանը՝ 500, Հ. Յագոյանը՝ 150 ռուբլի[519]: Ղամարլուում (այժմ՝ Արարատի մարզ, ք. Արտաշատ) նույն նպատակի համար Տ. Սամուելյանի նախաձեռնությամբ հավաքվում է 6750 ռուբլի[520]: Հունիսին Վասպուրականի հայրենակցական միության վարչությունը Երամյան ընտանիքին հատկացնում է 6.000 ռուբլի[521]:

Օգոստոսին Երամյանի դուստրը՝ Վարդանուշ Պարիկյանը, շնորհակալություն է հայտնում բոլոր նվիրատուներին. «Ի յարգանս հօրս՝ Համբարձում Երամեանի, անոնք, որ իրենց սրտագին նուէրներով մխիթարեցին մօրս իւր մահամերձ անկողնի մէջ, թող թոյլ տան ինձի յայտնել իրենց իմ ամենաանկեղծ շնորհակալութիւններս: «Հայաստանի ձայն»-ի խմբագրութեան միջոցաւ լիովին ստացանք 26.900 ռուբլի, որուն մեծագոյն մասը հանգուցեալ մայրս իր կենդանութեան ատեն կարգադրեց պարտքերը մաքրելու, մնացորդը ի գործ դրինք մօրս թաղման և իմ հիւանդութեան օրերուն որդւոյս սնունդի կարիքներու»[522]:

Կատարինեն Երևանում 3 տարի ապրելուց հետո ԱՄՆ անցնելու նպատակով մեկնում է Թիֆլիս: 1926 թ. դեռ այնտեղ էր. «Կը մնայ ցարդ իր անդրանիկ որդւոյն՝ Գառնիկի հետ միասին չկրնալով անցագիր ստանալ»: Երամյանի նախկին աշակերտն ու բարեկամը՝ Հրանտ Գոնտաքճյանը, իր ընտանեկան հարկի տակ է առնում նրանց, որտեղ էլ նրանք բնակվում են՝ երբեմն օգնություն ստանալով Ամերիկայից[523]:

Վարդան որդին. ծնվել է 1886 թ.: 1900 թ. սովորում էր «Ռոբերթ» քոլեջում[524]: Պոլսում սովորում է 6 տարի՝ 1900-1906 թթ. «բրօֆէսէօր Յակոբոս Ճէճիզեանի հայրական խնամոց ներքև»[525]: Սակայն «աւարտելու համար հազիւ տարի մը մնացած՝ Վարդան թողուց քօլէճը և առանց թոշակի տարի մը եւս յատկապէս ֆրանսերէնի համար Պէրպէրեան վարժարանին աշակերտելէ յետոյ՝ 1906ին» վերադառնում է Վան[526]:

1906-1909 թթ. աշխատում է Երամյան վարժարանում որպես կարգապահ և օգնական ուսուցիչ[527]:

1909 թ. օգոստոսի 8-ին Զավեն վարդապետ Տեր-Եղիայանը խնդրագրով դիմում է Մատթեոս Իզմիրլյան կաթողիկոսին նյութապես և բարոյապես օգնել ԱՄՆ ուսանելու մեկնող Վարդան Երամյանին. «Քաղաքիս Երամեան վարժարանի բազմարդիւն տնօրէն Համբարձում էֆ. Երամեանի որդին՝ պ. Վարդան Երամեան դէպի կողմդ ուղևորուեցաւ Կովկասի վրայով Ամերիկա երթալու համար, ուր մտադիր է բարձրագոյն ուսման հետևեալ, վարժարանին և Հայրենեաց կրթական գործին օգտակար ըլլալու գովելի տենչով:

Ուստի... կհամարձակիմք խնդրել... նիւթական ու բարոյական օժանդակութիւն, որով իր ուղևորութիւնը շարունակելով, կարող ըլլայ լրումն տալ իր փափագանաց և ապագային շարունակել իր բազմերախտ հօր այնչափ ձեռնհասօրէն վարած վարժարանը»[528]:

1909-1910 թվականներին Վարդանն անցնում է Եգիպտոս՝ բարերար փնտրելու և Շվեյցարիա անցնելու հույսով[529]: Դրանից հետո մեկնում է Պոլիս և երկու տարի ուսուցիչ աշխատում Հակոբ Բագրատունու մասնավոր վարժարանում[530]:

Այնուհետև՝ մինչև 1914 թ. հունիսը, Կ.Պոլսի Բերայի հայ կաթոլիկների Սբ. Գրիգոր Լուսավորիչ քոլեջի տեսչի օգնականն էր: Տեսուչն էր Դանիել Վարուժանը՝ «օգնական ունենալով անդրանիկ զաւակս՝ Վարդան»[531]:

518 **Եակոբեան Յ.**, Վանի հասարակութեան, «Հայաստանի ձայն», 1920, № 50, 12 մայիսի, էջ 2:
519 «Հայաստանի ձայն», 1920, № 53, 16 մայիսի, էջ 1:
520 «Հայաստանի ձայն», 1920, № 54, 19 մայիսի, էջ 2 (տրված է նաև նվիրատուների անվանացանկը):
521 «Հայաստանի ձայն», 1920, № 68, 18 յունիսի, էջ 2:
522 «Հայաստանի ձայն», 1920, № 114, 17 օգոստոսի, էջ 2:
523 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 532-533:
524 Նշվ. աշխ., էջ 28:
525 Նշվ. աշխ., էջ 274, 533:
526 Նշվ. աշխ., էջ 533:
527 Նույն տեղում:
528 ՎՀԵՊ, գիրք Ը, էջ 358:
529 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 533, 144:
530 Նշվ. աշխ., էջ 533:
531 Նշվ. աշխ., էջ 273-274: Այլ էջում նշում է. «Սագրզ Աղաճի կաթոլիկ հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարանը մտաւ իբրև կարգապահ կամ փոխտեսուչ, ինչպէս կը սիրէին զինքն կոչել հոգաբարձուները կամ խնամակալները: Բուն տեսուչն էր յայտնի բանաստեղծ ողբացեալ Դանիէլ Վարուժանը» (նշվ. աշխ., Բ, էջ 533):

1914 թ. վարժարանի խնամակալներ Գարտաշյանը, Ոսկյանը, Ալաճաճյանը չեն թողնում Երամյանին, որ իր հետ տանի որդուն: Պատերազմի ժամանակ Վարդանին այլ երիտասարդների հետ բռնի զինվորագրում են և Բանկալթիի զինվորական վարժարանում 6-ամսյա դասերից հետո որպես պահեստի սպա՝ բանակ ուղարկում: 1918 թ. Հալեպից ստացվում է նրա մի նամակը, որտեղ հորը «կ'իմացնէր իբրև Մարաշի հրամանատարին և ապա գերմանացի հազարապետ բժշկի մը թարգմանի պաշտօնով մինչև Տիգրանակերտ կատարած երկար ճամբորդութիւնները, զանազան արկածները և վերջապէս Հալէպի անգլիական գրաման շնորհիւ վերջնապէս ազատուիլը ամէն վտանգէ»[532]:

Վարդանը վերադառնում է Պոլիս և 1921 թ. ամուսնանում[533]: 1922 թ. սեպտեմբերին նորից «կը վերակոչուէր Ս. Լուսաւորիչ վարժարանի իր նախկին պաշտօնին»[534]: Նույն թվականին՝ Իզմիրի անկումից հետո, երբ մայրաքաղաքի հայությունը ևս սկսում է ցրվել, վարժարանը փակվում է: Վարդանն ապաստանում է Բեյրութում[535]:

1926 թ. աշխատում էր Անթիլիասի ամերիկյան որբանոցում՝ 45 դոլար ամսականով, քանզի «ամերիկացիք շատ ժլատ են տարագիր՝ մանաւանդ հայ պաշտօնեաներ վարձատրելու համար»[536]: 1926 թ. ուներ երեք տարեկան մի մանչուկ[537]:

Հարություն-Վարդգես որդին. 1906-1912 թթ. սովորում է Կարնո Սանասարյան դպրոցում՝ «վայելելով յաջորդաբար Գէորգ Աբուլեանի և բրօֆէսէօր Աստուածատուր Խաչատուրեանի հայրական մասնաւոր խնամքները»: Մեկ տարի էր մնում ավարտելուն, երբ փակվում է վարժարանը, իսկ նորը բացվում է Սեբաստիայում[538]:

Ուսման նկատմամբ ունեցած բուռն սերն իրագործելու համար Վանում Ֆրանսիայի հյուպատոսի հանձնարարությամբ ուղարկում են Փարիզ: Կրթական նախարարությունը նրան տեղավորում է «Նիմի *Էքօլ Նօրմալը,* զոր աւարտելէ վերջ անցաւ Մօնբէլիէ գիտութեանց ֆաքիւլթէն և անտի տարի մը վերջ ուղղակի Սօրպոն, ուսկից ստացաւ վկայական՝ լիսանսիէ էս սիանսի»[539]:

1921 թ. Հարություն-Վարդգեսն արդեն ավարտել էր Սորբոնի համալսարանը: Նույն տարվա ընթացքում ֆրանսերենով Déshydratations de l'alcool նյութի հիման վրա հրատարակում է մի ուսումնասիրություն իր գյուտի մասին[540]: Դրանից հետո՝ շուրջ երեք տարի, հետևում է Լիոնի «Շիմի էնտիւսթրիէլ հաստատութեան գործնական ուսումներուն և էնժէնիէօր շիմիսդ տիտղոսով իսկոյն գործի անցաւ ներկի և կաշիի աշխատանոցներու մէջ»[541]: 1925-1927 թթ. պաշտոնավարում էր Փարիզի Սեն-Նիքոլա գիշերօթիկ վարժարանում, իսկ հետո «Քօլէժ Շապթալ տը Միւնիսիփալթէի մէջ՝ իբրև գիտութեանց բրօֆէսէօր»[542]:

Ի դեպ, 1912-1915 թթ. Երամյանն իր համեստ քսակից կարողանում էր բաժին հանել նաև երկու որդիներին՝ Վարդանին և Վարդգեսին՝ հոգալով նրանց ծախսերը[543]:

Վաչագան որդին. ծնվել է 1896 թ.: 1913 թ. սեպտեմբերին Իզմիրում մի քանի օր մնալուց հետո Երամյանը որդուն Հակոբ Փեհրիզյանի հետ ուղարկում է Պոլիս՝ «ժամանակին Լիսէի մը մէջ տեղաւորելու համար»[544]:

1914 թ. հունիսին, երբ Երամյանն Իզմիր էր մեկնում, որդին լալագին աղաչում էր իրեն էլ հետը վերցնել, սակայն «յաջորդ շրջանին ուսումներուն պատրաստել տալու դիտումով արդէն յանձնարարած էի զայն Ս. Լուսաւորիչ վարժարանի ուսուցիչներէն միոյն՝ դժբաղդ Արիս Իսրայէլեանի, որ ինքն եւս 1915ի ապրիլեան զոհերու կարաւանին հետ Անատօլուի սպանդանոցները պիտի ղրկուէր»[545]:

1915 թ. 19-ամյա Վաչագանը եղբոր՝ Վարդանի նման ևս զինվորագրվում և ուղարկվում է Մարաշ: Այստեղ նրան ազատում է եղբայրը՝ Վարդանը, Մարաշի հրամանատարի միջնորդությամբ, որին սիրելի էր դարձել իր լեզվագիտությամբ[546]: Սակայն Վաչագանը հետո ևս «կը բռնուի և գործաւոր վաշտերու հետ կը ղրկուի Մէրտին՝ ճամբաներու վրայ աշխատելու, ուր և կը կորսուի իր հետքը»[547]:

Հայրական վիրավոր սրտի արյունախառն արցունքով Երամյանը, բնաբան ընդունելով Հենրի Պիչերի այս խոսքերը՝ «Ամեն մէկ զաւկի կորուստով կեանքն աւելի խորունկ կ'ընմբռնենք», գրել է.

532 Նշվ. աշխ., Բ, էջ 533: Մարաշում Վարդանը եղել է 1916 թ.: Այնտեղ էր նաև նրա եղբայրը՝ Վաչագանը:

533 Նշվ. աշխ., էջ 525:

534 Նշվ. աշխ., էջ 533:

535 Նշվ. աշխ., էջ 533-534:

536 Նշվ. աշխ., էջ 534:

537 Նույն տեղում:

538 Նույն տեղում:

539 Նույն տեղում:

540 Նշվ. աշխ., էջ 503: Այդ գյուտի արձագանքները և գնահատականները հրապարակվում են 1921 թ. փարիզյան մամուլում: **Խանպէկեան Վ.**, Վարդգէս Երամեանի գիւտը, «Բազմավէպ», 1921, № 11, էջ 361-363:

541 Նշվ. աշխ., Բ, էջ 534:

542 Նույն տեղում:

543 Նույն տեղում: Ավելի ուշ Վարդգեսին օգնում են Արմենակ Կամսարականը և ալեքսանդրիաբնակ մի բարերար, իսկ մինչև 1923 թ. հունվար ամիսը՝ Ալեքսանդրիայի քաղաքային ժողովը փոքրիկ նպաստով և Ազգային սրահի վարչությունը, իսկ հետագայում նրա վեցամյա ծախսերը հոգում է Գաբրիել էֆ. Նորատունկյանը, մինչև որ Լիոնի վարժարանն ավարտելով՝ Վարդգեսը «ինքնապահ դարձաւ» (Բ, էջ 534): Ֆրանսիայում նրան մեծապես օգնում է Վանի նախկին ռուս հյուպատոս Կոստանդին Կամսարականը (նույն տեղում), որը հայրական գուրգուրանքներով փորձում է մոռացնել տալ Վարդգեսի պանդխտությունը (Բ, էջ 535):

544 Նշվ. աշխ., Բ, էջ 198: Հմմտ. «1913հոկտ.էն սկսեալ՝ կ'աշակերտէր Պոլսոյ ֆրանսական Լիսէ-Ֆօն քօլէժին» (էջ 535):

545 Նշվ. աշխ., էջ 535:

546 Նույն տեղում: Այդ մասին Երամյանն իմանում է շատ ուշ՝ 1918 թ. (նշվ. աշխ., Բ, էջ 533):

547 Նույն տեղում:

«Իմ Բենիամինս էր Վաչագանն չքնաղ
Զոր տասնութամեայ թողի Լիսէ-Ֆօռ,
Ի զէն վարեցին, մեռցուցին աւա՜ղ,
Հասակն չինարի, կամքն էր զօրաւոր:

Ասէ՛ք դուք ինձ, աղէ, ո՞վ էր այն սեգ պարմանին,
Մօրն փառք պարծանք եւ Աստղկան տարփելի Վահագն,
Արեւակուռ պայծառադէմ, զուարթ գեղաչուի,
Անզոյգ գեղով նախանձելի մի Յովսէփ էր այն:

Ասէ՛ք ո՞վ էր այն թիկնաւէտ գոս երիտասարդ,
Մարմնոյն հսկայ եւ հոգւոյն արի խիզախ Վարազդատ,
Հազիւ տասնինն թարմ գարուններ ճակտին տայինն զարդ.
Մօրն սիրելի եւ հօրն անմոռաց Բենիամինն էր այն:

Ասէ՛ք ո՞վ էր Լիսէ-Ֆօռի ուսանողն այն լուռ,
Զոր տասնիինգին Էնվէր, Թալէաթ վարեցին զինուոր
Մինչեւ Մարաշ, ապա Մէրտին՝ ճամբաներն մահու.
Հոգեհատոր եւ քաջ ուշիմ Վաչագանն էր այն:

Ո՞ր աստղերուն, ո՞ր լուսնի տակ ինկար դիտապաստ,
Գնդա՞կ մ'արդեօք, թէ եաթաղան մ'խրեցաւ կռնակդ.
Ո՞ւր է աճիւնդ, ունի՞ս շիրիմ ու փթթի ծաղիկ մ'.
Մերտի՛ն, Մուսո՛ւլ, Տիգրանակե՛րտ, չտա՞ք յուսոյ շողիկ մ':

Անէ՞ծք ձեռքին, որ բիւրներով հնձեց ծաղիկներ,
Եղո՛ւկ եւ ինձ, մոխիր գլխիս՝ որդեա՜կ բռնամահ.
Է՞ր խուլ կեցայ «հա՜յր, հետդ առ զիս լացիդ անտարբեր,
Պատճառն՝ ուսումդ, այլ սիրտ, աւա՜ղ, կրծէ որդ մ'անմահ»[548]:

Տակավին 1919 թ. Հ. Երամյանը շարունակում էր փնտրտուքները «1916ին Մարաշէն Մէրտին եւ ապա Տիգրանակերտի ու Մուսուլի կողմերը ղրկուած...» թուրքական բանակի զինվոր 23-ամյա որդուն՝ Վաչագանին գտնելու ուղղությամբ[549]:

Վահրամ որդին. հինգերորդ զավակն էր: Ծնվել է հավանաբար 1901 թ.: Մահացել է վաղ հասակում՝ 6 տարեկանում:

«Գիշեր էր, երբ ծնաւ չորրորդ մանչս Վահրամ,
Ի՜նչ անուշ հնչեց ճիչն իր անդրանիկ.
Տասնիինգ տարի վերջ՝ դեռ մահն իւր ես լամ,
Վեցամեայ՝ թռաւ սիրունն իմ թռչնիկ:

Մանկութիւնս յիշողք ասեն՝ «քեզ նմանէր»,
Լացն իր, թոթովանքն, բոլոր շարժումներ,
Մարմնաւոր հրեշտակ զինք կարծել տային,
Անցորդք այտերէն վարդեր քաղէին:

Երգ ի բերան միշտ խաղար, ոստոստէր,
Խօսուածքն իսկ կարծէս դրախտէն դայլայլ մ'էր,
Ի տես հայրիկին վազէր համբուրուէր,
Գաւազան, կօշիկ առնէր կամ բերէր:

Սրութիւն մտա՞ցն ասես հրաշալի,
Մտքեր գուշակէր գիշերէն դէմքի,
Նոյնիսկ ֆրանսերէն բառեր եւ խօսքեր
Կարծես բնազդով ըմբռնէր, շարժէր:

Դուրսէն փոքրերու դասուց ունկնդիր՝
Նոյնութեամբ կրկնէր մեծ մասն անսխալ,
«Ինչո՞ւ զիս, հայրի՛կ, դպրոց չես տանիր,
«Գոց գիտեմ ահա, դժուա՞ր է կարդալ»:

Թատրոնի փորձերուն թռէր վազէր դպրոց,
Կ'իւրացնէր ժեսթեր, խօսքեր սորվէր գոց,
Շատ ճիշդ ձեւացնէր այս կամ այն պատկեր,
Ամէնուն բաշխէր ժպիտ ու վարդեր:

Ընդ խաղ մի անհաճ ըսթափ դուրս ելլէր,
Թէյէ կամ ճաշէ զրկուած եմ կ'ըսէր.
Բայց ի լուր ներման ինչպէ՞ս գիրկս նետուէր
Ի՜նչ զուարթութեամբ սեղանն համեմէր:

Որքա՜ն հաճելի եւ սրամիտ խօսքեր
Մերթ իսկ լուրջ խրատներ ուղղէր խօսակցին,
Ցնծութիւնն էր տունս, իրմով մեր հիւրեր
Հրճուալից զուարթ պահեր կ'ապրէինք:

Վահրամս, ո՜վ Հիւկօ, գովքիդ էր արժան,
Յիսուս զայն գրկած նախքան գալն աշխարհ,
Կարծես երկնքէն մոլորած հրեշտակ մը
Վեց գարնան համար մեզ հիւր եկաւ թռաւ:

Ա՜հ, երանութիւնն ան իր հետ տարաւ,
Լացին մայր եւ քոյր, եղբարքն անմխիթար,
Լացին եւ ծանօթք մեզ հետ հաւասար,
Եւ ցարդ նետահար մնաց իր դժբաղդ հայր:

Այո՛, խղճահար հեծեմ ես, ո՜հ, ցարդ,
Թէ չորս օր գառնուկն պառկեցաւ հիւանդ,
Յերրորդին միայն դիմեմ բըժիշկի,
Չի քսակս, աւա՜ղ, էր ստէպ դատարկ:

Ի՞նչ է կեանքն արդեօք, մահն ի՞նչ մանաւանդ,
Կրօնք, իմաստասէրք, հին նոր գիտութիւնք,
Ի՞նչ տեսութիւններ չ'պարզեցին առ այդ,
Բայց ո՞ր միտք, ասէք, գտաւ գոհացում:

548 **Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 536:
549 «Որբունի». Տեղեկատու հայ որբախնամ ընկերութեան, Ադեքսանդրիա, 1919, պրակ Ա, Բ:

Թէ բարիք մ'կեանք, ինչպէ՞ս մէկ մանրէ
Մեր մարմնոյ մասեր համակ վարակէ
Աչքդ այնինչ ի լոյս արեգին բացուի,
Ձերդ սուր Դամոկլեան մահն դէմդ գայ ցցուի:

Իսկ թէ չարիք մ'է կեանքս մեր անցաւոր,
Ի՞նչ է ուրեմն այն ստեղծագործ հանճար,
Որ բնութեան ուժերն հզօր բազմաւոր
Սանձէ կիրարկէ ի պէտս անհամար:

Ե՞րբ երջանկութիւն տեսաւ այս աշխարհ,
Ո՞ւր կարգեր արդար, վայելք հաւասար,
Ի՞նչ այս հեռ նախանձ, վէրք խոց հոգիի,
Ցաւոց այս հովիտն, ասէք, ո՞ւմ ժպտի:

Այս եւ սոյնպիսի խոհեր զիս ըստէպ
Խռովեն ու դնեն անելի մ'հանդէպ.
Հապա մեղմեխանք գձուձ մեծերու
Որքա՜ն խոցոտեն սրտերն փոքրերու:

Մենութեան տըխուր ժամերուս ըստէպ՝
Ի տես շպարուած գործոց կռապարիշտ
Դառնութեամբ յիշեմ ու կրկնեմ ի դէպ
Լիւսիէնի ծանօթ խոհերն ամբարիշտ:

Բայց մոռցայ կարծես կորուստն Վահրամիս,
Ընդ որ առ յաւէտ ընդվզի հոգիս,
Թէ արդար է մահն ցամաքած խոտի,
Ո՜հ, այն ինչ բացուած ծաղիկն է՞ր խամրի:

Արդէօք նա յերկինս հրեշտակ մ'է փոխուած.
Կամ այլ աստղերու բնակի՞չն է դարձած,
Յետ մահուս ես զայն պիտ տեսնե՞մ, ճանչնա՞մ,
Թէ ո՜չ, Աստուա՜ծ... է՞ր տուիր եւ առիր զայն»[550]:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ, ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԸ

«Դպրոցն եղաւ իմ հետաքրքրութեան և գուրգուրանքի գլխաւոր առարկան: Դպրոցն է եղած մտքիս թռիչքներուն և հոգւոյս տեսիլներուն ազդակն ու ներշնչարանը. դպրոցն է եղած իմ Պառնասն ու Ողիմպոսը» (**Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 75):

Համիդյան ջարդերի ընթացքում ռուսական դիրքորոշման մասին ուսուցչապետը նշել է. «Չենք կրնար անգամ մըն ալ չշեշտել, թէ իր անտարբերութեամբ աւելի տխուր և տգեղ դեր մը խաղաց Ռուսիա, որ իբրև անմիջական և քրիստոնեայ դրացի՝ հայկական նահանգները գրաւելու լուրջ սպառնալիքով մը միայն՝ պիտի կրնար արգիլել հայկական ողջակէզը: Եթէ նոյնիսկ զինուորական միջամտութեան պէտք տեսնուէր, ոչ Անգլիա և ոչ ալ ուրիշ և ոևէ պետութիւն այդ միջոցին արգելք պիտի յարուցանէր և պատեհագոյն առիթ մըն էր այս՝ իրականացնելու դէպի Միջերկրական յառաջխաղացքի իր դարաւոր ծրագիրը: Նորընտիր կաթողիկոս Խրիմեան՝ ձարին տուած այցելութեան առթիւ, 1895, հանդիսաւորապէս հայ ազգի միակ և հզօրագոյն պաշտպան հռչակած էր Ռուսիան, և սակայն տկարամիտ Նիքոլա Բ.ի քաղաքականութեան վարիչ կարճատես Լոպանոֆներ՝ ի հեճուկս Անգլիոյ, գուցէ և հայ յեղափոխականներու հակառուս հրատարակութիւններէն վիրաւորուած՝ մերժեցին ճկոյթ մը իսկ շարժել ու դիւային սառնասրտութեամբ թոյլ տուին որ արիւնալի տոռամներ թաւալին սահմանի միւս կողմը» (**Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 385-386):

Ինչպես փաստեց դառնաղետ կյանքը, երիցս ճշմարիտ էր Երամյանը, երբ նշում էր. «Իմ համոզումս էր, թէ մեր ազգի փրկութեան միջոցը՝ լուրջ դաստիարակութիւնն և տնտեսական խաղաղ զարգացումը, այլ խօսքով՝ աստիճանական բարեշրջումը կրնայ ըլլալ առաւելապէս՝ քան թէ յարձակողական կամ յեղափոխական ձեռնարկներ, քանի որ մեր երկրի կամ Հայաստանի տաճկական, ռուսական և պարսկական բաժանումներու աշխարհագրական և ընկերային հանգամանքները բոլորովին տարբեր են կամ աննպաստ՝ քան յունական, պուլկարական և այլ միջավայրերու պայմանները: Ես ինքս չմասնակցեցայ երբէք ոևէ կուսակցական կազմակերպութեան, նախ՝ ճիշդ այս համոզումով, և երկրորդ՝ որ դպրոցս կամ կրթութեան գործը ինձ համար բաւ կը համարէի իբրեւ միջոց ծառայելու ազգիս, չուզելով ուշադրութիւնս ցրուել կամ բաժնել ուժերս: Շատեր ալ, սակայն, բարձրօրէն գնահատեցին զիս...» (նշվ. աշխ., Ա, էջ 164):

«Հայ ազգը պիտի կրնա՞ր միացեալ անկախ Հայաստան մը վարել՝ եթէ տրուէր իրեն այն: Դարերու ընթացքին արշաւող կամ գերիշխող ցեղեր՝ քաղաքակրթութեամբ մեզմէ վեր կամ վար գտնուելով հանդերձ՝ մեր արեան մէջ ներարկած են իրենց մոլութիւնները, թողլով մեր վրայ տխուր հետքը իրենց տիրապետութեան: Հեղեղները ո՛չ միայն կը քանդեն ու կ'աւերեն շինութիւններու մշակութիւններ, այլև ընդ միշտ քարքարուտ կամ տղմուտ խոպան վայրերու կը վերածեն յաճախ իրենց ողողած բերրի դաշտերը:

Օտարներ հայ ցեղի ոյժը տկարացնելու համար ամէն միջոց ի գործ դրած են՝ քաջալերելու և արմատացնելու նաև մեր ցեղի սեփական թերութիւնները, զոր, օրինակ, անմիաբանութիւնը և անհատական կեդրոնախոյս եսը ընդդէմ կեդրոնական իշխանութեան և ի վնաս հաւաքական գործունէութեան: Մեր պատմութիւնը կ'ապացուցանէ, որ հայը միաբան՝ անպարտելի է պատնէշի վրայ, իսկ պառակտման պարագային պարտեալ մըն է:

550 Նշվ. աշխ., Բ, էջ 536-539:

Նուպար փաշան իրաւունք ունէր ըսելու. «Տասը ֆրանսացի մէկ հայ հազիւ կարժէ, իսկ տասը հայ մէկ ֆրանսացի չարժէր:

Այո՛, մեր մէջ անհատականութիւնն իր բացասական կողմերով շատ զօրաւոր էր՝ պատերազմէն առաջ՝ մեր ներքին վարչական բոլոր մարզերուն վրայ: Այսօր ալ դժբախտաբար նոյն է պատկերը ընդհանուր գաղութահայ կեանքին, ուր կուսակցութիւններն ու մարմինները զիրար կը խաչաձեւեն շատ ձեռնարկներու մէջ» (**Երամեան Հ.**, նշվ. աշխ., Ա, էջ 337):

1917-1918 թթ., երբ «ռուսները թրքական ճակատի լեռնակուտակ մթերքները մեզ թողնելով կը քաշուէին, մեր վարիչ մարմիններն ու հրամանատարները չգիտցան այդ սքանչելի պատեհութենէն օգտուելով՝ միացեալ կուռ ճակատ մը կազմել թուրքերուն դէմ, որոնց բանակը բարոյալքուած ու քայքայուած լինելով՝ հայերը պիտի յաջողէին դիւրաւ Հայաստան մը կազմել և կատարուած իրողութեան մը հանդէպ դնել կռուող կողմերը» (նշվ. աշխ., Ա, էջ 337):

1918-1920 թթ. հայոց զինուժի մասին նշել է. «Հայտաճկական պատերազմի նախօրեակին ու վաղորդայնին հայ կառավարութեան ներկայացուցիչներն ու զօրավարները անվերապահ վստահութիւն կը յայտնէին հայ զինուորին բարոյական տրամադրութեան և յաղթանակի յաջող ելքի մասին: Եւ իրօք սահմանագլուխէն մինչև Սարըղամիշ բաւական ուժեղ կռիւներ տեղի ունեցան. և սակայն Թիֆլիսէն եկող հայ կամաւորներն իրենց հետ պոլշէվիկեան սերմեր պիտի բերէին՝ ցանելու համար բանակի շարքերուն մէջ, որք խաբուած նաև Գարապէքիրի թռուցիկներէն, չպիտի ուզէին կռուիլ թշնամւոյն դէմ՝ որ այս անգամ կուգար պոլշէվիզմի կարմիր վերարկուին տակ քօղարկելով մոնկոլեան կարմիր գազանի կիրքերը: Միամիտ հայ զինուորը վերջէն պիտի հասկնար, որ ընկե՞ր տաճիկը իր առհաւական բնազդներուն համեմատ կը քանդէ, կը թալանէ, կը կոտորէ և կը սրբապղծէ գրաւուած վայրերը մինչև Աղեքսանդրաբօլ, մինչ հիւսիսէն հայ պոլշէվիկները առիթէն օգտուելով՝ ռուս կարմիր գնդերու հետ ձեռն ի ձեռն Հայաստան կը խուժէին» (նշվ. աշխ., Բ, էջ 463-464):

Անմխիթար ափսոսանքով Երամյանն անդրադառնում է նաև միջկուսակցական անզիջում և քայքայիչ խժդժությունների. «Եւ սակայն երբեք մեր սոյն քաղաքական կուսակցութիւնները միացեալ ճակատ մը չկազմեցին ազգային փրկութեան փշոտ ճամբուն վրայ և իրարու հակառակ ուղղութիւններով ջանացին հասնիլ դէպի նպատակակէտ..., և սակայն չյաջողեցան: Շատեր զանազան ծրագիրներով կամ առաջարկներով աշխատեցան համագործակցութեան մը բերել սոյն հակընդդէմ յոսանքները, քանի որ բոլորին նպատակը միեւնոյն էր, և սակայն ապարդիւն ելան այդ ամէն ջանքերը: Այո՛, համաձայնութեան փորձերը ապարդիւն վիժեցան և ազգը փոխանակ փրկուելու՝ անկումէ անկում պիտի դիմէր թաւալգլոր: Արդէօք ճակատագրակա՞ն էր թրքահայութեան բնաջնջումը, որպէսզի թուրքը պալքանները կորսնցնելէ յետոյ հայկական վիլայէթներն ևս ձեռքէ չհանէ, թէ՞ յեղափոխական կամ քաղաքական կուսակցութեան անժամանակ և յարձակողական գործունէութեան արդիւնք՝ ինչպէս կը դատեն շատեր: Ապագան կամ անաչառ պատմութիւնը պիտի վճռէ այդ հարցը» (**Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 161-162):

Վշտաբեկ սրտով ուսուցչապետը հիշում է նաև երկրի համար ամենից պատասխանատու պահերին իսկ ներքին փոխհամաձայնեցված ճակատի բացակայության հասցրած անդառնալի վնասների մասին. «Իրաւասութեանց տխուր պայքարը ընդմէջ Հ. Հ. պատուիրակութեան և ազգային պատուիրակութեան՝ «Միացեալ Հայաստան»ի բանաձեւին շուրջ՝ 1919ին: Չմոռանանք նաև հակամարտ տեսութիւնները զոյգ պատուիրակութեանց միջև՝ Կիլիկիայի և այլ հարցերու մասին: Ծանօթ են վերջապէս հանրապետութիւնը զբաղեցնող զանազան ներքին վէճերէն զատ նաև Դաշնակցութեան յանձնապաստան գործելակերպն և հայ պոլշեւիկ կուսակցութեան հակադաշնակեան բրօբականտը՝ մինչև Կարսի աղետաբեր անկումը: Աւելցուցէք այս ամենուն վրայ Կասեանի առաջին պոլշէվիկ նախարարութեան բռնութեանց պատճառով՝ 1921ի Փետր. 16ի ժողովրդական բռնկումը և այսպեսով յառաջ եկած ներքին եղբայրասպան կռիւները՝ Ալեքսանդրապօլի տխուր դաշինքով մասնատուած ու գծած հանրապետութեան մէջ...: Երանի՜ թէ այսուհետև ամենադառն խաբկանքներն և կրակի անօրինակ փորձութիւնները զմեզ առաջնորդէին անաչառ վերգնահատումներով գտնելու անմոլոր ուղի մը կամ ելք մը փրկութեան» (նշվ. աշխ., Ա, էջ 338: Իր խոսքերի վերջում Երամյանը մեջբերում է **Հայկ Խոճասարյանի** հետևյալ տողերը, որոնք, նրա կարծիքով, այնքան համահունչ էին ժամանակաշրջանին. «Քաղաքական գործունէութիւնն այլեւս երկար շրջանի համար գէթ՝ փակուած է» (տպագրվել է «Հայաստանի կոչնակ», 1925, № 27, 4 յուլիսի, էջ 838):

1921 թ., երբ Ամերիկայում բնակվող հայրենակից Նշան Գարասեֆերյանից ստանում է հետևյալ նամակը. «Երկուքս ալ ծերացանք, աւաղ, ո՛չ եւս յոյս կրկին տեսնելու. հայ ազգը դառն օրհաս մը կապրի և պաշտպա՞ն պետութիւնները կը պատրաստուին հայկական հարցի յուղարկաւորութիւնը կատարելու», Երամյանը պատասխանում է հետևյալ կերպ. «Ո՛չ, իմս Նշան, հայ հարցը չմեռնիր... ունինք գրաւական մը, այն է փոքրիկ հանրապետութիւնը և ազգին ապրելու կամքը» (նշվ. աշխ., Ա, էջ 412):

Տարաբախտ հայ խլյակների ու նրանց ճակատագրի մասին 1926 թ. գրում է. «Մինչև ե՞րբ, Աստուած իմ, հարիւր հազարաւոր հայ խլեակներն

անտէր ու անպատսպար պիտի թափառին օտար աստղերու ներքև, միշտ ենթակայ վտարումներու սպառնալիքին կամ մինչև Հարաւային Ամերիկայի կորստաբեր ափերը դիմելու անողոք հարկին:

Ո՜վ, Յիսուս, հայը քսան դարէ ի վեր քու անուանդ համար գրեթէ ամէն օր կը խաչուի ու կը նահատակուի՝ սպասելով փրկութեան: Մինչև ե՞րբ պիտի լռես...» (**Երամեան Հ.**, նշվ. աշխ., Բ, էջ 493):

Կյանքի մայրամուտին հայրենաբաղձ ու հայրենազուրկ ուսուցչապետը գրում է. «Իսկ այսօր (1929), աւա՜ղ, ոչ՛ եւս են այդ ամենը և ես տասնվեց երկար տարիներէ ի վեր, թեւակոտոր հաւքի մը նման, Նեղոսի ափերը ինկած՝ մերթ հին յիշատակներս քրքրելով կօրօրուիմ, մերթ և աւելի յաճախ վերյիշելով երանելի անցեալը՝ կը մրմնջեմ կսկծագին. «Աւա՜ղ փառացս անցաւորի:

Հասա՞յ ես իտէալիս. ո՛չ անշուշտ: Յաջողութիւններս նորանոր թռիչքներ կուտային հոգիիս: Դպրոցը, լոյսի վառարանը ընտրած էի ֆիզիքապէս լուսազուրկ էութեանս խարիսխ կամ նպատակ: Ձգտումներս ու բաղձանքներս իրագործելու համար, յանձն առի ամէն կարելի նիւթական զոհողութիւններ ու զրկանքներ, մանաւանդ բարոյական դառնագոյն զրկանքը, զի բազմապահանջ գործիս այլազան հոգսերը արգելք եղան ինձ մշտածարաւ մտքիս յագուրդ տալու և անոր հորիզոնն ընդլայնելու: Ուր ուրեմն երկրորդ ուղեւորութեանս առաջին տարին պիտի խոստանար բանալ ինձ ոսկեղէն դուռը՝ նիւթական և բարոյական մեծագոյն յաջողութիւններու չքնաղ հեռապատկերներով: Սակայն համաշխարհային պատերազմը պիտի հասնէր քանդելու և կործանելու ո՛չ միայն վարժարանս և սիրելի հայրենիքս Վան, այլ և, աւա՜ղ, ողջ Հայաստանը» (նշվ. աշխ., Ա, էջ 174):

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

«Արեւ» թերթի խմբագրակազմ
Համբարձում Երամեան, 1929, № 3313, 24 դեկտեմբերի, էջ 1:

«Ո՛չ եւս է այն համակրելի ծերունին, որ գրեթէ ամբողջ տասնըհինգ տարի ապրեցաւ օտարութեան մէջ, իր սեփական հայրենիքէն՝ Վանէն, շատ հեռու, աւելի ճիշդ թափառեցաւ հոս հոն ու ամէնէն շատ մնաց Եգիպտոս, միշտ երերուն, երբեմն հաստատուած Աղէքսանդրիա կամ Բոր-Սայիտի հայկական գաղթավայրը՝ կրթական պաշտօնով ու այդ պարտականութեան մէջ ու անկէ ալ միշտ գործեց, անընդհատ գործեց, կարդաց ու գրեց շարունակ ուրիշի մը աչքով և ուրիշին ձեռքով, ինչպէս թափառեցաւ միշտ ուրիշի մը կոթնած ու անոր առաջնորդութեան ապաւինած...:

Երամեան ծնած էր 1857-ին, հարկ կա՞յ ըսել, Վանի մէջ և տասը տարեկան հասակին մէջ կորսընցուցած է իր աչքի լոյսը...: Հակառակ ատոր, սակայն, Երամեան անվթար պահած է իր կորովը և աշխատելու եռանդը և հերոսութեան չափ մեծ ու զմայլելի յարատեւութեամբ մը հասած է զարգացման այն աստիճանի մը և դիրքի մը, որ եզական դէմք մը կ՚ընեն զինքը մեր մէջ: Ան ինքզինք նուիրած է իր հայրենիքի կրթական գործին, որ կարելի է ըսել ոչինչ ունէր իր մէջ մխիթարական ուրսունական թուականներուն, երբ հիմնեց իր անհատական վարժարանը, որ յամր, բայց հաստատուն քայլերով պիտի յառաջդիմէր, պիտի մեծնար ու գեղեցկանար, ու իր տուած հարիւրաւոր շրջանաւարտներով պիտի կազմէր Վանի ուսումնական դասակարգը, նոր սերունդը, որուն հոգեւոր հայրը եղաւ կրթական այս մեծ մշակը, որ վայելեց իր այդ զաւակներուն անմոռաց սէրը և երախտագիտութիւնը, այնքա՛ն թանկագին իրեն համար, մանաւանդ իր վերջին թափառայած կեանքին մէջ...: Քիչ անգամ կրթական մշակ մը այսքան սիրուած ու քաջալերուած է: Երամեան արժանի էր այդ սրտագին գնահատութեան:

Երամեան կրթական յարկէն դուրս ալ նուիրուած է մեր մտաւորական կեանքին: Ունի բազմաթիւ յօդուածներ թերթերու և այլ հրատարակութեանց մէջ: Ամէնէն շատ գրած է պատմական, հայրենագիտական և հայրենասիրական նիւթերու շուրջ: ...Երամեան թունդ հայրենասէր մըն էր. իր ամբողջ էութիւնը լեցուած էր Հայաստանով ու Վանով, որոնք իրարմէ անջատ բաներ չէին իրեն համար, այլ մէկը միւսը ամբողջացնող, մի և անբաժանելի: Ասոր համար ալ եղած և մնացած էր հարազատ վանեցի մը, կենդանի խորհրդանշանը Վան-Վասպուրականի, որուն յառած է ընդմիշտ իր անլոյս ակնարկը, սիրած՝ անսահման սիրով ու անոր համար ապրած և գործած՝ իր ամբողջ կեանքին ընթացքին»:

Ըստ **Մանվել Մարությանի վկայության**
Վերժինե Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ (վկ. 32), Երևան, 2011, էջ 131:*

Համբարձում Երամյանը «Կույր էր, բայց բոլորին ճանաչում էր ձայնով: Ան մեզի պատմություն կդասավանդեր»:

Վարազդատ Յարութիւնեան
Կոյր աչքերով, պայծառ մտքով, «Վարագ», 2007, № 54, էջ 51-53:

«Վանի Երամեան դպրոցի տնօրէն, գրող եւ հրապարակական գործիչ Համբարձում Երամեան ծնուել է 1857 թ. մայիսի 5-ին, Վանի Այգեստան կոչուող քաղաքամասի Սուրբ Յակոբ թաղամասում:

Նախնական կրթութիւնը ստացել է 1866-1874 թթ.՝ ուսանելով Վանի Այգեստանների Սուրբ Յակոբի եւ Յանկոյսների թաղային վարժարաններում:

Մանկաւարժական գործունէութիւնը ծաւալել է 1874 թ.՝ Վանի Սուրբ Յակոբ ծխական վարժարանում դասաւանդելով հայոց լեզու եւ պատմութիւն: Տառապելով ծաղիկ հիւանդութեամբ՝ զրկւում է տեսողութիւնից եւ այնուհետեւ կոյր աչքով ծաւալում է բազմաբեղուն մանկավարժական ու ազգային-հասարակական գործունէութիւն, մինչեւ մահը՝ 1929 թ.:

Աշխարհ տեսած գործիչ էր: Տարբեր տարիներին ուղեւորութիւններ է կատարել Էջմիածին, Պոլիս, եւրոպական երկրներ, տիրապետում էր ֆրանսերէնին ու դասական հայերէնին:

1876 թ. հիմնադրում է Բարեսիրաց, իսկ 1878 թ.՝ Խնամատար ընկերութիւնները, վերջինի գործունեութեան կանոնակարգում ներգրաւելով պատանիներին մոլորութիւններից զերծ պահելը, իսկ որբացած երեխաների խնամքը կազմակերպում է Վանից ոչ հեռու գտնվող Կարմրաւորի վանքի որբանոցում:

Երբ լուծարւում է Խնամատար ընկերութիւնը, աչազուրկ Համբարձումը իր ուսուցիչ Տիգրան Ամիրջանեանի օգնութեամբ շարունակում է խնամել որբերին, հիմնում «Որբանոց» անունով վարժարան, որում որբերի համար սահմանում է նաեւ թոշակ...

Մինչեւ 1888 թ. եղել է որբանոց, 1888-1904 թթ.՝ որբանոց-վարժարան...

Դպրոցը եղել է ցերեկօթիկ եւ գիշերօթիկ: Վարժարան են ընդունուել յոթ տարեկանից: 1900-1913 թթ. վարժարանին կից գործել է երկամեայ բարձրագոյն դասընթաց, որի շրջանաւարտները կարող էին ուսումը շարունակել եւրոպական համալսարաններում: 1913 թ. այստեղ սովորել է 400 աշակերտ: Հիմնադրման տարուանից մինչեւ փակումը՝ 1915 թ., դպրոցը տուել է մօտ 3000 շրջանաւարտ:

Եգիպտոսում Երամեանը հաւատարիմ մանկավարժի իր վեհ կոչման՝ շարունակում է ուսուցչութեամբ զբաղուել սկզբում Պորտ Սաիդի Սիսուան, ապա՝ Ալեքսանդրիայի Պօղոսեան վարժարաններում»:

Գեորգ Շերենց

Սրբավայրեր, Թիֆլիս, 1902, էջ 43-44:

«Հայկական» որբանոցը շարունակվում է մօտաւորապէս 20-22 տարուց աւելի ընդ տեսչութեամբ մի քրտնաջան և հաստատամիտ մարդու. դա է մեծ պ. Համբարձում Երամեան: Պ. Երամեանը դեռ պատանի հասակում, որ ժամանակ հազիւ թէ առած էր ուսման համն ու հոտ, զրկվում է բնութեան ամենագլխաւոր զգայարանից, աչազուրկ դառնում, և այդ օրից նա աւելի եռանդ և ձգտում է ունենում դէպ ուսանիլ և ուսուցանել, և ինչ որ էլ սովորում է՝ դա շնորհիւ իւր մտքի կորովութեան է լինում, ըմբռնում է առարկաների (և ֆրանսէրենի) դասախօսուած բոլոր նիւթերը. պատրաստվում է ուսուցչի դեր կատարել և յաջողում: Ապա սկսում է իւր մխիթարական գործն. առաջին «որբանոց, դպրոց բանալ Վանում: Նա հիմք դնելով այդ բարենպատակ գործին, տարուց տարի աւելի հիմնական կարգեր, կանոններ և ծրագիրներ պատրաստեց ու մտցրեց այդ միակ հաստատութեան մէջ յօգուտ իւր սանուց մտաւոր զարգացման:

Այդ աչազուրկ վիճակի մէջ՝ պ. Երամեանը իւր արած ճանապարհորդութեամբ (Թիֆլիս, Եւրոպայ մի քանի քաղաքներ, Կ. Պոլիս) աւելի բարոյապէս նպաստից «Հայկական» որբանոցին, բերելով իւր հետ նոր նոր նիւթեր և գործիքներ բնագիտութեան և այլ առարկայից այնպէս, որ տալով ազգին բաւականին զարգացած երիտասարդներ և տասնեակ թուից ուսուցիչներ փառաւոր կացոյց իւր անունը ու համբաւն: Չնայելով Վանայ պատճառած այն թշուառ դէպքեր և աւելի նիւթական վնասն, ամբողջ Վասպուրականում, ներկայումս էլ «Հայկական» որբանոց միջնակարգ ուսումնարան է, իւր շատ բազմակողմանի օգտակարութեամբ»:

Արմենակ Փոխարեան

Կարճ պտոյտ մը, «Վարագ», 1957, № 16, հունվար, էջ 17-20:

«Համբարձում Երամեանը Վանի մտաւորական առաջնակարգ դէմքերից էր. նա իր հիմնած եւ տասնեակ տարիներով ղեկավարած միջնակարգ փայլուն դպրոցով, մեծ զարկ տուաւ Վանի կրթական գործին:

Երամեանը միշտ դէպի կատարելութիւն մղելով իր ղեկավարած դպրոցը, Վանի կրթական վերելքին ռահվիրան էր հանդիսանում:

Դպրոցում իր ազատ ժամերին Երամեանը սիրում էր անվերջ կարդալ:

Ուսուցիչներից կամ բարձրագոյն դասարանների ուսանողներից փոխն ի փոխ, կարդում էին բարձրաձայն, որեւէ ձեռնարկ, հայերէն կամ ֆրանսերէն, եւ Երամեանը, սրահի մէկ ծայրից միւսը գնալ-գալով, շատ ուշադիր լսում էր: Այդ ձեւով նա պատրաստում էր կրօնի, ընդհանուր պատմութեան, փիլիսոփայութեան պատմութեան իր դասերը: Անխափան կարդում էր «Բիւզանդիոն» կամ այլ թերթեր, աշխարհի անցուդարձին ծանօթանալու համար:

Պտոյտ կամ ման գալը Երամեանի ամենասիրած զբօսանքն էր:

Դպրոցական ամենօրեայ աշխատանքներից յետոյ սիրում էր ուսուցիչներից մեկն ու մէկի առաջնորդութեամբ դուրս գալ ու, իր բառերով «կարճ պտոյտ մը» կատարել: Այդ կարճ պտոյտին համար, Վանի փողոցների տուած ասպարէզը շատ նեղ էր գալիս, նա սիրում էր դուրս գալ ազատ դաշտը ու շնչել մաքուր օդ: Ու որովհետեւ մեր դպրոցը գտնուում էր Խաչ-Փողոցի մօտիկ, այսինքն քաղաքի կեդրոնը, դաշտից հեռու, հարկաւոր էր առնուազն կէս ժամ, հասնելու համար Յանկոյս ձորի բացերը կամ Նորատունկների այգիները:

Իսկ յաճախ էլ, մանաւանդ աշնանային արեւոտ օրերը, այդ «կարճ պտոյտները» երկարում էին մինչեւ Շահբաղի, այսինքն 8-10 կիլոմէտր քաղաքից հեռու:

Շահբաղու քաղցր խաղողն էլ իր յանցանքի բաժինն ունէր այդ կարճ պտոյտների մէջ, որովհետեւ Երամեանը խաղողը շատ էր սիրում. Շահբաղիում աշակերտներ կամ բարեկամներ պակաս չէին:

Դուրս էինք գալիս դպրոցից ու դիմում դէպի հիւսիս, անցնում էինք Ակրփի կոչուած թաղամասից,

Մեր Դրան եւ քարացած հարս ու փեսայի ապառաժների ստորոտից ելնում էինք բաց դաշտն ու խօսակցելով հասնում արեւակող լանջերի վրայ փռուած Շահբաղու այգիները...:

Մենք միշտ զգուշանում էինք այն արտայայտութիւններից, որոնք յիշեցնում էին պ. Համբարձումին իր կուրութիւնը. նա շատ դիւրազգաց էր. դա նրա բնաւորութեան խոցելի կողմն էր. նրա ներկայութեան կոյր բառն արտասանելն արգիլուած էր, անմիջապէս կ'առնուէր ու կը տխրէր երկար»:

Միրաք Սահրադեան

Կեանքիս հուշերից, Երեւան, 2010, էջ 26-28:

«Երամեան միջնակարգ դպրոցի հռչակն ինձ հրապուրում էր, դրա համար էլ խնդրեցի հօրս ինձ Երամեան դպրոցը փոխադրել: Նա իսկոյն համաձայնութիւնը տուեց և ինձ առաջնորդեց ուղղակի Համբարձում Երամեանի մօտ:

Երբ Երամեանը տեղեկացաւ, որ Յանկոյսներ դպրոցի 5-րդ դասարանի առաջին աշակերտի կոչումով աւարտել եմ, շատ ուրախացաւ և հօրս նիւթական պայմանների անբաւարար լինելու բացատրութիւնն էլ լսելով՝ ասաց.

– Վնաս չ'ունի, տէ՛ր հայր, ես ձեր տղային ամսական 50 տոկոս զեղչով կ'ընդունեմ և համաձայնւում եմ նրա խնդիրքը կատարել, այսինքն՝ երկու ամիս փորձելու պայմանով նրան մեր դպրոցի 7-րդ բաժանմունքը նստեցնել: Յոյս ունեմ, որ նա կ'աշխատի յետ չընկնել իր դասակիցներից:

Կարծես աշխարհի բոլոր բարիքներն իմ գրպանը լցրին: Արտակարգ ուրախութիւնից բացականչեցի.

– Չափազանց շնորհակալ եմ ձեզնից, յարգելի՝ տեսուչ,– և վազեցի համբուրելու նրա ձեռքը: Նա գորովալից շոյեց գլուխս և ասաց.

– Շատ ուրախ կը լինեմ, եթէ յաջողես մեր դպրոցումն էլ առաջինը լինել քու դասարանում:

– Շատ կ'աշխատեմ ձեր բարի ցանկութիւնը իրականացնելու:

Վան քաղաքի Այգեստան կոչւող լայնատարած քաղաքամասի Սըղգա կոչուած գլխաւոր պողոտայի վրա՝ նոյն այդ մասի Խաչ-փողոց անուն կրող կենտրոնական շուկային չը հասած, 90-ական թականներին հիմնուել էր Երամեան միջնակարգ դպրոցը:

Ամբողջ երեք տարիներ էին անցել այն օրւանից, երբ ես այդ դպրոցի սանն էի դառել: Բարեբախտաբար, ինձ յաջողուել էր կատարել այդ դպրոցի տեսչին առաջին օրում իմ տուած խոստումը, այսինքն՝ իմ դասարանի առաջին աշակերտ լինելը:

Դպրոցի հիմնադիրն էր Համբարձում Երամեանը: Ասում էին՝ ութը տարեկան հասակում ծաղիկ կոչւող հիւանդութեան հետեւանքով նա իր զոյգ աչքերն էլ կորցրել էր:

Այդ մարդը, չնայած որ կոյր էր, բայց տարօրինակօրէն ուշիմ և զարգացած էր: Նա իր դպրոցի բարձրագոյն բաժանմունքներում ազգային և ընդհանուր պատմութեան դասաւանդումներ էր կատարում և զարմանալիօրէն թականների ճշգրիտ յիշումներ էր անում: Ամենից տարօրինակն այն էր, որ նա լիովին տիրապետում էր ֆրանսերէն լեզուին:

Շատ լաւ յիշում եմ, երբ ես Երամեան դպրոցի աւարտման նախավերջին և վերջին դասարաններումն էի, նա դպրոցական պարապմունքներից վերջը կամ կէսօրւա դասամիջոցին ինձ կանչում էր պատմութեան, ֆրանսերէն դասագրքերից մի որևէ կտոր կարդալու: Նա համարեայ վազքի արագութեամբ, դպրոցի հիւսիսային մասում, ընդարձակ բակի մէկ ծայրից միւսը երթևեկում և իմ կարդացածները լսում էր: Երբ ես սխալւում էի, նա անմիջապէս կանգ էր առնում և ասում.

– Չեղաւ: Նորից կրկնի՛ր:

Մինչև վերջն էլ ինձ գաղտնիք մնաց, թէ այդ կոյր վիճակում ինչպէ՞ս էր յաջողել իմանալ այն բոլորը, որին նա անթերի տիրապետում էր:

Գուցէ զարմանալի թւի, եթէ ես յայտնեմ, որ նա իր դասաւանդած բաժանմունքներում բոլոր ուսանողներին ճանաչում էր անուն-ազգանուններով և նրանցից ամէն մէկի դպրոցական ընդունակութիւնը և ընդհանրապէս նկարագիրը իմանում էր: Դասարաններում եղած ուսանողների պարապմունքների, նրանց արտադպրոց ժամանցների և մասնաւոր ու ընտանեկան պարագաների մասին նա աւելի տեղեկութիւններ ունէր, քան նոյնիսկ նրանց դասարանակից ընկերները:

Հ. Երամեանի դասաւանդումները, չնայած նրանց պատմական չոր բնոյթին, այնքան հետաքրքրական էին, որ նրան ունկնդրող աշակերտները լարուած ուշադրութեամբ հետևում էին նրան, և եթէ մէկ-մէկ գտնւում էին այնպիսիներ, որոնց շատ չէր հետաքրքրում նրա դասաւանդումները, չէին համարձակւում ծպտուն հանել, որովհետև իսկոյն ևեթ կռահում էր խանգարողի ով լինելն ու անվրդով նրան կարգի էր հրաւիրում:

Դասաւանդումներից յետոյ համարեայ միշտ հարցնում էր.

– Եթէ ձեզնից որևէ մէկի համար անհասկանալի կէտեր կան, կարող են հարցնել:

Հ. Երամեանն իսկական հայրենասէր էր: Հայոց պատմութեան դասաւանդումները կատարում էր բացառիկ եռանդով ու ոգևորութեամբ: Դէպքերի և իրողութիւնների նկարագրութիւնից յետոյ անալիզներ էր անում և եզրակացութիւն հանում: Նրա ազնիւ հոգին ալեկոծող ամենակարևոր պարագան հայ ժողովրդի անմիաբան և պառակտիչ թերութիւններն էին:

– Եթէ մեր ժողովուրդը, մեր ազգը,– յաճախ կրկնում էր նա,– պառակտիչ և անմիաբան նկարագիր ունեցած չը լինէր, մենք ներկայիս աշխարհումս եղած առաջնակարգ ու մեծ ազգերից մէկը կը լինէինք: Ճիշտ է, մեր աշխարհագրական, քաղաքական և նոյնիսկ կրօնական պայմանները շատ աննպաստ

են եղել և դժբախտութիւն ունեցել ենք մեծ ազգերի մրցակցութեան, ագահութեան և եսասիրութեան զոհը դառնալու, բայց մենք շատ աւելի բախտաւոր և ուժեղ կը լինէինք, եթէ ինքներս ծայրահեղ եսականութեան և քայքայիչ անմիաբանութեան հիւանդութեամբ հիւծուած չը լինէինք: Այդ հիմնական, բայց աւերիչ թերութիւնները մեր ժողովրդին արիւնաքամ են արել: Մեր ներկայ քաղաքական անմխիթար և դժբախտ վիճակի պատասխանատուութեան մի կարևոր բաժինը մեր ժողովուրդը ղեկավարող մարդկանց ուսերին է ծանրացած: Մեր ազգային եսականութիւնն ու անմխիթարութիւնը մեր հոգու աչքերը կուրացրել են, և մենք ի վիճակի չենք եղել և նոյնիսկ ներկայիս էլ անկարող ենք քաղաքական համաշխարհային իրողութիւնները ճշգրտօրէն հասկնալ և անաչառ գնահատել: Մեր ժողովրդի ճակատագիրը դարբնող քաղաքական կազմակերպութիւնները, իրենց վիպային, ռոմանտիկ եսականութեան և հասկացողութեան մոլուցքով բռնուած, դժբախտաբար, ի վիճակի չեն իրողութիւններն ու քաղաքական դրութիւնն ու դասաւորումները ճշգրտօրէն դատելու և իրենց ազգի համար հանրօգուտ մի ընդհանուր եզրակացութեան և դրական արդիւնքի հանգելու փրկարար ելքը որոշելու: Երանի չէր լինի, որ մենք մեր ազգի գերագոյն և ընդհանրական շահերը ճշգրտօրէն կարողանայինք գնահատել և մեր թայֆայական շահերին չը զոհաբերել:

Համբարձում Երամեանը ճիշտ ժամանակին մարգարէացող փիլիսոփայ էր: Ելնելով 95-96 թուականների յեղափոխական ելոյթների անյաջող և դժբախտ վերջաւորութիւնից՝ նախագուշակում էր մեր տաճկահայ ժողովրդի արիւնոտ ապագան և ամբողջ հոգով այրում և մրրկում էր գալիք փորձանքի սոսկումով:

Նա կատարելապէս ճիշտ էր գնահատում իրականութիւնը: Նա դառնագին ափսոսում էր, որ մեր յեղափոխական, քաղաքական կուսակցութիւնների չը համադրող, իրարամերժ, եսական, ինքնագոհ ու անհեռատես վարքագծի ու գործելակերպի անդարմանելի սխալների հետևանքով թիւրքական ոճրագործ սպանդանոցը պիտի քշէր տաճկահայ մէկուկէս միլիոնոց անպաշտպան ժողովուրդը և նամարդ դահիճների սուիններով, կացիններով ու գընդակներով խողխողման և ոչնչացման ենթարկէր:

Իր դպրոցի յարատևման և բարգաւաճման յախուռն տենչանքով՝ Երամեանը նախքան Համաշխարհային առաջին պատերազմի սկսելն ու ինքնապաշտպանութեան ճակատագրական օրերին հանդիպելը՝ Եգիպտոս մեկնեց՝ յոյս ունենալով արտասահմանեան հարուստների և մասնաւորապէս Հայկ. Ընդհ. Բարեգործական Միութեան օժանդակութիւնն ապահովել:

Իր գուրգուրած դպրոցից, նրանում հոգով ու մտքով սնող հազարից աւելի աշակերտ-ուսանողներից, իր սիրած ուսուցչական կազմից և թանկագին բազմաթիւ հայրենակիցներից, այդպէս դասաւորուած նրա հեռացումը թերևս մի տեսակ բախտաւորութիւն էր, քանի որ նրան խնայուեց այն արտակարգ վիշտն ու տանջանքը, որին ներկայ լինելով՝ նա չպիտի կարողանար տոկալ և, անկասկած, կաթուածահար պիտի լինէր: Դա սարսափելի և կոշմարի այն սև օրերն էին, երբ իր արի հայրենակիցները մի հերոսական ինքնապաշտպանութիւնից յետոյ, ստիպուած էին թողնել իրենց դարաւոր, սիրելի ու աննման հայրենիքը, տունն ու օջախը, ծառն ու ծաղիկը, հողն ու ջուրը և վայրագօրէն պարտադրուած նահանջ-փախուստի դիմել...

Վանի գլխաւոր թաղամասերն ունէին իրենց եկեղեցիներն ու նրանց կից վեցամեայ նախակրթարանները: Վանում Ազգային կենտրոնական միջնակարգ դպրոցը, ինչպէս նաև պատերազմից մի քանի տարի առաջ Հայկ. Ընդհ. Բարեգործական Ընկերութեան հիմնած Վարժապետանոց կոչուած միջնակարգ դպրոցը, Երամեան դպրոցի հետ մրցակցութեան դերումն էին: Կենտրոնական և մասնաւորաբար Բարեգործական Ընկերութեան Վարժապետանոցը Երամեան դպրոցի համեմատութեամբ տնտեսական աւելի բարւոք և ապահովուած պայմաններում էին, բայց Երամեանը լայն ժողովրդականութիւն էր վայելում»:

Երուանդ Տէր-Մկրտիչեան
Գանձեր Վասպուրականի, հատոր Ա, Պոսթոն, 1966, էջ 430:

Ով էր, ի վերջո, Համբարձում Երամյանը: Մարդ, որը մարմնավոր լույսից զրկված, ուներ «Զանասէր, անվհատ, անձնուէր, աչազուրկ կրթական գործիչ: Տգիտութեան դէմ յամառ պայքարող մը: Ունէր երկաթէ կամք, ապշեցուցիչ յիշողութիւն եւ վարչական տաղանդ»:

«Աշխատանք» թերթի խմբագրակազմ
Կոյր մը, որ լոյս կը բաշխէ, «Աշխատանք» [Իզմիր], 1914, № 61, 15/28 մարտի, էջ 2:

1914 թ. «Կոյր մը, որ լո՛յս կը բաշխէ՝ Վանայ Երամեան վարժարանի հիմնադիր-տնօրէն պ. Համբարձում Երամեանն է ան, ուժեղ կամքի և պողպատէ անհատականութեան տէր այդ մարդը, որ, կո՛յր աչքով, ա՜յնքան լոյս է ըմպեր ու համբարեր, որ կո՛յր աչքով, ա՜յնքան սրատես հոգի, այնքան հեռատես միտք է մեծցուցեր իր մէջ, և, տարիներէ ի վեր, անխարխափ կընթանայ իր ճամբան, լո՜յս, ու միայն լո՜յս բաշխելով ազգին զաւակներուն: ...Աչազուրկ, բախտազուրկ մարդ մը,– Երամեան– իրեն սկզբունք ունենալով «գործը հաճոյքէն գերադասելու, գովեստէն ու պարսաւէն չազդուելու, քննադատութենէն օգտուելու, ամբողջ կեանքին մէջ ուսանելու և միշտ գործին նուիրուած մնալու» կանոնները, Վանայ պէս հայութեան սրտամերձ մէկ կեդրոնին մէջ կը կառուցանէ կրթական տաճար մը, որ դեռ կապրի իրեն հետ և պիտի ապրի նաև իրմէ վերջը: Հարկաւ նախնական էր ան իր հիմնարկութեան ատեն, բայց ահա՛,

տարիներու անվտանգ զոհաբերութեամբ դարձած է այսօր երկրորդական վարժարան և կը խոստանայ նաև դառնալ քօլէճ կամ լիսէ: Չէ՞ որ ան, զմայլելի կոյրը, կըսէ, թէ դեռ ծերունի չէ ինք և ո՛չ ալ գոհ: Ան, ուրեմն, որոշած է դեռ քալել և նոր արշալոյսներու առջև ժպտող նոր հայութիւնը օժտել մտաւորական ու տնտեսական մրցումներու դէմ անխորտակելի մնալու զրահներով: Երեսունը հինգ տարի, շարունակ աշխատիլ, ազգին տալով երեք հազար մտքեր և դեռ չգոհանա՞լ, չկասի՞լ.– ահա՛, թէ ո՞ւր է նկարագրին մեծութիւնը և նուիրական առաքելութեան երջանկութիւնը»:

Հրանտ Մամուրեան

Վանի Երամեան վարժարանը, «Դաշինք» [Զմյուռնիա], 1914, № 1494, 28 յունիսի, էջ 1:

«Կրթական գործին համար նուիրուած բառին բովանդակ նշանակութեամբ առաքեալ մը, որ անեւրևակայելի ու անբացատրելի չարչարանքներէ անցած, անլուր վտանգներու ենթարկուած անյողդողդ մնացած է իր վարժարանին կառչած, բոլորանուէր նուիրելով իր անձն, իր սիրտն ու հոգին և տուժած նիւթապէս՝ անոր սիրոյն և կանգուն պահպանման համար, առանց տարեկան հաստատ եկամուտի մը, միմիայն իր անձնական արժանիքներուն, տոկուն բնաւորութեան և անայլայլելի իտէալին ապաւինած:

Եւ այդ ալեզարդ և բնութենէն հարուածուած նահապետի գործն քանի մը տարուան գործ չէ, այլ երկար տարիներու հասցնելով սերունդներ, երախտաւորներ ու անձնուէր աշակերտներու ամբողջ լէգէոն մը...

Խոնարհինք այդ աչազուրկ կրթական առաքեալին առջև, հիանանք անոր տոկուն և յարատև կամքին վրայ...: Յարգանք և հիացում մեծ վաստակաւորին»:

Կարապետ Նավասարդ

Երամեան Հ., Յուշարձան, Աղէքսանդրիա, h. Ա, 1929, էջ Գ, Ե, 420:

«Պ. Երամեան սովորական դէմք մը չէ. անոր կրթական երկարամեայ արդիւնաւոր գործունէութիւնը՝ հակառակ բնութեան կամ բախտին ամենէն դաժան հարուածի ենթարկուած ըլլալուն, անոր բացառիկ և արտասովոր տաղանդը՝ ֆիզիքական ցաւագին թերութեան մը մէջ փթթած և ուռճացած, իր անձէն աւելի իր պատկանած ցեղին է, որ պատիւ կը բերեն և միջազգային համբաւի մը արժանի կը հանդիսացնեն զինք»:

«Իր անձն ու գործը չէ, որ պիտի ուզէի առարկայ ընել հետագայ հայրենեաց տողերուն: Անոնք, անձն ու գործը, իրենց ամենէն բիւրեղացած և գերարժանի գնահատման ձեւին տակ արձանագրուած են արդէն ժամանակակից հայ պատմութեան մէջ: Ուստի աւելորդ կրկնութիւն մը պիտի ըլլար իմ կողմէս աւելցնել, թէ շուրջ վաթսուն տարիներու մերթ յորձանուտ, մերթ անալեկոծ կեանք մը՝ միասին առած դաստիարակուողի և դաստիարակչի շրջանները, լոկ իր բնատուր տաղանդին շնորհիւ և երկրորդներու ընթերցման ունկնդրելով իր ամբարած հմտութիւնը, մանաւանդ պատմագիտական ճիւղին մէջ, մօտ քառասուն տարիներու իր հասարակական և առաւելապէս դաստիարակչական գործունէութիւնը, որով յաջողած է իր իսկ սեփական անձուկ միջոցներով և դժնդակ զրկանքներու գնով հիմնել կրթական յարկ մը և ստուարաթիւ զարգացած սերունդներ պատրաստել հոն, հուժկու կամեցողութեան մը միացած անընկճելի կորով մը, վերջապէս դժուարայաղթին և նոյնիսկ անկարելիին առջև զինաթափ չեղող գերազօր նկարագիր մը՝ բարձրօրէն կը բնորոշեն Երամեան Հ.ը և իբր բացառիկ և եզական դէմք մը կը հանդիսացնեն զայն հայ ազգային և օտար դէմքերու մէջ»:

«Սակայն Պ. Երամեանի հետ երկամեայ աշխատակցութիւնս - խստօրէն սահմանափակուած իր թելադրութիւնները գրի առնողի գիրքին մէջ - պատրաստելու համար իր ինքնակենսագրական գործը, անհերելի զանցառութեան մը մեղադրանքը պիտի բեռցնէր ուսերուս, եթէ գործին աւարտումէն յետոյ ես ինծի պարտականութիւն չսեպէի քանի մը խոշոր գիծերու մէջ ամփոփել անոր շահեկան բովանդակութիւնը և այսպէսով հանրային սեփականութիւն դարձնել զայն»:

«Սիոն», 1930, № 2, էջ 60-61:

«Երամեան իբրեւ դաստիարակ եւ ուսուցիչ ուշագրաւ իրականութիւն մը եղաւ Հայաստանի նշանաւոր կեդրոններէն մէկուն մէջ, Վան: Հակառակ իր բնախօսական այդ կենսական պակասին, սերունդ մը կրթեց ան Վանի մէջ, հաւատալով, որ հայ ժողովուրդին ազգային գոյութեան երաշխիքն ու ապահովութիւնը կը կայանայ անոր զաւակներուն ազգային կրթութեան ու հայացի դաստիարակութեան մեջ»:

Միհրան Սերոբեան

Նամակ Թիւրքիայից, «Նոր-Դար», 1903, № 130, 26 յուլիսի, էջ 3:

«Կրթական գործի մէջ միակ մխիթարական երևոյթը Երամեանի հայկական որբանոցի վարժարանն է: Ահա ինչ եզրակացութեան... յանգեցայ երկար հարցուփորձերից և անձամբ շատ դպրոցների քննութիւններին ներկայ լինելուց յետոյ: Դպրոցական գործից հասկացողութիւն, մանկավարժական մեթոդների հետևողութիւն, ծրագրի կամ դասընթացքի գաղափար, աշխատութիւն, եռանդ և նուիրածութիւն, վերջապէս գիտակցութիւն ուսուցչական կամ աշակերտական կոչման – Երամեանի այս անհատական վարժարանի մէջ միայն տեսայ: Եւ գիտէ՞ք ով է այս Երամեան – 46 տարեկան, երկու աչքից զուրկ մի անձ, որ 25 տարիներից ի վեր հիմնած իր այս վարժարանը վարում է մի այնպիսի կորովի կամքով և յարատևութեամբ, որ մօտից ծանօթ եղողին իսկական հիացմունք է պատճառում: Իւր հօրենական հարստութիւնը, միակ տունն ու պարտէզը ծախելով իւր վարժարանի վրայ է մսխել և իւր

իսկ քաղաքի ամենալաւ ուսուցիչները գոհացուցիչ վարձքով իւր վարժարանի մէջ ծառայեցնելով ժամանակին, յաջողել է վերջապէս պատրաստել այժմ իւր իսկ սաներից ձեռնհաս ուսուցչական խումբ...: Երամեանի վարժարանը իւր ուսուցման մեթոդներով, գործածած ձեռնարկներով կամ դասագրքերով, կարգերով և այլն իբրև օրինակ ծառայում է բոլոր միւսներին, ինչ որ չեն ժխտում նրա ամենակոյր նախանձորդներն անգամ: ...այդ նախանձորդները ի՞նչ մնաց, որ չասին կամ չգրեցին, ի՞նչ խեղաթիւրում, մուր և զրպարտութիւն մնաց, որ իբրև զէնք չգործածեցին, բայց Երամեան անդրդուելի մնաց և մնում միշտ ո՛չ յուսահատելով թշնամիների նախանձու բորբոքումից և ոչ փքանալով իւր դրուատողների չափազանցութիւններից: Նա իւր գործի իսկական արժէքին քաջ գիտակից միակ մի կէտի վրայ է աչք դարձնում, այն է՝ տարէցտարի, օրէցօր կատարելագործել իւր գործը, որի մէջ է փնտրում և՛ մխիթարութիւն, և՛ կեանք: Եւ մեր ժողովուրդը քաջ գնահատում է նրա ազնիւ ծառայութիւնը...: ...նրա 25 ամեայ յոբելեանի կատարման է ձեռնարկուած նրա բազմաթիւ աշակերտների կողմից և այդ առիթով ուզում են դպրոցի յարմար մի սեփական շէնք նուիրել այդ արդիւնաւոր վարժարանի հիմնադրին»:

Ռ. Իսկէնդէրեան
Հ. Երամեանը Կովկասում, «Մշակ», 1913, № 219, 4 հոկտ., էջ 4:

«Հ. Երամեանը, այդ բազմաչարչար, աչազուրկ կրթական-հասարակական գործիչը, 35 տարիներ շարունակ հիմնել և ղեկավարում է միջնակարգ մի դպրոց՝ թիւրքական իրականութեան դժնդակ պայմանների մէջ: Այդ դպրոցը, Երամեան վարժարանը, իբրև լուսատու մի փարոս լոյս է սփռել թիւրքահայկական մութը հորիզոնների տակ, և սնուցել ու դաստիարակել Վասպուրականի ուսումնածարաւ մանուկները ի նպաստ հայ հասարակութեան:

Երամեան վարժարանը Հ. Երամեանի տառապագին-յամառ տոկունութեամբ միշտ բարձր է եղել կանգնած իր շրջապատի այլ դպրոցներից, միշտ հարազատ ու օգտաշատ, միշտ բարձրանալու ու բարգաւաճելու հետամուտ»:

Պ. Յ. /Պետրոս Հակոբյան/
Համբարձում Երամեան, «Ասպարէզ», 1913, № 262, 15 օգոստ., էջ 4:

«Համբարձում Երամեան՝ դեռ կ՝ապրի իր մտաց և մարմնոյ երիտասարդական աշխոյժը պահելով ու նուիրելով զայն իր անդրանիկ զաւկին՝ Երամեան վարժարանին, որու հետ միացեալ իր անուամբ և արդեամբ պատկառելի եղած է և պիտի մնայ իր յիշատակն ալ իբր "կոյրին կոթող"-ը»:

Գրիգոր Ա. Քաջբերունի
Կեանքիս համեստ պատմութիւնը, Պէյրութ, 1965, էջ 31-32:

Համիդյան ջարդերից առաջ «Հիմնադիր եւ տեսուչ Համբարձում Երամեան՝ վարձեց Խաչ փողոց Նալպանտեանենց դրացի Բարթոսեան եղբայրներու նորակառոյց ընդարձակ շէնքը...: Այդ օրերուն Երամեան դպրոցը ունէր տասնամեայ շրջան՝ չորս տարի նախակրթարան եւ վեց տարի ուսումնարան: Պր. Երամեան թէեւ աչազուրկ, բայց ինքնաշխատութեամբ իւրացուցած էր հայերէն աշխարհաբար եւ գրաբար լեզուները: Հմուտ էր ազգային, եկեղեցական եւ ընդհանուր պատմութեանց, զորս ձեռնհասօրէն կ՝աւանդէր բարձրագոյն կարգի աշակերտներուն: Ան բաւական ծանօթ էր ֆրանսերէնի, ապա սկսաւ զարգացնել նաեւ թուրքերէնը: ...Վանի մէջ Երամեան դպրոցը կը ճանչցուէր իբր լաւագոյն կրթական հաստատութիւնը, որուն հետ չէր կարող մրցիլ նոյնիսկ Ամերիկեան դպրոցը, հակառակ իր ունեցած տնտեսական լաւ պայմաններուն: ...Երամեան եղաւ այն անձը, որ Վանին պարգեւեց նկարագրի տէր, ազգասէր եւ ձեռներէց քաղաքացիներ»:

Օննիկ Մխիթարեան
Համբարձում Երամեան, «Հայրենիք», 1930, № 5405, 11 փետր., էջ 1:

«Կոյր բնութիւնը թերեւս ոչ ոքի հանդէպ այնքան անարդար եղած էր, որքան այս իրապէս մեծ ու արդար մարդուն հանդէպ՝ աչերու լոյսէ զրկելով զայն, այն ալ դեռ բոլորովին մանուկ, տասը տարեկան հասակին մէջ: Սակայն, թերեւս ոչ ոք այնքան հեզօրէն, տրտմօրէն, բայց նաեւ առնաբար դիմադրեց ու կարծես առ ոչինչ համարեց կոյր բնութեան այդ զարհուրելի անարդարութիւնը, որքան կորովի, իմաստուն, հպարտ ու յամառ այս մարդը: Վասնզի իրօք հազուադէպ է ոչ միայն մեր, այլեւ օտար իրականութեան մէջ տեսնել մարդ մը, որ անձնապէս զրկուելով զոյգ աչքերու լոյսէն, իր պատանութեան օրերէն մինչեւ իր տխուր մահէն օր մը առաջ կենդանի լոյս կը բաշխէ իր շրջապատին:

...Ութսունական թուականներն են եւ ահա աչազուրկ Երամեանի անհատական դպրոցը արդէն կրթական լուսաւոր փարոս մ՝է ոչ միայն Վան-Վասպուրականի, այլեւ թրքահայ բոլոր գաւառներուն մէջ: Կրթական եզակի հաստատութիւն մը, որ հակառակ կառավարական եւ մասնաւոր ամէն արգելքներուն, ոչ միայն կը պահպանէ իր գոյութիւնը, այլեւ տարուէ տարի յառաջդիմէ: ...կորովի ու իմաստուն կրթական մշակը՝ խոհականութեամբ, տաղանդով եւ մանաւանդ իր անընկճելի կամքովն ու զոհաբերութեամբը կը յաղթահարէ ամէն խոչ ու խոչընդոտ... երկրորդական տիպար վարժարանի մը վերածելով իր դպրոցը: Երկրորդական վարժարան մը շուրջ 400 աշակերտներով եւ աւելի քան 20 ուսուցիչներով: Երկրորդական վարժարան մը, որ աչազուրկ կրթական մշակի մշտական, արթուն ու փայլուն ղեկավարութեան տակ տոհմային ու դրական առողջ դաստիարակութեամբ մը, ամբողջ 37 տարի, օժտեց հարիւրաւոր շրջանաւարտներ, որոնք այստեղ ու այնտեղ Երամեանի մեծ գործը շարունակող լուսաւորութեան մշակներ եղան եւ կազմեցին մասնա-

ւորաբար Վան-Վասպուրականի ուսումնական, առաջաւոր եւ նոյնիսկ յեղափոխական դասը: Երկրորդական վարժարան մը..., որ լուսաւորութեան ճշմարիտ կեդրոն մը եղաւ Վասպուրականի մէջ, տարուէ տարի լռեցուց իր դէմ կուտակուած մանր մունր քինախնդրութիւնները, ակներեւ յարգանք պարտադրեց բոլորին, նոյնիսկ թուրք շրջանակներուն եւ ընդհանուր հիացում ու պատկառանք ստեղծեց իր շուրջը: ...Համբարձում Երամեան օժտուած էր ոչ միայն զմայլելի կամքով եւ կորովով, այլեւ արտակարգ կարողութիւններով: Բնութեան մեծագոյն պարգեւէն՝ աչքերու լոյսէն զրկուած էր ան, բայց, ատիկա իրեն համար արգելք մը չէր բնաւ պահպանելու եւ ամէն տեղ պարտադրելու իր զորաւոր անհատականութիւնը: Արգելք չէր մանաւանդ պահպանելու ուսման եւ անընդհատ կատարելագործման իր անհուն ծարաւը: Իր ունեցած մեծ հմտութեամբ եւ վարչական զօրաւոր կարողութիւններով ան ոչ միայն անսահման հեղինակութիւն մըն էր դպրոցի, ուսուցիչներու եւ աշակերտներու համար, այլեւ իր շրջապատին մէջ: Նոյնիսկ դպրոցը, իր աչքերու լոյսը փոխարինող այդ մեծ հաստատութիւնը, նեղ կուգար իրեն, ահա թէ ինչու ան նաեւ գրական շնորհալի աշխատաւոր մըն էր, ստորագրած է բազմաթիւ լուրջ աշխատութիւններ ու հեղինակն է երկհատոր ու պատկառելի Յուշարձանին, որ Վան-Վասպուրականի կէսդարեան ալեկոծ կեանքը կը պատմէ ինքնատիպ ոճով մը եւ հայրենասիրական առողջ ոգիով մը»:

Մահ Համբարձում Երամեանի, «Համասպրամ», 1930, № 1, էջ 16:

«Հազար ինն հարիւր քսանևիններորդ տարին իր հետ տարաւ կամքի, կորովի ու յարատևութեան տիպար Հայ կրթական մշակը՝ Համբարձում Երամեան: ...ան «թեւակոտոր հաւքի մը նման», իր երկհատոր «Յուշարձան»-ով երգեց իր վերջին կանչը: Անոր համեստ, այլ բեղմնաւոր կեանքը խթան մը կրնայ ըլլալ նոր սերունդին: Իր մահը մեծ վիշտ պատճառեց գրեթէ բոլորին»:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿԸ

1883

Նամակ Վանից, «Արձագանք», 1883, № 17, 24 ապրիլի, էջ 245:

1884

Տեղեկագիր որբանոցի Խնամատար ընկերութեան 1882, 1 նոյ.-1884, 1 յունվար, «Արձագանք», 1884, № 10, 11 մարտի, էջ 144-145:

1886

Ուղեւորութիւն մը դէպի Վիէննա, «Մասիս», 1886, № 3837, 30 օգոստոսի, էջ 65-68:

1911

Ուխտաւորներ, «Արմէնիա», 1915, № 21, 9/22 դեկտեմբերի, էջ 4; № 22, 16/29 դեկտեմբերի, էջ 2-3:

1913

Տեղեկագիր Երամեան վարժարանի (1912-13) ուսումն. շրջանի, «Վան-Տոսպ», 1913, № 33, 7 սեպտեմբերի, էջ 394-395:

Տարեկան տեղեկագիր Երամեան վարժարանի, «Աշխատանք», 1913, № 41, 24 օգոստոսի, էջ 7:

Տարեկան տեղեկագիր Երամեան վարժարանի. շրջան ԼԵ (1912 օգոստ. - 1913 օգոստ.), «Ասպարէզ», 1913, № 270, 10 հոկտեմբերի, էջ 3:

1915

Զոյգ Գեղամները, «Արեւ», 1915, № 50, 1 սեպտեմբերի, էջ 1:

Նահա՞նջ թէ պատնէշ, «Արեւ», 1915, № 56, 15 սեպտեմբերի, էջ 2:

Հայութեան խաչելութիւնը, «Արեւ», 1915, № 74, 27 հոկտեմբերի, էջ 1-2:

1916

Ամանորի ձօն Արսէն Երկաթին, «Արեւ», 1916, № 108, 14 յունվարի, էջ 2:

Քէմբի հերոս, «Արեւ», 1916, № 147, 17 ապրիլի, էջ 2:

Նամակ խմբագրութեան, «Վան-Տոսպ», 1916, № 19, 3 ապրիլի, էջ 14-15:

Պ. Հ. Երամեանի մէկ նամակը, «Արեւ», 1916, № 5, 22 մայիսի, էջ 2:

Անապատէն արձագանք մը, «Արեւ», 1916, № 9, 31 մայիսի, էջ 1:

Նամակ Եգիպտոսէն, «Աշխատանք», 1916, № 39, 14 սեպտեմբերի:

Եւ եղեւ լոյս, «Արեւ», 1916, № 89, 4 դեկտեմբերի, էջ 1:

1917

Հայուն ծնունդը, «Արեւ», 1917, № 108, 17 յունվարի, էջ 1:

Երուսաղէմի յաղթանակը, «Արեւ», 1917, № 100, 28 դեկտեմբերի, էջ 1-2; № 101, 31 դեկտ., էջ 1-2:

1918

Առաջին անձնուիրուհին, «Արեւ», 1918, № 108, 16 յունվարի, էջ 1-2:

Երուսաղէմի հայոց սրբավայրերը, «Արեւ», 1918, № 127, 4 մարտի, էջ 1; № 128, 6 մարտի, էջ 1-2; № 129, 8 մարտի, էջ 2:

Գողգոթայի բարձունքէն, «Արեւ», 1918, № 153, 3 մայիսի, էջ 1-2:

Աղեքսանդրիոյ հանդերձարանը. Սուգի մէջ ժպիտ, «Արեւ», 1918, № 14, 31 յունիսի, էջ 1-2:

Հայ-ֆրանսական յարաբերութիւնները, «Վերածնունդ», 1918, № 14-15, 14 յուլիսի-1 օգոստոսի, էջ 302-307; № 16-17, 14 օգոստոսի-1 սեպտեմբերի, էջ 336-338; № 20, 14 հոկտեմբերի, էջ 404-406; № 21-22, 14 նոյեմբերի, էջ 420-424:

1919

Հայ դպրոց, «Արեւ», 1919, № 128, 10 մարտի, էջ 2; № 129, 12 մարտի, էջ 1; № 130, 14 մարտի, էջ 1-2:

Որբ հայը, «Արեւ», 1919, № 78, 7 նոյեմբերի, էջ 1-2:

Որբ, «Որբունի», պրակ Ա, Աղեքսանդրիա, 1919, էջ 5-7; պրակ Բ, Աղեքսանդրիա, 1919, էջ 20-22:

Մտքի զարթօնքը, «Զարթօնք», 1919, պր. 2, էջ 22-24:

Մտքի զարթօնքը, «Զարթօնք», 1919, պր. 3-4, էջ 39-42:

1921

Հայրենագիտութիւն, «Արեւ», 1921, № 126, 2 մարտի, էջ 1-2:

1923

Անկախ կարծիքներ, «Արեւ», 1923, № 30, 13 յունուարի, էջ 1; № 35, 20 յունուարի, էջ 1; № 40, 27 յունուարի, էջ 1-2:

Անմիութիւն, «Արեւ», 1923, № 49, 7 փետրուարի, էջ 1:

Օտար կրթութիւն, «Արեւ», 1923, № 53, 12 փետրուարի, էջ 1:

Վարդան, «Արեւ», 1923, № 55, 14 փետրուարի, էջ 1:

Հայկական խնդիրը, «Արեւ», 1923, № 80, 16 մարտի, էջ 1:

Մեր քաղաքական ուղեգիծը, «Արեւ», 1923, № 98, 6 ապրիլի, էջ 1:

Գաղափարի յաղթանակ. Քրիստոս յարեաւ, «Արեւ», 1923, № 99, 7 ապրիլի, էջ 1:

1924

Գրախօսական. «Քիչ մըն ալ ժամանց» (Ոտանաւոր պատմուածքներ) Ստեփան Տամատեան, «Արեւ», 1924, № 44, 28 յունուարի, էջ 2:

Որբերու կիրակին, «Արեւ», 1924, № 1757, 4 դեկտեմբերի, էջ 2:

1925

Հայ եւ քիւրտ յարաբերութիւնները, «Արեւ», 1925, № 1852, 27 մարտի, էջ 1-2:

Վարագայ Պետրոս, «Արեւ», 1925, № 1921, 19 յունիսի, էջ 2:

Հերեանի յուշարձանի համար, «Արեւ», 1925, № 1961, 5 օգոստոսի, էջ 2:

Վան-Վասպուրական, «Հայրենիք», 1925, № 8, էջ 118-129:

Դեկտեմբերի 6-ի տօնը, «Արեւ», 1925, № 2065, 5 դեկտեմբերի, էջ 3:

1926

Խրիմեան Հայրիկ, «Արեւ», 1926, № 2225, 15 յունիսի, էջ 2:

Պատուելի Քրիստափոր Ճէճիզեան, «Արեւ», 1926, № 2295, 6 սեպտեմբերի, էջ 1:

1927

Պատմական երկ մը վերջին հարիւրամեայ շրջանին շուրջ, «Արեւ», 1927, № 2449, 7 մարտի, էջ 2:

Ուղղագրութեան հարցը, «Արեւ», 1927, № 2505, 13 մայիսի, էջ 1:

1928

Նորագոյն նուէրներ եգիպտահայութեան, «Արեւ», 1928, № 2941, 9 հոկտեմբերի, էջ 1-2:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Դիվանական վավերագրեր

Բագրունի Հ., Նոր սերնդական շարժման պատմութիւնը, ՀԱԴ (Հայաստանի ազգային դիվան), ֆ. 242, ց. 1, գ. 83, թ. 13:

ԳԱԹ (Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան), **Համբարձում Առաքելյանի ֆոնդ**, գ. 1627:

Մատենադարան, Կյուրեղ Սրապյանի արխիվ, թղթ. 82, վավ. 1046, թ. 1 շրջ.:

Սկզբնաղբյուրներ

Անանիա Շիրակացի, Մատենագրություն (թարգմ., առաջաբանը և ծանոթագր.՝ Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի), Երևան, 1979:

Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ը, Մատթէոս Բ Իզմիրլեան, Երեւան, 2001:

Աշխատություններ

Առաքել Սարուխան, Հայկական խնդիրն եւ Ազգային սահմանադրութեան խնդիրն Թիւրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912:

Գովրիկյան Գր., Ընդհանուր պատմութիւն: Համառօտ: Ազգային դպրոցաց համար, Վիէննա, 1879:

Գրիգոր Ա. Քաջբերունի, Կեանքիս համեստ պատմութիւնը, Պէյրութ, 1965:

Երամեան Հ., Յուշարձան, հ. Ա, հ. Բ, Աղեքսանդրիա, 1929:

Կարապետյան Ս., Սալմաստ, Երևան, 2017:

Հայկունի Ա., Գերեզմանք երիտասարդաց կամ տոփական հիւանդութիւնք, Կ.Պոլիս, 1882:

Յուշեր Արմենակ Եկարեանի, Պէյրութ, 1985:

Շերենց Գ., Սրբավայրեր, Թիֆլիս, 1902:

«Որբունի». Տեղեկատու հայ որբախնամ ընկերութեան, Աղեքսանդրիա, 1919, պրակ Ա, Բ:

Չիլինկիրեան Եղիշէ եպիսկ., Յիշատակներ Բաղէշի առաջնորդութենէս, Երուսաղէմ, 1925:

Պաղտասարեան Գ., Աշնան տերեւներ կամ Գաղտնիք երիտասարդաց եւ պատանեաց, Կ.Պոլիս, 1873:

Սիրաք Սահրադյան Ս., Կյանքիս հուշերից, Երևան, 2010:

Սվազլյան Վ., Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2011:

Սրուանձտեանց Գ., Թորոս Աղբար, Կ.Պոլիս, հ. Բ, 1884:

Վանի Երամեան վարժարանը, Կ.Պոլիս, 1914:

Տէր-Մկրտիչեան Ե., Գանձեր Վասպուրականի, հ. Ա, Պոսթոն, 1966:

Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Բ, Պէյրութ, 1952:

Ռուսերեն

Ольгенин Т. Армения в первой половине 1913 г. Составитель: В. А. Погосян. Ереван, 2023.

Հոդվածներ

Ա., Անցնող ուսումն. տարեշրջանը, «Աշխատանք», **1913**, № 37, 27 յուլիսի:

Ա. Գ., Հ. Երամեանի դասախօսութիւնը, «Հորիզոն», **1913**, № 280, 14 դեկտեմբերի:

Ա. Հրահատ /Արսեն Աբրահամյան/, Երեկոյթ ի յիշ. Զաւարեանի, «Աշխատանք» [Իզմիր], **1914**, № 53, 18/31 յունվարի:

Ա. Ս., Վերջին օրը հայրենի երդիքին տակ, «Վան-Տոսպ», **1916**, № 34, 17 յուլիսի:

Ա-Քաշ, Բռնագաղթը, «Արմէնիա», **1915**, № 20, 2/15 դեկտեմբերի:

Ազգ. մարմիններն ու մեր դպրոցները, «Աշխատանք», **1911**, № 22, 3 յուլիսի:

Ալֆա, Համբարձում Երամյանի յուղարկաւորութիւնը, «Արեւ», **1929**, № 3314, 25 դեկտեմբերի:

Աշխատակից, Մեր երեսփոխանական ժողովը, «Աշխատանք», **1911**, № 20, 12 յունիսի:

Առաքելեան Հ., Թիւրքաց հայերի կրթական վիճակը, «Մշակ», **1903**, № 106, 21 մայիսի:

Ասպետ, Կառավարութիւնը ինչպէ՞ս կը բաշխէ կրթական պիտճէն, «Աշխատանք», **1913**, № 43, 7 սեպտեմբերի:

Ար., Ընթացիկ կեանքը, «Հորիզոն», **1914**, № 218, 3 հոկտեմբերի:

Արէգ, Ընթացքիկ կեանքը, «Հորիզոն», **1914**, № 115, 30 մայիսի:

Արէգ, Մ. Փորթուգալեանի յոբելեանական հանդէսը, «Հորիզոն», **1913**, № 290, 26 դեկտեմբերի:

Արշամ, Ազատութիւնից յետոյ, «Գործ», **1908**, № 4, 14 սեպտեմբերի:

Բագրունի Հ. /Հրանտ Կարինյան/, Անյայտ եւ անզարդ շիրիմներ, «Հորիզոն», **1915**, № 229, 10 հոկտեմբերի:

Բագրունի Հ., Երամեան վարժ-ի 36-րդ տարեշրջանի բացման հանդէսը, «Աշխատանք», **1913**, № 41, 24 օգոստոսի:

Բագրունի Հ., Հայ դպրոցը Վանի մէջ (1820-1913), «Աշխատանք», **1913**, № 1, 2 նոյեմբերի; № 49, 20 հոկտեմբերի:

Բիրամօ, Դպրոցական կեանքէն, «Աշխատանք», **1911**, № 19, 5 յունիսի:

Գ. Վ., Պ. Երամեանի դասախօսութիւնը Վանայ մասին, «Կովկասի լրաբեր», **1913**, № 279, 13 դեկտեմբերի:

Գէորգեան Խ., Պատմութեան էջերից, «Վարագ», **2008**, № 55:

Եակոբեան Յ., Վանի հասարակութեան, «Հայաստանի ձայն», **1920**, № 50, 12 մայիսի:

Երամեան Հ., Աղեքսանդրիոյ հանդերձարանը. Սուգի մէջ ժպիտ, «Արեւ», **1918**, № 14, 31 յունիսի:

Երամեան Հ., Ամանորի ձօն Արսէն Երկաթին, «Արեւ», **1916**, № 108, 14 յունվարի:

Երամեան Հ., Անապատէն արձագանք մը, «Արեւ», **1916**, № 9, 31 մայիսի:

Երամեան Հ., Անկախ կարծիքներ, «Արեւ», **1923**, № 30, 13 յունուարի; № 35, 20 յունուարի; № 40, 27 յունուարի:

Երամեան Հ., Անմիութիւն, «Արեւ», **1923**, № 49, 7 փետրուարի:

Երամեան Հ., Առաջին անձնուիրուհին, «Արեւ», **1918**, № 108, 16 յունվարի:

Երամեան Հ., Գաղափարի յաղթանակ. Քրիստոս յարեաւ, «Արեւ», **1923**, № 99, 7 ապրիլի:

Երամեան Հ., Գողգոթայի բարձունքէն, «Արեւ», **1918**, № 153, 3 մայիսի:

Երամեան Հ., Գրախօսական. «Քիչ մըն ալ ժամանց» (Ոտանաւոր պատմուածքներ) Ստեփան Տամատեան, «Արեւ», **1924**, № 44, 28 յունուարի:

Երամեան Հ., Դեկտեմբերի 6-ի տօնը, «Արեւ», **1925**, № 2065, 5 դեկտեմբերի:

Երամեան Հ., Երուսաղէմի հայոց սրբավայրերը, «Արեւ», **1918**, № 127, 4 մարտի; № 128, 6 մարտի; № 129, 8 մարտի:

Երամեան Հ., Երուսաղէմի յաղթանակը, «Արեւ», **1917**, № 100, 28 դեկտեմբերի; № 101, 31 դեկտեմբերի:

Երամեան Հ., Եւ եղեւ լոյս, «Արեւ», **1916**, № 89, 4 դեկտեմբերի:

Երամեան Հ., Զոյգ Գեղամները, «Արեւ», **1915**, № 50, 1 սեպտեմբերի:

Երամեան Հ., Խրիմեան Հայրիկ, «Արեւ», **1926**, № 2225, 15 յունիսի:

Երամեան Հ., Հայ դպրոց, «Արեւ», **1919**, № 128, 10 մարտի; № 129, 12 մարտի; № 130, 14 մարտի:
Երամեան Հ., Հայկական խնդիրը, «Արեւ», **1923**, № 80, 16 մարտի:
Երամեան Հ., Հայրենագիտութիւն, «Արեւ», **1921**, № 126, 2 մարտի:
Երամեան Հ., Հայութեան խաչելութիւնը, «Արեւ», **1915**, № 74, 27 հոկտեմբերի:
Երամեան Հ., Հայուն ծնունդը, «Արեւ», **1917**, № 108, 17 յունվարի:
Երամեան Հ., Հայ եւ քիւրտ յարաբերութիւնները, «Արեւ», **1925**, № 1852, 27 մարտի:
Երամեան Հ., Հայ-ֆրանսական յարաբերութիւնները, «Վերածնունդ», **1918**, № 14-15, 14 յուլիսի-1 օգոստոսի; № 16-17, 14 օգոստոսի-1 սեպտեմբերի; № 20, 14 հոկտեմբերի; № 21-22, 14 նոյեմբերի:
Երամեան Հ., Հերեանի յուշարձանի համար, «Արեւ», **1925**, № 1961, 5 օգոստոսի:
Երամեան Հ., Մեր քաղաքական ուղեգիծը, «Արեւ», **1923**, № 98, 6 ապրիլի:
Երամեան Հ., Մտքի զարթօնքը, «Զարթօնք», **1919**, պր. 2, 3-4:
Երամեան Հ., Նահա՞նջ թէ պատնէշ, «Արեւ», **1915**, № 56, 15 սեպտեմբերի:
Երամեան Հ., Նամակ Եգիպտոսէն, «Աշխատանք», **1916**, № 39, 14 սեպտեմբերի:
Երամեան Հ., Նամակ խմբագրութեան, «Վան-Տոսպ», **1916**, № 19, 3 ապրիլի:
Երամեան Հ., Նամակ Վանից, «Արծագանք», **1883**, № 17, 24 ապրիլի:
Երամեան Հ., Նորագոյն նուէրներ եգիպտահայութեան, «Արեւ», **1928**, № 2941, 9 հոկտեմբերի:
Երամեան Հ., Որբերու կիրակին, «Արեւ», **1924**, № 1757, 4 դեկտեմբերի:
Երամեան Հ., Որբ հայը, «Արեւ», **1919**, № 78, 7 նոյեմբերի:
Երամեան Հ., Որբ, «Որբունի», պրակ Ա, Բ, Աղեքսանդրիա, **1919**:
Երամեան Հ., Պատմական երկ մը վերջին հարիւրամեայ շրջանին շուրջ, «Արեւ», **1927**, № 2449, 7 մարտի:
Երամեան Հ., Պատուելի Քրիստափոր Ճէճիզեան, «Արեւ», **1926**, № 2295, 6 սեպտեմբերի:
Երամեան Հ., Վան-Վասպուրական, «Հայրենիք», **1925**, № 8:
Երամեան Հ., Վարագա Պետրոս, «Արեւ», **1925**, № 1921, 19 հունիսի:
Երամեան Հ., Վարդան, «Արեւ», **1923**, № 55, 14 փետրուարի:
Երամեան Հ., Տարեկան տեղեկագիր Երամեան վարժարանի, «Աշխատանք», **1913**, № 41, 24 օգոստոսի:
Երամեան Հ., Տարեկան տեղեկագիր Երամեան վարժարանի. շրջան ԼԵ (1912 օգոստ. - 1913 օգոստ.), «Ասպարէզ», **1913**, № 270, 10 հոկտեմբերի:
Երամեան Հ., Տեղեկագիր Երամեան վարժարանի (1912-13) ուսումն. շրջանի, «Վան-Տոսպ», **1913**, № 33, 7 սեպտեմբերի:
Երամեան Հ., Տեղեկագիր որբանոցի Խնամատար ընկերութեան 1882, 1 նոյ.-1884, 1 յունվար, «Արծագանք», **1884**, № 10, 11 մարտի:
Երամեան Հ., Ուխտաւորներ, «Արմէնիա», **1915**, № 21, 9/22 դեկտեմբերի; № 22, 16/29 դեկտեմբերի:
Երամեան Հ., Ուղեւորութիւն մը դէպի Վիէննա, «Մասիս», **1886**, № 3837, 30 օգոստոսի:
Երամեան Հ., Ուղղագրութեան հարցը, «Արեւ», **1927**, № 2505, 13 մայիսի:
Երամեան Հ., Քէմբի հերոս, «Արեւ», **1916**, № 147, 17 ապրիլի:
Երամեան Հ., Օտար կրթութիւն, «Արեւ», **1923**, № 53, 12 փետրուարի:
Զարմայր, Յոբելեան մը, «Սուրհանդակ», **1902**, № 1149, 21 նոյեմբերի:
Էվոյան Վ., **Հովհաննիսյան Ջ.**, Փաստաթղթեր նախասովետական շրջանի հայ սիրողական թատերախմբերի մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, **1974**, № 1:
Թիւթիւնճեան Խ., Հմայեակ Մանուկեան, «Վարագ», **1969**, № 63-64:
Թղթակից /Խաչատուր Լեոնյան/, Լուրեր Արեւելեան գաւառներէն, «Բիւզանդիոն», **1912**, № 4832, 4/17 սեպտեմբերի:
Թղթակից, Համբարձում Երամեանի ազգային թաղումը, «Յուսաբեր», **1929**, № 229, 27 դեկտեմբերի:
Թղթակից, Վան, «Մեղու Հայաստանի», **1882**, № 117, 29 հոկտեմբերի:
Իսկէնդէրեան Ռ., Հ. Երամեանը Կովկասում, «Մշակ», **1913**, № 219, 4 հոկտեմբերի:
Իրազեկ /Տիգրան Պաղտասարյան/, Երամեան դպրոցը. Բացման հանդէսը–շէնքի խնդիրը, «Աշխատանք», **1911**, № 29, 20 օգոստոսի:
Լրաբեր, Նամակ Վանէն, «Կոչնակ», **1908**, № 21, 23 մայիսի:
Լեոնեան Խ., Նամակ Թիւրքիայից, «Մշակ», **1904**, № 9, 24 յունվարի:
Խանպէկեան Վ., Վարդգէս Երամեանի գիւտը, «Բազմավէպ», **1921**, № 11:
Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, «Մուրճ», **1904**, № 10, հոկտեմբեր:
Կարապետյան Ս., Օսմանյան կայսրության «անմեղ» հրդեհները, «Վարձք», **2012**, № 5:
Կարսեցի, Վան-Տոսպ, «Մուրճ», **1903**, № 9:
Կոյր մը, որ լոյս կը բաշխէ (խմբագրակազմ), «Աշխատանք» [Իզմիր], **1914**, № 61, 15/28 մարտի:
Համբարձում Երամեան (խմբագրակազմ), «Արեւ», **1929**, № 3313, 24 դեկտեմբերի:
Հ.Բ.Ը. միութեան Բօր-Սայիտի «Սիսուան» վարժարանը, «Միութիւն», **1916**, № 52, յուլիս-օգոստոս:
Հ. Մ., Վանի Երամեան վարժարանը, «Դաշինք» [Իզմիր], **1914**, № 1494, 28 յունիսի:
Հուր /Բարունակ Կապուտիկյան/, Ընթացիկ կեանքը Վանի մէջ. ակնարկ մը Վանի թատերական գործի անցեալին եւ ներկային վրայ, «Հորիզոն», **1913**, № 52, 8 մարտի:
Հուր, Ընթացիկ կեանքը Վանի մէջ, «Հորիզոն», **1913**, № 122, 5 յունիսի:
Ղարասէֆէրեան Ն., Ամերիկաբնակ վանեցիներուն, «Կոչնակ», **1910**, № 51, 17 դեկտեմբերի:
Ճամբու վրայ, «Աշխատանք», **1913**, № 30, 8 յունիսի:
Մ. Փ., Մի նոր նահատակ ալ, «Արմէնիա», **1894**, № 46, 16/28 փետրվարի:
Մահ Համբարձում Երամեանի, «Համասպրամ», **1930**, № 1:
Մամուրեան Հ., Վանի Երամեան վարժարանը, «Դաշինք» [Զմյուռնիա], **1914**, № 1494, 28 յունիսի:
Մարս, Հին ցաւ եւ վտանգաւոր դարման, «Աշխատանք», **1911**, № 20, 12 յունիսի:
Մարս, Մէկ տարուայ տեղեկագիր, «Աշխատանք», **1911**, № 29, 20 օգոստոսի:
Մխիթարեան Օ., Համբարձում Երամեան, «Հայրենիք», **1930**, № 5405, 11 փետրուարի:
Մարտիկ, Կենսագրական ընդհանուր գծեր, «Զարթօնք», Գահիրէ, 1919, պր. 3-4:
Մտրակ /Երվանդ Հովհաննիսյան/, Արծագանքներ Թիւրքահայաստանից, «Մշակ», **1910**, № 209, 23 սեպտեմբերի: **1911**, № 206, 22 սեպտեմբերի:
Մտրակ, Արծագանքներ Վասպուրականից, «Մշակ», **1913**, № 204, 15 սեպտեմբերի; № 243, 1 նոյեմբերի: **1914**, № 7, 18 յունվարի:
Մտրակ, Արծագանքներ Վասպուրականից, «Արարատ», **1913**, Ժ, յաւելուած:
Մտրակ, թղթակցություն, «Մշակ», **1910**, № 36, 17 փետրվարի:
Յարութիւնեան Վ., Կոյր աչքերով, պայծառ մտքով, «Վարագ», **2007**, № 54:
Յ. Մ., Վանի «Ազատ-լոյս, գրադարանի միամեայ հաշուետուութիւնը, «Աշխատանք», **1913**, № 31, 15 յունիսի:
Յ. Պ., Նամակ Վանէն, «Կոչնակ», **1908**, № 44, 31 հոկտեմբերի:
Յարութիւնեան Վ., Կոյր աչքերով, պայծառ մտքով, «Վարագ», **2007**, № 54:
Յովսէփ եպիսկոպոս, Առ համայն կրթասէր ազգայինս, «Հորիզոն», **1913**, № 96, 4 մայիսի:
Նազարյան Ս., Տիգրան Նազարյանի կյանքը և գործունեությունը, «Տեղեկագիր ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի. հասարակական գիտություններ», **1965**, № 3:

Նոր թաղականական մարմինների ընտրութեան առթիւ, «Աշխատանք», **1913**, № 38, 3 օգոստոսի:
Նուիրատուութիւն, «Արեւ», **1923**, № 81, 17 մարտի:
Շահպազեան Յ., Վան քաղաքի կրթական պատկերը (1911-1912), «Ազատամարտ», **1912**, № 991, 4/17 սեպտեմբերի:
Շառայլ, Վոսփորի ափերէն, «Մշակ», **1914**, № 94, 3 մայիսի:
Պ. Խատիսեանի Բ բանախօսութիւնը Ալիամպրայի մէջ, «Արեւ», **1920**, № 48, 30 օգոստոսի:
Պ. Հ. Երամեանի մէկ նամակը, «Արեւ», **1916**, № 5, 22 մայիսի:
Պ. Յ. /Պետրոս Հակոբյան/, Համբարձում Երամեան, «Ասպարէզ», **1913**, № 262, 15 օգոստոսի:
Պատրիկ Ս., Վանի կրթական ընդհանուր վիճակը, «Ալիք» [Թիֆլիս], **1906**, № 76, 30 յուլիսի:
Ս. Ն., Գաւառի կեանքը, «Բիզանդիոն», **1911**, № 4341, 21 յունուար/3փետր.:
Ս-օ, Մեր ծխական դպրոցները, «Աշխատանք», **1911**, № 27, 7 օգոստոսի:
Սեդրեան Մ., Նամակ Թիւրքիայից, «Նոր-Դար», **1903**, № 129, 25 յուլիսի; № 130, 26 յուլիսի:
Սուրէն /Վարդան Պապիկյան/, Կուսակցական համերաշխութիւնը, «Վան-Տոսպ», **1913**, № 12, 13 ապրիլի:
Վաղարշ, Վան, «Մեղու Հայաստանի», **1881**, № 267, 22 դեկտեմբերի:
Վանեցի, Նամակ Թուրքիայից, «Մշակ», **1895**, № 128, 7 նոյեմբերի:
Վանիօ, Վասպուրականի կեանքը, «Կոհակ», **1913**, № 69:
Վանցի, Նամակ Վանից, «Արձագանք», **1883**, № 41, 9 հոկտեմբերի:
Վարազդատ, Կիլիկեցիները Բօր-Սայիտի մէջ, «Արեւ», **1916**, № 12, 7 յունիսի:
Տեղեկութիւններ Վանի Երամեան վարժարանի մասին, «Դաշինք», **1914**, № 1495, 29 յունիսի:
Փափազեան Դ., **Ճինկօզեան Լ.**, Երկու խօսք եւ կոչ մը Սանդրխտեանի մասին, «Աշխատանք», **1913**, № 40, 17 օգոստոսի:
Փոխարեան Ա., Հայրենիքիս մէջ, «Հայրենիք» [Պոսթըն], **1938**, № 1, նոյեմբեր:
Փոխարեան Ա., Կարճ պտոյտ մը, «Վարագ», **1957**, № 16, հունվար:
Ֆիմի, Գեղարուեստական, «Աշխատանք», **1911**, № 22, 3 յուլիսի; № 24, 17 յուլիսի:
Ֆիմի, Թատերական, «Աշխատանք», **1911**, № 23, 10 յուլիսի:
N., Նամակ Վանէն, «Արաքս» [Բոստոն], **1906**, № 11, 13 յունուարի:
W. X., Կրթական գործը Վանի մէջ, «Արաքս» [Բոստոն], **1906**, № 28, 12 մայիսի:
*******, Նամակ Թուրքիայից, «Մշակ», **1877**, № 86, 28 նոյեմբերի/10 դեկտեմբերի:
*******, Նամակ Թիւրքիայից, «Մշակ», **1905**, № 119, 16 յունիսի:

Պարբերականներ

«Ազատամարտ», **1911**, № 746, 16/29 նոյեմբերի: **1914**, № 1460, 11/24 մարտի; № 1502, 16 մայիսի:
«Ազգ», **1907**, № 10, 22 յունիսի: **1914**, № 43, 15 ապրիլի: «Ազգ», **1916**, № 34, 10 փետրուարի:
«Ազդակ», **1954**, № 281, 31 յունուարի:
«Աշխատանք» [Իզմիր], **1913**, № 21, 31/13 սեպտեմբերի; № 23, 7/20 սեպտեմբերի: **1914**, № 76, 28/11 յուլիսի; № 77, 5/18 յուլիսի; № 78, 12/25 յուլիսի:
«Աշխատանք» [Վան], **1911**, № 19, 5 յունիսի; № 24, 17 յուլիսի; № 25, 24 յուլիսի; № 26, 31 յուլիսի: **1913**, № 3, 16 նոյեմբերի; № 29, 1 յունիսի; № 38, 3 օգոստոսի; № 39, 10 օգոստոսի; № 45, 21 սեպտեմբերի; № 47, 5 հոկտեմբերի; № 48, 12 հոկտեմբերի; № 50, 26 հոկտեմբերի: **1915**, № 18, 16 մայիսի; № 28, 27 յունիսի:
«Ասպարէզ», **1913**, № 258, 18 յուլիսի; № 261, 8 օգոստոսի; № 266, 12 սեպտեմբերի: **1914**, № 293, 20 մարտի:
«Արարատ», **1902**, ԺԱ-ԺԲ: **1903**, Է:
«Արաքս» [Ալեքսանդրիա], **1929**, № 9, 16 փետրվարի:
«Արաքս» [Ալեքսանդրիա, անկախ հայաթերթ], **1929**, № 2, 21 դեկտեմբերի:
«Արաքս» [Բոստոն], **1906**, № 19, 10 մարտի; № 20, 17 մարտի:
«Արեւ» [Ալեքսանդրիա, Կահիրե], **1915**, № 16, 14 յունիսի; № 17, 16 յունիսի: **1917**, № 7, 25 մայիսի; № 8, 28 մայիսի; № 105, 11 յունվարի; № 108, 17 յունվարի; № 122, 21 փետրվարի: **1928**, № 2997, 13 դեկտեմբերի: **1929**, № 3312, 23 դեկտեմբերի; № 3313, 24 դեկտեմբերի; № 3316, 27 դեկտեմբերի; № 3317, 30 դեկտեմբերի: **1930**, № 3321, 3 յունվարի; № 3324, 8 յունվարի; № 3327, 11 յունվարի:
«Արմէնիա», **1893**, № 62, 25 մարտի: **1915**, № 11, 30 սեպտեմբերի/13 հոկտեմբերի; № 12, 7/20 հոկտեմբերի:
«Բիւզանդիոն», **1898**, № 390, 5/17 փետրուարի; № 628, 11/23 նոյեմբերի: **1899**, № 765, 22 ապրիլի/4 մայիսի: **1911**, № 4459, 14/27 յունիսի:
«Իրաւունք», **1903**, № 11, 8 փետրուարի:
«Կոչնակ», **1904**, № 181, 28 մայիսի; № 190, 30 յուլիսի; № 192, 13 օգոստոսի; № 198, 24 սեպտեմբերի: **1908**, № 4, 25 յունվարի: **1911**, № 49, 9 դեկտեմբերի: **1912**, № 6, 10 փետրվարի; № 42, 19 հոկտեմբերի: **1915**, № 34, 21 օգոստոսի; № 47, 20 նոյեմբերի:
«Հայաստանի կոչնակ», **1924**, № 52: **1925**, № 27, 4 յուլիսի: **1926**, № 50, 11 դեկտեմբերի: **1929**, № 4, 26 յունուարի: **1930**, № 4, 25 յունուարի:
«Հայաստանի ձայն», **1920**, № 53, 16 մայիսի; № 54, 19 մայիսի; № 68, 18 յունիսի; № 114, 17 օգոստոսի:
«Հայրենիք», **1929**, № 5085, 23 յունուարի:
«Հորիզոն», **1913**, № 94, 2 մայիսի: **1914**, № 29, 7 փետրուարի; № 36, 19 փետ.; № 141, 2 յուլիսի: **1915**, № 213, 22 սեպտեմբերի:
«Մեղու Հայաստանի», **1876**, № 30, 7 օգոստոսի: **1880**, № 13, 20 փետրվարի; № 34, 10 մայիսի; № 47, 25 յունիսի:
«Միութիւն», **1916**, № 49, յունվար-փետրվար:
«Մշակ», **1876**, № 41, 28 հոկտեմբերի (9 նոյեմբերի): **1911**, № 153, 17 յուլիսի: **1913**, № 254, 14 նոյեմբերի; № 277, 13 դեկտեմբերի: **1915**, № 242, 1 նոյեմբերի:
«Յուսաբեր», **1929**, № 228, 26 դեկտեմբերի; № 229, 27 դեկտ.; № 230, 28 դեկտ.; № 232, 31 դեկտ.: **1930**, № 235, 4 յունուարի; № 236, 8 յունուարի:
«Նոր Դպրոց», **1909**, № 10: **1910**, № 3:
«Ռազմիկ», **1906**, № 38, 1 մարտի: **1909**, № 321, 14 փետրուարի:
«Սիոն», **1930**, № 2:
«Վան-Տոսպ», **1913**, № 29, 10 օգոստոսի; № 31, 24 օգոստոսի:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբեղյան Մանուկ, լեզվաբան 60
Աբուլյան Գևորգ, Աբուլեան Գէորգ 26-27, 77
Ագրիպպասյան Մարտիրոս, Համբարձում Երամյանի եղբայրների դասընկերը 22
Ադա-Նեգրի, գրող 56
Ադամյան Խաչիկ 74
Ադամյան Պետրոս 51
Աթթարեան Մարտիրոս, տիգրանակերտցի 53 ծնք.
Ալաճաճյան, Երամյան վարժարանի խնամակալ 77
Ալէն Հէրպէրթ 73
Ալիշան Ղևոնդ 24
Ալի պէյ, կրթական տեսուչ 29
Ահարոնեան Աւետիս, գրող 56
Աղաբաբյան Հակոբ, «Խնամատար» ընկերության անդամ 16 ծնք.
Աղապալյան, Աղապալեան Մկրտիչ, նույնանուն վարժարանի հիմնադիր 25, 25 ծնք.
Աղապապեան Աղապապ, բարերար 17
Աղապապյան Կ. 76
Աղավնունի Մկրտիչ, ծայրագույն վարդապետ, Եգիպտոսի առաջնորդ 39
Աղմամյան Հովհաննես 74-75
Աղվանյան Գրիգոր, Աղվանյանց Գրիգորիս, եպիսկոպոս, Վանի առաջնորդ 17, 17 ծնք.
Աղուանեան Աբրահամ 70 ծնք.
Ամեմխաչոյան Սարգիս, վանեցի 24
Ամեմյան Գրիգոր, Սանդխտյան վարժարանի ուսուցիչ 43, 50
Ամեմյան Լևոն 75
Ամեմյան Տիգրան, ակնաբույժ 23
Ամէմ-Խաչօեան Կարապետ 31
Ամիրճանեան, Ամիրջանեան Տիգրան, ուսուցիչ, Ղուկասյան վարժարանի առաջնորդ, բարերար, վխճ. 1897 թ. 10, 10 ծնք., 11, 11 ծնք., 12 ծնք., 13-14, 14 ծնք., 15-16, 18, 20, 82
Ամսարեան Յակոբ, Հիսուսյան վարժարանի աշակերտ 14 ծնք.
Այվազյան Հովսեփ, ծայրագույն վարդապետ, Վանի առաջնորդական տեղապահ 27
Այտընեան Արսէն, եպիսկոպոս, Մխիթարյան միաբանություն, Վիեննա 24
Անդրէասեան Պատ. 68
Անթօյեան Յովհաննէս, բաղեշցի 53 ծնք.
Աշոտ Ա Բագրատունի, հայոց թագավոր 20
Ապաղյան Ղևոնդ, վասպուրականցի 70
Աջէմեան Սարգիս, բարերար 17, 18 ծնք.
Առաքելյան, Առաքելեան Համբարձում 55, 58, 61
Ասլանյան Ներսես, Վանի առաջնորդի տեղապահ 33, 33 ծնք.
Ավագյան Տիգրան (Կռկանց Տիգրան), պատրաստաբան և զվարճախոս, Կալիփսեի ամուսինը, վխճ. 1914 թ. 12 ծնք.
Ավետիս, Մարկոս Երամյանի թոռը, Հովհաննես Երամյանի որդին, վխճ. 1917 թ. Երևանում 6 ծնք., 13
Արըլթ, ակնաբույժ, Վիեննա 20, 23-24
Արծրունի Գրիգոր, «Մշակ» թերթի խմբագիր 22
Արծրունի Լևոն, պրոֆ. 56
Արշարունի Վիկտորյա 74
Արսեն վարդապետ, Վանի առաջնորդական տեղապահ 27 ծնք., 32
Արսլանյան, Ասլանեան Խաչատուր 25, 53 ծնք.
Արտամետցեան Մանուէլ, (Դիոնէսիոս), քահանա, Հիսուսյան վարժարանի տնօրեն-ուսուցիչ 14 ծնք.
Արտամետցեան Մարտիրոս, Ղուկասյան վարժարանի ուսուցիչ, սպանվել է Պարսկաստանում 10
[Արփիարյան] Արփիար, «Հայրենիք» օրաթերթի խմբագիր 63
Արփիարյան Տիգրան, «Մասիս» շաբաթաթերթի խմբագիր 46
Աւգերեան Նիկողոս, ծ. վարդապետ, Մխիթարյան միաբանություն, Վիեննա 24
Աւետիսեան 31
Աքիմովիչ, Ռուսաստանի հյուպատոս 53 ծնք.
Աֆրիկյան, Ափրիկեան Խաչատուր, երևանցի մեծահարուստ 60, 60 ծնք.

Բ

Բագրատունի Արսէն, հոգևորական, թարգմանիչ 14
Բագրատունի Հակոբ 76
Բագրևանդյան, Բագրեւանդեան Սահակ, ծ. վարդապետ, եպիսկոպոս, Մեծոփավանքի վանահայր, Վանի առաջնորդ 26, 33-34, 37, 38 ծնք.
Բաղեշցյան Գարեգին 27, 27 ծնք.
Բարաղամեան Օհաննէս 31
Բարթոսեան եղբայրներ, վանեցի 86
Բարսեղյան Սարգիս 48
Բերեզովսկի - Օլգինսկի (կեղծանունը՝ Տ. Օլգենին), լրագրող 57
Բիւզանդեան Մարտիրոս, Ղուկասյան վարժարանի ուսուցիչ 10
Բիւզանդեան Յովհ. 53 ծնք.
Բրուտյան Աբրահամ, Հնչակյան կուսակցության անդամ 54

Գ

Գագմաճեան Իգնատիոս, եպիսկոպոս, Վանի առաջնորդական տեղապահ, Վանի առաջնորդ 10, 10 ծնք., 12
Գազազյան Սմբատ, վարդապետ, Կոստանդնուպոլսի պատրիարքական փոխանորդ 61
Գազանճեան Սիմէօն 53 ծնք.
Գազանճյան Գալուստ 75
Գալիկյան Ավետիս, վանեցի 24
Գալճյան Հարություն 32
Գալճյան Սահակ, Հիսուսյան վարժարանի հիմնադիրներից 14 ծնք.
Գալվիեռ, Ֆրանսիայի հյուպատոս 45
Գալֆայան Խորեն, Նարպեյ Խորեն, Նար-Պեյ, բանաստեղծ, թատերագիր 23, 23 ծնք.
Գառնիկ, Համբարձում Երամյանի թոռը, Կատարինեի որդին 76
Գասպարեան Բոգդան Տ., կովկասահայ 64
Գասպարեան Ն. Մ. 62
Գասպարյանց Ավետիք Տ., Երամյան վարժարանի ուսուցիչ 63
Գարապէքիր [Քյազիմ], փաշա 80
Գարասեֆերյան Հակոբ, աղա, 1832 թ. խեղդամահ է արվել Թամուր փաշայի հրամանով 6
Գարասեֆերյան, Գարասէֆէրեան Նշան, Ղարասէֆէրեան Ն., վանեցի, Հիսուսյան վարժարանի աշակերտ 14 ծնք., 73, 80
Գարտաշյան, Երամյան վարժարանի խնամակալ 77
Գափամաճյան Գևորգ, Պետրոսի և Փանոսի եղբայրը 49 ծնք.
Գափամաճյան, Գափամաճեան Պետրոս, Վարագավանքի հոգաբարձության ատենապետ, Վանի քաղաքապետ, Գևորգի և Փանոսի եղբայրը, Սեթի հայրը 17, 48, 48 ծնք.
Գափամաճյան, Գափամաճեան Փանոս, բարերար, Գևորգի և Պետրոսի եղբայրը 17, 20, 49 ծնք.
Գնունի Սարգիս, Էջմիածնի մայր տաճարի տպարանապետ 21
Գոնտաքճյան Եղիշե 30
Գոնտաքճյան, Գօնտաքճեան Հրանդ, Հրանտ, Երամյանի աշակերտ, ուսուցիչ 37, 41, 45, 76

Գովրիկեան [Գրիգոր], ռումինահայ պատմաբան, մանկավարժ, արքեպիսկոպոս 72
Գոռուզյան Խաչիկ, քահանա 70
Գրանյան Հմայակ 68
Գրիգոր Ա. Քաջբերունի 86
Գրիգոր, Համբարձում Երամյանի տան նախկին ծառայող 15 ծնբ.
Գրիգոր (Գրիգորիս), Մարկոս Երամյանի թոռը, Հովհաննես Երամյանի որդին 6 ծնբ., 13
Գրիգոր Զոհրապ, արևմտահայ գրող 61-62
Գրիգորյան Հովհ. 75
Գութնույան Հարություն 75
Գուլամիրյանց Սիմեոն, «Արաքս» հանդեսի խմբագիր, Պետերբուրգ 24
Գույումճեան, Գույումճյան Հովսեփ, Վարժապետանոցի տեսուչ 47 ծնբ.
Գույումճյան Կարապետ, Վիեննայի Կայսերական համալսարանի հայերենի և արաբերենի ուսուցիչ, պոլսեցի (գրական անունը՝ Կոռ) 24, 24 ծնբ.
Գուցկով Կարլ, գրող 51
Գևորգ Ե, կաթողիկոս 59
Գօնդակչեան [քույրեր] 50
Գօնտաքճեան Երուանդ 31
Գօրգին Ե., գրող 51

Դ

Դարբինյան Արշակ, Սահմանադրական Ռամկավար կուսակցության անդամ 54
Դարբինյան Արտակ, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, վանեցի 15 ծնբ., 67 ծնբ.
Դարբինյան, Դարբինեան Խաչատուր, ուսուցիչ 14-15, 30
Դենենետ Ալեքսեյ Ռոմանովիչ (1836-1917 թթ.), Կարինում ռուս հյուպատոս (1880-1890 թթ.) 18, 18 ծնբ.
Դերձակյան Սահակ 74
Դերձակյան Օննիկ (կեղծանունը՝ Արշակ Վռամյան), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ 23, 47, 54-55
Դեերցի Դավո, Դաւо, մատնիչ 41 ծնբ., 44
Դուրեան Պետրոս, բանաստեղծ 73

Ե

Եզեկյան Ավ. 61
Եզյանց Կարապետ, բանասեր, պատմաբան, Մկրտիչ Սանասարյանի կտակարար 25-26
Եկարեան Գրիգոր, Ղուկասյան վարժարանի տնօրեն, Տիգրան Ամիրջանյանի օգնական, Արմենակ Եկարյանի հայրը 10-11, 11 ծնբ.
Եկարյան Արմենակ, Գրիգորի որդին, Վանի ինքնապաշտպանության ղեկավար 11 ծնբ.
Եղիայան Զավեն Պաղտատցի, Կ.Պոլսի հայոց պատրիարք 61
Ենիկոլոպյան Նարիման խան, Վիեննայում Պարսկաստանի դեսպան 24
Ենովքեան Լեւոն 74
Երամյան տոհմ 6, 37 ծնբ., 50 ծնբ.
Երամյան Դանիել, Երեմիայի որդին, Մաթևոսի թոռը 6, 6 ծնբ., 71, 75
Երամյան Դանիել, վասպուրականցի 70
Երամյան Երեմիա (Աղանիկ), Մաթեոսի որդին, Երեմիայի թոռը, Դանիելի հայրը 6, 75
Երամյան Համբարձում գրեթե բոլոր էջերում
Երամյան Հարություն, Երեմիայի որդին, Համբարձումի հայրը, Սբ. Հակոբ թաղի Ղուկասյան վարժարանի ուսուցիչ 6, 8
Երամյան Հովհաննես, Երամեան Յովհաննէս, Երեմիայի որդին, Համբարձումի հորեղբայրը, խեղդամահ է արվել Թամուր փաշայի հրամանով 6, 22, 26, 75
Երամյան Հովհաննես, Մարկոսի որդին, վաճառական 6, 75
Երամյան Ղուկաս (1850-1866 թթ.), Համբարձումի եղբայրը 8-9, 11, 75
Երամյան Ղուկաս, Երեմիայի որդին, Համբարձումի հորեղբայրը, վխճ. 1840-ական 6, 75
Երամյան Մաթևոս, Երեմիայի որդին, Համբարձումի հորեղբայրը 6, 75
Երամյան Մարկոս, Երեմիայի որդին, Համբարձումի հորեղբայրը 6, 35, 75
Երամյան Սառա, Երեմիայի դուստրը, Համբարձումի հորաքույրը 75
Երամյան Վահրամ (1901-1907), Համբարձումի որդին 79
Երամյան Վաչագան, Համբարձումի որդին 45, 76-77, 77 ծնբ., 78
Երամյան Վարդան (1851-1871 թթ.), Համբարձումի եղբայրը 8-9, 11, 13, 33, 75
Երամյան Վարդգես, Երամեան Վարդգէս, Համբարձումի որդին 68-69, 76-77, 77 ծնբ.
Երամյան, Երամեան Վարդան, Համբարձումի որդին 33, 45, 48, 68-69, 76-77, 77 ծնբ.
Երամյան-Պարիկյան Կատարինե-Վարդանուշ, Համբարձում Երամյանի դուստրը 75-76
Երեմիա, տեր Հովհաննեսի որդին, Համբարձում Երամյանի պապը 6-7, 75
Զավարյան Սիմոն, ՀՅԴ հիմնադիր-անդամ 63
Զարիֆյան Հովհ., թատրոնի ղեկավար 51

Է

Էլիաս, փաշա, ակնաբույժ 23
Էնվէր, փաշա 78
Էպլիղաթեան Մատթէոս էֆ., նահանգային ընդհանուր դատախազ 57 ծնբ.
Էսմերյան Նիկողոս, ակնաբույժ 23

Թ

Թալէաթ, փաշա 78
Թահիր, փաշա, Վանի կուսակալ (1898-1906 թթ.) 33-34
Թահսին, բեյ, Վանի կուսակալ 12 ծնբ., 57, 57 ծնբ., 59, 64, 64 ծնբ.
Թամուր, փաշա, Վանի կուսակալ 6
Թաշճյան Սենեքերիմ 31
Թավշանճեան Յ., բարերար 39
Թարագճյան Ղազարոս 74
Թարագճյան Մարտիրոս 74
Թարկուլյան Միհրան, ֆրանսերենի թարգմանիչ 31
Թելլալյան Մալխաս, վանեցի, սրճարանատեր, Թիֆլիս 21
Թերզիպաշյան Ավետիս 35
Թերզիպաշյան Հարություն, «Խնամատար» ընկերության անդամ 16 ծնբ.
Թերզիպաշյան Մարգար, Համբարձում Երամյանի աշակերտը 46 ծնբ.
Թերզյան Սմբատ 75
Թերլեմեզյան Սահակ 20
Թէոտոս Փոքր, Բյուզանդիայի կայսր 25
Թյուրյունճյան Տելեմաք, բեկ, Պարսկաստանի դերիայուպատոս 62-63
Թոգաթլեան Ն., վրանային ավանի հրամանատար, Պորտ-Սաիդ 68
Թոգաթլյան Երվանդ 74
Թոխմախյան Արսեն, վարդապետ 27
Թոխմախյան Մարգար 37
Թովմա Մեծոփեցի 26
Թոփուզյան Գ. 75
Թոփուզյան Թ. 75
Թոփուզյան Հակոբ, եպիսկոպոս, Լիմ անապատի վանահայր 9
Թումանեան Յովհաննէս, Ամենայն հայոց բանաստեղծ 56
Թուրշյան Պետրոս, «Խնամատար» ընկերության անդամ 16 ծնբ.
Թօգատլեան Միհրան 74

Ժ

Ժամկոչյան Մեսրոպ, Պողոսյան վարժարանի տեսուչ, Ալեքսանդրիա 62

Ի

Իզմիրլյան Մաթեոս, Մատթեոս, Մատթեոս Բ, արքեպիսկոպոս, կաթողիկոս 45, 46 ծնբ., 47, 76
Ինճիճեան Ղուկաս, աշխարհագրագետ, պատմաբան, Մխիթարյան միաբանության անդամ 7
Իշխան, Միքայէլեան Իշխան (Նիկոլ Միքայելյան, Պողոսյան, կեղծանունը՝ Վանա Իշխան), ՀՅԴ անդամ, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ 41, 53 ծնբ., 54
Իսագուլյան Հովհաննես, վանեցի 24
Իսահակյան Ավետիք, գրող 56
Իսկէնդէրեան Ռ. 86
Իսմայիլ Հագգը, բեյ, Բիթլիսի կուսակալ 49
Իսրայէլեան Արիս 77
Իսքենտերյան Ներսես 75
Իփէքեան Աղասի 74

Լ

Լալայան Երվանդ, Լալայեան Երուանդ, ազգագրագետ, բանահավաք, Հայոց ազգագրական ընկերության հիմնադիր 51 ծնթ., 53 ծնթ.
Լեւոնեան Խաչատուր 11 ծնթ.
Լէբովիչ, լեհ բժիշկ 28
Լոհման, պաստոր, Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միության ընդհանուր վարիչ 56
Լևոն Շանթ, Սեղբոսյան Լևոն, գրող, պետական, հասարակական գործիչ 23, 55-56
Լօպանօֆ, ռուս քաղաքական գործիչ 79

Խ

Խալաթեանց [Գրիգոր], պատմաբան-բանասեր 53 ծնթ.
Խալիլ 32
Խանիկյան Մկրտիչ 20, 30, 37, 45 ծնթ.
Խանճեան Սեպուհ, օսմանյան դրամատան գանձապետ 52
Խանջյան Ղևոնդ 30
Խաչատուր Բ, կաթողիկոս 12 ծնթ.
Խաչատուր, Համբարձում Երամյանի մոր հորեղբայրը 7
Խաչատուրեան Աստուածատուր, պրոֆեսոր 77
Խաչկոնց Դավիթ, նախակրթարանի ուսուցիչ, Ղալաթիա 23
Խատիսյան Ալեքսանդր 68
Խոճասարյան Հայկ 80
Խոստիկեան Միսաք 53 ծնթ.
Խտիվ Ապպաս Հիլմի, փաշա 24 ծնթ.
Խրիմյան, Խրիմեան Հայրիկ, Ամենայն Հայոց կաթողիկոս 7, 12 ծնթ., 16-17, 24, 33, 35, 38 ծնթ., 45, 60, 70 ծնթ., 79
Խուդավերդյանց Ներսես, Էջմիածնի Մայր տաճարի գրադարանի տեսուչ 21

Ծ

Ծերունեան Յակոբ, բարերար 17

Կ

Կալիփսե, Տիգրան Ամիրջանյանի դուստրը 12 ծնթ.
Կամսարական Աննա 19
Կամսարական Արմենակ 77 ծնթ.
Կամսարական Կոստանդին, Վանում Ռուսաստանի փոխհյուպատոս 16 ծնթ., 17-18, 66
Կամսարական Տիգրան, ծխախոտի գործարանատեր 63
Կանտսյան Լևոն 47
Կաշաշյան, վանեցի 31
Կապուտիկյան Բարունակ, վանեցի մանկավարժ, հասարակական գործիչ 55
Կասեան Սարգիս, քաղաքական գործիչ 80
Կասպարեան Գրիգոր, բարերար 17
Կարապետ, եպիսկոպոս 60
Կարապետ, Համբարձում Երամյանի մոր հորեղբոր՝ Խաչատուրի որդին 7
Կարապետ Մոկացի, տիրացու, Հիսուսյան վարժարանի ղեկավար 14 ծնթ.
Կարապետյան, Կարապետեան Պետրոս, էֆ., կահիրեաբնակ, բարերար 36, 39, 39 ծնթ., 48, 67 ծնթ.
Կարօղլանյան Գրիգոր, վասպուրականցի 71
Կաքավյանց Հարություն, Սահմանադրական Ռամկավար կուսակցության անդամ 54
Կյոզուրյան Զարմայր, քահանա 61
Կյուլյումյան Մարտիրոս, «Խնամատար» ընկերության անդամ 15 ծնթ., 16 ծնթ.
Կյուրճյան Մելքոն (ծածկանունը՝ Հրանտ), գրող, հրապարակախոս 61
Կոլյուբակին [Ալեքսեյ], Ռուսաստանի երկրորդ հյուպատոս, Վիեննա 20
Կոմիտաս, վարդապետ 52 ծնթ.
Կոսպարեան 29
Կոսպարեան Վարդան, աղա, Վան 7
Կոսպարյան Մանուկ 37
Կոսպարյան, Կոսպարեան, Կասպարեան Փանոս, բարերար, «Խնամատար» ընկերության անդամ 16 ծնթ., 17-18, 18 ծնթ., 20
Կորկոտեան Զաւէն 53 ծնթ.
Կուլօղլեան Յովհաննէս 31

Հ

Հակոբ, Համբարձում Երամյանի մոր հորեղբոր՝ Խաչատուրի որդին 7
Հակոբյան Հովհաննես, վանեցի պրոֆեսոր 47 ծնթ.
Հայր Դեֆրանս, Ֆրանսիայի հյուպատոսական գործակալության ներկայացուցիչ 30
Հայր Ժակ, արաբերենի, ասորերենի մասնագետ 30
Հայր Ռեթորե, արաբերենի, ասորերենի մասնագետ 30
Հայր Տյուբլան, հայր Դեֆրանսի պաշտոնակից, գասկոնցի 30
Հարություն, Համբարձում Երամյանի մոր հորեղբոր՝ Խաչատուրի որդին 7
Հեղինէ, մելիք Մանուկի դուստրը 26
Հյուսեին, խան 45 ծնթ.
Հյուսյան Գարեգին, Երամյանի աշակերտներից 33
Հյուսյան Իգնատիոս 35
Հոլշտայն, Գերմանիայի փոխհյուպատոս, Մոսուլ 57
Հովակիմյան Գառնիկ 23
Հովհաննես, Համբարձում Երամյանի մոր հորեղբոր՝ Խաչատուրի որդին 7
Հովհաննես, Յովհաննէս, քահանա, Շահնազարի որդի, Այգեստան թաղի ավագերեց, Համբարձում Երամյանի պապի հայրը 6-7, 9, 11, 75
Հովհաննես, Յովհաննէս, Մարկոս Երամյանի որդին 6 ծնթ., 29
Հովհաննիսյան Աբգար, հասարակական գործիչ 22

Ղ

Ղուկասյանց Հայրապետ, մանկավարժ, Գևորգյան ճեմարանի ուսուցիչ, հասարակական գործիչ 21, 21 ծնթ.

Ճ

Ճանիկյան Մեսրոպ, ծայրագույն վարդապետ, քահանա, Հայկազեան վարժարանի նախագահ, Վանի առաջնորդական տեղապահ 7, 18, 30, 39, 43
Ճանոյան Հակոբ 31
Ճէճիզեան Յակոբոս, պրոֆեսոր 76

Մ

Մաթոսյան Ռուբեն 74
Մալխասյան Հովհաննես, լեզվաբան 60
Մալխասյան Ստ. 61
Մալոյան Մովսես 30
Մահմուտ փաշա, զինվորական հրամանատար և Վանի ժամանակավոր կուսակալ 44
Մամուրյան, Մամուրեան Հրանտ 62, 85
Մանդակունի Ավետիս, վանեցի վաճառական 20
Մանուկ, բաղնոցցի մելիք 26
Մանուկյան Արամ 41-42, 44
Մանուկյան Կարապետ, վանեցի 24-25
Մանուկյան Հռիփսիմե, վասպուրականցի 71
Մատթեոս Ա Չուհաճյան, պատրիարք, 6 ծնթ.
Մարկոս, Մարկոս Երամյանի թոռը, Հովհաննեսի որդին 6 ծնթ., 13
Մարտիկյան Ռոկան, բեյ, Էֆենդի, Կ.Պոլսի Ազգային ժողովի անդամ, Օսմանյան կառավարության թղթատարական նախարար 52, 52 ծնթ., 53 ծնթ.
Մարության Մանվել 81
Մարության Փանոս 47
Մանսկի, Մայէվսքի Վլադիմիր, Ռուսաստանի փոխհյուպատոս 30-31
Մելինճան, ակնաբույժ 23
Մելիք-Ազարյան, Մելիք-Ազարեան Ալ., կովկասահայ 58, 61, 64
Մելիքյան, Մելիքեան Պողոս, վարդապետ, եպիսկոպոս, Վանի առաջնորդական տեղապահ 9 ծնթ., 12
Մելիքյան, Մելիքեան Ստեփան, Աթենքի օսմանյան դեսպանատան քարտուղար, 1896 թ.-ից՝ Վանի կուսակալի օգնական 29, 29 ծնթ.
Մելքոնյան Բաղդասար 58
Մեսրոպ, ՀՅԴ անդամ 41
Մեսրոպ վարդապետ 19
Մինաս Չերազ 23, 23 ծնթ.
Մինասեան Միքայել, վարժարանի տեսուչ 52, 63 ծնթ.
Միրախորեան Մանուէլ, ազգագրագետ, ուսուցիչ 18
Միրեմգուլ Հարություն, փաստաբան 23

Միւնիր, թուրք հարյուրապետ 32
Մխիթարեան Օննիկ 86
Մկրյան Մամբրե, Մկրեան Մամբրէ, գրականագետ Մկրտիչ Մկրյանի հայրը, Երամյանի որբանոցի սան, Բաղեշի դպրոցի տեսուչ 16, 27, 30-31, 59 ծնթ., 63
Մկրյան Մկրտիչ, գրականագետ 59 ծնթ.
Մկրտիչ, էֆէնդի, բարերար 17
Մկրտիչեան Լեւոն, հրապարակագիր, օրենսգետ 63
Մոկացյան Մեսրոպ, ծայրագույն վարդապետ, Վարագավանքի փոխվանահայր, 1881 թ. Վանի առաջնորդական փոխանորդ (1836-1892, Երուսաղեմ) 18 ծնթ.
Մորգան, Անգլիայի հյուպատոս, իռլանդացի 31
Մրտիկեան Ստեփան 53 ծնթ.
Մուղալեան Կարապետ 74
Մուրատխանյան Վարդան, վասպուրականցի 70
Մուրացան, վիպասան 51

Յ

Յագոյան Հ. 76
Յարութիւնեան Մարգար 53 ծնթ.
Յարութիւնեան Վ. 81
Յովհաննէս Ֆէրիտ, պէյ, Վանի կուսակալի օգնական 32
Յովնանեան Գարեգին 53 ծնթ.
Յուսուֆյան Հովհաննես, Տրապիզոնի գավառի ազգային վարժարանների տեսուչ 22
Յուսուֆյան Տիգրան 23

Ն

Նազարյան Տիգրան, խմբագիր, հասարակական գործիչ 75, 75 ծնթ.
Նազըմ փաշա, Վանի կուսակալ (1895-1897թթ.) 32
Նաթանեան Պօղոս, բարերար, ուսուցիչ 18
Նաթանյան Գաբրիել 30
Նաթանյան Կարապետ, վանեցի 24
Նաթանյան Մարկոս 61
Նաթանյան Միք. 75
Նալբանդեան Եղիազար, բարերար 17-18, 18 ծնթ.
Նալբանդեան Մանուկ 53 ծնթ.
Նալբանդեան Սիմէոն, բարերար 18, 18 ծնթ.
Նալբանդյան Հովհաննես 37
Նալբանդյան, Նալբանդեան, Նալպանտեան Մարտիրոս, Երամյանի որբանոցի սան, դպրոցի տեսուչ, Երամյան վարժարանի փոխտնօրեն 16, 20, 27, 30-31, 35, 54, 57 ծնթ., 59, 63-64
Նալպանտեան Նշան, վանեցի 74
Նալպանտեան, վանեցի 86
Նահապետ, եպիսկոպոս 22
Նահապետյանց Արշակ, Ներսիսյան դպրոցի տեսուչ 22
Նավասարդյան Բ., բժիշկ 61
Նավասարդյան, Նավասարդ Կարապետ (ծածկանունները՝ Կ. Ն., Նավասարդ, Վարսամ), լրագրող, թարգմանիչ, մանկավարժ 72, 72 ծնթ., 73, 85
Նար-Դոս, գրող 56
Նարլեան Ս. 53 ծնթ.
Ներսես Աշտարակեցի 7
Ներսէսեան Հ., 53 ծնթ.
Նիզամյան Կարապետ, պոլսեցի 24
Նիկոլ Դուման (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան), հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ 42
Նիկոլաև, ռուսական բանակի հրամանատար 66
Նիքօլա Բ, Նիքօլա, Ռուսաստանի վերջին կայսր 65, 79
Նորատունկյան Գաբրիել, էֆ. 23, 77 ծնթ.
Նուրի էֆենդի 44 ծնթ.
Նուրյան 23

Շ

Շահինյան, Շահինեան Արշակ, սեբաստացի 70, 70 ծնթ.
Շահնազար, Համբարձում Երամյանի նախապապը, պարսկահայ 6, 75
Շահնազար [Հովհաննես], «Հայրենիք» օրաթերթի տնօրեն 63
Շահպաղեցյան Գրիգոր, վանեցի 24
Շահպաղյան Հարություն, վանեցի 24
Շահպաղյան Հովհ., «Խնամատար» ընկերության անդամ 16 ծնթ.
Շաղոյան Ավետիս, Շաղոյեան Աւետիս, քահանա, վանեցի 36, 39, 67 ծնթ.
Շամտանճյան Գրիգոր, պարսկական դեսպանատան պատվակալ թարգմանիչ 46
Շատվորյան, Շատուրեան Մանուկ, արմենական, Վանի ոստիկան, սպանել է Նուրի էֆենդուն, մահապատժի է ենթարկվել 1894 թ. 44, 44 ծնթ.
Շարանպէյեան Կարապետ, բարերար 17
Շաքարեան Կ., Շաքարեան Յ. Փ.-ի եղբայրը 18 ծնթ.
Շաքարեան Յ. Փ., Շաքարեան Կ.-ի եղբայրը 18 ծնթ.
Շաքարեան Յարութիւն, բարերար 17
Շաքարյան Գևորգ, Շաքարեան Գէորգ, քահանա, վանեցի 7, 12
Շաքիր փաշա, հայկական վեց նահանգների կոմիսար 31
Շերենց Գևորգ, Շերէնց Գէորգ (1848, Վան–1921, Տփղիս), բանահավաք, ազգագրագետ, մանկավարժ 18, 18 ծնթ., 82
Շէմսի 32
Շիրոյեան, եպիսկոպոս, Ղուկասյան վարժարանի առաջնորդ 10
Շիրվանզատէ, գրող 56
Շիրվանյան Նշան, Հիսուսյան վարժարանի հիմնադիրներից 14 ծնթ.
Շխյան Ա., բժիշկ 61
Շմավոնյանն Արսեն, Միացյալի վարչական խորհրդի ատենապետ, վերապատվելի 52 ծնթ.
Շտրաուս, ակնաբույժ, Վիեննա 24

Ո

Ոսկյան, Երամյան վարժարանի խնամակալ 77

Չ

Չարուխճյան Նազարեթ, ոստիկանության երրորդ կոմիսար 43
Չաքըճեան 68
Չիքունի Խոսրով 53 ծնթ.
Չիքունի Տ. 53 ծնթ.
Չիլինկիրյան Եղիշե, եպիսկոպոս, Բաղեշի առաջնորդ և Երուսաղեմի միաբան 33, 46
Չիլինկիրյան Կարապետ, ռուսաց հյուպատոսարանի թարգմանիչ, ախալցխացի 29
Չոպանեան Ա. 72
Չոփուրյան Վահե, սպա 76
Չրաքյան Տիգրան 75
Չուհաճյան Մ., պատրիարք 7

Պ

Պալասանյան Ստեփան, լեզվաբան, գրականագետ, մանկավարժ, Գևորգյան ճեմարանի ուսուցիչ 21, 21 ծնթ., 22
Պահրի բեյ, փաշա, Վանի կուսակալ 27-28, 32, 44
Պապիկյան Ահարոն, վասպուրականցի 70
Պապիկյան Միսաք 75
Պասմաճյան Թուխման, պատժական նախադաս ատյանի նախագահ 52 ծնթ.
Պատկանյան Ռ. 27
Պարթևյան Ավետիս, Վանի ոստիկանական խորհրդի անդամ 27, 27 ծնթ.
Պարթևյան Մելքոն, Հիսուսյան վարժարանի հիմնադիրներից 14 ծնթ.
Պարիկյան Արմենակ, Համբարձում Երամյանի դուստր Կատարինե-Վարդանուշի ամուսինը 75
Պարոնյան Հակոբ 23 ծնթ.
Պետրոս Արտամետցի, Հիսուսյան վարժարանի ղեկավար 14 ծնթ.
Պետրոս Գետադարձ, կաթողիկոս 25
Պետրոս քահանա, երաժիշտ 7
Պերպերյան Ռեթեոս 23, 33 ծնթ.
Պեքիր Սամի բեյ, զինվորական բժիշկ, Վանի կուսակալ, ազգությամբ չերքեզ 30, 47, 49, 49 ծնթ., 51
Պիչեր Հենրի 77
Պիպերճյան Հովհաննես, Վառնայի հայկական վարժարանի ուսուցիչ, ադաբազարցի 24
Պ. Յ. /Պետրոս Հակոբյան/ 86
Պողոս Աղրիանուպոլսեցի 7
Պողոս Նուբար, Պօղոս Նուպար փաշա 47 ծնթ., 65, 80
Պողոսյան Տիգրան 74
Պոնճուգյան Հակոբ (գրչանունը՝ Յ. Սիմոն), Մանկավարժ, խմբագիր, Ռուսճուգի հայկական վարժարանի տեսուչ, ազգային գործիչ, եվդոկիացի 24, 24 ծնթ.

Պուճիգանյան, Պուճիգանեան Խաչատուր, երաժիշտ, դաշնակահար, երաժշտության ուսուցիչ, 52, 52 ծնբ.
Պօղոսեան Ա. Տ. 53 ծնբ.
Պօպով, Պոպովեան, ռուսահայ բարեգործ 49, 52

Ջ

Ջէդէտ, փաշա 66 ծնբ.
Ջիվանի, աշուղ 21
Ջիվելեկյան Նվարդ, վասպուրականցի 71
Ջոն Ստյուարտ Միլ (1806-1873), բրիտանացի փիլիսոփա 62 ծնբ.
Ջրբաշխյան Մկրտիչ, Երամյանի աշակերտ 35, 46 ծնբ.

Ռ

Ռեյնոլտս, միսիոներ բժիշկ 15 ծնբ.
Ռշտունի Ե. Խ, վերապատվելի 70
Ռոպեն, Ֆրանսիայի հյուպատոս 45

Ս

Սաատեթյան Սմբատ, եպիսկոպոս, Կարինի առաջնորդ (1908-1909 թթ.), վխճ.1915 թ. 46, 46 ծնբ.
Սահակ, պէյ 18 ծնբ.
Սահակ, վարդապետ, Էջմիածնի մայր տաճարի դիվանապետ 21
Սահակպէյեան Վարդան, բարերար 17
Սահառունի Ավետիս (Շուշտակ վարդապետ), Հայնկոյսների վարժարանի ուսուցիչ, Աղբակի առաջնորդ, Սբ. Բարդուղիմեոսի վանահայր 9, 9 ծնբ.
Սահիրդյան Սիրաք 83
Սամուելյան Տ. 76
Սամուէլ, հոգևորական, Թրիեսթի վանքի տեսուչ, Մխիթարյան միաբանություն, Վիեննա 24
Սանասարյան Մկրտիչ, Կարին 25, 27, 62
Սանթուրճյան Հովհաննես, Սանդարճեան, Սանթուրճեան Յովհաննէս, վանեցի, բարերար 18, 24, 34, 46
Սառա, տիրացու Երեմիայի աղջիկը 6
Սատտէտտին 29
Սարաճյան, Սարաճեան Հովսեփ, եպիսկոպոս, Վանի առաջնորդ (վխճ. 1913 թ. հոկտեմբերի 2-ին) 36, 48, 48 ծնբ., 53, 53 ծնբ., 55
Սարգիսյան Մատթեոս, Փարամազ (1863, Մեղրի – 1915, Կ.Պոլիս), Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության անդամ 54, 54 ծնբ.
Սարգսյան Համբարձում, Փափախ Համբարձում 45, 45 ծնբ.
Սարեան Միքայէլ, բարերար 18
Սարուխան Առաքել 72
Սաֆրաստյան Ղևոնդ 34
Սեդրակ, Հասբիսնակ գյուղի տանուտեր 26
Սեդրակյանց Արիստակես, Թիֆլիսի առաջնորդ 22
Սեղբոսյան Լևոն տե՛ս Լևոն Շանթ
Սերոբ փաշա, Սերոբ-Աղբյուր 42
Սերոբեան Միհրան 85
Սեֆերյան Կարապետ 24 ծնբ.
Սիամանթօ, գրող 56
Սիմեոնյանց Պետրոս, «Մեղու»-ի խմբագիր 22
Սիսակ, Համբարձում Երամյանի զարմիկը 13
Սիրունյան Մամբրե, Սիրունեան Մամբրէ, ծայրագույն վարդապետ, Աղեքսանդրիայի աաջնորդական փոխանորդ 73- 74
Սիւզան, աշուղ 13
Սմսարեան Ցոլակ 31
Սոլախյան Խաչատուր 30
Սոլախյան Կարապետ 61
Սպանդարյան Սպանդար, «Նոր-Դար» թերթի խմբագիր 22
Սվազլյան Վ. 81
Ստեփանեան Սեպուհ 74
Սրվանձտյան Համազասպ 71 ծնբ.
Սրվանձտյանց, Սրուանձտեանց Գարեգին, վարդապետ, «Խնամատար» ընկերության անդամ 10, 16, 16 ծնբ., 22, 25, 25 ծնբ., 50
Սրուանձտեան Ղեւոնդ 31
Սրուանձտեան Յակոբոս, Ղուկասյան վարժարանի առաջնորդ 10
Սուլթան Ռէշատ 84

Վ

Վահագն, Տիգրան Ավագյանի որդին 12 ծնբ.
Վահան, Մարկոս Երամյանի թոռը, Հովհաննեսի որդին, սպանվել է 1896 թ.՝ Համիդյան ջարդերի ժամանակ 6 ծնբ., 13, 29
Վահրամ, Տիգրան Ավագյանի որդին 12 ծնբ.
Վանիկյան Գեղամ 61
Վասիլ Բ Արշակունի, Բյուզանդիայի կայսր 25
Վարագա պարոն Պետրոս 70, 70 ծնբ., 71 ծնբ.
Վարդան, էֆէնտի, Սահակ պէյի որդին 18 ծնբ.
Վարդգէս [Հովհաննես Սերենգուլյան], Օսմանյան խորհրդարանի անդամ, երեսփոխան 42
Վարպետյան Փանոս, «Խնամատար» ընկերության անդամ 16 ծնբ.
Վարուժան Դանիել, արևմտահայ գրող 45 ծնբ., 61
Վեհապետյան Հարություն (1889-1910), Պոլսո պատրիարք 23
Վեյսիե Ժորժ, Վէյսիէ Ժօրժ, "Le Journal du Caire"-ի խմբագիր 65
Վիրգիլիոս 14 ծնբ.
Վորոնցով-Դաշկով, Կովկասի փոխարքա 65

Տ

Տամատյան Միհրան 66
Տեմիրճիպաշյան Եղիա 23 ծնբ.
Տեր-Ահարոնյան Ազնիվ 46
Տեր-Ավետիսյան, վասպուրականցի 70
Տեր-Եղիայան Զավեն, 1908 թ. Վանի առաջնորդական տեղապահ, 1913-1922 թթ.՝ Կ.Պոլսի պատրիարք 44, 44 ծնբ., 46, 47 ծնբ., 48, 76
Տեր-Հակոբյան Հովհաննես, Տէր Յակոբեան Յովհաննէս, Հիսուսյան վարժարանի աշակերտ 32-33
Տեր-Մարգարյան Արսեն, վարդապետ, առաջնորդ, Վան 30
Տեր-Մովսեսյանց Հուսիկ, հոգևորական, Էջմիածնի մայր տաճար 21
Տեր-Պողոսյան Պետրոս, Տէր Պօղոսեան Պետրոս, պոլսաբնակ վանեցի 46
Տեր-Սարգիսյան Հարություն, Սանասարյան վարժարանի շրջանավարտ 31
Տեր-Սարգսյանց Երեմիա, եպիսկոպոս, «Խնամատար» ընկերության անդամ 16 ծնբ., 17
Տէր-Մկրտիչեան Ե. 84
Տէր Յարութիւնեան Բարունակ 31
Տէր Սարգիսեան Վրթանէս, վրդ. 70 ծնբ.
Տէրոյեան Տիգրան, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ 41
Տէօվլէթեան, տոքթ. 68
Տիգրան, Համբարձում Երամյանի մոր հորեղբոր՝ Խաչատուրի որդին 7
Տիգրան, ՀՅԴ անդամ 41
Տյոքմեճյան Հ. 74
Տուրսունեան [Եղիշէ], Մաղաքիա Օրմանյանի օգնական փոխտեսուչ, նախկին Մխիթարեան 25

Ր

Ռայխ Միխայիլ Իվանովիչ, ակնաբույժ, գերմանացի հրեա, դոկտոր 22
Ռաֆֆի, գրող 22, 56

Ու

Ուիլյամս, Վանի անգլիացի դերհյուպատոս 31

Փ

Փախչան 31
Փախչանյան, Փախչանեան Խոսրով, երաժշտության ուսուցիչ 52, 52 ծնբ., 57
Փանոսեան Նալպանտ 30
Փառանձեմ, պրոֆ. Լևոն Արծրունու մայրը 56
Փափազեան Ղազար 74
Փափազյան Մեսրոպ, Փափազեան Մեսրոպը (աշխարհիկ անունը՝ Մարտիրոս), քահանա, հասարակական և եկեղեցական գործիչ, Ղուկասյան վարժարանի ուսուցիչ 10, 10 ծնբ., 17
Փափազյան Ներսես (Մաշտոց) 10 ծնբ.

Փափազյան Ստեփան, Մէզպուրեան վարժարանում հայերենի ուսուցիչ 23
Փափազյան Վահան Մեսրոպի (ծածկանունները՝ Կոմս, Բժիշկ), ՀՅԴ անդամ 10 ծնբ., 40, 40 ծնբ., 41, 41 ծնբ., 43-44, 45, 47, 61
Փափազյան Վրթանես, գրող 10 ծնբ., 18, 24, 44, 56
Փեհրիզյան Ավետիս, Համբարձում Երամյանի քեռին, ներկարար 6
Փեհրիզյան Հակոբ 77
Փեհրիզյան Հովսեփ, վանեցի, Համբարձում Երամյանի մոր հորեղբոր որդին, 1896 թ. հունիսին՝ Քաղաքական ժողովի ատենապետ 7, 24
Փեհրիզյան Մկրտիչ, Համբարձում Երամյանի մոր հորեղբոր որդին 7, 13
Փեհրիզյան Սաֆար, Փէհրիզեան Սէֆէր (Հուսիկ, Յուսիկ քահանա), Համբարձում Երամյանի մորեղբայրը, դերձակ, Այգեստանի Սբ. Հակոբ եկեղեցու քահանա 6-7, 20
Փեհրիզյան Վարդուհի, Համբարձում Երամյանի կինը 17, 75
Փեշտիմալճյան Տիգրան, կայսերական պալատի բժշկապետ 23
Փէհրեզեան Սահակ, բարերար, ուսուցիչ 18
Փէհրիզեանց գերդաստան 8
Փէհրիզեանց Կատարինէ, Համբարձում Երամյանի մայրը, վխճ. 1882 թ. 8-9, 14
Փիլոյան Ռ. 76
Փիրղալեմյան Ղևոնդ, վարդապետ, «Խնամատար» ընկերության անդամ 16 ծնբ.
Փիրումեան 53 ծնբ.
Փոխարյան Արմենակ, Երամյան վարժարանի ուսուցիչ 28, 28 ծնբ., 30, 41-42, 63, 76, 82
Փորթուգալյան, Փորթուգալեան Մկրտիչ, Արմենական կուսակցության հիմնադիրներից, «Արմենիա» թերթի հիմնադիր, ուսուցիչ 41 ծնբ., 47 ծնբ., 63, 63 ծնբ.

Ք

Քալանթարյան Դավիթ, Գևորգյան ճեմարանի ուսուցիչ 21, 21 ծնբ.
Քալանթարյան Մ. 61
Քաջազնունի Հովհաննես, ճարտարապետ, Երամյան վարժարանի նոր շենքի նախագծի հեղինակ, Հայաստանի Առաջին Հանրապետության վարչապետ 38, 64
Քաջաճեմյան Մարտիրոս 20
Քաջբերունի Աբրահամ, վանեցի 75
Քեմպլ, Քէմպլը Կրէյս, հայոց պատմության ուսուցչուհի, ամերիկյան միսիոներական վարժարանի տեսուչ, բժշկուհի, միսիոներ 19, 28, 30-31
Քէօռ Հիւսէին, փաշա 26
Քիրեքճյան Ավետիս, վանեցի 24

Օ

Օլֆերիեֆ, Օլֆէրիէվ, Օլֆերիև Սերգեյ Պետրովիչ, Ալֆէրիէվ, Ռուսաստանի փոխիյուպատոս 45, 49, 51 ծնբ., 53 ծնբ.
Օրմանյան Մաղաքիա, եպիսկոպոս, Կարնո առաջնորդ, պատրիարք, «Խնամատար» ընկերության անդամ 16 ծնբ., 22, 22 ծնբ., 25, 38, 46

Ֆ

Ֆերիկ, Ֆէրիք Հիւսէյին փաշա, զինվորական հրամանատար 33, 44 ծնբ.

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Ագուլիս, գյուղ 10 ծնթ.
Աղաբազար, գյուղաքաղաք 24
Աթենք, քաղաք 29 ծնթ.
Ալեքսանտրապոլ, Աղեքսանդրաբոլ քաղաք 80
Ալեքսանդրիա, Ալէքսանդրիա, Աղեքսանդրիա, քաղաք 62, 64, 66-67, 67 ծնթ., 68, 70 ծնթ., 71 ծնթ., 73-74, 77 ծնթ., 81-82
Ալի-Քէլլէ, գյուղ 20
Ականց, գյուղաքաղաք 26
Ակրբի, լեռնաշղթա, Վանա լճից արևմուտք 10, 38
Ակրփի, թաղամաս, Վան 82
Աղբակ, գավառ 9 ծնթ.
Աղթամար, վանք 12 ծնթ., 38 ծնթ., 64
Աղստաֆա, գյուղ 21
ԱՄՆ, Ամերիկա 6 ծնթ., 23, 23 ծնթ., 74, 76, 80
Ամսթերտամ, քաղաք 6 ծնթ.
Այգեստան, քաղաքամաս, Վան 9, 11, 15, 17, 19, 37, 50, 58, 65, 72, 81, 83
Անատոլիա 77
Անգլիա 31, 63, 79
Անթիլիաս, թաղամաս, Բեյրութ 77
Ապաղա, Աբաղա, դաշտ, հովիտ 20-21
Առնօս, լեռ 10
Առտէր, կղզի 11
Ասիա 65
Ատանա 47
Արաբիա 6
Արարատ, լեռ 21
Արարատ, մարզ 76
Արարք, Արարուց, թաղամաս, Վան 11, 19, 44
Արաքս, գետ 26
Արծափ, Ռուծափ, գյուղ 21
Արճակ, գյուղ 6, 20
Արճեշ, Քաջբերունիք, գավառ 11, 26
Արմաշ 60
Արտամետ, Արտամէտ, գյուղ 10 ծնթ., 11
Արտաշատ, Ղամարլու, քաղաք 76
Արտօս լեռ 10-11
Արևմտյան Հայաստան 25, 29
Աւանց, գյուղ 10, 26
Աւստրիա 24

Բ

Բաղնոց, գավառ 26
Բաթում, Պաթում, քաղաք 20-23
Բաղդադ, քաղաք 44 ծնթ.
Բաղեշ, Բաղէշ, Բիթլիս, Պիթլիս, քաղաք 18, 25-26, 31, 33, 46, 49, 66
Բասէն, գավառ 26
Բաքու, քաղաք 21 ծնթ., 59, 64
Բեյրութ, Պեյրութ, քաղաք 40 ծնթ., 47
Բեռլին, Պերլին, քաղաք 15, 39, 53
Բերա, թաղամաս, Կ.Պոլիս 76
Բոստոն, Պօսթըն, քաղաք 71-72
Բոսֆորի, Վոսփորի նեղուց 24, 40
Բոտոշան 21 ծնթ.
Բոր-Սայիտ, Բօր-Սայիտ, Պորտ-Սաիդ, քաղաք 67 ծնթ., 68, 72, 81-82
Բուդապեշտ, քաղաք 24
Բուլղարիա 20, 24

Գ

Գարակյոմրյուկ, թաղամաս, Կ.Պոլիս 6
Գեղամա ծովակ 21
Գըզըլտիզակ, գյուղ 21
Գյումուշխանե, քաղաք 24, 25 ծնթ.
Գուզկունճուք, գյուղ 24
Գրգուռ, լեռ 10
Գրիգոր Նարեկացիի աղօթատեղի, լեռ 11

Դ

Դանուբ գետ 24
Դառնի, հովիտ, Ապաղայի դաշտ 20
Դիլիջան, քաղաք 21

Ե

Եգիպտոս 6, 24 ծնթ., 39 ծնթ., 47 ծնթ., 48, 62, 66-67, 72-74, 76, 81-82, 84
Եվդոկիա, քաղաք 24
Երզնկա, քաղաք 52 ծնթ.
Երուսաղեմ, Երուսաղէմ, քաղաք 7, 18 ծնթ., 33, 60-61
Երևան, քաղաք 20-21, 75-76
Եւրոպա 40, 74, 82

Է

Էջմիածին, քաղաք 7, 20-21, 29, 34, 70 ծնթ., 72, 82
Էջմիածնի մայր տաճար 21, 59

Թ

Թավրիզ, քաղաք 10 ծնթ., 20, 40 ծնթ.
Թափառէզ, լեռ 21
Թիֆլիս, Թիֆլիզ, Տփղիս, քաղաք 18 ծնթ., 20-22, 22 ծնթ., 39, 51 ծնթ., 53 ծնթ., 59, 61, 72, 75, 76, 80, 82
Թրիէսթի վանք, Մխիթարյան միաբանություն, Վիէննա 24
Թուրքիա 30, 40, 64 ծնթ., 65
Թօփրակ-Գալէ 38

Ի

Իգդիր, Իկտիր, քաղաք 20-21, 66, 77
Իզմիր, քաղաք 60, 62, 62 ծնթ., 72, 77
Իսպանիա 30

Լ

Լիմ անապատ 9, 11
Լիոն, քաղաք 77, 77 ծնթ.
Լոզան, քաղաք 22

Խ

Խաչ փողոց, Խաչի փողոց, թաղամաս, Վան 16 ծնթ., 18, 82-83, 86
Խաչկէտիկ, լեռնագագաթ 21
Խառակոնիս, գյուղ 20
Խարբերդ, քաղաք 23
Խրիմ 25

Կ

Կ.Պոլիս, Կ.Պօլիս, Կոստանդնուպոլիս, Կոստանդուպոլիս, Ստամբուլ, Պոլիս, Պօլիս, քաղաք 8, 13, 14 ծնթ., 6, 7, 10, 18, 20, 21 ծնթ., 22, 22 ծնթ., 23, 23 ծնթ., 24-25, 25 ծնթ., 32-33, 38, 38 ծնթ., 39, 44 ծնթ., 45, 45 ծնթ., 46-47, 47 ծնթ., 49 ծնթ., 52 ծնթ., 53 ծնթ., 54 ծնթ., 57, 60-62, 64, 64 ծնթ., 72, 76-77, 77 ծնթ., 82
Կալիֆոռնիա 27 ծնթ.
Կահիրե, Գահիրէ, քաղաք 24 ծնթ., 36, 39, 39 ծնթ., 52 ծնթ., 65, 74-75
Կարին, Էրզրում, քաղաք, նահանգ 18, 22, 24-26, 46, 46 ծնթ., 62, 65-66, 77
Կարմրվոր Սբ. Աստվածածին վանք, Կարմրաւոր, Կարմրվորի վանք, Շուշանց 16, 16 ծնթ.,17-18, 38, 82
Կարս, քաղաք 36 ծնթ., 80
Կիլիկիա 50, 65, 80
Կիրասոն, քաղաք 23
Կողբանց, գյուղ 16
Կովկաս 26, 31, 38, 49, 49 ծնթ., 53 ծնթ., 55, 61, 65, 76
Կտուց անապատ 38 ծնթ.
Կուռուպաշի Սբ. Խաչ վանք 16-17

Հ

Հալեպ, Հալէպ, քաղաք 77
Հայաստան 12 ծնթ., 16, 19, 53 ծնթ., 55, 62, 65-67, 72-74, 79-81, 85
Հայկավանքի գերեզմանատուն 50
Հայոց եկեղեցի, Վառնա 24

Հայոց ձոր, գավառ 11, 31
Հանկույսներ, Յայնկոյսներ, թաղամաս, Վան 9, 9 ծնթ., 11, 14, 19, 36, 48, 81, 83,
Հաջի Միրզա, գյուղ 20
Հասանկալե, քաղաք 26
Հասբիսնակ, գյուղ 26
Հարաւային Ամերիկա 81
Հաֆթվան, գյուղ 10 ծնթ.
Հելիոպոլիս, քաղաք 72 ծնթ.
Հին Ջուղա 17 ծնթ.
Հնդկաստան 6

Ղ
Ղորո վանք, Կողբանց 16

Ղ
Ղալաթիա, թաղամաս, Կ.Պոլիս 23

Մ
Մարաշ, քաղաք 77, 77 ծնթ., 78
Մարգարա, գյուղ 21
Մարսիլիա, Մարսել, քաղաք 23 ծնթ., 53 ծնթ.
Մեծոփավանք, Արճեշ գավառ 26-27
Մեղրի, քաղաք 54 ծնթ.
Մերտին, Մէրտին, քաղաք 77-78
Մհէրի դուռ 83
Մոսկվա, Մոսկուա, Մոսկոֆ, Մօսկօֆ, քաղաք 15, 25, 48, 59
Մուշ, քաղաք 64
Մուսուլ, Մոսուլ, քաղաք 44 ծնթ., 78
Մօնբէլիէ, քաղաք 77

Յ
Յանկոյս ձոր, Վան 44, 82

Ն
Նարեկավանք 11
Նեղոս, գետ 81
Նէմրուտ լեռ 10
Նիկոմեդիա, քաղաք 72 ծնթ.
Նյու-Յորք, քաղաք 52 ծնթ.
Նոր Նախիջևան, քաղաք 49, 59
Նորաշեն, Նորշէն, թաղամաս, Վան 6, 19, 31, 44
Նուխի, քաղաք 16 ծնթ.

Շ
Շաթպիի Ազգային գերեզմանատուն 74
Շահբաղի, գյուղ 82-83
Շամախի, քաղաք 21 ծնթ.
Շուշանց, գյուղ 16
Շուշանցի լեռներ 10
Շվեյցարիա 76

Ո
Ոստան, գավառ 11

Չ
Չնքուշ, գյուղաքաղաք 52 ծնթ.

Պ
Պայազիտ, քաղաք 26
Պայազիտի հովիտ 21
Պարսկաստան 10, 24-25, 27, 31, 62
Պաքուպա, քաղաք 71 ծնթ.
Պեշիկթաշ, թաղամաս, Կ.Պոլիս 23
Պետերբուրգ, Պետրսպուրկ, քաղաք 25, 48, 58
Պոլոնց թաղ, Վան 32

Ռ
Ռշտունիք, Գեաւաշ, գավառ 11
Ռուսահայաստան 65
Ռուսաստան, Ռուսիա 16 ծնթ., 18, 49, 55, 65, 79
Ռուսճուգ, Ռուսճուք, քաղաք 20, 24

Ս
Սալնապատի վանք, Սալնապատի Սբ. Գրիգոր վանք, Ս. Գրիգոր, Կողբանց 10, 16-17, 50
Սամսոն 23
Սան-Սթէֆանո 65
Սասուն 38 ծնթ.
Սարըղամիշ 80
Սբ. Բարդուղիմեոս վանք, Աղբակ 9 ծնթ.
Սբ. Խաչի բլրաշարք, լեռ 10, 38
Սբ. Հակոբ, Սբ. Յակոբ, եկեղեցի, Վան 6-7, 12 ծնթ., 25 ծնթ.
Սբ. Հակոբ, Սբ. Յակոբ, թաղամաս, Վան 6-8, 8 ծնթ., 10, 12, 16 ծնթ., 29, 81
Սբ. Պողոս եկեղեցի, Քաղաքամեջ, Վան 14 ծնթ.
Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցի, Ալեքսանդրիա 66, 74
Սեբաստիա 77
Սելանիկ 49
Սիրիա, Սուրիա 6, 65
Սիփան լեռ 10-11
Սիմպիլլի 23
Սղգայի պողոտա, Վան 29, 37, 83
Սորբոն, Սօրպոն 77
Սուրմալու, գավառ 21

Վ
Վաղարշապատ 21, 21 ծնթ., 59, 61
Վաղարշավանի կամուրջ, Չօպան քէօբրիւ, կամուրջ Արաքսի վրա 26
Վան-Տոսպ 36 ծնթ.
Վան, քաղաք 6, 7, 8, 10-11, 14, 14 ծնթ., 15-16, 16 ծնթ., 17, 17 ծնթ., 18, 18 ծնթ., 19-20, 23, 25-29, 29 ծնթ., 30-33, 35-38, 38 ծնթ., 39, 39 ծնթ., 40-41, 41 ծնթ., 44 ծնթ., 46-47, 47 ծնթ., 48, 48 ծնթ., 49, 49 ծնթ., 50-51, 51 ծնթ., 52, 52 ծնթ., 53, 53 ծնթ., 55-57, 57 ծնթ., 59, 61-62, 62 ծնթ., 63-66, 66 ծնթ., 67 ծնթ., 68, 70 ծնթ., 71, 71 ծնթ., 72-74, 76-77, 77 ծնթ., 81-87
Վանա լիճ, Բզնունեաց ծով 6, 10, 26
Վանի հովիտ 10
Վանի նահանգ 10 ծնթ., 64, 72
Վառնա, քաղաք, Բուլղարիա 20, 24
Վասպուրական 19, 23, 47, 55, 58-59, 66, 68, 71, 71 ծնթ., 72-74, 76, 81-82, 86-87
Վարագ, լեռ 38
Վարագավանք 18 ծնթ., 41 ծնթ., 48, 48 ծնթ., 50, 70 ծնթ., 71 ծնթ.
Վենետիկ 13, 14 ծնթ., 24
Վիեննա, Վիէննա 16 ծնթ., 20, 22, 24, 24 ծնթ., 72
Վրաստան 65

Տ
Տաճկաստան 40
Տիգրանակերտ 77, 78
Տրապիզոն, գավառ 22
Տրապիզոն, Տրապիզօն, քաղաք 18, 22-25, 25 ծնթ.
Տրիպոլիս, քաղաք 27 ծնթ.

Ր
Ռօստով, քաղաք 49

Փ
Փարիզ, Բարիզ 23, 23 ծնթ., 39, 77
Փոքր Քէնտըրչի, քառուղի, Վան 44
Քաղաքամեջ, Վան 14-15, 45 ծնթ., 58

Օ
Օտէսա, քաղաք 22
Օրգով, Օրկոֆ, գյուղ 20-21

Ֆ
Ֆրանսիա, Ֆրանսա 30, 63, 65, 76
Ֆրեզնո, Ֆրէզնօ, քաղաք 27 ծնթ., 56, 74

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ **ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ**
ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ՐԱՖՖԻ ՔՈՐԹՈՇՅԱՆԻ

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ **ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ**
ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ՔՈՐԹՈՇՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ 2024

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1997


1998

1999 հայերեն, 2000 օտարերեն, 2001 անգլերեն

2001

2003 հայերեն, օտարերեն

2004 հայերեն, 2007 անգլերեն

2004

2004

2006 հայերեն, 2011 անգլերեն

2007


2008

2009 հայերեն, օտարերեն, անգլերեն

2010

2011

2012

2013

2015

2018

2019

2023

2024

2024

ISBN 978-9939-843-67-4